

Ս Ո Ֆ Յ Ա Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն

Ի Մ Հ ՈՒ Շ Ե Ր Ը  
Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն Ի Մ Ա Ս Ի Ն



«Ասողիկ» հրատարակչություն

Երևան - 2018

ՀՏԴ 811.19:82-94

ԳՄԴ 81.2Հ

Ա 501

**Աճառյան Սոֆյա**

Ա 501 Իմ հուշերը Աճառյանի մասին/ Ս. Աճառյան.- Եր.:  
Աստղիկ, 2018.-286 էջ:

*Մեծանուն լեզվաբան Հրայրյա Աճառյանի տիկնոջ՝ Սոֆյա  
Աճառյանի հուշերը տասնամյակների նրանց համատեղ  
կյանքի մասին են:*

ՀՏԴ 811.19:82-94

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-399-8

© Սոֆյա Աճառյան, 2018

*Հարազատների խնդրանքով Սոֆյա Աճառյանի հու-  
շերը հրատարակվում են առանց խմբագրական մի-  
ջամտությունների՝ պահպանելով հեղինակի ոճը. կատարվել  
են միայն մասնակի ճշգրտումներ և կետադրական ուղղում-  
ներ:*

Հրատարակչական ծախսերը հոգացել են ՀՀ ԳԱԱ  
Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտը և բանասիրական  
գիտությունների դոկտոր Ամալյա Խաչատրյանը:

## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Երևանի պետական համալսարանի «Միտք» հրատարակչությունը 1967 թ. լույս ընծայեց ամուսնու՝ Հրայր Աճառյանի «Կյանքիս հուշերից» հատորը:

Հրայր Աճառյանը, ինչպես հիշում է «Կյանքիս հուշերից» հատորի առաջաբանում, վաղուց նպատակ է ունեցել գրի առնելու իր հուշերը, սակայն ծանրաբեռնված լինելով գիտական և դասախոսական աշխատանքներով՝ ժամանակ չէր գտել՝ այդ խնդիրը լիովին իրականացնելու: Օրվա մեծ մասը նա աշխատում էր առանց հանգստի՝ նվազագույնի հասցնելով հանգստի և քնի համար անհրաժեշտ ժամանակը: Վերջապես 1952 թ.՝ հիվանդության ժամանակ, իր միամյա պարտադիր «հանգիստը» նա նվիրեց հուշերը գրի առնելուն: Տեսողության տկարության պատճառով նրա թելադրածը գրի էին առնում դուստր Ք. Աճառյանը, ասպիրանտներ Գ. Գարեգինյանը, Լ. Պետրոսյանը, ուսանող Ա. Գալաջյանը և ուսանող Ա. Տեր-Ղևոնդյանը:

Աճառյանն իր՝ գրի առած հուշերը վերանայելու, ուղղումներ, լրացումներ կատարելու հնարավորություն չունեցավ, անգամ չտեսավ գրի առածը:

Հուշագրական այս աշխատությունը արժանացավ ընթերցող լայն հասարակայնության ուշադրությանը: Հատորին գրախոսականներ նվիրեցին դոկտոր պրոֆեսոր Էդ. Աղայանը, Էդ. Շահիրյանը («Սովետական Հայաստան» օրաթերթ, 21 դեկտեմբերի, 1967) և բանասիրական գիտությունների դոկտոր Ալ. Մարգարյանը («Երեկոյան Երևան», 27 դեկտեմբերի, 1967), գրախոսականներ լույս տեսան նաև սփյուռքահայ մամուլում: Դոկտոր Միհրդատ Թիրաքյանը՝ «Լրաբեր» թերթում, Պ. Վաչե Չերչյանը՝ «Երևան շաբաթաթերթում»: Գրախոսներն իրենց գնահատանքի խոսքն ասացին՝ չմոռանալով անել նաև փոքր դիտողություններ:

«Միայն կարելի է ցավել,- վերջացնում է իր գրախոսականը Ալ. Մարգարյանը,- որ մահը թույլ չտվեց Աճառյանին գրելու նաև իր կյանքի հետագա տարիների պատմությունը, որը, սակայն, անպայման պետք է անեն ուրիշները»:

«Կյանքիս հուշերից» հատորը, ինչպես նկատել է Ալ. Մարգարյանը, ընդգրկում է Աճառյանի՝ միայն նախախորհրդային շրջանի կյանքի պատմությունը, այսինքն՝ մինչև 1920 թ.: Նույնքան հարուստ, հետաքրքրական և ուսանելի է նաև նրա կյանքի երկրորդ կեսի պատմությունը, որն անցել է Խորհրդային Հայաստանում:

Իմ հուշերն ասես Աճառյանի հուշերի անքակտելի բաղկացուցիչ մասն ու շարունակությունն են կազմում: Աճառյանը չէր սիրում խոսել իր մասին. իմ հուշերում, սակայն, ես խոսում եմ Աճառյանի, նրա շրջապատի, հին ու նոր բարեկամների հետ նրա հանդիպումների, հետաքրքրական խոսակցությունների ու տեսակցությունների, ուսանողների և ասպիրանտների նկատմամբ նրա քաջալերող վերաբերմունքի մասին:

Երեխայի պարզությամբ ու անմեղությամբ այդ մարդու կյանքում թունավորող երևույթները, դժբախտաբար, անպակաս չեղան: Անհատի պաշտամունքի մռայլ ժամանակաշրջանում նա ևս տուժեց: Իմ հուշերում տեղ են գտել Աճառյանի այն ժամանակվա կրած տառապանքների ու դառնությունների, բանտում ունեցած մեր հանդիպումների նկարագրությունը և բախտակից ու բանտակից իր ընկերների պատմածներն ու հիշողությունները:

Ես ջանք եմ գործադրել՝ բացահայտելու Աճառյանի բնավորության, խառնվածքի յուրահատուկ, երբեմն նույնիսկ տարօրինակ թվացող կողմերը:

Ուշադրության արժանի և ուսանելի շատ բան ունի Աճառյանի աշխատասիրությունը, հետևողականությունը,

նրա աշխատանքի գիտականորեն կազմակերպված համակարգը, որով նա կարողացել է այնքան բեղմնավոր լինել:

«Իմ հուշերը Աճառյանի մասին» չեն ընդգրկում մեծ հայագետի և լեզվաբանի գիտական գործունեությունը, այլ հազիվ շոշափելով այդ կողմերը՝ ես կանգ եմ առել առավելապես նրա կենսագրական կողմի վրա՝ Աճառյանին գնահատելով որպես մարդ կյանքում, իր շրջապատում՝ այն էլ դիտված իմ կողմից, իմ կարողության սահմաններում: Իսկ Աճառյանի գիտական գործունեության ամբողջական ուսումնասիրությունը, նրա համակարգի, ուղղության և գիտական գործերի քննությունը ավելի լուրջ և ծանրակշիռ գործ է՝ վեր իմ ուժերից, և կարող է առանձին մենագրությունների նյութ հանդիսանալ:

Հրապարակելով այս աշխատությունը՝ ես հեռու եմ գրական մի երկ տալու մտքից:

Այսպես, իմ հուշերը սկսվում են Աճառյանի հետ իմ ծանոթությունից և 1935 թ. ամուսնությունից: Մնում է բավական մեծ մի բաց՝ սկսած 1923 թ., երբ Աճառյանը հատուկ հրավերով գալիս է Հայաստան՝ դասախոսելու Երևանի պետական նորահիմն համալսարանում, մինչև 1935 թ.: Ես երբեք չեմ մտածել, որ երբևէ կարող եմ Հրաչյայի մասին հուշեր գրել, հետևաբար և չեմ ունեցել օրագիր կամ չեմ կատարել հատուկ գրառումներ:

Միայն ու միայն հիշողությամբ եմ ջանացել վերականգնել շատ դեպքեր ու անցքեր՝ երբեմն օգտագործելով նաև որոշ փաստաթղթեր Աճառյանի արխիվից:

Կրկնում եմ՝ իմ արածը մի տեսակ հոգու և սրտի պարտք է՝ հանդեպ իմ թանկագին ամուսնու և նրա գործի:

«Գրական թերթի» 1968 թ. փետրվարի 23-ի հ. 8-ում տպված «Աճառյանի «Կյանքիս հուշերից» հատորը և հեղինակի անտիպ ժառանգությունը» խորագրով իմ հոդվածում հայտնել էի նաև, որ ձեռնարկել եմ մեծ հայագետի նամակ-

ների հավաքման գործը՝ կազմելու համար նրա նամակահին՝ մտածելով, որ հավանաբար, իբր լրացուցիչ մաս, այն կմիացվի իմ հուշերին: Սակայն իմ հուշերի ծավալը արդեն առանձին մի լրիվ հատոր կկազմի, իսկ հավաքվող նամակների և փաստաթղթերի թիվը գնալով աճում է առանց, սակայն, վերջանալու: Ուստի շարունակելով նամակների հավաքումը՝ ներկայումս առանձին հատորով հրատարակության են հանձնում «Իմ հուշերը Աճառյանի մասին»:

Գրքում ներկայացված են առանձին դրվագներ նրա կյանքի վերջին երկու տասնամյակից: Կրկնում եմ, որ արել եմ այն, ինչ թույլ էր տալիս իմ համեստ կարողությունը, ինդրում եմ ընթերցող հասարակայնությանը ներողամիտ լինել:

ՍՈՖՅԱ ԱՃԱՌՅԱՆ





## ԻՄ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՊՐՈՏԵՍՈՐ ԱՃԱՌՅԱՆԻ ՀԵՏ

Սա այն տունն է, ուր ապրել և ստեղծագործել է մեծ լեզվաբան, հայագետ, բանասեր, պատմագետ ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանը:

Տասնհինգ տարի է անցել այն օրվանից, երբ նա հրաժեշտ տվեց իր այնքան սիրած կյանքին: Բայց ինձ թվում է, որ նա այժմ ևս կենդանի է: Բնակարանում ամեն ինչ մնում է այնպես, ինչպես Աճառյանի կենդանության օրոք: Ինձ դեռևս թվում է, թե նա աշխատում է իր աշխատասենյակում և ահա շուտով ձայն կտա ինձ, որ սուրճ պատրաստեմ: Ահա նա պատրաստվում է գնալ համալսարան՝ հայ մտքի դարբնոցը՝ մտնելու իր տարերքի մեջ, դասախոսելու, իր գիտելիքները տալու երիտասարդ սերնդին:

Թվում է ինձ, որ բնակարանի յուրաքանչյուր սենյակում, ամեն մի անկյունում ներկա է նա: Ահա բազմել է նա ընդունարանում ու գրուցում է հյուրերի հետ:

Մթափվում եմ հանկարծ և ինձ գտնում մենակ իմ հուշերի ու հիշողությունների, Հրաչյայի գրքերի ու հիշատակների հետ:

Կյանքում կան երբեմն սովորական, աննշան պահեր, որ, սակայն, հանկարծ անհատի համար դառնում են կարևոր և բախտորոշ:

Այսպիսի շատ սովորական մի պահ առիթ դարձավ, որ ես ծանոթանամ պրոֆեսոր Հրաչյա Աճառյանի հետ և շուտով դառնամ (ինչ որ անհավատալի պիտի թվար անգամ ինձ) նրա «կյանքի վերջալույսի հավատարիմը և բախտակիցը», ինչպես սիրում էր նա ասել:

1935 թվականն էր:

Ես սովորում էի Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում:

Հունվարյան կիսամյակային քննություններին ես կտրրվեցի հենց առաջին առարկայից՝ դիալեկտիկական մատերիալիզմից, որի դասախոսը Բոխյանն էր: Այս ձախորդությունը, հիարկե, ինձ վրա շատ ծանր ազդեց:

Համակուրսեցի ընկերուհիներիցս Օլյան, որ նմանապես կտրվել էր նույն առարկայից, ինձ առաջարկեց միասին գնալ իրեն ծանոթ պրոֆեսոր Աճառյանի մոտ, որը բարեկամական մտերիմ հարաբերությունների մեջ էր գտնվում պրոֆեսոր Հայկ Գյուլիքնիսյանի հետ, իսկ վերջինս եղել էր Բոխյանի ուսուցիչը: Մենք պետք է խնդրեինք, որ միջնորդություն հարուցվեր, և մեզ թույլ տրվեր երկրորդ անգամ քննություն հանձնելու:

Աճառյանին մենք գտանք տանը: Նա մեզ ընդունեց պատշգամբում: Ընկերուհիս համառոտակի պատմեց եղելությունը և հայտնեց մեր գալու նպատակը:

Աճառյանն ասաց, որ ինքն այդ օրը շատ է զբաղված և խնդրեց գալ հաջորդ օրը՝ ժամը 7-ին, երբ իր մոտ է լինելու պրոֆեսոր Հայկ Գյուլիքնիսյանը:

Հաջորդ օրը՝ նշանակված ժամին, մենք եղանք Աճառյանի մոտ: Աճառյանը մեզ ընդունեց շատ սիրալիր և ծանոթացրեց պրոֆեսոր Հայկ Գյուլիքնիսյանի և պրոֆեսոր բժիշկ Միրզա Ավագյանի հետ, որոնք նրա մոտ էին: Ապա դառնալով Գյուլիքնիսյանին՝ ասաց.

– Հա՛յկ, սրանք քո աշակերտ Բոխյանի զոհերն են. եկել են՝ քեզ մոտ քննություն հանձնելու:

Գյուլիքնիսյանը սկսեց ինձ հարցաքննել:

Ես նկատեցի, որ նույն ժամանակամիջոցում Աճառյանը գրույցի է բռնվել Օլյայի հետ: Հետո ընկերուհիս ինձ հայտնեց, որ պրոֆեսոր Աճառյանը շատ մանրակրկիտ հետաքրքրվել է իմ մասին և տեղեկություններ հավաքել: Նա Օլյայից իմացել է, որ ծնողներ ունեմ, ամուսնացած եմ և բաժանված, իսկ այժմ ապրում եմ ուսանողական հանրակացարանում:

Օլյայի խոսքերն ինձ մղեցին հետադարձ մի հայացք գցել իմ կյանքի վրա: Երիտասարդ էի: Կյանքն իր շեմքին ինձ դիմավորել էր դառնություններով: Ամուսնացել էի Սմիռնով ազգանունով բարի, պարկեշտ, բայց բավականին երկչոտ մի չեկիստ երիտասարդի հետ, և ապրում էինք սիրով: Մի չարաբաստիկ օր էլ եղբայրս՝ Ռուշանը, որ զբաղվում էր առևտրով, անհիմն մի զրպարտությունների գոհ դառնալով, բանտարկվեց:

Եվ ահա ամուսինս էլ, եղբորս բանտարկությունից հետո վախենալով ծանր հետևանքներից, հետզհետե հեռացավ ինձանից, որը հանգեցրեց մեր բաժանման:

Օլյայից ստացված այս տեղեկություններից հետո Աճառյանն ասում է.

– Լա՛վ, այդքանն էլ բավական է:

Պրոֆեսոր Աճառյանի արտաքին տեսքը ինձ շատ էր զարմացրել: Ես չէի կարողանում հավատալ, որ կարող է այդպիսի պրոֆեսոր լինել. նայում էի նրան ու զարմանում: Նա չափազանց հասարակ արտաքին ուներ. այդ օրը հազել էր մետաքայա վերնաշապիկ՝ կուրծքը բաց, թևերը երկար, ձեռքերը մեջն ընկած, անդրավարտիքը գոտիով ամուր կապած: Նրա մի ոտքին կրկնակոշիկ էր, մյուսին՝ բուրկա (թաղիքե ձտքերով կոշիկ): Չափազանց անհանգիստ բնավորությամբ, աշխույժ, կենսուրախ մարդ էր երևում:

Պրոֆեսոր Աճառյանը առաջարկեց նստել և զգալ այնպես, ինչպես կզգանք մենք մեր տանը: Ապա սկսեց թեյի պատրաստություն տեսնել: Շատ հին թիթեյա վառարանի վրա դրել էր թեյամանը, որն այնքան էլ ամուր չէր. նա սեղանի վրա փռեց երկու լրագիր և վրան դրեց հաց, զանազան հրուշակեղեններ ու շաքարեղեն: Ափսեներ չկային, նա ամեն ինչ դնում էր էմալապատ թասերի մեջ: Օլյան առաջարկեց թեյը ինքը լցնել, բայց Աճառյանը չհամաձայնվեց և ասաց.

– Այսօրվա չարչարանքը ձեզ պես ազնիվ հյուրերի համար ինձ շատ մեծ հաճույք է պատճառում:

Բոլորիս թեյ տալուց հետո Աճառյանը պատեֆոնը լարեց և ինչ-որ նվազի եղանակ դրեց, վերցրեց իր բաժակը, եկավ ու նստեց կողքիս՝ աթոռին: Ես շփոթվեցի և այլայլվեցի, իսկ նա համարձակ ասաց ականջիս.

– Օրի՜րդ, դուք ի՛նչ լավ սիրտ ունեք: Ես ձեզ սիրեցի, իսկ դո՞ւք:

Եվ նա սպասողական հայացքն ուղղեց ինձ:

Ինքս ինձ բոլորովին կորցրել էի. չգիտեի ինչ անել՝ այդ կաշկանդված վիճակից դուրս գալու համար: Վերջապես, ինձ հազիվ հավաքելով, ամոթից շփոթված, գլուխս կախ, առանց շուրջս նայելու՝ պատասխանեցի:

– Իսկ ես ձեզ հարգում եմ՝ որպես պրոֆեսորի:

– Շնորհակալ եմ, - ասաց նա, - այդ էլ բավական է:

Գյուլիքնիսյանը, որ զարմանքով հետևում էր, հարցրեց.

– Հրաշյա՛, այդ ի՞նչ սեր է:

Աճառյանը ժպտալով պատասխանեց. «Իսկական սերը մի րոպեի մեջ է ծնվում, Հա՛յկ»: Գյուլիքնիսյանը ինձ անհարմար դրությունից դուրս բերելու համար ասաց.

– Օրի՜րդ, մի՛ այլայլվեք, դրա բնավորությունն է այդպես:

Ես ինքս ինձ նախատում էի, որ գալով այդտեղ՝ մատնվել էի այդ վիճակին:

Բժիշկ Միրզա-Ավագյանը, որ այդ ամենին ականատես էր, նստած տեղից մոտեցավ ինձ, ձեռքը դրեց ուսիս և ասաց.

– Օրի՜րդ, մի՛ հուզվեք. նա շատ կատակասեր է. մոտիկից ծանոթանաք՝ շատ կհարգեք:

Օլյան, կողքիս նստած, չարաճճիորեն շարունակ ծիծաղում էր: Ես շատ էի վրդովված նրա վրա: Այսպիսի դրության ստեղծման գլխավոր պատճառը նրան էի համարում, սեղանի

տակից շարունակ սեղմում էի ոտքը, որպեսզի գնանք, իսկ նա, կարծես ավելի հաճոյանալով, կամացուկ ասում էր:

– Լա՛վ, Սոֆի՛կ, մի քիչ էլ նստենք:

Պրոֆեսոր Գյուլիքնիսյանը այս լարված դրության մեջ փոփոխություն մտցնելու համար ասաց.

– Ես հիմա նորից ձեզ պետք է քննեմ և տեսնեմ, թե Բոխյանը ձեզ ինչու է կտրել:

Ապա նա սկսեց մեզ հարցեր տալ: Ես այնքան էի հուզված ու շփոթված, որ չգիտեմ, թե մենք ինչպես պատասխանեցինք ի հարցերին: Հարցաքննությունը վերջացնելուց հետո նա մի գրություն ուղղեց Բոխյանին՝ հայտնելով, որ ինքը մեզ քննել է և հանձնարարում է, որ նա ևս մեզ քննի:

Մենք շտապում էինք գնալ, որպեսզի չուշանայինք և հանրակացարանի դուռը չփակված տեղ հասնեինք: Ես անհամբեր դուրս եկա պատշգամբ՝ սպասելով Օլյային, որ բավական ուշացավ:

Ճանապարհին ես շատ կշտամբեցի ընկերուհուս՝ Օլյային՝ որպես այդ բոլորի գլխավոր պատճառի, և կարծես վրդովմունքս մեղմացնելու և մի քիչ սիրտս հովացնելու համար ասացի.

– Այդպես էլ պրոֆեսոր կլինի՝ կուրծքը բաց, պարանը մեջքին:

Օլյան շարունակում էր իր չարաճճի ծիծաղը և ասում.

– Հետո՞ ինչ. նա համեստ, բայց խոշոր գիտնական է: Կհարցնես, կիմանաս:

Վերջապես հասանք հանրակացարան և լուռ քնեցինք:

Ես կարծում էի, որ դեռ ամեն ինչ գաղտնիք է մնում իմ և Օլյայի միջև: Բայց Օլյան այնպիսի աղջիկ չէր, որ կարողանար գաղտնիք պահել: Նա արդեն ամեն ինչ պատմել էր բոլորին. ընկերուհիներս տեղյակ էին:

Հաջորդ առավոտ աղջիկները հայտնեցին, թե Աճառյանը եկել, ինձ է փնտրում: Հանկարծ ուսանողական հանրա-

կացարանի սենյակի դուռը բացվեց, և պրոֆեսորը ներս մըտավ, բարևեց բոլորին, ապա մոտենալով ինձ՝ ասաց.

– Մոֆի՛կ, ես եկել եմ՝ տեսնելու, թե դու ինչպես ես ապրում:

Ես նայեցի նրան շփոթված ու ամոթխած և չգիտեի ինչ անել: Հետո նա սենյակում եղած ընկերուհիներին հետ իր մոտ ճաշի հրավիրեց. թեև հրավերն ընդունվեց, բայց ես չուզեցի գնալ: Մերժեցի, որի պատճառով ընկերուհիներս էլ չգնացին:

Երեկոյան Աճառյանը ինքն եկավ՝ ձեռքին մի տուփ շոկոլադ, և երկար մնաց: Նա նկատեց, որ մեզ մոտ շատ ցուրտ էր, և ստիպված ենք վերարկուներս վրաներս գցած պարապել: Նա խոստացավ մեզ փայտ ճարել, իսկ տղաները՝ վառարան:

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, Աճառյանն արդեն փայտ էր ուղարկել: Քիչ անց ինքն էլ եկավ և տեսնելով, որ տղաները չեն կատարել իրենց խոստումը, իսկույն ևեթ գնաց: Երեկոյան, երբ ինստիտուտից վերադարձանք, վառարանն արդեն ճարճատում էր, ինքն էլ՝ կողքին նստած:

Այդ դեպքից հետո Աճառյանը դարձավ մեր հանրակացարանի սիրելի հայրը, բարեկամը, ուսուցիչը. բոլորը ուրախ էին նրա գալուն. գիտեր շատ հետաքրքիր խոսել, ուշադիր էր դեպի բոլորը, հասկապես դեպի ինձ: Այսպես, նա առանց արգելքի ելք ու մուտք ուներ մեր հանրակացարան:

Մի քանի օրից Աճառյանը նորից եկավ մեզ մոտ և ինձ Օլյայի հետ հրավիրեց ճաշի՝ հայտնելով նաև, որ մի պոեմ ունի գրած և ցանկանում է այն ընթերցել մեզ համար: Իմանալով, որ նա մեզ հանգիստ չի թողնելու, այս անգամ որոշեցինք գնալ:

Աճառյանը մեզ ընդունեց շատ սիրալիր, ապա կարդաց խոստացած պոեմը, որի նյութը վերցված էր Արտաշեսի և Մաթենիկի սիրավեպից:

Հետո փլավ հյուրասիրեց:

Ճաշից հետո Օլյան հանկարծ ասաց.

– Սոֆի՛կ, ես շտապ մի տեղ եմ գնալու, դու ինձ սպասի՛ր այստեղ, ես շուտով կգամ:

Երբ մնացինք երկուսով, Աճառյանը հանպատրաստից մի ոտանավոր հորինեց՝ ինձ ձոնված, և կարդաց.

«Քեզ Անահիտ կոչեցի,

Իբրև տիպար մաքրության,

Միրտդ մաքուր, դու մաքուր,

Տիրեցիր իմ էության:

Բազուկներով սեղմեցի,

Սեղմեցի քեզ կաթոզին,

Սերդ մաքուր, դու մաքուր:

Դու պսակն ես իմ ճակատի»:

Ես մինչև հոգուս խորքը հուզվել էի և կարծես սկսել էի հասկանալ այս մեծ մարդուն: Շուրջ տասը տարի առաջ վաղաժամ զրկվելով իր սիրած կնոջից՝ Արուսյակից՝ Աճառյանը խորապես ընկերոջ սիրո, ինձամքի կարիքն էր զգում: Մեծ և հզոր իր մասնագիտության մեջ՝ նա թուլանում, տկարանում էր ինձ նման մի տկար արարածի առաջ: Ինչէ՞ր էին արդյոք կատարվում այդ մեծ հոգու խորքում:

Ապա Աճառյանը, թախծոտ հայացքը դեմքիս սևեռելով, խնդրեց, աղաչեց.

– Սոֆի՛կ, հոգյա՛կս, դու այսուհետև մնալու ես ինձ մոտ, այլևս չես գնալու: Առանց քեզ ես կյանք չունեմ: Մնա՛ ինձ մոտ:

Հետո նա հանցավորի նման ծունկի եկավ հանգուցյալ կնոջ՝ Արուսյակի նկարի առաջ, աղոթք մրմնջաց, ձեռքերը պարզեց դեպի նկարը և գոչեց.

– Ների՛ր ինձ, Արուսյա՛կ, ների՛ր, որ ես պայմանագանց եմ լինում քո հանդեպ: Ների՛ր դու, Արուսյա՛կ, ինձ, գուցե իմ հասակի թուլությունն է պայմանագանց լինելը: Ես այլևս մենակ ապրել չեմ կարող, մի մոտիկ էակի կարիք եմ զգում:

Ապա, ինձ դառնալով, ասաց.

– Սոֆի՛կ, մի՛ զարմանա, մի՛ նեղացիր, նա եղել է իմ առաջին սերը. քսանմեկ տարի նա եղել է իմ կյանքի ընկերը:

Ես նայում էի զարմացած, ապշած: Իմ էլ սիրտն ու հոգին փոթորկվել էին այրող այս տեսարանից: Անվերջ հոսող նրա արցունքներն ինձ զինաթափ արեցին: Նստեցի...

Հրաշայի տխրությունն անմիջապես փոխվեց ուրախության: Նա ճիշտ նման էր փոքրիկ երեխայի, որը, դեռ աչքերից հոսող արցունքները չդադարած, սկսում է ժպտալ, ծիծաղել: Նրա ուրախությանը չափ չկար: Երեխայի նման դեսուդեն էր վազվզում: Չգիտեր, թե ինչով և ինչպես ինձ զբաղեցնեք: Գըրքեր էր լցնում իմ առաջ, հետաքրքրական և ընտիր էջեր էր կարդում ինձ համար: Ժամանակն ուշ էր արդեն, բայց Օլյան չէր վերադառնում, ես չգիտեի մենակ ուր գնալ:

Աճառյանը նորից խնդրեց, աղերսեց, որ մնամ իր մոտ, իրեն չթողնեմ մենակ ու անտեր: Եվ ես մնացի:

Ու ես նորից մտածում եմ, որ կյանքում կան երբեմն սովորական, աննշան դեպքեր, պահեր, որ, սակայն, հանկարծ դառնում են կարևոր, բախտորոշ անհատի համար:

Այսպես. այժմ ես ուսանող եմ, բայց կյանքն ինձ համար մտնում էր բոլորովին նոր հունի մեջ. ունեի նոր պարտակա-նություններ, նոր իրավունքներ: Ջգում էի, որ մեծ էր իմ կատարած գոհողությունը, ծանր էր իմ ընդունած պարտակա-նությունը: Պիտի կարողանայի՞ արդյոք ինձ արդարացնել իմ արած այս հանդուգն քայլի համար:



## ԱՍՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մեր համատեղ կյանքից անցել էր մեկ ամիս: Մի օր Հրաչյան ասաց.

– Սոֆի՛կ, հոգյա՛կս, ինչպես տեսնում եմ, շատ լավ ընկեր ես, քեզանից անչափ գոհ եմ և ինձ շատ բախտավոր եմ զգում քեզնով: Ոչ մի բան քեզ ինձանից անջատել չի կարող: Եթե դու ինձ սիրում ես (բայց ես վսիսենում եմ այդ բառից), թեկուզ հարգում, համակերպվել ես արդեն, արի մի պայմանագիր կնքենք և ամուսնանանք:

Աճառյանը ոչինչ չասաց զագսի կամ եկեղեցու միջոցով մեր ամուսնությունը օրինականացնելու մասին: Նա ավելի մեծ կարևորություն էր տալիս անձնական բարոյական պարտավորությանը, քան թե օրենքին. նա մի պայմանագիր շարադրեց և տվեց ինձ՝ ստորագրելու: Ես հրաժարվեցի.

– Հրաչյա՛, – ասացի ես, – դու ինքդ ստորագրի՛ր, տեսնենք ո՞վ իր խոստմանը հավատարիմ կմնա:

Նա շատ պնդեց, որ կարդամ պայմանագիրը:

– Պայմանագրում կետեր կան, – ասաց նա, – որոնք դու պետք է ընդունես. դա ապագայի պայմանագիր է:

Եվ նա սկսեց բարձրաձայն կարդալ պայմանագիրը:

## «Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

Մի ամսվա համատեղ կյանքից հետո իրար արդեն ճանաչած՝ մենք՝ Աճառյաններս, պայմանագիր ենք կապում փոխադարձաբար կապված մնալ իրար հետ ամուսնական անխզելի կապով: Ոչ մի բան չպիտի կարողանա բաժանել մեզ իրարից՝ ո՛չ հիվանդություն, ո՛չ հաշմանդամություն և ո՛չ էլ աղքատություն: Մինչև իսկ մեկս եթե հետին չքավորության հասնի, մյուսը խոսք է տալիս չբաժանվել նրանից և չլքել նրան: Մեր խոսքը հաստատում ենք՝ երդվելով մեր պատվի և մեր հոր գերեզմանի վրա:

9 փետրվարի, 1936, Երևան»

Ընթերցումից հետո, ուղիղ աչքերիս մեջ նայելով, ասաց.

– Հասկացա՞ր, համաձայն ես սրան, լավ մտածիր և կրկնի՞ր:

– Ես համաձայն էի այն ժամանակ, երբ մնացի Ձեր տանը, – ասացի ես, – էլ ինչ կարիք կա կրկնելու:

– Ընկել ես, պիտի քաջես էլի, խեղճ Սոֆիկ, – ասաց Հրաչյան այն ներքին համոզումով, որ այս պայմանագրով ավելի էր ամրապնդվում մեր ամուսնությունը:

Աճառյանը գոհ էր իր վերադասավորված կյանքից, գոհ էր անշուշտ:

Ես առանց պայմանագրի հաստատ էի իմ որոշման մեջ, բայց դեռ ունեի ծրագրեր: Առաջին իսկ օրից ես նկատել էի, թե անելիք շատ գործ ունեմ. պետք էր բարեկարգել բնակարանը, բարեփոխել նաև Հրաչյայի արտաքին տեսքը:

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐԻԿԻՍ ԿԱՄ ՄԱՅՐԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Մեր ծանոթության սկզբում Աճառյանը շատ հոգատար ու ուշադիր էր իմ նկատմամբ: Նա միշտ ուղեկցում էր ինձ կամ գալիս էր հանրակացարան, և ես ազատ ժամանակ չէի գտնում՝ մայրիկիս տեսության գնալու: Մի օր էլ ինստիտուտից ուղղակի գնացի մայրիկիս մոտ, որը շատ ուրախացավ՝ հանդիմանելով, որ մեկ շաբաթ իրեն չեմ այցելել: Հետո երկար-բարակ հարցումներից հետո ասաց, որ իրենց հարևան Նազիկ Մազմանյանի ասելով՝ ինձ առաջարկություն է արել մի պրոֆեսոր և ավելացրել. «Հրաչյայի հարգված մի գիտնական է, Սոֆիկը սխալ կանի, եթե չհամաձայնվի: Պրոֆեսոր Աճառյանը խելագարի պես սիրում է նրան»... Ապա ավելաց-

րեց. «Ես կուզենայի քեզնից իմանալ»: Ես պատասխանեցի. «Մայրի՛կ, չգիտեմ, թե ինչպես կվերջանա մեր այս ծանոթությունը, բայց որ պրոֆեսոր Աճառյանը շատ լավ, բարի, ազնիվ, զգայուն և շատ ուշադիր է հանդեպ ինձ, խոսք չունեմ ասելու»:

– Աղջի՛կս, Սոֆի՛կ, լավ մտածիր ամուսին ընտրելու հարցում: Դու մի անգամ դժբախտացել ես (իհարկե, ոչ քո մեղքով), չլինի թե այս անգամ էլ անհաջող ընտրություն անես: Նազիկի ասելով՝ նա հասակ առած մարդ է, նա արդեն կազմակերպված բնավորություն կունենա, դժվար կլինի նրա հոգսը տանելը, դու պիտի հարմարվես նրա բնավորությանը, արդյոք կարո՞ղ ես: Մեծ մարդը մեծ պահանջ, մեծ հոգսեր կունենա: Սոֆի՛կ, բալա՛ս, ախար ի՞նչն է քեզ ստիպում, որ հիմա ամուսնանաս, ավելի լավ չի՞ լինի, որ ուսումդ ավարտես, հետո էլ քո հասակակցի հետ ամուսնանաս:

– Չգիտեմ, մայրի՛կ, ինչ է լինելու վերջը. նա ինձ շատ է հետևում,- ասացի ես. բաժանվեցինք՝ խոստանալով հաճախ այցելել իրեն:

Այդ օրը Աճառյանը եկել էր հանրակացարան ու շատ էր զարմացել՝ ինձ չտեսնելով: Հարցուվորձ էր արել ընկերուհիներիս, թե որտեղ կարող եմ լինել, բայց ոչինչ չէր իմացել: Ինձ երկար սպասելուց հետո շատ ուշ հեռացել էր: Հաջորդ օրը Աճառյանը սպասածից ավելի շուտ եկավ և իսկույն էլ հարցրեց, թե որտեղ էի ես եղել: Ես պատասխանեցի, որ գնացել էի մայրիկիս այցելության: Նա շատ զարմացավ, որ ես մայրիկիս գնալու մասին իրեն ոչինչ չէի ասել, և ինձ կշտամբեց. Այլապես ինքն էլ կուղեկցեր ինձ: Նա խնդրեց, որ հաջորդ անգամ գնալու դեպքում իր հետ գնամ և ծանոթացնեմ մայրիկիս հետ: Հետո Աճառյանը տարակուսած, ուղղակի աչքերիս մեջ նայելով, հարցրեց.

– Եթե ձերոնք ինձ չհավանեն, քեզ համապատասխան չհամարեն ու խորհուրդ տան, որ վերջ տանք մեր ծանոթությանը, ինչպե՞ս կվարվես դու:

Ես լռեցի, ոչինչ չասացի, որովհետև դրան լուրջ նշանակություն չէի տալիս: Հետագայում երբ համաձայնության պայմանագիր կնքեցինք, հաջորդ օրը Աճառյանը առանց ինձ գնացել էր մերոնց մոտ, ներկայացել որպես փեսա, համբուրել մորս, քրոջս ձեռքերը և խնդրել մերոնց, որ եթե իրեն չհավանեն, այդ մասին գոնե ինձ ոչինչ չասեն:

Մեր ամուսնության պայմանագիր կնքելուց հետո նորից գնացի մայրիկիս մոտ, բայց շատ զարմացա, որ մայրիկս գիտեր մեր ամուսնության մասին և ասաց, որ քույրս՝ Միրուշը, իմանալով այդ մասին, եկել էր մեր տան դիմաց՝ ինձ տեսնելու հույսով, բայց ինձ չտեսնելով՝ և չէր համարձակվել ներս մտնել, կանգնել, լաց էր եղել և տուն վերադարձել, իսկ Գարիկը՝ եղբայրս, Մոսկվայում էր, այլապես կգար և անպայման ինձ կայցելեր:

Ես մեղավորի հայացքով նայեցի մայրիկիս՝ սպասելով հանդիմանանքի: Հակառակ սպասածիս՝ մայրս խրատական մեղմ ու բարի հայացքով ասաց.

– Ամուսնուդ տարիքով լինելը՝ ոչինչ. կարևորն այն է, որ իրար հասկանաք: Աղջի՛կս, դու ծանր լծի տակ ես մտել և շատ անելիքներ ունես: Նա մեծ մարդ է, ունի կազմակերպված հաստատուն բնավորություն, ինչքան էլ դժվար լինի նրա ցավը քաշելը, դու պետք է աշխատես պատվով դուրս գալ, պարտականությունդ խղճով կատարես: Դու պետք է հարմարվես նրա բնավորությանը: Լա՛վ պահիր նրան, որ Աստված էլ քեզ պահպանի: Եղի՛ր խոնարհ ու համեստ:

Անչափ հուզվեցի մայրական այդ բարի խրատներից:

Մի օր էլ Հրաչյան ինձ ստիպեց, որ գնանք, մորս ու քրոջըս մեզ մոտ բերենք, թեև ես չէի ցանկանում՝ պատճառաբանելով, որ անհարմար է, տունը քիչ կարգի բերենք նոր, բայց

նա, ինձ չլսելով, գնացել էր, մորս, քրոջս համոզելով՝ ավտոմեքենայով բերել մեր տուն: Մայրս հենց որ ներս մտավ, զարմացած չորս կողմը նայեց, ինձ մոտենալով՝ ականջիս ասաց.

– Աղջի՛կս, այս ի՞նչ վիճակի մեջ եք ապրում:

Հրաչյան իրեն շատ զվարթ էր պահում՝ ոգևորված նոր բարեկամներով, կատակում, հյուրասիրում էր մորս և քրոջս: Համբուրելով քրոջս՝ ասաց.

– Մայրի՛կ, Սիրուշոն էլ այդպես լավ աղջիկ է, ինչպես Սոֆիկը:

Մայրս ապշած, շիվարած, զարմացած ականջիս ասաց.

– Սոֆի՛կ, այս մարդը իրեն շատ տարօրինակ է պահում, լուրջ մարդ չի երևում:

Իհարկե, մորս դատողությունները հիմնված էին լոկ արտաքին երևույթների վրա. սա դեռ հարևանցի ծանոթություն էր, նա չէր կարող ընկալել Հրաչյայի ուրախության պատճառը. այդքան տարվա մենակությունը գուցե տարօրինակ էր դարձրել: Ես չէի շտապում բան ասել՝ մտածելով, որ դեռ միմյանց լավ ճանաչելու առիթներ կունենան: Միայն զգում էի, որ անհրաժեշտ էր հնարավորին չափ շուտ բարեկարգել մեր բնակարանը և բարեփոխել Աճառյանի արտաքինը:

## ՄԵՐ ՀԱՐՄԱՆԻՔԸ

Մեր ամուսնությունից անցել էր մի ամիս: Եղբայրս՝ Գարեգինը, վերադարձել էր Մոսկվայից: Մայրս նրան մանրամասն պատմել էր Աճառյանի հետ իմ ամուսնության մասին և ասել էր, որ գա՛ մեզ տեսության: Ես շատ էի պատմել Հրաչյային եղբորս մասին: Մնում էր առիթ ունենալ հանդիպելու համար:

Եղբայրս, ամաչելով մենակ գալ, իր հետ է վերցնում Կիրովականի քաղաքային կոմիտեի քարտուղար Քալանթարյանին, որ սքանչելի ձայն ուներ, և քրոջս որդուն՝ Վահագնին: Մանդողքներով բարձրանալիս նրանք հանդիպում են պրոֆեսոր Քեչեկին և հարցնում իմ մասին: Քեչեկը կասկածանքով առաջնորդում է անձանոթ հյուրերին Աճառյանի մոտ, որն իր հերթին ավելի վախկոտ էր և չի հանգստանում, մինչև որ Գարեգինը հայտնում է իր ինքնությունը: Աճառյանը շատ է ուրախանում և ասում.

– Դուք այսօր իմ հյուրերն եք: Հիմա Սոֆիկը դասից կգա:

Ապա Աճառյանն առաջարկում է եղբորս միասին շուկա գնալ՝ խնջույքի համար գնումներ կատարելու:

– Մենք գնումների հետ գործ չունենք, պատասխանում է եղբայրս, թե քեֆ կա, ասե՛ք, քեֆ անենք:

Եվ նրանք դուրս են գալիս՝ հայտնելով, թե անպայման կգան ավելի մեծ խմբով: Ճանապարհին ես հանդիպեցի նրանց, խոստացան անպայման գալ: Մինչև նրանց վերադարձը Հրաչյան քրոջս որդու՝ Վահագնի հետ գնաց գնումներ կատարելու, իսկ ես սեղանը պատրաստեցի:

Եկան մեր հյուրերը. քույրս էր՝ Միրանուշը, փեսաս՝ Արտյոմը, եղբայրս՝ Գարեգինը, Կիրովականի քաղկոմի քարտուղար Քալանթարյանը, Վահագը իր կնոջ՝ Շուշիկի հետ, և ուրիշներ:

Խնջույքը սկսվեց երեկոյան ժամը 8-ին: Մինչև ժամը 10-ը ամեն ինչ ընթանում էր հանգիստ, խմում էին կենացներ: Ապա սկսեցին երգել ու պարել:

Այդ միջոցին դուռը բախեցին. մեր հարևան Արսեն Մանանդյանն էր՝ պրոֆեսոր Հակոբ Մանանդյանի եղբայրը. պահանջում էր վերջ տալ աղմուկին: Մենք նրան հրավիրեցինք՝ մասնակցելու մեր ուրախությանը, սակայն նա մերժեց: Քիչ հետո նա նորից եկավ իր եղբոր՝ պրոֆեսոր Հակոբ Մանան-

ոյանի հետ՝ խիստ վրդովված, ավելի կտրուկ կերպով պահանջելով վերջ տալ աղմուկին:

Աճառյանը մոտեցավ և մեղմ ասաց.

– Պարո՛ն Մանանդյան, իմ կնոջ եղբայրն է եկել, մեր հարսանիքն է, լավ կլիներ, որ դուք էլ մասնակցեիք խնջույքին:

Մանանդյանը ջղայնացած պատասխանեց.

– Ձեր հարսանիքով պետք է ուրիշներին անհանգստացնե՞ք: Դո՛ւրս եկեք փողոց և ինչքան ուզում եք երգեցե՛ք և պարեցե՛ք:

– Ինչ իրավունք ունեք իմ տանը կարգադրություններ անելու: Միշտ ապրել ենք լուռ ու հանգիստ, մի օր էլ աղմուկով ապրենք:

Մանանդյան եղբայրները սպառնացին նույնիսկ միլիցիայով: Հրայան բարկացած ասաց.

– Տղանե՛ր, քե՛՛ֆ արեք, որքան կարող եք բա՛րձր երգեցեք և պարեցե՛ք:

Եվ ինքը ոտքը ամուր խփեց հատակին և ասաց.

– Դե տեսնենք՝ ինչ պիտի ասի պարոն Մանանդյանը: Սկսեցե՛ք:

Քալանթարյանն սկսեց բարձրաձայն երգել: Տասը ռուպե չանցած՝ դուռը կրկին ծեծեցին, և այս անգամ Մանանդյան եղբայրները ներկայացան միլիցիոներների ուղեկցությամբ: Բնավորությամբ երկչոտ Հրայան սաստիկ վախեցավ: Միլիցիոներները, եղբորս ծանոթ լինելով, բացատրեցին, որ Մանանդյանները սարափելի գույներով էին ներկայացրել մեր համեստ խնջույքը: Եղբայրս բացատրեց, որ դեռ ժամը 10-ն է, իսկ օրենքով մինչև կեսգիշեր իրավունք ունենք ուրախությունը շարունակելու:

Բայց սեղանակիցների տրամադրությունն ընկել էր, ուստի որոշեցին խնջույքը շարունակել Քանաքեռում՝ մեր ծանոթներից մեկի տանը:

Աճառյանն ունէր բնավորության և սովորությունների հաստատուն գծեր, որոնք հասնում էին նույնիսկ որոշ տարօրինակության: Նրա քնի ժամը եկել էր, և արդէն պատրաստվեց անկողին մտնել: Ուտելիքները փաթաթեցինք տանելու համար: Եղբայրս ուզում էր, որ ես էլ գնայի, բայց Հրայցյան չհամաձայնվեց: Նրանք մեկնեցին: Վերջում Հրայցյան փորձեց իմ սիրտն առնել, որ չնեղանամ:

- Ոչի՛նչ,- ասացի ես,- արդէն չէի ցանկանում գնալ:
- Իսկ եթէ Գարեգինը նեղանա, վաղը առավոտ կգնամ՝ նրանից ներողություն խնդրելու,- ասաց Հրայցյան:

## **ԱՅՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ, ՈՐՏԵՂ ԱՊՐՈՒՄ ԷՐ ՀՐԱԶՅԱՆ**

Այն ժամանակ Աճառյանն ապրում էր Աբովյան և Աղայան փողոցների հատման կետում՝ անկյունի հ. 75 տանը:


Բնակարանի մուտքը բակի կողմից էր:

Աջ ու ձախ կողմերից աստիճաններ էին ձգվում, որոնք տանում էին դեպի պատշգամբ: Պետք էր բարձրանալ աջակողմյան աստիճաններով: Աճառյանի սենյակը գտնվում էր երկրորդ հարկում: Երկրորդ դուռը միաժամանակ Աճառյանի և Մանանդյանի նախասենյակի դուռն էր: Աճառյանի բնակարանի աջ կողմում ապրում էր պրոֆեսոր Քեչեկը, ձախ կողմում՝ պրոֆեսոր Մանանդյանը, պրոֆեսոր Քալանթարյանը և պրոֆեսոր Տոնյանը:

Աճառյանը և Մանանդյանները բնակվում էին միևնույն միջանցքում, և նրանք միշտ դուռը փակ էին պահում: Հրայցյան ստիպված միջանցքի դռնից մի փոքր անցք էր բաց արել, կախել էր մի դատարկ կոճ՝ զանգի փոխարեն, և թելը տարել,



միացրել էր իր սենյակի ներսից կախված մի փոքրիկ զանգի, երբ այդ թելը ձգում էին, զանգը հնչում էր, և ինքը բացում էր



դուռը, որ չխանգարեր իր հարևաններին:

Հարևաններն էին պրոֆեսոր Հ. Քեչեկը, պրոֆեսոր Ա. Տոնյանը և պրոֆեսոր Պ. Քալանթարյանը: Աճառյանի սենյակը նախապես եղել էր մի մեծ սրահի կեսը: Փողոցի կողմից մի պատշգամբ և երկու լուսամուտ ուներ: Ամբողջ բնակելի տարածությունը 20 քառակուսի մետր էր, որը նա սև վարագույրով բաժանել էր երկու մասի. մի կողմը դարձրել էր ննջարան, մյուս մասը միաժամանակ ծառայում էր որպես ընդունարան, ճաշարան և խոհանոց: Ճաշարանի աջ կողմի պատը զարդարված էր Աճառյանի հանգուցյալ կնոջ՝ Արուսյակի ցաքուցրիվ դիմանկարներով: Բոլորի մեջ աչքի էր զարնում Արուսյակի մեծադիր դիմանկարը՝ գործ նկարիչ Աղաջանյանի, հետո սրբագրված Փանոս Թերմելեզյանի ձեռքով: Նկարների ներքևի մասում կային Աճառյանի և Արուսյակի դիմանկարները, որոնք պահել էմ: Ճաշարանի ձախ կողմում դրված էր մի հասարակ գրապահարան, որն Աճառյանը բաժանել էր երկու մասի. վերևում տեղավորել էր իր հագուստեղենը, իսկ ներքևում՝ սննդամթերքը:

Ամբողջ գույքը բնակարանի հետ միասին նա ստացել էր պետական համալսարանից, երբ նրան Պարսկաստանից հրավիրել էին՝ դասախոսելու Երևանի նորաբաց պետական համալսարանում:

Ննջարանում տեղադրված էին մի հասարակ փայտյա թախտ, մի մահճակալ և մի խոշոր սնդուկ, որի մեջ գտնվում էին Արուսյակի իրերը, որոնք Աճառյանը, որպես հիշատակ և մասունք, աչքի լույսի պես պահպանում էր: Պատերի տակ, հատակին դարսված էին գրքեր՝ ծածկելով մինչև իսկ լուսամուտի մի մասը. նա չէր սիրում գրապահարան: Արուսյակին պատկանած թախտի տակ շարված էին մնում նրա կոշիկները՝ տասը գույզից ավելի: Կնոջ մահից հետո Աճառյանը նրա անկողինը ծածկել էր սև շորով, որը երբեք չէր վերցրել, և իր ասելով՝ այդպես էլ պետք է մնար: Աճառյանի թախտի տակը ծառայում էր որպես մառան. այնտեղ լցված էին կարտոֆիլ և սոխ: Դռան մոտ կար հասարակ տախտակյա ամբիոն: Սենյակի կենտրոնական մասում՝ պահարանի կողքին, տեղավորված էր շատ փոքր, եմալապատ լվացարան, տակը՝ մի լազան: Սենյակի կենտրոնում կար նաև մի կոտրած սեղան, որի մի ջարդված ոտի փոխարեն արկղ էր դրված: Սենյակում կային նաև խախտված ոտքերով մի բազկաթոռ և չորս հասարակ աթոռ: Աջակողմյան պատի տակ դրված էին մի կուժ և մի կուլա՝ կանթերով, բայց ջարդված գլուխներով: Այդտեղ կար նաև մի գավաթ, որն Արուսյակի վերջին անգամ ջուր խմելիս ջարդվել էր: Տասը տարի շարունակ պահպանվել էին Արուսյակի դեղի սրվակները, և Աճառյանը դեռ չէր ուզում դրանք դեն գցել: Մնում էին Արուսյակի գործածած ավսենները: Այդ բոլորը սրբության նման, գուրգուրանքով պահում էր Աճառյանը: Նա հատկապես շատ էր ուրախանում բազկաթոռի համար և այն կոչում էր «թագավորական». մինչև այժմ էլ մնում է այդ բազկաթոռը: Սենյակի ձախ կողմում աչքի էր զարնում թիթեղյա հին վառարանը, որի տակը դրված

էր մի թաս՝ հատակը կրակից պահպանելու համար: Թասի մեջ մնում էին փութքը, (մաշան) ունելիքը և ակիշը: Այդ բոլոր իրերը ժամանակը ծածկել էր փոշու թանձր շերտով, Հրաչյան չէր թույլ տալիս դրանք մաքրել. նա ասում էր.

– Հանգուցյալ Արուսյակա իրերը ինչպես թողել է, թող այնպես էլ մնան. ոչ ոք իրավունք չունի դրանք տեղից շարժելու:

Կանացի մի քնքուշ էակ անդարձ գնացել էր այս բնակարանից՝ թողնելով իր տեղը դատարկ, ամուր պահելով, սակայն, իր գրաված տեղը ամուսնու սրտում:

Չնայած իմ հանդեպ արտահայտած բուռն սիրուն և խանդադատանքին՝ Աճառյանը միշտ անկեղծորեն ասում էր, թե անդարձ մեկնած կնոջ տեղը ոչ ոք չի կարող գրավել. նա կմնա միշտ իր սրտում և հիշողության մեջ:

Ես զգում էի, որ շատ էր դժվար իմ գործը, ինչպես ասել էր մայրս: Մանավանդ կնոջ մահով տասնյակ տարիների ընթացքում Աճառյանի մեջ առաջացած հոգեբանական բնավորություն փոխելը գրեթե անհնար էր:

Ես երբեք չպետք է ձգտեի նրա սրտից ու հիշողությունից դուրս բերել նրա սիրած ու փայփայած էակի հիշատակը, բայց, իհարկե, պետք է ջանայի քնքշորեն ու կամաց-կամաց մաքրել բնակարանից թանձր փոշին, մեջտեղից վերացնել Աճառյանի համար նվիրական այդ հնոտին, և թեկուզ շատ համեստ մեր բնակարանին տալ այնպիսի տեսք, որ հյուր ընդունելիս կարելի լիներ պարզապես դուրս գալ, չամաչել այնպես, ինչպես եղել էր մորս ու քրոջս առաջին այցի ժամանակ:

Պետք էր փոխել նաև Աճառյանի դերվիշական արտաքինը. այն դեռևս կանացի քնքուշ ձեռքի խնամքի պակաս էր զգում: Աճառյանը միշտ այդպես չէր եղել անշուշտ. նրա երիտասարդական շրջանի նկարները ցույց էին տալիս, որ նա գիտեր վայելուչ, կոկիկ հագնվել:

Իմ առաջ կային լուրջ, կարևոր և դժվարին անելիքներ:

## **ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՎ ԱՅԼ ԲԱՆԵՐԻ**

Մտքումս հետզհետե ձևավորվում էր մեր արդեն կես և, սակայն, վարագույրով էլ կրկին երկու կեսի բաժանված սենյակի բարեկարգման հնարավոր ծրագիրը, բայց զգուշանում էի այն շտապ գործադրության դնել:

Մի օր հայտնեցի Աճառյանին, թե ես զգեստապահարան և մահճակալ ունեմ, պետք է դրանք տուն բերեմ: Ես գիտեի, որ Հրաչյան հեշտ կերպով չէր համաձայնվելու:

– Մի՞թե ես չէի կարող զգեստապահարան և մահճակալ գնել,– ասաց նա,– բայց, ճիշտն ասած, ես այնքան էլ կողմնակից չեմ մահճակալի. թախտը ինչո՞վ է վատ, ես իմ թախտից զրկվել չեմ ուզում, իսկ եթե դու մահճակալ ես ուզում ունենալ, այդ արդեն քեզ է վերաբերում: Ափսոս չէ՞ թախտը. Կարծրը, ամուր, շատ լավ, հանգստավետ է և հարմար:

Ես հիշեցի, որ նա Էջմիածնում եղած ժամանակ, ինչպես ինքն էր պատմում, Գևորգյան ճեմարանում պաշտոնակիցը և մոտիկ բարեկամն էր եղել Կոմիտասի, որը սիրում էր կարծր թախտը, քնում էր նրա վրա: Աճառյանը հաճախ պատմում էր այդ մասին էլ, Կոմիտասի նման երկար տարիների ընթացքում վարժված լինելով թախտի վրա քնելուն՝ չէր ուզում նրանից բաժանվել:

– Նոր խաղ բացվեց գլխներիս,– ասաց Հրաչյան,– ինձ հանգիստ չպետք է թողնես:

Այսպես անցավ որոշ ժամանակ: Այդ միջոցին քաղաքում մահճակալ չէր վաճառվում: Այնուամենայնիվ, Հրաչյան հետաքրքրվում է, թե որտեղից կարելի է զգեստապահարան և մահճակալ ձարել: Մի օր էլ նա ինձ ասաց.

– Սոֆի՛կ, մի ընտանիք վաճառում է զգեստապահարան և մահճակալ, վաղը գնանք տեսնելու:

Հաջորդ օրը մենք դրանք հավանեցինք ու գնեցինք: Բայց ես չուզեցի Հրաչյայի ներկայությամբ դասավորել նոր կահույքը և սենյակում բարեկարգություններ մտցնել, որովհետև գիտեի, որ մեծ աղմուկ էր լինելու: Ինչպես կարելի էր նրան համոզել, որ թախտն իր տեղը զիջի մահճակալին:

Մյուս օրը նա դասի գնաց: Ես որոշեցի մնալ տանը և ձեռնարկել իմ բարեկարգման աշխատանքները: Ես կանչեցի Բադային, որը մեր բակումն էր ապրում և նման գործերի մեջ օգնում էր բոլոր հարևաններին: Նրա օգնությամբ էլ տեղավորեցինք զգեստապահարանն ու մահճակալը: Աճառյանի մահճակալը դրվեց Արուսյակի թախտի տեղը՝ պահպանելով ներքևում դասավորված կոշիկների դիրքը: Իմ մահճակալը դրեցի Աճառյանի թախտի տեղը, իսկ թախտը տեղափոխեցի պատշգամբ: Զգեստապահարանը գրավեց սնդուկի տեղը, իսկ սնդուկը՝ լուսամտուտի մոտ: Աշխատանքը վերջանալուց հետո ծածկեցի վարագույրները:

Երեկոյան վերադարձավ Աճառյանը: Ներս մտնելիս նա սկզբում ոչինչ չնկատեց, միայն հարցրեց, թե թախտն ու իրերը ուր են տարել: Հայտնեցի՝ իրերը դասավորել և տեղավորել են, ապա վարագույրը բաց արի և ցույց տվեցի: Հրաչյան հանկարծ բարկացած պռռաց.

– Ո՛ւր են Արուսյակիս անկողինը, նրա կոշիկները:

Ես մեկ առ մեկ ցույց տվեցի, որ Արուսյակի կոշիկները և թախտը իրենց տեղումն են, միայն վրան դրել են մահճակալը և անկողինը: Նա նույնպիսի բարկությամբ հարցրեց մյուս կահույքների և իրերի մասին, և ես, նույն ձևով մի առ մի ցույց տալով, տվեցի իմ բացատրությունները:

– Իսկ ո՞ւր է իմ թախտը, վերջում ասաց նա,– 13 տարի անտրտունջ ծառայել է ինձ, ի՞նչ ես արել:

Ես ցույց տվեցի պատշգամբում դրված թախտը և ասացի:

– Մտադիր եմ ամռանը քնել պատշգամբում՝ թախտի վրա:

– Լավ,- պատասխանեց նա,- այդ քեզ է պետք, ինձ պետք չէ:

Նա վերադարձավ սենյակ և ստուգեց, թե կուժն ու կուլան, գավաթը, նկարները արդյոք իրենց տեղումն են, ապա խստիվ պատվիրեց դրանց ձեռք չտալ: Վերջում նա մտավ ննջասենյակ, նստեց իմ մահճակալի վրա և իսկույն վերթռավ՝ ասելով:

– Այդ անպիտանը իր գիրկը մարդու չի ընդունում: Ափսոս չէ՞ր թախտս՝ կարծր, ամուր, ինչ ձևով ուզենայիր, այնպես էլ կարող էիր պառկել:

Եվ Աճառյանը ջղայնացած դուրս եկավ ննջարանից՝ ասելով:

– Այդ քեզ է պետք, ինձ պետք չէ:

Եվ այսպես, շատ մեծ դժվարությամբ Աճառյանը հաշտվեց, ավելի ճիշտ կլիներ ասել համակերպվեց այդ փոփոխություններին:

Աճառյանի արտաքին տեսքի, հագվածքի մեջ ևս շատ դժվարությամբ միայն հնարավոր եղավ փոփոխություններ մտցնել:

Մի օր ամենամեծ զգուշությամբ ես նրան ասացի, որ լավ կլինի քիչ կարճացնել բեղերն ու մորուքը: Նա հեշտությամբ համաձայնվեց:

Նա անհավատալիորեն ասաց. «Ինչպես ուզում ես, այնպես էլ կանեմ, միայն թե քեզ դուր գա»:

Վարսավիրանոցից վերադարձին նա ցույց տվեց բեղերն ու մորուքը և հարցրեց իմ կարծիքը: Ես հավանություն տվեցի, միայն ասացի, որ հաջորդ անգամ ավելի լավ կլինի մի քիչ ևս կարճացնել: Եվ այսպես, ամեն անգամ նույն հարց

ու պատասխաններով քիչ-քիչ կարճանում են նրա բեղերն ու մորուքը: Իհարկե, իմ նպատակն էր իսպառ վերացնել տալ բեղերն ու մորուքը, բայց վախենում էի միանգամից միտքս հայտնելու:

Մի օր էլ վարսավիրանոցից վերադարձին նկատեցի, որ մորուքի երկու կողմերը անհավասար են կտրել: Երբ ասացի, Աճառյանն ասաց, որ հաջորդ անգամ հավասարեցնել կտա:

Հաջորդ անգամ նա վարսավիրներին ասում է.

– Դուք մորուքս հավասար չէիք կտրել: Ինձ համար դա այնքան նշանակություն չունի, բայց կինս այդ մանրությունը նկատում է:

Վարսավիրները իրար երեսի են նայում և սկսում են «սրբագրել» մորուքը՝ շարունակ հարցնելով՝ հիմա ինչպես է: Վերջապես շատ կարճացնելուց հետո վարսավիրն ասում է.

– Պրոֆեսո՛ր, իսկ եթե ձեր մորուքը բոլորովին հանեմ, ավելի լավ չի՞ լինի:

– Իսկապես, - ասում է Աճառյանը, - այդ մեկի մասին չէի մտածել, վաղուց հոգիս ազատված կլինեք, դե լա՛վ, կտրի՛ր: Իսկ եթե կինս չհավանի, կասեմ, որ համբերի, մինչև որ նորից բուսնի:

Հետո Աճառյանն ավելացնում է.

– Մարդ որ կնոջ ձեռքն է ընկնում, նրա ասածներն անմիջապես պետք է կատարի, թե չէ քթից բռնած՝ կինը նրան պար կածի:

Տուն վերադառնալով՝ նա ասաց.

– Սոֆի՛կ, ահա հիմա ամեն ինչից ազատվեցի: Շատ պետք է մտածեի, մնացածն էլ սրբագրել տվեցի, հոգիս ազատվեց: Ե, ասելիք չունե՞ս:

Երբ ես գլխով դրական նշան արեցի, նա ավելացրեց.

– Վերջապես, փա՛ռք Աստծո, ազատվեցինք, էլ անելիք չունենք:

Ապա հոգոց հանելով շարունակեց.

–Ա՛խ, հանգուցյալ Արուսյակը ինչքան էր ուզում այդ բանն անել, բայց չկարողացավ: Սրանից էլ հեշտ բան... բայց ինչո՛ւ չկարողացավ...

## Գ Ն ՈՒ Մ Ն Ե Ր

Մեր ամուսնությունից հետո Աճառյանը հաճախ առաջարկում էր ինձ գնալ Տորգսին<sup>1</sup>՝ ինձ համար հագուստեղեն և կոշիկեղեն գնելու: Ես միշտ էլ խուսափում էի՝ ասելով, թե դրա ժամանակը չէ: Իրականում ես ամաչում էի Հրաչյայից:

Մի օր էլ Աճառյանը, հույսը կտրելով միասին գնումներ անելու հնարավորությունից, բժիշկ Քեչեկի կնոջը՝ Յուլյա Գեորգևնային, խնդրում է իրեն ուղեկցել Տորգսին: Հարևանուհուս ճաշակով առաջնորդվելով՝ Հրաչյան բավականին շոայլ գնումներ է կատարում:

Ինստիտուտից վերադարձա. սեղանի վրա տեսա դարսված 10-12 շրջագգեստացու, գուլպաներ, կանացի սպիտակեղեն և այլն: Նկատելով իմ զարմանքը՝ Հրաչյան ասաց, թե մի կին թողել է դրանք, որպեսզի ես ընտրություն կատարեմ, և հետո ինձ համար գնի: Ուշադիր գննելուց հետո ընտրեցի ամենից շատ ինձ դուր եկած մի կտոր: Նա հարցրեց, թե արդյոք մյուսներն ինձ դուր չէին գալիս, և սկսեց մի առ մի կտորները վերցնել և ինձ ցույց տալ: Քիչ նեղացած՝ ասացի, թե վերջապես բոլորը վերցնելու չեմ:

Աճառյանը շատ էր սիրում կատակ անել: Մի քանի կտոր ևս ընտրելով ինձ համար՝ ասաց, թե մնացածն էլ այն կինը կգա, կտանի: Մինչ ես ընտրած կտորները տանում էի ննջարան, Հրաչյան, մնացածն էլ բերելով, ի վերջո ասաց.

---

<sup>1</sup> Торгсин-торговля с иностранным государствами. Առևտրական ցանցի խանութներ, որտեղ վաճառքը կատարվում էր դոլարով կամ ոսկով (Տողատակերի բացատրությունները Ամալյա Խաչատրյանինն են):



– Այս բոլորը քեզ համար է, Սոֆի՛կ, վերցրո՛ւ և վայելի՛ր:

Հաջորդ օրը դասից վերադարձին նկատեցի, որ Աճառյանը մտահոգ, տխուր տեսք էր ստացել: Երբ պատճառը հարցրի, բացատրեց, թե կտորեղենը բերող կինը եկել և բոլորը հետ է վերցրել՝ հայտնելով, որ ամուսինը չի համաձայնվում: Իմ այն հարցին, թե արդյոք գնի համար չի համաձայնվել, Հրաչյան պատասխանեց, թե ինչ գին էլ պահանջեր, պատրաստ էր վճարելու:

Ես չնեղացա, ոչինչ էլ չասացի, ճաշեցինք և զբաղվեցինք յուրաքանչյուրս մեր գործով:

Երեկոյան Աճառյանը հարցրեց, թե ինչու չէի բարկանում կատարվածի համար: Հայտնեցի, թե բարկանալու բան չկար: Կարծես սիրտս սիրաշահելու համար Հրաչյան ասաց, որ թեև տարել է, բայց հավանաբար քիչ հետո հետ կբերի:

Պարզվեց, որ այս բոլորը մի տեսակ խաղ էր, նույնիսկ մանկական խաղ էր՝ սարքված Աճառյանի կողմից ինձ փորձելու համար: Միայն քնելու ժամանակ բոլոր կտորները բերեց և ասաց, որ կատակ է արել, բայց շատ է զարմացել, որ ես ոչինչ չեմ ասել, նույնիսկ մի քիչ չեմ բարկացել:

Պրոֆեսոր Քեչեկի կինը օգնեց նաև դերձակուհի ճարելու հարցում: Արժեր տեսնել, թե Աճառյանը ինչպես էր հրրճվում, որ ես լավ եմ հագնվելու:

Հիշում եմ՝ 1935 թ. մի օր Հակոբ Չորյանը եկել էր մեզ այցելության: Աճառյանը, շատ ուրախացած, ինձ ծանոթացրեց իր բարեկամին և ասաց, որ հիմա այլևս մենակ չէ. կյանքի պատվական ընկեր ունի: Չորյանն իր ուրախությունը հայտնեց: Ապա նրանք մի քանի նախադասություն փոխանակեցին ֆրանսերեն, բայց Աճառյանը չգիտեր գաղտնիք պահել և անմիջապես իրենց խոսածի միտքը թարգմանելով՝ ասաց, որ Չորյանն իրեն հանձնարարում է շատ ուշադիր լինել իմ հանդեպ, քիչ աշխատել, միասին թատրոն գնալ և այլն, և այլն:

– Սակայն,- ավելացրեց նա,- Աճառյանն իր աշխատանքով է Աճառյան. եթե չաշխատեմ, էլ ինչ Աճառյան:

## ԱՃԱՌՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ

Առանձին ուշադրության և ուսումնասիրության է արժանի Աճառյանի աշխատելու կարգը, անգուգական աշխատասիրությունը և աշխատունակությունը: «Աճառյանն իր աշխատանքով է Աճառյան, եթե չաշխատեմ, էլ ինչ Աճառյան», - սիրում էր կրկնել նա հաճախ:

Անվիճելի է, որ Աճառյանն օժտված էր բացառիկ տաղանդով, ընդունակությամբ, սուր հիշողությամբ: Բայց այդ բնածին տաղանդը չէր կարող լինել այդքան բեղմնավոր, եթե չլիներ նրա անգերազանցելի աշխատասիրությունը:

Շատերը հաճախ կրկնել են, թե Աճառյանը կատարել է այնքան աշխատանք, որ դժվար թե կարող է կատարել ամբողջ գիտական մի հիմնարկ կամ ինստիտուտ:

Համառ ու տոկուն աշխատանքն էլ, սակայն, բավական չպիտի լիներ՝ հասնելու մեծ արդյունքի:

Պարզ է, որ որոշիչ դեր են կատարում այս հարցում աշխատանքի ռեժիմը:

Աճառյանի աշխատանքային ռեժիմը:

Աճառյանը առավոտ կանուխ՝ ժամը 6-ին, վեր էր կենում և անմիջապես սկսում էր աշխատել մինչև ժամը 7<sup>30</sup>-ը, ապա ընդհատելով՝ քառորդ ժամ ևս պառկում կամ քնում էր ու հանգստանում: Հետո նա վեր էր կենում, նախաճաշում ու շարունակում էր աշխատանքը:

Աշխատանքի ընթացքում երբ հոգնություն էր զգում, ընդհատում էր, պառկում տասնհինգ րոպե ու հանգստանում, ապա վեր էր կենում, շաքարեղեն կամ մի քանի հատ ընկույզ էր ուտում և վերսկսում աշխատանքը:

Երբեմն էլ այդ աշխատանքը թողնում և տեղափոխվում էր ճաշասենյակ, նստում մեծ սեղանի շուրջը, շարունակում էր աշխատել, որտեղ նախօրոք շարված և դասավորված էին լինում տարբեր աշխատությունների կիսավարտ ձեռագրերը: Երբ հոգներ կամ ձանձրանար կամ հանդիպեր ինչ-որ դժվարության, փոխում էր տեղն ու աշխատանքի նյութը և այսպես շարունակաբար:

Նա որոշել էր, որ օրական առնվազն պետք է գրեր 15 էջ: Այս չափանիշը կարելի չէր թերակատարել, իսկ գրեթե միշտ գերակատարում էր՝ օրական գրելով 20-22 էջ: Նա բոլոր աշխատությունները գրում էր նույնիսկ առանց սևագրության: Լավագույն դեպքում կազմում էր կոնսպեկտը, որ հաճախ փոփոխության էր ենթարկվում աշխատանքի ընթացքում:

Աճառյանի ուսանողներն ասում էին, որ նա մի աչքով մի գիրք է գրում, մյուս աչքով՝ մի ուրիշը, իսկ կարդալու ժամանակ մի երեսը մի աչքով է կարդում, մյուս կեսը՝ մյուս աչքով. դրա համար էլ շուտ է վերջացնում ընթերցելիք գիրքը: Այս հիշելով՝ Աճառյանն ասում էր ծիծաղելով.

– Խեղճ ուսանողներ, չգիտեն, որ այս բոլորը մի տկար աչքի արդյունք է:

Աճառյանն ուներ շատ գեղեցիկ, մաքուր, կանոնավոր, դյուրընթեռնելի ձեռագիր՝ աչքին հաճույք պատճառող: Տպարանում գրաշարները ցանկանում էին շարել ուղղակի իր ձեռագրից, քան թե մեքենագրվածից: Նա իր ձեռագիրը ոչ ոքի չէր վստահում՝ վախենալով, որ կարող է կորչել, իսկ նման դեպքում կորուստը կլիներ անդարմանելի, որովհետև չունեի երկրորդ օրինակը: Այդ պատճառով էլ տպագրության հանձնված աշխատությունը ցրիչի նման ընդհանրապես անձամբ ինքն էր մամուլ առ մամուլ հանձնում նախ Գլավլիտ, հետո՝ տպարան: Երբեմն էլ նա մամուլները վստահում էր ինձ տանելու: Հիշում եմ՝ երբ մամուլ էի տանում Գլավլիտ, հանգուցյալ Համզո Պետրոսյանը (Գլավլիտի պետը) միշտ ասում էր,

որ Աճառյանը ինքն էլ է տանջվում գրելով, իսկ բերել ու տանելու համար էլ ինձ է տանջում: Համզոն Աճառյանի՝ իրեն ներկայացված մամուլները հաճախ առանց նայելու ստորագրում էր և վերադարձնում՝ ասելով. «Աճառյանին կասկածելն անգամ հանցանք է»: Համզոն ուրիշներից ստացած մամուլները մի քանի օր պահում էր՝ ստուգելու համար, բայց մեզ հետ այդպես չէր վարվում և խնդրում էր, որ ուրիշները չհիմանան այդ մասին: Աճառյանը մի մամուլը ստանում, ապա հանձնում էր մյուսը և այսպես շարունակ:

Այժմ ցանկանում եմ որոշ նշումներ անել նաև Աճառյանի աշխատանքի կանոնակարգի մասին:

Աճառյանի ընթերցումները, լինեն դրանք պատմական մատենագրության երկեր, անտիպ հին ձեռագրեր, գեղարվեստական գրականության գործեր, ժողովրդական բանահյուսության կամ բանահավաքության վերաբերյալ նյութեր, պարբերական մամուլ, անգամ լրագրերի և թերթերի ազդեր, նույնիսկ մահախոսականներ և մահագդեր, երբեք ինքնանպատակ չէին. նա պետք է նրանցից օգուտ քաղեր: Այսպես, եթե հանկարծ նա հանդիպեր մի նոր բառի, հատուկ նշումով կդներ իր տեղը՝ որպես նյութ ստուգաբանական-բառաքննական ուսումնասիրության: Հատուկ անունը կգնար տեղ գրավելու անձնանունների բառարանում: Պատմական, բանասիրական հարցերը առանձնացվում էին և այսպես շարունակ: Այնպես որ Աճառյանի աշխատանքը բազմաձյուղ էր, եթե նույնիսկ նա աշխատելիս լիներ հիմնական մի հարցի վրա, երբեք չէր թողնում գործի ընթացքում հանդիպող այլ հարցեր:

Բայց Աճառյանի աշխատանքն այսպիսով միայն չէր սահմանափակվում: Այսպես, երբ նա հանդիպելու լիներ գիտության այլ մասնագիտության վերաբերող կարևոր մի նյութի, անմիջապես զանգ էր տալիս տվյալ մասնագիտությամբ հետաքրքրվող իր բարեկամներին և տալիս էր հանդիպած տվյալները՝ նշելով աղբյուրը, էջը և այլն: Այսպես, օրինակ,

Եթե հանդիպելու լիներ բժշկության վերաբերյալ նյութերի, գանգահարում էր հանրաձայնությամբ բժիշկ ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանին (գինեկոլոգ), դոկտոր պրոֆեսոր Գ. Հարությունյանին և նրանց տեղյակ պահում: Եթե հանդիպեր անասնաբուժության, ձիաբուժության վերաբերյալ նյութերի, հաղորդում էր ինկուբատորի տնօրեն Հարություն Վասիլյանին և այսպես շարունակ:

Այսպես ահա ինքնին պարզ ու հասկանալի է դառնում, որ առանց այսպիսի յուրահատուկ աշխատանքային կանոնակարգի չէր, որ բազմավաստակ գիտնականը դառնում էր նաև բազմարդյունավետ:

Միայն ավստոսալ կարելի է, որ Աճառյանը պայմանների ու հանգամանքների բերումով հաճախ ստիպված էր լինել ոչ ստեղծագործական, տեխնիկական բնույթի աշխատանքների վրա ևս ժամանակ սպառել, ժամանակ, որն այնպայման նա կարող էր օգտագործել ստեղծագործական աշխատանքների համար: Հայտնի է, որ «Արմատական բառարանի» Ա-Բ հատորները իր ձեռագրով ապակետիպ տպագրությամբ են լույս տեսել: Դժվար չէ պատկերացնել, որ հազարավոր էջերի արտագրությունը ինչքան ժամանակ էր խլում նրանից:

Ավելի շատ պետք է ավստոսալ, որ գեթ իր կյանքի վերջին տասնամյակում չունեցավ օգնական քարտուղար, որ իր ղեկավարության ներքո և իր ցուցումներով կատարեր որոշ աշխատանքներ, որոնք անձամբ անելը պարզապես ժամանակի կորուստ էր նրա համար:

Նա ապրել է և աշխատել այնպես, ասես մահը իր համար չէր: Ինչպես ինքն էր ասում, որևէ աշխատանք կատարյալ լինել չէր կարող. միշտ պետք է ավելացնել, փոփոխել, և եթե նույնիսկ որևէ աշխատություն հրատարակվի, վերահրատարակման ժամանակ կարիք կունենա հավելումների, փոփոխությունների: Նա ավելի շատ տարվում էր իր աշխատությունների նյութերի հավաքումներով, հավելումներով`

կարծելով, որ դեռ առիթ կունենա իր բոլոր գործերը վերանայելու, վերջնական խմբագրման ենթարկելու տպագրությունից առաջ:

Հետաքրքրական և միաժամանակ ուսանելի են նրա ձեռագրերը: Կան ձեռագրեր՝ հատկապես վաղ շրջանի, գրված խնամքով, մաքուր:

Աճառյանի առաջին կինը՝ Արուսյակը, ինչպես այդ մասին նշել ենք այս աշխատության այլ էջերում, անգնահատելի էր իր գեղեցիկ ձեռագրով և կանացի նուրբ ճաշակով, արտագրել է որոշ աշխատություններ: Կան մի շարք ձեռագրերի սևագրությունները և մաքրագրությունները: Այս ձեռագրերի ուշադիր համեմատությունը հիացնում է այդ անձնվեր, բարեկիրթ կնոջ կատարած աշխատանքը: Հանձին նրա՝ Աճառյանն ունեցել է անձնվեր մի աշխատակցուհի: Նրա կորուստը կրկնակի ծանր է եղել Աճառյանի համար, որովհետև Աճառյանը կորցրել է իր կյանքի թանկագին ընկերոջը՝ իր հիանալի աշխատակցուհուն:

Ձեռագրերի ուսումնասիրությունից երևում է, որ եղել է ժամանակ, երբ Աճառյանը գրելու թղթի պակաս է զգացել և գրել է թղթի պատահական կտորների վրա, անգամ ստացած նամակների մաքուր կտորների վրա: Երբեմն էլ, շատ հավանական է, այդ արվել է հանկարծական մտքերը գրի առնելու համար՝ անմիջապես ճարված թերթի վրա:

Անկասկած, կարելի է ասել, որ Աճառյանի ձեռագրերի գիտական ուսումնասիրությունը կարող է հետաքրքրական լինել, մանավանդ եթե հետազայում նրա գիտական և մանկավարժական գործունեությունը առանձին մենագրության առարկա դառնա:

Պատկառելի թիվ ու քանակ են կազմում Աճառյանից մնացած տպված և անտիպ աշխատությունների ձեռագրերը, որոնք մնում են իբրև թանկագին ժառանգություն: Իհարկե, սակայն, ինձ մոտ եղածները բոլորը չեն: Աճառյանի ձեռա-

գրերի կարևոր մասը մնում է ցրված զանազան խմբագրություններում և հրատարակչություններում: Մփյուռքում թե հայրենիքում, երանի հնարավոր լիներ, այդ բոլոր ձեռագրերը ի մի բերել, հավաքել Աճառյանի ձեռագրերի հավաքածուն, եթե ոչ բոլորը իրենց բնագրերով, այլ գոնե որոշ ձեռագրերի հարագատ պատճենահանումներով կամ միկրոֆիլմերով: Այդ պիտի լիներ իմ բուռն ցանկությունը, բայց իմ տկար ուժերից և իմ միջոցներից վեր է:

Հուզումով, ապրումով լի պահեր են ինձ համար, երբ զանազան առիթներով ես առնչվում եմ Աճառյանի ձեռագրերին: Այդ ձեռագրերի վրա է Հրաչյան թողել իր մտքի և աչքի լույսը, հետքերը մատների, հեքը իր շնչի:

«Ձեռս գնայ, գիրս մնայ», - միշտ կրկնում էր Հրաչյան:

Հրաչյան էլ գնաց, բայց մնաց իր ձեռագիրը, ու կմնա առհավետ, կմնան նրա գրքերը՝ իր մտքի լույսը փոխանցելու համար հետագա սերունդներին:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՄՆՈՒՆԴԸ ՈՒ ՄՆՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ինչպես նշեցի Աճառյանի աշխատանքի կարգի մասին, նա առավոտ կանուխ՝ ժամը 6<sup>30</sup>-ին, վեր էր կենում անկողնից և սկսում աշխատել մինչև ժամը 7-7<sup>30</sup>, ապա նորից պառկում քնելու կամ հանգստանալու մինչև ժամը 8-ը, երբ նորից վեր էր կենում, լվացվում և անցնում ճաշասենյակ՝ նախաճաշիկի: Նա սիրում էր, որ սեղանի վրա ուտելիքը լինի բազմազան, և յուրաքանչյուր տեսակից էլ վերցնի մի քիչ, օրինակ՝ մի քանի հատ ձիթապտուղ, մի քիչ խավիար շատ փոքր հացի կտորի վրա, մի ձու կամ մի բաժակ կաթ կամ կաթի սեր:

Ուտելուց անմիջապես հետո շուրջ 10 րոպե պառկում էր ու հանգստանում, ապա մեծ եռանդով անցնում աշխա-

տանքի մինչև նախաճաշ: Այդ ժամանակամիջոցում երբեմն փոքր ընդմիջումներով նա գալիս էր խոհանոց և խնդրում մի երկու հատ կադին կամ ընկույզ կամ մի քանի հատիկ չամիչ կամ մի շերտ խնձոր, տանձ: Հայտնի էր, որ բերանը քաղցրացնելու համար էր նա այդ անում, քան թե կշտանալու: Ես շուտով հասկացա, որ այս փոքր ընդմիջումները նա անում էր այն ժամանակ, երբ իր աշխատանքում հանդիպում էր որևէ դժվարության: Փոքր ընդմիջումը նրան կազդուրում, նոր լիցք էր տալիս:

Երկրորդ նախաճաշը նա անում էր ժամը 11-12-ին: Նա շատ էր սիրում մահլեբի՝ մաննի կրուպայով շիլա՝ վրան լըցրած վարդի մուրաբա, մի բաժակ կաթ կամ սուրճ:

Ճաշում էր ժամը 2-ից մինչև 2<sup>30</sup>-ը: Եթե որևէ պատճառով ճաշն ուշացած լիներ, նա առանց գանգատվելու, անտըրտունջ, վերցնում էր մի պատառ հաց, ջրի մեջ թրջելով՝ արագ-արագ և այնպիսի ախորժակով էր ուտում, որ տեսնողը կարող էր կարծել, որ երկար ժամանակ նա անոթի էր մնացել: Ջրի մեջ թաթախված հացն ուտելը որ սկսեր, այլևս ինչ էլ անեինք, չէր դադարի ուտելուց, մինչև կշտանալը կուտեր հացը՝ ասելով. «Մի՞ թե սա ուտելիք չէ, ես արդեն կշտացա»:

Դա ինձ պատժելու մի ձև էր, որ ճաշը չուշացնեմ:

Աճառյանը հատուկ սեր ուներ արևելյան ճաշերի, հատկապես Պուլսի՝ ճաշակով պատրաստված ճաշատեսակների հանդեպ: Այսպես, նրա սիրած կերակուրներն էին բադրիջանով «իմամ բայրնդր», պլաքիներ, միդիայով դոլմա և այլն:

Առանձին սեր ուներ Աճառյանը ապուխտի (բաստուրմայի) հանդեպ: Նա ապուխտը սիրում էր ոչ միայն հաճելի համով լինելու համար, այլև գտնում էր, որ այն օգտակար էլ է: Նա սովորել էր ապուխտի պատրաստության ձևը և երբեմն տանը իր ձեռքով սիրում էր պատրաստել փոքր քանակությամբ: Ամեն անգամ երբ առիթ ներկայանար, սեղանակիցներին այնքան էր գովում ապուխտի հատկությունները, որ



նրանց մեջ հետաքրքրություն էր արթանցնում և մանրամասնորեն բացատրում էր պատրաստելու եղանակը:

Նա խոսում էր նաև կեսարացիների ապխտագործության և ապուխտի վաճառականությամբ զբաղվելու մասին, այս կապակցությամբ մանրամասն գրել էր իր հոդվածներից մեկի մեջ:

Այստեղ ուզում եմ պատմել ապուխտի մասին ինձ հետ պատահած մի գվարձալի դեպքի մասին: Ես չգիտեի՝ ապուխտը ինչ է, և չէի գործածել, չգիտեի, թե այն ինչպես են ուտում, ոչ էլ սիրում էի սխտորի հոտը: Մի անգամ, սակայն, փորձի համար խոհանոցում կտրեցի ապուխտի մի կտոր մսի պատառի նման և զցեցի բերանս: Ինչքան երկար ծամեցի, բան չստացվեց, համառորեն չէր ծամվում, մինչև որ նետեցի: Մեղանի առաջ երբ Աճառյանը նորից սկսեց ապուխտի գովքն անել, ես հակառակը ասացի, իսկ երբ նա իմացավ, թե ինչ ձևով էր կատարվել ապուխտի իմ առաջին համտեսը, նա քահ -քահ ծիծաղեց և իմ աչքի առաջ կտրատելով ապուխտը՝ բացատրեց, որ շերտերը պետք է լինեն հնարավորին չափ բարակ կտրատված, որպեսզի հեշտ ծամվեն: Այս առթիվ Աճառյանը պատմեց հետևյալ անեկդոտը՝ կեսարացու ափսոսանքը գողացված ապուխտի մասին: Մի անգամ չորացնելու համար կախված տեղից գողանում են մի կեսարացու ապուխտը: Նա հառաչելով կրկնում է իր ափսոսանքը գողացված ապուխտի մասին: Նրան մխիթարում են և ասում, որ չարժի այդքան ափսոսալ: «Ապուխտը՝ ոչինչ, - ասում է կեսարացին, - ափսոսանքս նրա համար է, որ մտածում եմ, թե գողը հավանաբար չգիտի ապուխտը շերտելու ձևը և իզուր այն կփչացնի՝ առանց բերնի համը հասկանալու»:

Հիշում եմ՝ մի անգամ բժիշկ Իսահակյանը եկավ մեզ մոտ: Մենք նրան հյուրասիրեցինք ապուխտով, բայց նա մերժեց ուտել՝ առարկելով, որ ապուխտի միսը հում է և կարող է վտանգավոր վարակի բույն լինել, խորհուրդ տվեց մեզ էլ

հրաժարվել նրա գործածությունից: Աճառյանն սկսեց ապուխտի իր սովորական գովքը. վերջում հայտնեց, որ ապրիստած միս ունի, որի մի մասը դեռևս մնում է՝ չամանի մեջ չըդրած: Առաջարկեց բժշկին այդ մսից վերցնել մի կտոր և փորձի համար մեջը միկրոբներ դնել, որից հետո ինքը չամանի մեջ կդնի այն, որպեսզի վերջում բժիշկը վերստուգի ներգործությունը մսի վրա: Փորձը կատարվեց: Եվ երբ միկրոբներով հագեցված մսի կտորը Աճառյանը դրեց իր ձեռքով համեմներից, սխտորից և չամանից պատրաստված խյուսի մեջ, երբ չորացավ, վերցրինք այն և Աճառյանի հետ միասին գնացինք բժիշկ Իսահակյանի տուն: Մեր ներկայությամբ կատարված մանրագնին այլևայլ փորձերը ժխտեցին որևէ միկրոբի գոյությունը: Բժիշկը զարմացավ, նույնիսկ չկարողացավ թաքցնել իր կասկածը՝ միգուցե Աճառյանը փոխել է մանրէներով հագեցված կտորը և մի ուրիշը ներկայացրել: Բժիշկն ասաց, որ կրկնելու է իր փորձերը՝ եզրակացնելու համար, թե արդյոք միկրոբասպան դերը կատարողը սխտորն է, թե չամանը կամ միգուցե երկուսը միասին:

Այս փորձից հետո, նոր ապացույցներով զինված, Աճառյանն ավելի եռանդով էր գովերգում իր սիրած ապուխտը՝ չմոռանալով մանրամասնորեն պատմել փորձի արդյունքները:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՀԱԳՈՒՄՏԸ

Աճառյանն այնքան էր տարված իր աշխատանքներով, որ հագուստին երբեք ուշադրություն չէր դարձնում, հոգ չէր տանում կոկիկ, լավ, հագնվելուն:

Բայց նա չափազանց բծախնդիր էր ներքին սպիտակեղենի մաքրության համար: Շաբաթը երկու անգամ փոխում էր սպիտակեղենն ու գուլպաները:

Բայց նա միշտ չէ, որ այդպես էր եղել: Երիտասարդ ժամանակ հագնվել է կոկիկ, վայելուչ: Արուսյակը ևս եղել է բծախնդիր և հետևել, որ Հրայան հագնվի լավ, գեղեցիկ ձևով: Բայց սիրելի կնոջ մահվանից հետո մենակ, դառնացած հոգով սկսել է վարել համարյա ինքնամոռաց կյանք՝ իր միակ մխիթարությունը փնտրելով աշխատանքի մեջ:

Հագուստ ճարելու, դերձակի մոտ գնալ-գալու համար նա երբեք չէր ուզում ժամանակ հատկացնել՝ այդ բոլորը համարելով ժամավաճառություն: Լավագույն դեպքում նա բավարարվում էր բարեկամների՝ իր համար ճարած հագուստով՝ առանց հատուկ բծախնդրության:

Բնակարանում դժվարությամբ կատարված բարեկարգումներից հետո, բեղերի և մորուքի սրբազրությունից հետո ես զգում էի, որ նույնքան դժվար պիտի լիներ նաև փոխել Աճառյանի արտաքինը. պիտի հանդիպեի ուժեղ դիմադրության: Բայց կարելի էլ չէր հաշտվել այդ վիճակի հետ, պետք է այնպես անել շատ մեծ զգուշությամբ, տակտով, որ նա համոզվեր և չկարծեր, որ այդ իրեն պարտադրվում է: Անհրաժեշտ էր, այսպես ասած, շատ լուրջ պատրաստություն:

Մի օր էլ՝ հարմար առիթի ժամանակ, հագուստի կարեվորության մասին ասացի, թե այդպես թողնել լավ չէ, ժամանակն է, որ նա գեղեցիկ հագնվի, Հրայան անմիջապես ասաց.

– Ի՞նչ է, մազ ու մորուքից ազատվեցիր, հիմա էլ անցար շորերիս: Ի՞նչ նշանակություն ունի հագուստը: Քեզ համար կարևորն այն է, որ այն կրող մարդը լավ լինի:

Իսկ ես ասացի.

– Հագնված մարդը ավելի հաճելի է աչքերի համար, իսկ լավ մարդը ավելի լավ կլինի լավ հագուստով:

Եվ ավելի նուրբ կետից բռնելու համար անմիջապես ավելացրի.

– Արդյոք ինչո՞ւ ցանկանում ես, որ ես միշտ լավ հագնը-  
վեմ, ընտիր, մաքուր, ճաշակով:

– Ես ուզում եմ, որ դու միշտ իշխանուհու նման լինես,  
լավ հագնվես, այդ քեզ լավ է սազում:

– Այդ ի՞նչ իշխանուհի կլինի,- ասացի ես անմիջապես,-  
առանց իշխանի: Իսկ ես ուզում եմ, որ դու էլ իշխանի նման  
հագնվես:

Աճառյանը նահանջեց, զինաթափվեց:

– Լավ ուրեմն,- ասաց նա,- համաձայն եմ, արա՛, ինչ-  
պես ցանկանում ես:

Մեր այս խոսակցությունից հետո ինձ հաջողվեց գնել  
շագանակագույն կտոր, և մի դերձակ Աճառյանի համար  
կոստյում կարեց, որը շատ սազեց նրան: Աճառյանը անճա-  
նաչելիորեն փոխվեց, ծանոթները հիացմունքով էին նայում  
վերափոխված Աճառյանին ու դժվարանում էին հավատալ  
իրենց տեսածին: Ականջիս հասնում էին, թե ինչպիսի կին էր,  
որ այդքան կարճ ժամանակամիջոցում կարողացավ ազդել  
Աճառյանի վրա և բարեփոխել նրա արտաքինը: Իրեն կորց-  
րած, թափափված Աճառյանը դարձել էր գեղեցիկ արտաքի-  
նով մարդ: Ես այժմ կարող էի առանց անհարմար զգալու  
մտնել լայն հասարակության մեջ: Չէ՞ որ այդ լայն հասարա-  
կությունը ավելի դատում է արտաքինով, քան մարդու ար-  
ժեքն ու արժանիքը գնահատելու առումով:

## ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1935 թ. գարնանը Աճառյանը համալսարանից գործուղ-  
վեց Օդեսա և Լենինգրադ՝ թանգարաններում գիտական հե-  
տազոտություններ կատարելու:

Մենք նախ մեկնեցինք Բաթումի՝ այնտեղից Օդեսա  
գնալու համար: Հրաչյան շատ էր ցանկանում ծովային ուղևո-  
րություն կատարել և այն էլ «Արմենիա» նավով: Բայց երբ

հասանք Բաթումի, «Արմենիան» արդեն մեկնել էր, և մենք գնացինք «Գրուզիա» շոգենավով:

Նախ մենք գնացինք Եվպատորիա և տեղի առողջարանում միամսյա շատ հաճելի հանգիստ անցկացրինք:

Սանատորիայում կային շատ հայեր, որոնց թվում նաև Սուրեն Հարությունյանը: Առողջարանի գեղատեսիլ մի անկյունում հայերը կազմեցին «Փոքրիկ Հայաստան», որտեղ հավաքվում էինք միշտ: Աճառյանի հետ ծանոթացումը բոլորին ուրախացրեց. այնքան մարդամոտ էր նա, զվարճախոս և վարակիչ ուրախություն հաղորդող: Բոլորը միաձայն Աճառյանին ընտրեցին «Փոքրիկ Հայաստանի» նախարար: Ամեն առավոտ և երեկո «Փոքրիկ Հայաստանի» բնակիչները հավաքվում էին՝ լսելու համար իրենց նախարարին, որ իրենց կառավարում էր՝ ունկնդրել տալով իր զվարճալի նորությունները և անհատնում անեկդոտները, որոնց պաշարը կարողացավ ամբողջ մի ամիս բավարարել Աճառյանով հիացողներին:

Առողջարանում մենք լավ հանգստացանք: Մաքուր օդը, առողջ միջավայրը, կազդուրիչ ծովը իրենց բարերար ազդեցությունն ունեցան մեզ վրա:

Եվպատորիայում եղած ժամանակ ուղևորվեցինք նաև Դրիմի մի շարք քաղաքներ՝ Սևաստապոլ, հիացանք սևաստապոլյան սքանչելի համայնապատկերով, ապա անցանք Ալուպկա, Ալուշտա, որտեղ դիտեցինք թագավորական հին պալատը՝ այժմ վերածված առողջարանի, ուր մեծ «տիրոջ» փոխարեն վայելում են բազմաթիվ ծառայողներ և բանվորներ:

Ապա մեկնեցինք Սիմֆերոպոլ, դիտեցինք Բախչիսարայի շատրվանը. հետո մեկնեցինք Չխտոկալա, ապա վերադարձանք Յալթա:

Յալթայից մենք պետք է մեկնեինք Օդեսա: Չկարողանալով միասին երկու տոմս ճարել՝ հակադրված ընկանք

տարբեր նավախցիկներ: Որպեսզի ինձ նեղություն չլինի, Հրաչյան մեր պայուսակը վերցրեց իր մոտ: Հաջորդ առավոտ կանուխ ես գնացի Հրաչյայի մոտ՝ տեսնելու համար, թե ինչպես է նա իրեն զգում և ինչպես է անցկացրել գիշերը: Այն պահին, երբ ես մտնում էի Աճառյանի նավախուցը, ինձ ընդառաջ եկավ մի մարդ, որ ձեռքին բռնած ուներ սպիտակ շորով փաթաթած ինչ-որ բան՝ արտաքինից պայուսակի ձև ունեցող: Ինձ տեսնելով՝ նա իսկույն այլայլվեց: Անորոշ մի կասկածից դրդված՝ դռան մոտից ես մի քանի անգամ բարձրաձայն կանչեցի Հրաչյային, բայց նա խորասուզվել էր իր մտածմունքների մեջ և չպատասխանեց: Կասկածելի մարդը, ներողություն խնդրելով ինձանից, ճանապարհ բաց արեց և անհետացավ: Արդեն մոտեցել էինք Սևաստապոլին, Հրաչյան, ձեռքերը գլխի տակ դրած, պառկել էր մեջքի վրա՝ աչքերն անթարթ հառած մի կետի: Նա այնքան էր տարվել իր մտքերով, որ իմ կանչն անգամ չէր լսում: Միայն երբ ցնցեցի նրան, սթափվեց և նեղացած վեր կացավ և ասաց.

– Մի բառի ստուգաբանությունն էի գտել, աշխատում էի մտքումս այն կապել բառի հետ, որ չմոռանամ:

Երբ հարցրի, թե որտեղ է մեր պայուսակը, նա ասաց, որ մահճակալի տակն է, նայեցի ու չգտա, ինքն իջավ ցած և իզուր փնտրեց:

– Ոչինչ, Մոֆի՛կ, կպատահի, ի՞նչ անենք: Գուցե սխալմամբ են տարել, կբերեն:

– Եթե դու իմ կանչին շուտ պատասխանեիր, գողը կբռնվեր, պայուսակը կվերադառնար, - ասացի ես:

– Իմ գտած բառի ստուգաբանությունը տասը հատ պայուսակ արժի, - եզրակացրեց Հրաչյան հանգիստ:

Իսկ ես հուզվել էի, չէի հանդարտվում: Հրաչյան աշխատում էր ինձ հանգստացնել, թե կորածը մեծ բան չէ, Օդեսսա հասնելիս ավելին կարող ենք գնել:

Ես կարծես սխալվեցի՝ գողության մասին հայտնելով նավի աշխատողներին: Նրանք իրար անցան՝ գտնելու համար: Բայց պայուսակի և նրա պարունակության հետ մենք կորցրինք նաև մեր հանգիստը: Գնում, գալիս մեզ էին հարցաքննում՝ իբր թե պայուսակը գտնելու համար: Հրաչյան ասաց, որ այդ գլխացավանքի պատճառը ես էի եղել. ինչ կարիք կար՝ կորուստի մասին հայտնելու: Մեզ խորհուրդ էին տալիս մինչև իսկ դիմում տալ նավապետին և խնդրել, որ պայուսակը գտնելու համար միջոցներ ձեռնարկվեն: Ի վերջո, բարկացած, ձեռքերը թափահարելով՝ Աճառյանը գոռաց.

– Թողէ՛ք ինձ հանգիստ, ես ոչինչ չեմ կորցրել:

Այժմ մենք ուզում էինք հրաժարվել մեր կորուստից, բայց այլևս նավի անձնակազմը մեզ հանգիստ չէր տալիս: Քիչ անց եկավ նաև նավապետը: Հարցաքննությունների գլխացավանքը նորից կրկնվեց: Նավապետը հանձնարարեց գրավոր դիմում ներկայացնել իրեն:

– Պայուսակ կորցրի բավական չէ, - ասաց Հրաչյան, - հիմա էլ ափսոսում եմ մի թերթ թուղթ էլ կորցնել զուր տեղը և սպասողական վիճակի մեջ մնալ: Թողէ՛ք ինձ հանգիստ:

Վերջապես հասանք Օդեսա: Իջևանեցինք «Լասալա» հյուրանոցում, որտեղ մնացինք 20 օր:

Մա իմ առաջին մեծ ուղևորությունն էր: Ես շատ էի հիացել և գոհ էի անչափ՝ չհաշված փոքր անախորժությունները, որոնցից ամենամեծը պայուսակի կորուստն էր:

Օդեսայում, ինչպես խոստացել էր Հրաչյան, մենք նոր գնումներ արեցինք, որոնք ավել էին մեր կորուստից:

Մի օր հյուրանոցի տնօրենը եկավ մեր սենյակը և սկսեց մանրակրկիտ հարցուփորձ անել. ուզում էր իմանալ՝ եթե գոհ չենք մեր համարից, կարող է մեզ տրամադրել շքեղ սենյակ, որը, ի տարբերություն մյուս սենյակների, ունի նաև բաղնիք, ռադիոընդունիչ, նախասրահում՝ դաշնամուր և այլն: Ապա հայտնի դարձավ, որ այս կողմնակի հետաքրքրություն-

ները պատրվակներ են լոկ. նա ավելի մանրակրկիտ հետաքրքրվում էր մեր ով լինելով, միմյանց հետ ունեցած կապերով: Պարզվեց, որ անձնագրում մեր կրած տարբեր ազգանունները կասկած են ներշնչել: Բոլոր հարցերին ես պատասխանում էի ինքնավստահ, կարճ ու կտրուկ: Վերջում Հրաչյան ինձ ասաց, որ շատ գոհ է մնացել իմ պատասխաններից:

Օգոստոսին մենք մեկնելու էինք: Հնարավոր չեղավ Օդեսա-Լենինգրադ ուղղակի տոմս ձարել: Հյուրանոցի աշխատողը մեզ տվեց երկու տոմս և մի գրություն՝ հայտնելով, որ հաջորդ կայարանում այն ներկայացնելով՝ կարող ենք ստանալ մեր նոր տոմսերը: Երբ հաջորդ կայարան հասանք, Հրաչյան մնաց իրերի մոտ, ես դուրս եկա՝ նոր տոմսերը ստանալու: Հազիվ մի քանի քայլ արած՝ չեկիստի համազգեստով մի երիտասարդ ինձ կանգնեցրեց և մի քանի հարց տալուց հետո առաջարկեց ընկերանալ իրեն: Ես կտրուկ պատասխանեցի, որ առանց իմ ամուսնու ոչ մի տեղ չեմ գնա: Երբ տեսավ, որ չեմ ենթարկվում, եկավ ինձ հետ Հրաչյայի մոտ: Ես Աճառյանին հասկացրի նրա ով լինելը, վախը պատեց նրան: Չեկիստը չէր թողնում, որ մենք միմյանց հետ խոսենք, և շտապեցնում էր ընկերանալ իրեն: Պայուսակը բեռնակրին հանձնելով՝ հետևեցինք հրավերին: Չեկայում մեզ երկար ու մանրակրկիտ հարցաքննեցին: Նորից պարզվեց, որ անձնագրերում մեր ազգանունների տարբերությունը կասկած էր ներշնչել, որ մենք ամուսիններ չենք: Մեր անձնագրերը, Երևանի միլիցիայի բաժանմունքից վերցրած տեղեկանքը, թե Մոֆյա Սմիռնովան նույն Մոֆյա Աճառյանն է, բավական չեղան՝ նրանց համոզելու: Բացի այդ՝ հավանական էր, որ նրանց կասկածը գնում էր ավելի հեռուն. մեկը կարող էր մեր մասին՝ որպես անվստահելիների, մի կասկած հայտնել, և այդ բավական կլիներ՝ մեզ անհանգստացնելու համար: Աճառյանը խնդրեց, որ թույլ տան իրեն հեռագրել Երևանի համալսարան և հեռագրով ստանալ հաստատող տվյալներ,



բայց առաջարկը չընդունվեց: Որոշեցին մեզ բաժանել իրարից և տանել տարբեր սենյակներ՝ առանց կարևորություն տալու իմ բողոքներին, որ Աճառյանը թեև տիրապետում է բազմաթիվ լեզուների, բայց ռուսերեն չգիտի: Մա արդեն ավելացրեց նրանց կասկածները: Վերջին բուպեին Աճառյանը մի գյուտ արեց՝ ներկայացնելով համալսարանի գործուղման գրությունը: Գրության ընթերցումը փոխեց նրանց դեմքերի արտահայտությունը: Դա մեզ փրկեց հետագա անախորժություններից: Չեկիստները ներողություն ինդրեցին կատարվածի համար: Հրայայի լեզուն բացվեց ռուսերենով, և սիրտ առավ. նա ասաց, թե ինչու մեզ այդքան չարչրկեցին, ճանապարհից հետ թողեցին, ով է կրելու պատասխանատվությունը, ինչ պետք է անեին, եթե չգտնվեր օրինյալ գրությունը և այլն: Նրանք պատասխանեցին, թե կմնայինք իրենց մոտ, մինչև պարզեին մեր ով լինելը: Ապա հայտնեցին, թե այժմ կարող էին մեզ օգնել տոմսեր ճարելու ուղիղ դեպի Լենինգրադ: Հրայան ասաց, որ տեղի ունեցած անախորժությունից հետո այլևս հրաժարվում ենք Լենինգրադ մեկնելուց, վերադառնալու ենք Բաթումի, ու նորից վրդովված հարցրեց, թե ինչու մեզ չարչարեցին, ինչ պատճառ ունեին:

Քննիչը բացատրեց, որ իրենք մեզ օտարներ էին կարծել, իսկ մեր տարիքի և ազգանունների տարբերությունները կասկած էին ներշնչել, որ մենք իսկապես ամուսիններ ենք:

Մի ժամ հետո մեկնող գնացքի հետ մենք մեկնեցինք Նովոռոսիյսկ, ապա «Աբխազիա» շոգենավով հասանք Բաթումի:

Հրայան հաճախ տհաճությամբ էր վերհիշում այս դեպքը և շարունակ վրդովմունքով կրկնում էր, թե այդ ինչ փորձանքներ էին:

Բաթումիում հյուրանոցում տեղ չլինելու պատճառով տեղավորվեցինք մի ռուս կնոջ մոտ, որտեղ մնացինք 15 օր:

Առավոտները լինում էինք ծովափում, իսկ ճաշից հետո՝ զբոսնում զբոսայգիներում: Հրաչյան շարունակ ստուգում էր գրպանը, հանում գործուղման գրությունը և ասում.

– Օրհնյա՛լ լինի, սա մեզ փրկեց կործանումից:

## ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ

1936 թ. որոշել էինք Սև ծովի ափերով ծովային ճանապարհորդություն կատարել Յալթա-Օդեսա-Բաթումի գծով:

Երևանից մենք մեկնեցինք Բաթումի, որտեղ մնացինք մի շաբաթ:

Բաթումիում մի օր գնացել էինք զբոսայգի: Մի մարդ, ծառի ստվերի ներքո նստարանին նստած, գիրք էր ընթերցում: Հրաչյան ինձ աչքով արեց, և նստեցինք անձանոթի կողքին՝ նույն նստարանի վրա:

Խոսքն ինձ ուղղելով՝ Հրաչյան ասաց բարձրաձայն.

–Հետաքրքրական է՝ արդյոք որտեղ է գտնվում այստեղի գրադարանը:

Անձանոթն իսկույն դարձավ դեպի մեր կողմը և բացատրեց գրադարանի տեղը: Եվ մինչդեռ նա երկար բացատրում էր, Հրաչյան անհամբեր ընդմիջեց նրան՝ ցանկանալով իմանալ, թե ինչ գիրք է կարդում և ինչ նպատակով: Նա երկար լռեց, ապա զարմացած ասաց.

– Գի՞րքն է ձեզ հետաքրքրում, թե՞ ընթերցողը:

– Գիրքը, առաջին հերթին գիրքը. ես գրքից կարող եմ իմանալ, թե դուք ինչ մարդ եք:

Անձանոթը ժպտաց, հետո հայտնեց գրքի խորագիրը: Հրաչյան վերցրեց գիրքը, թերթեց մի քիչ, հետո հարցրեց, թե գրքի որ մասն էր, որ առավելապես հետաքրքրում էր իրեն: Չեմ հիշում՝ անձանոթը ինչ պատասխանեց: Հրաչյան հասկացավ և ասաց, որ այս գրքում այդ նյութի շուրջ բան չէր գտնի, և նրան հանձնարարեց իրեն պետք եղածը՝ նշելով

նույնիսկ տեղը և ավելացնելով, որ տվյալ գրքի առաջին տր-պագրությունը բնագրին ավելի է հարազատ, եթե այն ձեռք բերի:

Ապա անծանոթն ինքը շատ հետաքրքրվեց Աճառյանով, սակայն Հրաչյան հայտնեց միայն, թե անցորդ մարդ է, և մենք վեր կացանք:

Բաթումիում Աճառյանը հանդիպում էր շատ պուլսեցի-ների և սիրում էր նրանց հետ խոսել պոլսական ճաշերի և քաղցրավենիքների մասին:

Բաթումիից մենք ուղևորվեցինք դեպի Սոչի: Այստեղ ևս մնացինք մի շաբաթ, ապա մեկնեցինք Յալթա, որտեղ վարձեցինք ծովահայաց պատշգամբով մի սենյակ:

Մենք այդ տանն ապրելու էինք որպես կենվոր: Տնային գործերից զատ՝ ամբողջ օրը ման էինք գալիս, հաճախում թանգարանները և զանազան տեսարժան վայրեր:

Յալթայում կային շատ հայեր, ունեինք շքեղ եկեղեցի:

Հրաչյան չէր սիրում թատրոն և կինո հաճախել, մասամբ թերևս այն պատճառով, որ լավ չէր տեսնում և հոգնեցուցիչ էր աչքի համար: Նա սիրում էր ամբողջ օրը անցյալի իր կյանքից հիշողություններ պատմել ինձ, հետաքրքրական, հիշարժան դրվագներ:

Մի օր էլ հանկարծ Աճառյանն առաջարկեց ինձ.

– Մոֆի՛կ, արի մի գիշեր էլ հյուրանոցի ծովահայաց պատշգամբում անցկացնենք. այնքան գեղեցիկ է, որ կզմայլվես:

Համաձայնվեցի: Տանտիրուհուն հայտնեցինք, որ այդ գիշեր տուն չենք վերադառնալու: Հյուրանոցում ուզեցինք մի համար վերցնել, հայտնեցին, թե ազատ տեղ չունեն: Հրաչյան խնդրեց, որ ապրել է այդտեղ և իրեն շատ դուր է եկել: Ասացին, թե անհարմար է պատշգամբում գիշերել: Ի վերջո, սակայն, մեր համառ պնդումներից հետո համաձայնվեցին:

Պատշգամբը շատ էր մեծ: Մենք տեղավորվեցինք մի ծայրամասում:

Իսկապես, դյուրիչ էր տեսարանը: Լուսնկա գիշեր էր: Ծովահայաց պատշգամբը կարծես երկնքից կախված լիներ ծովի վրա՝ շրջապատված ալացիկ նոճիներով, որոնք կարծես զինվորների նման համաչափ հեռավորությամբ, կարգով, կանոնավոր շարվել էին: Ծովի ալիքների խշխշոցը, նոճիների սվավոցը կարծես մեզ մի տեսակ աննման օրոր էին երգում, որը հաճելիորեն շոյում էր լսողությունը, բայց քուն չէր բերում. կարծես հազար ու մեկ գիշերների կախարդական, հեքիաթային աշխարհում գտնվելիս լինեինք:

Այդ բոլորը Հրաչյային վերհիշել էին տալիս Բոսֆորի ու Մարմարայի աննման գեղեցկուհուն: Եվ նա մտովի փոխադրվել էր այնտեղ, ընկել հիշողությունների մեջ, իրականությունից կտրված, խոսում էր.

– Պոլիսն էլ այս դիրքն ունի: Ես սովոր եմ ծովի, ես սիրում եմ ծովը, սիրահարվել եմ ծովին: Գեղեցիկ է Պոլիսն իր չքնաղ Բոսֆորով, Մարմարայով:

Եվ նա ցանկություն էր հայտնում, որ հնարավորություն ստեղծվեր, ինձ տաներ Պոլիս՝ ման ածելու, ցույց տար իրեն ծանոթ, սիրած վայրերը: Նա երկու անգամ տարել էր Պոլիս հանգուցյալ Արուսյակին: Երկուսն էլ շատ ուրախացել, գոհ էին եղել: Հրաչյան ասում էր, որ Պոլիսը անմրցելի է իր բնական գեղեցկությամբ, և երկրագնդի ամենագեղեցիկ քաղաքն էր համարում:

Հրաչյան անկեղծ էր կատարելապես: Երբ հիշեց Պոլիսը, բնականաբար վերհիշեց նաև նրա հետ շատ բաներ, հիշեց Արևելյան Հայաստան գալը, իր հանդեպ ցույց տրված սառը վերաբերմունքը, մտքում հիշեց արևմտահայերի ջերմ հայրենասիրական զգացմունքները և մեղմ շարունակեց զրույցը.

– Կովկասի հայերը չեն սիրում Պոլսի հայերին, իբր թե Պոլսի լեզուն մաքուր չէ, արևմտահայերը «հոսհոս» են: Ռուսահայերից շատ քչերն են Պոլիսը տեսել, գաղափար չունեն Պոլսի հայ մտավորականների մասին, արհամարհանք ունեն նրանց հանդեպ: Հիշում եմ մի դրվագ ճարտարապետ Քաջազունու՝ Պոլիս այցելության ժամանակներից: Այդ դրվագում պայծառ կերպով երևում է արևմտահայության ոգին, մաքուր, երազային հայրենասիրությունը, անկեղծությունը: Քաջազունին եկել էր Պոլիս՝ ցեղասպանության գոհ տառապյալ հայերի համար հանգանակություն կատարելու: Նա հիացել էր Պոլսի հայերի ազգասիրական զգացմունքներով: Նա ճառ էր խոսում Պոլսի հայոց եկեղեցիներում և ասում. «Օգնեցե՛ք գաղթականներին, փրկեցե՛ք նրանց սովի ճիրաններից»: Հանգանակությունը պետք է կատարվեր բարեգործական միության ակումբի բակում: Մյուս օրը ակումբի առաջ հավաքվել էր այնքան ժողովուրդ, որ Քաջազունին գալով դժվարությամբ է կարողացել ներս մտնել: Միկրոֆոն են տեղադրել, որպեսզի դրսի ժողովուրդն էլ կարենար լսել Քաջազունու ճառը: Ճառախոսությունից հետո ձեռնարկել են հանգանակության: Կանայք և տղամարդիկ տվել են մինչև իրենց վերջին կոպեկները: Ապա կանայք կարծես բնազդաբար հանել են իրենց ապարանջանները, օղերը, մատանիներն ու բոլոր թանկարժեք զարդերը և տվել սիրահոծար պոռթկումով, նվիրումով՝ օգնելու համար իրենց ստառապյալ եղբայրներին ու քույրերին:

Զգացմունքների բուռն պահին առաջ է եկել 76 տարեկան մի կին, հանել գրպանից քսակը և նրա ամբողջ բովանդակությունը՝ 31 դեղին ոսկի՝ երկարամյա իր կյանքի դառն զրկանքների գնով կուտակված խնայողությունը, դրել է հանգանակության սեղանին՝ ասելով. «Այս գումարը իմ արդար վաստակն է, իմ ամբողջ ունեցածը՝ խնայողությամբ հավաքված սև օրերու համար: Հիմա մեկը չունիմ, ամբողջ կյանքս

անցուցեր եմ՝ ուրիշներուն տուներուն մեջ աշխատելով: Առե՛ք, ես չեմ ուզեր անմասն մնալ իմ քույրերուն և եղբայրներուն օգնության գործին: Խնդրեմ, ընդունեցե՛ք»: Քաջագունին շատ է հուզվում այս տեսարանի առաջ, ուզում է հետ դարձնել նվերը՝ ասելով. «Մայրի՛կ, դու ինքդ օգնության կարիք ունես, թող այդ գումարը մնա քեզ մոտ, մենք անչափ շնորհակալ ենք»: «Առե՛ք, որդի՛ս, շատ ունեցողեն՝ շատ, քիչ ունեցողեն՝ քիչ, իսկ եթե նեղը իյնամ ու չկրնամ աշխատիլ, այն ժամանակ կերթամ ծերանոց»:

– Քաջագունին,- ասում էր Աճառյանը,- հիացմունքով էր պատմում այս մասին և ավելացնում, թե ինչպես և ինչու իրենք չեն կարողացել ժամանակին ճանաչել և ըմբռնել այդ բարի և ազգասեր մարդկանց:

Այստեղ փակագծում հիշեմ, որ մի օր Երևանում Քաջագունին ինչ-որ գործով եկավ մեր տուն: Հրաչյան, նրան ինձ ծանոթացնելով, ասաց. «Սոֆի՛կ, այս այն Քաջագունինն է, որի մասին պատմեցի քեզ Յալթայում, այն գեղեցիկ պատրջգամբում՝ լուսնի շողերի տակ»: Եվ Հրաչյան հիշեցրեց այդ դրվագը՝ համառոտ վերապատմելով: «Այո՛, պարո՛ն Աճառյան,- վերջացրեց Քաջագունին,- դա իմ կյանքի ամենահուզիչ դեպքն է, անմոռանալի օրը»:

Ամբողջ գիշերն անցկացրինք պատշգամբում՝ գրեթե առանց քնելու: Լուսինն ու աստղերը կարծես ընկել էին հանդարտ, անալիք ծովի մեջ, ուր արտացոլվում էին հայելու նման: Մեղմ քամին շոյում էր նոճիները՝ լսելի դարձնելով հաճելի սոսավյունը: Քնել էին բոլորը: Հսկում էինք միայն Հրաչյան և ես՝ անձնատուր մեր հուշերին և զգացմունքներին: Բոլոր գիշերներից ամենահաճելի և անմոռանալի գիշերը մընաց մեր այն հուշերում, ապա այժմ՝ իմ հուշերում, երբ չկա Հրաչյան:

Եվ ես միշտ հուզումով եմ վերհիշում այդ գիշերը՝ անվերադարձ անցնող բոլոր գիշերների մեջ:

Առավոտյան պատշգամբի՝ գիշերվա հուշերով վերադարձանք տուն և պատրաստվեցինք մեկնելու Օդեսա: Մեզ հազիվ հաջողվեց երկրորդ կարգի երկու տեղանոց նավախցիկում տոմսեր վերցնել: Նավի տախտակամածից մենք երկար դիտեցինք սևծովյան այդ գեղեցիկ քաղաքը, որտեղ շատ հաճելի օրեր էինք անցկացրել:

Նավ բարձրացան նաև շուրջ քսան զբոսաշրջիկներ՝ Եվրոպայի տարբեր երկրներից ուսուցիչներ, դասախոսներ, բոլորն էլ մտավորական մարդիկ՝ իրենց ռուս թարգմանչի հետ:

Աճառյանը նկատեց, որ ռուս թարգմանիչը սխալ պատասխան տվեց իրեն ուղղված մի հարցի: Ներողություն խնդրելով նա տվեց ճիշտ բացատրությունը: Մա առիթ եղավ, որ Հրաչյան գրավի բոլորի ուշադրությունը: Զբոսաշրջիկները հայտնեցին, որ թարգմանիչը չի տիրապետում օտար լեզվի, և իրենք դժվարություն են կրում լավ հասկացվելու համար: Նրանց հետաքրքրությունը փոխվեց զարմանքի, երբ տեսան, որ Հրաչյան միևնույն հեշտությամբ խոսում է եվրոպական մի շարք լեզուներով: Հրաչյան բոլորի հետ խոսում էր նրանց լեզվով, իսկ ինձ էլ թարգմանում էր խոսածը: Հանկարծ զբոսաշրջիկներից բավական տարեց մի մարդ մոտեցավ, սեղմեց Հրաչյայի ձեռքը, և ասաց.

– Մեր ուսուցիչ Հյուբշմանն ասում էր, որ Աճառյան անունով մի հայ (արմենիշե) ուսանող ուներ, որ շատ լեզուներ գիտեր:

Հուզումից լաց եղավ Հրաչյան, երբ լսեց իր սիրելի ուսուցչի անունը և հազիվ շնջալով՝ ասաց ինձ.

– Ծովի վրա, որտեղից որտեղ, ինչպե՛ս ինձ ճանաչեցին:

Հրաչյան կարծես գտնվում էր ինքնամոռացության մեջ կամ, ավելի շուտ, փոխադրվել էր անցյալի գիրկը, մոռացել էր ժամանակը, շրջապատը: Տախտակամածի վրայից վազելով

անցնող շնիկը սթափեցրեց, երբ մի զբոսաշրջիկ, այն մատնանիշ անելով, բարձրաձայն ասաց.

– Ա՛յ, տեսե՛ք, շունը, շունը, ասում էին՝ Ռուսաստանում շուն չկա. բոլոր շներին կերել են, իսկ սա ի՞նչ է:

Հրաչյան իսկույն զգաստացավ և դիմեց ինձ.

– Մոֆի՛կ, ազատի՛ր ինձ այստեղից:

Նշանացի հասկացրի, թե Հրաչյան վատ է զգում, և թևանցուկ արած դժվարությամբ բաժանեցի Հրաչյային խմբից և տարա նավախցիկ: Հրաչյան տեղացող հարցերի տարափի տակ այլևս կամավոր համր էր դարձել՝ զոջալով մինչ այդ ասածի համար և վախենալով, որ այդ կարող էր իրեն համար թանկ արժենալ:

Խցիկում Հրաչյան ասաց երկյուղած.

– Շատ վատ ստացվեց, ես ինձ ներել չեմ կարող, ի՞նչ գործ ունեի օտարերկրացիների հետ, ինչո՞ւ պիտի խոսակցեի նրանց հետ:

– Ոչի՛նչ,- ուզեցի մեղմացնել ես,- ամեն ժամանակ մարդկանց չեն հետևում, և հետո ի՞նչ խոսեցիր որ, կարիք չկա վախենալու:

Քիչ հետո, երբ Հրաչյան քնեց, ես դուրս եկա՝ տեսնելու, թե ինչ կա: Զբոսաշրջիկները շրջապատեցին ինձ, խնդրեցին, որ Հրաչյային դուրս հրավիրեմ, որպեսզի խոսեն նրա հետ: Մի գերմանացի հայտնեց, որ ինքն էլ է եղել Հյուբշմանի աշակերտը և ցանկանում է խոսել Աճառյանի հետ: Պատասխանեցի, որ, դժբախտաբար, Հրաչյայի տրամադրությունը վատ է, նա այժմ քնել է:

Հրաչյան որպես կամավոր բանտարկյալ մնաց խցիկում, մինչև որ հայտնեցի նրան, թե զբոսաշրջիկներն իջան Սևաստոպոլում:

Հրաչյայի լեզվազետ լինելու լուրը հասել էր անգամ նավապետին, որը Ռուսաստանում ապրող հայերից էր, բայց



հայերեն չէր խոսում, որովհետև իր մայրենի լեզուն չէր իմանում:

Նավի ճաշարանում թեյի ժամանակ նավապետը ծանոթացավ մեզ հետ: Քաղաքավարական մի քանի նախադասությունների փոխանակությունից հետո նա ցանկացավ իմանալ, թե արդյոք Աճառյանը քանի լեզու գիտի:

– Ես էլ չգիտեմ,- ասաց Աճառյանը ժպտալով,- մի քանի լեզու կիմանամ էլի:

– Շատ ուրախ եմ,- ասաց նավապետը, - որ մի հայ գիտնական այդքան լեզուներ է իմանում: Այդ մասին հիացումով ինձ պատմեցին եվրոպացի զբոսաշրջիկները, որոնց հետ Դուք խոսել եք յուրաքանչյուրի լեզվով: Նրանք ասացին, որ հազիվ էին գտել մի մարդու, որ բոլորի հետ խոսում էր իրենց լեզվով, բայց նա էլ փախավ:

Հրայյան հայերենով ինձ հարցրեց, թե ով էր այդ մարդը, որին սկսել էր կասկածել, և կրկին սկսեց ափսոսալ, որ հիմարություն էր արել՝ տարբեր լեզուներով խոսելով նրանց հետ:

Նավապետը երբ նկատեց, որ Աճառյանը ռուսերեն լավ չի խոսում և հարցերին շատ սառն է պատասխանում, թողեց ու հեռացավ ափսոսելով.

– Ես հայ եմ, բայց դժբախտաբար հայերեն լավ չեմ կարողանում խոսել:

Մենք հասանք Օդեսա, որտեղից ուղևորվեցինք դեպի Երևան:

Ինձ թվում էր, որ մեր ճամփորդությունն անցել էր շատ արագ: Իմ տպավորությունները հիանալի էին, և ինձ ցանկալի էր թվում, որ դեռ շարունակվեր մեր ուղևորությունը: Երբ հիշում էի փոշեղից կայարանը, Մանանդյանների անցանկալի հարևանությունը, նույնիսկ նախընտրում էի, եթե հնարավոր լիներ, չվերադառնալ:

Ես փորձեցի Հրայյային Երևան հասնելուց հետո, որ դիմում տա՝ բնակարան ստանալու համար, ասացի, որ ուրիշ

դասախոսներ նոր բնակարան են ստացել, իսկ ինչու մենք պետք է մնայինք անհարմար այդ կիսասենյակում, իր հերթին բաժանված երկու նոր կեսի. մի թե մենք էլ իրավունք չունենինք լրիվ սենյակներ ունենալու, լրիվ կյանքով ապրելու:

– Ո՛չ,- ասաց Հրաչյան կտրուկ,- այդ մեկը գլխիցդ հանի՛ր:

Հետո շարունակեց.

– Ինչո՞ւ դուք՝ կանայքդ, միշտ վերև եք նայում, ինչո՞ւ ձեզանից ցած եղողներին չեք ուզում նայել: Հենց մեր ներքևում՝ կիսանկուղային հարկում, մարդիկ են ապրում, ինչո՞ւ նրանց էլ չես ուզում նայել: Նայի՛ր նրանց և գոհացի՛ր քո ունեցածով:

Կյանքը, իհարկե, ստիպում էր հաճախ նայել ներքև, բայց մարդկայնորեն ցանկալի էր նայել վերև, ցանկանալ բարձրանալ: Հրաչյայի խրատը բավական չէր, և ես ոչ միայն որպես կին, այլև որպես մարդ շարունակում էի ցանկանալ, որ մի օր ունենանք ավելի հարմարավետ բնակարան:

## ԱՌՎԻ ՔՉՔՉՈՑԸ

1936 թ. ամռան շոգ օրերին ես սկսեցի քնել պատշգամբում: Փողոցի բարակ առվակով ջուր էր հոսում: Առավոտ վաղ Հրաչյան գալիս, նստում էր մոտս և հարցնում, թե առվի քչքչոցը լսվում է արդյոք: Պատասխանում էի, թե շատ հաճելի էր լսել այդ քչքչոցը: Երեկոյան նույն հարցը կրկնվում էր:

Ես հետո իմացա, որ ամեն օր՝ ուշ երեկոյան, Հրաչյան իջնում, երկու քար է դնում առվակի մեջ, որպեսզի ջուրը քիչ բարձրանա և հոսելիս քչքչա: Առավոտյան Հրաչյան վերցնում էր քարերը և պահում դռան ետևում, որ չկորչեն:

Մի օր էլ դռնապանը քարերը վերցրել և դեն էր նետել: Հրաչյան, այդ նկատելով, վեճի էր բռնվել դռնապանի հետ:

Աղմուկը հասավ ականջիս և վեր կացա: Հրաչյան ասում էր դռնապանին.

– Ա՛յ մարդ, քեզ ի՞նչն է խանգարում, ինչո՞ւ ես քարերը դեն գցում, ջուրը փողոց չի լցվում, թող մի քիչ էլ առվակի անուշ քչքչոցը լսվի:

Դռնապանը պատասխանում էր.

– Ջրի առաջն ինչո՞ւ ես կապում, թող ազատ հոսի:

Վեր բարձրանալիս, սանդուղքների վրա հանդիպելով տիկին Տոնյանին, Աճառյանը նրան ևս մանրամասնորեն պատմում է դռնապանի հետ աղմուկի պատճառ հանդիսացող կովի մասին:

Երբ Հրաչյան հասավ ինձ մոտ, նա դեռ լրիվ չէր հանդարտվել, պատմեց բոլորը և ավելացրեց.

– Ես ուզում էի, որ ջրի քչքչոցի տակ գիշերն անո՛ւշ քնես, դրա համար էր, որ ամեն առավոտ և երեկո հարցնում էի քեզ, թե ինչպես է լսվում ջրի քչքչոցը:

Ձուլալ ջրի նման մաքուր սիրտ ունեւ Հրաչյան և մանկական հնարքներով ցանկանում էր հաճույք պատճառել:

## ՄԵՐ ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Երկու տարի Աճառյանի հետ անփառունակ բնակարանում մնալուց հետո, ի վերջո, մենք ևս ստացանք երեքսենյականոց հարմարավետ բնակարան Տերյան փողոցի N 62-ում՝ մասնագետների շենքում:

Ես նկատեցի, որ Աճառյանի՝ նոր բնակարան չուզենալը մեզանից ավելի վերև և ներքև նայելու հարց չէր լուկ. նա ոչ մի կերպ չէր ցանկանում բաժանվել հին բնակարանից, որովհետև այնտեղ էր մահացել Արուսյակը, և այդ տան հետ իրեն կապված էր զգում բազմաթիվ հիշատակներով:

Մայրս էլ ծանր, մահամերձ հիվանդ էր, բոլորս զբաղված էինք նրանով և հնարավորություն չունեինք փոխադրու-

թյամբ զբաղվելու: Սակայն քաղաքային խորհուրդը պարտադրել էր և կարգադրել, որ մեր իրերի տեղափոխությունը կատարվի անմիջապես իր միջոցներով:

Մայրս մահացավ 1937 թ. մայիսի 19-ին, որից հետո՝ մայիսի 29-ին, տեղափոխվեցինք:

Աճառյանը շատ էր հուզվել տեղափոխությունից հետո. նա չէր կարողանում հաշտվել Արուսյակի ապրած բնակարանից հեռանալու մտքի հետ: Նա տեղափոխությունից հետո գնացել էր հին բնակարանը, տեսել, որ այնտեղ արդեն բնակվում են նոր մարդիկ՝ Շամիգյանները: Նոր բնակիչները նկատել էին, ինչպես պատմեցին ինձ հետագայում, որ Հրաչյան երկյուղածությամբ համբուրել էր տան դուռն ու պատերը. Նա ասել էր նրանց, որ Արուսյակը այդ տանն է մահացել, շատ հիշողություններ կան կապված այդ տան հետ, և որ ինքը ակամա է հեռացվել:

Հին տանը տեղի նեղվածքի պատճառով մենք համարյա կահույք ունենալ չէինք կարող: Այդ հանգամանքը հեշտացրեց մեր տեղափոխությունը:

Նոր բնակարանում առաջին օրը՝ առավոտյան՝ Հրաչյայի աշխատանքի գնալուց հետո, ցանկացա իմ ճաշակով մի քիչ կարգի դնել բնակարանը: Սկսեցի Աճառյանի աշխատասենյակից: Մեղանը նրա սիրած բազկաթոռի հետ տեղավորեցի սենյակի անկյունը: Գրադարակի վրա տեղավորեցի նրա գրքերը: Արուսյակի մեծադիր ծանոթ նկարը՝ աջ պատին, նրա դիմաց՝ Հրաչյայի մեծադիր նկարը: Արուսյակի այն փոքրադիր լուսանկարները, որոնք հին բնակարանում մի ամբողջ պատ էին զբաղեցնում, տեղավորեցի ալբոմում: Առանձին արկղի մեջ դրեցի Արուսյակի իրերը՝ ջրի կուլան, կոտրված ափսեները և այլն: Մյուս սենյակները դեռ կարիք ունեին համապատասխան կահույքի:

Երբ Աճառյանը եկավ, տարա նրան իր աշխատասենյակը՝ ցույց տալու համար, թե ինչպես եմ դասավորել: Ոչ մի

բանի դիտողություն չէր անում, միայն նայում էր, թե ինչպես եմ դասավորել, իսկ երբ Արուսյակի նկարը ցույց տալով՝ ասացի նրան. «Հրայա՛, տե՛ս՝ քո կնոջ նկարը որտեղ եմ բազմեցրել», նա սաստիկ բարկացավ, ոտքը խփեց գետին ու բարձրաձայն գոռաց.

– Հապա էլ ուրիշ կերպ կարո՞ղ էր լինել. չէ՞ որ նա իմ կինն էր, ինչո՞ւ ես իմ երեսով տալիս:

Փոթորիկ էր, որ պայթեց և չէր հանդարտվում: Չգիտեի ինչ անել՝ նրա բարկությունն իջեցնելու համար: Հայտնեցի, որ այդ ես ասացի պարզապես իրեն ուրախություն պատճառելու համար: Ոչինչ չօգնեց, չիջավ նրա բարկությունը: Թողի և հեռացա խոհանոց: Մնալով մենակ՝ նա հանդարտվել էր, և երբ եկավ խոհանոց, գտավ ինձ լաց լինելիս: Նա զգացել էր, որ իր բարկությունն անտեղի էր: Այժմ հերթը իրենն էր՝ ինձ մխիթարելու. փաթաթվեց ինձ, գուրգուրեց և ասաց.

– Մոֆի՛կս, դու մի՛ նեղացիր, բնավորությունս է այդպիսին, գիտես, որ չար, վատ մարդ չեմ ես: Դու շատ լավ ես արել, միայն խնդրում եմ Արուսյակի անունը գուր տեղը չհիշել. նա շատ լավ կին էր:

Լրիվ հանդարտվելուց հետո Հրայան շարունակեց.

– Մոֆի՛կ, դու շատ լավ սիրտ ունես, քո տեղն ուրիշը լիներ, ինձ կթողներ, կհեռանար, իսկ դու չես գնա, չէ՞, դու ինձ մենակ չես թողնի:

– Չէ՛, - ասացի, - ո՞ւր պիտի գնամ, ես քեզ երբեք մենակ չեմ թողնի:

Հրայան բոլորովին փափկեց, կարծես ինքը չէր քիչ առաջվա ամպագոռոցո մարդը: Ապա նա գնաց իր աշխատասենյակը, խորասուզվեց գրքերի, աշխատանքի մեջ, մտավ իր տարերքի մեջ:

Մեծ փոթորկից հետո՝ մեծ անդորր: Կարծես ոչինչ չէր պատահել:

## ՄԵՐ ՏԱՆ ԿՈՂՈՊՏՎԵԼԸ

1937 թվականի ամառն էր:

Դիլիջանում ամառային արձակուրդների ժամանակա-  
միջոցում հայոց լեզվի գծով ուսուցիչների վերապատրաստ-  
ման եռամսյա դասընթացներ էին: Աճառյանը ևս հրավիրվել  
էր՝ դասախոսելու: Իսկ ես քրոջս ընտանիքի հետ մեկնեցի  
Կիսլովոդսկ՝ հանգստանալու:

Այդ ժամանակ մենք բնակվում էինք Տերյան փողոցի  
N 62-ում՝ մասնագետների շենքում: Մեր բացակայության  
ժամանակամիջոցում բնակարանը հանձնեցինք ամուրի մի  
ուսանողի հսկողությանը:

Երկու շաբաթ էր, որ գտնվում էի Կիսլովոդսկում: Մի օր  
զբոսալսում հանդիպեցինք պրոֆեսոր Մաշուրին, Ա. Տերտեր-  
յանին և Գալուստ Նիկիտիչ Թումանյանին: Հենց որ ինձ տե-  
սավ Տերտերյանը, հարցրեց.

- Տիկի՛ն՝ Սոֆիկ, ի՞նչ եղավ ձեր տան պատմությունը:
- Ի՞նչ տուն, ի՞նչ – բոլորովին հանկարծակի եկա:
- Ձեր տունը չէ՞ն կողոպտել,- վրա բերեց Գալուստ  
Նիկիտիչը,- արդյոք Աճառյանից նամակ չէ՞ք ստացել:

Նրանք, տեսնելով, որ ես ոչնչից տեղյակ չեմ, իրենց  
խոսքը փոխեցին և ասացին, թե մի բան էր լսել էին, բայց երևի  
սուտ է:

Ես ինդրեցի պրոֆեսոր Մաշուրին, որ հաջորդ օրվա  
համար ինձ ինքնաթիռի տոմս ապահովի Երևանի համար,  
ապա վերադարձա տուն՝ պատրաստվելու: Տանտիրուհին  
ինձ տվեց Աճառյանի հեռագիրը, որտեղ Հրաչյան ասում էր.  
«Ամեն ինչ կարգին է, հետևում է նամակը»: Երեկոյան պրոֆե-  
սոր Մաշուրը հայտնեց, թե հաջորդ օրվա համար հնարավոր  
չէր եղել տոմս ճարել, հազիվ մյուս օրը կլիներ: Իսկ հաջորդ  
օրը Աճառյանից ստացված նամակն ասում էր. «Սոֆի՛կ, մի  
փոքր թյուրիմացություն էր պատահել, եկա Երևան, կարգադ-

րություններ արեցի և դարձյալ վերադարձա Դիլիջան: Չգաս, հանգստացի՛ր»:

Հրաչյան ինձ չանհանգստացնելու համար բուն իրողությունը թաքցրել էր: Գողերը ամեն ինչ կողոպտել էին: Հանել էին մինչև իսկ վերմակների երեսները: Մենյակի կենտրոնում կանգնած՝ շվարած նայում էի շուրջօրյորս: Ամեն կողմ դատարկված էր, քիչ թե շատ արժեք ներկայացնող ոչինչ չէր մնացել:

Հրաչյան ինձ մխիթարեց՝ ասելով.

– Սոֆի՛կ, սիրելի՛ս, հոգ մի՛ արա, կորուստի տեղ նորը կգա, հոգի՛դ ողջ լինի, ահա քեզ 13000 ռուբլի, կգնաս Մոսկվա, Լենինգրադ, ամեն ինչ կվերցնես քո ճաշակով:

Այդ ժամանակ ես սովորում էի աստամնաբուժական ինստիտուտի երրորդ կուրսում: Դասերը վերսկսվել էին, և ես արդեն բավական ուշացել էի: Որոշեցի՝ միայն արձակուրդներին գնամ՝ գնումներ կատարելու:

– Սոֆի՛կ, սիրելի՛ս, կորուստների մասին չարժե մտածել, – ասում էր Հրաչյան հաճախ, – ամեն ինչ կարելի է նորից ձեռք բերել: Մտահոգիչն այն է, որ այժմ շատերին, նույնիսկ բոլորին, բոլորին բանտարկում են. տարել են Չուբարին, Աշխարհբեկին, Պապ Քալանթարին: Հերթը ո՞ւմն էր արդյոք:

Խեղճ Հրաչյա, կարծես նախագգում էր, թե հերթը շուտով հասնելու էր նաև իրեն: Տանելու էին նաև իրեն, և բանտում մեր բնակարանը կողոպտող գողը խոստովանելու էր իր հանցանքը Աճառյանին և ներողություն էր խնդրելու:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼԸ

Աճառյանն ինձ պատմում էր, որ մի անգամ իրեն կանչում են և հարցաքննությամբ ցանկանում իր կարծիքն իմանալ մի շարք այքի ընկնող գիտնականների, պաշտոնակիցների, մտավորականների մասին:

Առաջին հարցը լինում է Աբեդյանի մասին.

– Դուք պրոֆեսոր Մանուկ Աբեդյանին լավ եք ճանաչում, ասե՛ք, ինչպիսի՞ մարդ է նա, ի՞նչ հայացքների տեր:

Աճառյանը պատասխանում է.

– Աբեդյանը մեծ գիտնական է, ինչպես և դուք գիտեք. նա գիտության մշակ է և միշտ աշխատում է հեղափոխություն մտցնել լեզվի մեջ: Դրա լավագույն օրինակն է հայոց լեզվի ուղղագրական «բարեփոխությունը»՝ նրա ձեռքով կատարված: Ես շատ ջանքեր գործ դրեցի, որպեսզի կանխվի այդ բարեփոխությունը, բայց, դժբախտաբար, իմ ձայնը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»:

Ապա հարցնում են Աճառյանին.

– Իսկ ի՞նչ կասեք պրոֆեսոր Մանանդյանի մասին.

– Մանանդյանը աշխարհից կտրված մարդ է,- ասում է Աճառյանը,- զբաղվում է միայն իր գիտությամբ, հեռու է կանգնած քաղաքականությունից, ապրում է իր եղբոր և քրոջ հետ: Ինձ «վախկոտ Աճառյան» են կոչում, իսկ նրա երկչոտությունը գերազանցում է իմը: Լսարան մտնելուց հետո նա փակում է դուռը՝ վախենալով, որ իր ետևից մարդ կմտնի: Այդ իսկ պատճառով նրան «lagus» (նապաստակ) են անվանում:

Այնուհետև հետաքրքրվում են նաև Ավետիք Իսահակյանով, ուզում են իմանալ Աճառյանի կարծիքը վարպետի մասին.

– Դուք ևս շատ լավ գիտեք,- ասում է Աճառյանը,- որ Իսահակյանը վնասակար մարդ չէ: Նա շատ սիրված ժողովրդական բանաստեղծ է, շատ է սիրում քեֆ անել և միշտ իր կարողությունից նվազ է արտադրում. մի քիչ ծույլ է:

Ապա հարցնում են նաև պրոֆեսոր Տոնյանի մասին.

– Տոնյանը մեծ մաթեմատիկոս է,- ասում է Աճառյանը,- միաժամանակ լավ լեզվաբան: Նրա լեզվաբանական գիտելիքները ավելի հարուստ են, քան շատ մասնագետ կարծված



պրոֆեսիոնալ լեզվաբանների գիտելիքները: Նա շատ բարեբարո, վերին աստիճանի ազնիվ, խոհեմ անձնավորություն է:

Ամենավերջում հարցնում են.

– Իսկ Դուք ի՞նչ կասեիք, պրոֆեսոր, գրող Նաիրի Ջարյանի մասին, ի՞նչ կարծիք ունեք նրա վրա:

Աճառյանը առանց երկար մտածելու շատ կտրուկ և նշանակալի շեշտով պատասխանում է.

– Նաիրի Ջարյանն էլ ձեր մարդն է, դուք ավելի լավ կճանաչեք նրան, իսկ իմ կարծիքը նրա մասին կարևոր չէ:

## Ա Ջ Ա Տ Ա Ջ Ր Կ Ռ Ի Մ

1937 թվականն էր. չարաբաստիկ տարի, անհատի պաշտամունքի ժամանակաշրջան էր:

Աճառյանն էլ շատերի նման սարսափահար, կորցրած քունն ու հանգիստը, կարծեք հերթի էր սպասում, թե ուր որ է ահա կգան, կտանեն նաև իրեն: Ոչ ոք չէր կարող իմանալ, թե ինչու համար էր այս բոլորը:

1937 թ. սեպտեմբերի 29-ի գիշերն էր: Ո՞վ կարող էր հանգիստ քնել. մարդկանց քունը վերածվել էր սարսափելի մղձավանջի:

Հանկարծ ուժեղ հարվածներով թակեցին մեր դուռը: Կարծես մուրճի բուռն հարվածներ լինեին՝ խփված մեր գրվիին: Հրաչյան վաղուց արդեն հանգիստ չունեք: Չէր կարողանում քնել և գիշերը անկողնում վախեցող երեխայի նման ինձնից թախանձագին խնդրում էր, որ չքնեմ, այդ գիշեր էլ չքնեմ և մնամ արթուն:

– Ահա եկան, Սոֆի՛կ,- ասաց Հրաչյան սարսափած, եկան, հիմա ինձ կտանեն:

Թալկում էին մուտքի դուռը, որը մենք ամրացրել և գամել էինք գողության դեպքից հետո: Եկողներին մենք հայտնե-

ցինք, որ պետք է գային բակի կողմից: Ու մինչ նրանք նեղացած կգային բակի կողմից, Հրաչյան ասաց.

– Սոֆի՛կ, ինձ կտանեն, բայց քեզ ինչպե՞ս մենակ թողնեմ:

– Ի՞նչ ես արել, որ քեզ տանեն,- փորձեցի հանգստացնել նրան:

– Հրաչք կլինի, եթե ինձ չտանեն,- ասաց նա:

Դուրը բացվեց, ներս մտան երկու հոգի և սկսեցին Աճառյանին հարցաքննել, թե ինչ գրքեր ունի գրած, ներկայումս ինչի վրա է աշխատում և այլն: Մի պահ Հրաչյան առիթ գտնելով եկավ կողքի սենյակը ինձ մոտ և ասաց.

– Սոֆի՛կ, չվախենաս, եկել են պարզ ստուգման, ուզում են իմանալ, թե ինչ եմ գրել, ինչի վրա եմ աշխատում և այլն:

Երկու ժամ տևեց այս անիմաստ, բայց տանջող հարցաքննությունը: Աճառյանը պատվիրեց սուրճ պատրաստել, նրանք հրաժարվեցին: Ի վերջո նրանցից մեկն ինձ նշան արեց, որ դուրս գնամ, ապա հետևիցս եկավ և ասաց.

– Արտասահմանից նամակներ ենք ստացել, պրոֆեսորին տանելու ենք, որ գիշերը թարգմանի դրանք, պատրաստեցե՛ք նրա անկողինը, որ հետը տանի:

Ապա Աճառյանին հայտնեցին, որ պետք է իրենց՝ իբր թե նամակները թարգմանելու համար:

– Ես միշտ նամակներ թարգմանել եմ,- ասաց Հրաչյան,- բայց ինչու այնտեղ, բերեք այստեղ թարգմանեմ:

Նրանք պնդեցին, թե գաղտնի գրություններ են, չի կարելի տուն բերել: Հրաչյան ասաց, թե իր կինը օտար լեզու չի իմանում: Հետո, երբ տեսավ նրանց համառությունը ասաց, որ չի կարող ինձ մենակ թողնել, ապա խնդրեց ինձ տանել եղբորս մոտ և հետո ընկերանալ իրենց:

– Ի՞նչ եղբայր,- ասացի ես,- ես նրանից վաղուց խռով եմ, չեմ գնա:

– Արի քեզ տանենք քրոջդ մոտ,- ասաց այս անգամ Հրաչյան՝ չկարողանալով գլխի ընկնել, թե ես ինչու եմ հրաժարվում եղբորս մոտ գնալուց:

– Ո՛չ,- ասացի ես կտրուկ,- ոչ մի տեղ չեմ գնա, կմնամ այստեղ:

– Ո՛չ, քեզ մենակ թողնել չեմ կարող,- ասաց Հրաչյան՝ ինձ փարվելով, ապա, դառնալով նրանց, ասաց,- չեմ գալիս, ի՞նչ պիտի անեք. լուսը թող բացվի, հետո կգամ:

Նրանք ասացին, որ նախարարը իբր անձամբ խնդրել էր, որ թարգմանությունն անպայման գիշերը պետք է կատարվի, թե առանց իրեն չեն կարող գնալ:

Հրաչյան հանկարծ ասաց, թե ուզում է կաթ խմել: Նա ուղղվեց դեպի փողոց նայող պատշգամբը, որտեղ գտնվում էր կաթը, ես գնացի իրենից առաջ՝ կաթը բերելու համար: Մյուսները հետևեցին մեզ: Ու մինչ ես կաթն էի վերցնում, Հրաչյան արագ շարժումով անցավ առաջ և ուզեց իրեն պատշգամբից ցած գցել, մագերի վրայից հագիվ բռնեցինք նրան և բերեցինք ներս: Խեղճ Հրաչյա, փրկության ամեն հույս կորցրած, կաթ խմելու պատրվակով դուրս գալով պատշգամբ, փորձում էր դիմել հուսահատական ծայրահեղ միջոցի: Նրանք փորձեցին հանդարտեցնել Աճառյանին՝ վստահեցնելով, թե ոչինչ չկա: Հրաչյան այլևս բան չասաց: Մոտեցավ ինձ, փաթաթվեց, գրկախառնվեցինք, համբուրեց, և բաժանվեցինք: Նրա վերջին խոսքը եղավ.

– Մոֆի՛կ, չվախենաս, առավոտյան կվերադառնամ:

Հրաչյային թույլատրեցին վերցնել միայն վերմակ և սրբիչ:

Ցած իջնելով սրբիչով այն կապեցին, դրեցին Հրաչյայի ուսին և գնացին ոտքով:

Ես մեր Պալինայի հետ գիշերվա մնացած մասը մի կերպ անցկացրի մեր անկողնում: Առավոտյան լաց լինելով երկար սպասեցի:

Հրաչյայի վերադարձից հուսահատվեցի, հետ գնացի Չեկա՝ տեղեկանալու համար Աճառյանի ճակատագրի մասին: Այստեղ ես հանդիպեցի մի շարք մտավորական ձերբակալվածների կանանց՝ Զորյանի, Չուբարի, Տոնյանի, Քալանթարի, Քաջագունու և մի շարք ուրիշների. հարցրի Աճառյանի մասին: Ինձ ասացին, որ այնտեղ է գտնվում: Ապա վերադարձա տուն տխուր, հուսահատ. նոր գիտակցեցի վշտիս խորությունը:

Միայն հաջորդ առավոտ գնացի դպրոց՝ պարտադիր պատմելու եղելությունը տնօրեն պրոֆեսոր Մաշուրին, որ Հրաչյայի մոտիկ ընկերն էր: Ինձ պատվիրեց, որ հաջորդ օրը ներկայանամ, իմ մասին հատուկ կարգադրություն կլինի: Ապա նա իմ հետևից դուրս եկավ և երկար խորհուրդներ տվեց ինձ:

– Դիմի՛ր ամեն տեղ: Ես, դժբախտաբար, ոչինչ անել չեմ կարող: Հայտարարություն տուր և բաժանվի՛ր Հրաչյայից, շեշտի՛ր տարիքի տարբերությունը, ասա՛, որ միացել ես նրա հետ, որպեսզի կարենաս ուսումդ ավարտել: Նա տարիքն առած, կյանք տեսած մարդ է, մեղք ես, նա ավելի ուրախ կլինի, եթե դու քեզ փրկես: Հետևի՛ր խորհուրդներիս, կյանքդ մի՛ խորտակիր:

– Ո՛չ,- ասացի ես կտրականապես,- դա կնշանակեր Հրաչյային սպանել կամ մղել նրան անձնասպանության: Ես չեմ կարող նրան դավաճանել. նա ոչ ոք չունի, մեղք է:

Պրոֆեսոր Մաշուրը, տեսնելով, որ ես անդդովելի եմ, գլուխն օրորելով գնաց: Ես տուն վերադարձա: Զգում էի, որ շուտով ինձ կհեռացնեն դպրոցից, ինչպես հեռացնում էին բոլոր ձերբակալվողների հարազատներին: Երկու շաբաթ հեռու մնացի դպրոցից: Ամեն օր գնում էի Չեկա, ժամերով հերթի սպասում՝ հարցնելու համար, թե արդյոք Հրաչյան այնտեղ է, և ստանալով «այո» պատասխանը՝ դրանով մխիթարվում, որ նա ապրում է, գոյություն ունի, ապա գլխիկոր վերադառնում

էի տուն: Լսելով ավելի փորձված կանանց խորհուրդները՝ ես դիմում տվեցի՝ Աճառյանի հետ տեսակցություն խնդրելով, բայց ապարդյուն:

Ես մնացել էի նաև անտուն: Առաջին անգամ Չեկայից վերադարձին ես մեր դռները գտել էի կողպված ու կնքված: Միայն խոհանոցը թողել էին Պալինային ժամանակավոր, մինչև իրեն ուրիշ տեղ փոխադրվելը և պատվիրել, որ ինձ ներս չթողնի: Քարացել, տեղումս մնացել էի: Հուզմունքից խեղդվում էի, արցունքներս հոսում էին ու գլորվում այտերիս վրայով, երբում էի, կարծես ոտքերիս տակ հենարան չկար, քիչ էր մնում՝ ընկնեի:

Մթափվեցի, տիրապետեցի ինքս ինձ, հաշիվ տվեցի, որ իրավունք չունեմ ընկճվելու: Չէ՞ որ Հրաչյան ապրում ու շքնչում էր ինձ համար: Եթե ես չլինեի, նա հուսահատությունից շուտով կմեռներ: Ուրեմն ես անելիքներ ունեի, ես ապրում էի, պետք է ապրեր և նա. նա անմեղ էր, պետք է վաղ կամ ուշ դուրս գար բանտից, և մենք նորից միասին լինեինք:

Այս մտքերով ես ամբողջ օրը թափառեցի: Նորից գնացի Չեկա, այնտեղ հավաքված կանանցից աշխատեցի տեղեկություններ հավաքել, բայց չկարողացա հանգել եզրակացության, թե ինչ է լինելու արդյոք սրա վերջը:

Սկսել էր մթնել: Ես գնացի Նոր Բութանիա՝ իմ սիրելի քեռու մոտ: Ամբողջ եղելությունը պատմեցի նրան: Այդ օրվանից սկսեցի գիշերել նրանց մոտ: Բայց որպեսզի ոչ ոք չիմանա, և իմ պատճառով նրանց էլ վնաս չհասնի, ես չափազանց զգույշ էի վարվում: Առավոտ կանուխ աննկատելի դուրս էի գալիս սնից, երեկոյան նույն ձևով վերադառնում էի մութն ընկնելուց հետո:

Մի օր քեռիս պատմեց, թե եղել էր մերոնց մոտ, պատմել էր Աճառյանի և իմ մասին, հայտնել, թե ինչու եմ ես խուսափում նրանց մոտ երևալուց, և եզրակացրել, թե պետք է

ամեն գնով մի ելք գտնել և ինձ այս անել վիճակից դուրս բերել:

Իմ մասին իմացել էր նաև Մանյա Պետրովնա Վասիլյանը, որին համարում էի իմ խորթ քույրը: Նա իմ մահացած քրոջ տեղն էր հարս եկել: Նա շատ բարի, ազնիվ և զգայուն ռուս կին էր և անչափ սիրում էր ինձ: Նա շատ էր հուզվել՝ իմանալով, որ ես մնացել եմ անտեր և անտուն, թափառական, զուրկ գոյության միջոցներից: Ամբողջ օրը նա ինձ էր փնտրել, որ տանի իր տուն: Նա ոչ ոք չուներ, փեսայի մահից հետո ապրում էր մենակ: Նա ինձ գտավ՝ Չեկայի դռանը կանգնած, անկեղծ կարեկցությամբ լաց եղանք կրկին: Ապա գնացի իր տուն: Նա ինձ սիրտ տվեց, ասաց, որ կլինեմ իր հարազատ քույրը, կմնամ իր մոտ. ինքը ոչ ոքից վախ ունենալու պատճառ չունի, ինձ կհովանավորի:

Այսպես, ես մնացի իմ նոր հովանավորի մոտ. նա էլ ինձ նման մի տկար կին էր: Եղբորս ու քրոջս հետ մեր տեսակցության ժամադրավայրը քեռուս տունն էր Նոր Բութանիայում:

Որոշ ժամանակ անց ես գնացի դպրոց՝ իմանալու, թե ինչ դիրք էին բռնել իմ հանդեպ: Պարզվեց, որ բախտակից երկու ընկերուհիների հետ վտարվել էինք դպրոցից: Ի՛նչ կարավելի հեշտ, քան տկարին նորանոր հարվածներ տալը:

Բախտակիցներիս հետ գնացինք Հայաստանի մինիստրների սովետի նախագահ ընկ. Մացակ Պապյանի մոտ:

– Աճառյանը զրպարտությունների գոհ է, – ասացի ես, – իսկ եթե նույնիսկ նա հանցավոր համարվի, ապա ես ինչո՞վ կարող եմ մեղավոր համարվել: Խնդրում եմ հնարավորություն տալ ուսումնա շարունակելու: Մեր ամբողջ ունեցվածքը բռնագրավվել է, իմ ապրուստի միակ միջոցը պետք է դառնա մասնագիտությունս:

Պապյանը համբերատարությամբ և ուշադրությամբ լսեց մեր խնդիրքն ու բողոքը, ապա պատասխանեց.

– Շատ եմ ցավում, որ ձեզ վերականգնելու իրավունք չի տրված ինձ, չեմ կարող կարգադրություններ անել ձեզ դպրոց վերընդունելու համար: Հավանական է՝ շուտով հատուկ հրահանգ կլինի ձեզ նմանների մասին, և դուք կօգտվեք դրանից: Ահա այն բոլորը, ինչ ես կարող եմ ասել ձեզ:

– Շատ դռներ և շատ սրտեր եմ բախել,- ասացի ես,- բայց իզուր: Վերջին հույսս Դուք եք: Եթե Դուք էլ եք մերժում, ապա այստեղից դուրս գալուց հետո ես ինձ գցելու եմ հանրակառքի տակ:

Պատրաստվում էի դուրս գալ, երբ Պապյանն ասաց.

– Սպասեցե՛ք. ես ասացի, որ այդ մասին հատուկ հրաման կլինի, Դուք ինձ հավատացե՛ք և լա՛վ հասկացե՛ք ասածներս, այդպիսի հուսահատական մտքերը հանեցե՛ք Ձեր գրլիսից: Երբ հրամանը հրապարակվի, Դուք նորից կգաք ինձ մոտ:

Ես համզվեցի, որ այդ լայն կրծքի տակ կար նաև մի մեծ ու բարի սիրտ, որ հասկանում էր տկարի ցավը, սակայն ինքն էլ ցավում էր, որ ոչինչ չի կարող անել:

Բայց այդ խոսքերն ինձ քաջալերեցին, ու նոր լիցք ստացած՝ դուրս եկա:

Հրապարակվեց հրաման, որ ինձ և իմ բախտակիցներին բերեց փրկության աղոտ մի հույս:

Բախտակիցներիս հետ անմիջապես դիմեցինք շրջկոմի քարտուղար Արմեն Միսակյանին և խնդրեցինք, որ մեզ վերականգնեն, բայց չուզեցին ընդառաջել մեր արդարացի խնդրանքին, ընդհակառակը, քարտուղարը կծու հեզմանքով ավելի ծանր մեղադրանքներ տեղաց իմ գլխին:

– Ձեր ամուսին պրոֆեսոր Աճառյանը՝ այդ թթված նացիոնալիստը, իր սև գործերը տարածում էր ամեն կողմ, տանը ժողովներ էր կազմակերպում: Դուք ի՞նչ էիք մտածում այն ժամանակ, տիկի՛ն՝ Սոֆիկ, եթե համամիտ չէիք նրան, ուրեմն ինչո՞ւ չէիք հայտնում այդ մասին: Դուք ինչպիսի՞ սովետա-

կան քաղաքացի եք, որ Ձեր քթի տակ նման բաներ են պատահում և ձևացնում եք, թե ոչինչ չգիտեք:

– Եթե Դուք այդքան լավ էիք ճանաչում Աճառյանին, ապա պիտի իմանայիք, որ եթե նա նման ժողովներ գումարելու լիներ տանը, ապա հայերեն լեզվով չպիտի աներ, իսկ այդպիսի ժողովներ երբեք չեն եղել մեր տանը. դա անհիմն գրպարտություն է:

– Լավ, հիմա գնացե՛ք, մի քանի օրից կպատասխանեմ, – ասաց նա վերջում և ինձ ճանապարհեց:

Պապյանի ներշնչած հույսը ճիշտ էր: Մի քանի օրից դուրս եկավ հրամանագիրը, հեռացվածներին վերականգնեցին: Նույն օրն իսկ գնացի դասի: Ցավալի էր, սակայն, տեսնել, որ մեր դասընկերուհիները մեզանից երես էին դարձնում, վախենում էին մեզ հետ շփվելուց: Նրանք նույնիսկ մերժում էին մեզ տալ իրենց տետրերը՝ բաց թողած դասախոսություններն արտագրելու համար: Դասախոսները միայն կարծեք ավելի մարդասիրական վերաբերմունք էին ցուցաբերում, կարեկցում էին մեզ նման անմեղ մեղավորներին: Ինչ արած. ուրիշ ճար չկար, պետք էր հաշտվել այդ բոլորին և լռությամբ տանել բոլոր անիրավությունները, մինչև որ բախտը ժպտար: Հուսահատության բույներին ճիգ էի գործադրում, որ ինձ ավելի պինդ պահեմ, պատրաստ լինեմ դիմադրելու դժվարություններին:

Ամենասարսափելին այն էր, որ այն որք աղջիկը՝ Ջեփյուռը, որին հովանավորել էի, դպրոց մտնելու օրից գրպարտություններ էր արել մեր մասին: Ջեփյուռին չէր համակրել Աճառյանը, բայց խղճում էր նրան, համաձայնվել էր, որ նա մնար մեր տանը որպես ընտանիքի անդամ, ապրեր մեր թևի տակ մինչև ավարտելը: Ջեփյուռը կոմերիտական էր, և նա չուներ հարազատներ:

Մի օր հանդիպեցի իմ դասընկերներից մանկական գրող Վիկտորյա Վարդանյանին: Նա պատմեց, որ մեր հեռա-



ցումից հետո Ձեփյուռը առաջինը ելույթ էր ունեցել ինստիտուտում գումարված ընդհանուր ժողովում, մեզ պախարակել՝ ասելով, որ Աճառյանները կեղծում էին, նրանք չէին խղճում իրեն, այլ շահագործում էին որպես տան սպասավորի, ամեն օր ինքը տիկին Մոֆիկին ուղեկցում էր մինչև շուկա և մթերքների զամբյուղը դժվարությամբ քարշ տալով բերում էր տուն: Ձեփյուռն ասել էր նաև, որ Աճառյանը կեղծավոր մարդ էր, սուտ բարերար, գուրկ կոմունիստի ոգուց: Հասկանալի էր:

Այնուամենայնիվ, երկար ժամանակ կարծես ճակատիս գրվել էր հակահեղափոխականի կին լինելու դրոշմը:

1938 թ. հունիսի 13-ին սկսվեցին մեր ավարտական քննությունները: Ինստիտուտին կից բացվել էր փորձնական ամբուլատորիա, որտեղ պետք է անվճար անցկացնեինք մեր պրակտիկան մեր դեկավարների առաջնորդությամբ: Մեր ծանոթներին հրավիրում էինք բուժվելու: Իմ հաճախորդներն ավելի շատ էին լինում, ընկերուհիներս մի տեսակ դժգոհ էին: Իմ դեկավար Ս.Ի.Գյոդակչյանը շատ գոհ էր իմ աշխատանքից՝ նկատելով իմ հոգատար և ուշադիր վերաբերմունքը հիվանդների հանդեպ:

Ավարտական քննությունները վերջացան: Ես գնացի առողջապահության նախարարություն և խնդրեցի, որ ընդունեն ինձ աշխատանքի, սակայն վախենում էի, որ ինձ չեն ընդունի, կխուսափեն ինձնից՝ բանտարկյալի կնոջից: Հանդիպեցի մեր նախկին հարևան Վաղո Մարգսյանին: Հետաքրքրվեց մեզանով, պատմեցի բոլորը, ներկա անհուսալի վիճակս: Ասացի, եթե չընդունեն, սարսափելի դրության մեջ կմնամ: Պարզվեց, որ նա Աշտարակի առողջապահության բաժնի վարիչն էր և միաժամանակ աշխատում էր որպես սեռավարակաբան: Հայտնեց, որ իր մոտ առամնաբույժի տեղ կա, ապա շոշափեց իմ տրամադրությունը, ցանկացավ իմանալ, թե կգնամ արդյոք Աշտարակ: Ես հավանություն տվեցի:

Նա եղավ նախարար Ճշմարիտյանի մոտ, ապա դուրս գալով հայտնեց, որ գնանք առանձին տեղ՝ խոսելու: Մարգարյանն ինձ ասաց, որ մանրամասն խոսել է նախարար Ճշմարիտյանի հետ, վերջինս ճանաչել է Աճառյանին և ասել է, որ պետք է օգնել Աճառյանին, բայց որոշել է զանազան ձգձգումներով կարգադրել իմ գործը: Այդպես էլ եղավ: Ես օրերով գնում էի նախարարություն, խնդրում էի ինձ ընդունել, բայց նա միշտ զբաղված էր լինում: Վերջապես մեկ օր ընդունեց ինձ: Բացատրեցի իմ վիճակը, հուզվեցի. մինիստր Ճշմարիտյանը կարգադրեց կադրերի բաժնի վարիչ Ասիկյանին, որ գործուղում ձևակերպի: Մինչև գրության ստանալը ես նորից հանդիպեցի Մարգարյանին, նա քաջալերեց ինձ, հուսադրեց և հայտնեց, որ ինքն էլ է հատկապես ձգձգելու մի քիչ հասկանալի պատճառով: Վերջապես եկավ երկար սպասված երանելի օրը. նշանակում ստացա, մեկնեցի Աշտարակ. Ավտոմեքենայի փչացման պատճառով գիշերվա ժամը 11-ն էր, որ հասանք Աշտարակ: Աշտարակում մենակ ուշ ժամին գիշերելու տեղ էի փնտրում: Մի մարդ ինձ ուղեկցեց մինչև հյուրանոց: Հյուրանոցի վարիչ մի կին հայտնեց, թե հյուրանոցը չի աշխատում. երեք սենյակն էլ զբաղեցրել է զինվորական կոմիսար Ղազարյանը: Ես խնդրեցի մի հնար անել, որովհետև հնարավոր չէր փողոցում լուսացնել: Կինը կարծեք կարեկցեց, գնաց կոմիսարի մոտ, բայց նա չբարեհաճեց իր տրամադրության տակ տրված իր երկու ազատ սենյակներից մեկը տալ: Հյուրանոցի վարիչը ինձ խոստացավ մի ճար անել: Շնորհակալություն հայտնեցի ինձ ուղեկցող ընկերոջը, ապա բարձրացանք հյուրանոցի երկրորդ հարկը: Ջարդված ապակիներով մի սենյակ առաջարկեց ինձ: Ես մենակ վախվիսելով մի կերպ քնեցի գիշերը: Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, երբ դեռ հագնվում էի, սենյակիս դուռը ծեծեցին, ներս մտավ կոմիսար Ղազարյանը՝ կարճահասակ, սպիտակած մազերով մի մարդ: Նա հայտնեց, որ ամբողջ գիշեր տանջվել էր սաս-

տիկ ատամնացավից: Առանց իմանալու, որ կողքին ատամնաբույժ կա, ներողություն խնդրեց, որ երեկոյան անտարբեր վերաբերմունք է ցույց տվել՝ առանց իմանալու, թե ով էր եկողը: Ես նրա երեսովը տվեցի, թե ասել է՝ կնիկ-մնիկ իրեն պետք չի: Բայց նա սրամտորեն ավելացրեց, թե կնիկ պետք չէր, բայց բժիշկ պետք էր: «Առավոտյան ես գնացի ամբուլատորիա,- ասաց կոմիսարը,- ինձ ասացին, թե ատամնաբուժը Ձեզ մոտ է, իսկ Դուք եկել էք այստեղ»: Մյուս օրը հյուրանոցի վարիչին խնդրեցի, որ ինձ ուրիշ հարմար տեղ ճարեն: Նա ինձ տարավ իր քրոջ՝ Վարդանուշ Մելիքյանի տուն, որտեղ ապրեցի երկու շաբաթ:

Այդտեղից գնացի ամբուլատորիա, գործուղման գրությունը ցույց տվեցի առբաժնի վարիչ Վաղո Սարգսյանին, և նա, մտնելով իր դերի մեջ, ասաց, որ ինքը տղամարդ բժիշկ է պահանջել, կին չի կարող ընդունել, ես հասկացա և չհուսահատվեցի:

Երկու օր հետո ընկ. Սարգսյանն ինձ վերջապես նշանակեց աշխատանքի: Հետզհետե անբնական այս կյանքը մտավ իր հունի մեջ: Ես կյանքիս այս դառնությունները փորձեցի թմրեցնել աշխատանքի մեջ: Ազատված բժշկուհին շատ բարեհամբույր կին էր, նա ինձ տարավ իր ապրած տունը, ծանոթացրեց տանտիրուհի Բուլբուլ Գրիգորյանին: Հենց այդ տանն էլ ես ապրեցի Աշտարակում իմ աշխատած ամբողջ ժամանակաշրջանում: Ինձ հատկացրին բժշկուհու սենյակը, բայց ես գերադասեցի ապրել ընդհանուր սենյակում, որպեսզի մենակ չմնամ:

Բայց Հրաչյայի ճակատագիրը ինձ շատ էր մտահոգում: Այն մարդը, որ երեխայի նման կարիք ուներ գուրգուրանքի, խնամքի, մնացել էր անօգնական: Երբ մտածում էի, թե ուր է արդյոք նա հիմա, ինչպիսի պայմաններում է գտնվում, չէի կարողանում արցունքներս զսպել: Նույնիսկ աշխատանքի ժամանակ ես՝ բժիշկս, որ կոչումն ունեի՝ ուրիշներին արիու-

թյուն ներշնչելու, հաճախ դժվար էի զսպում պոռթկացող հուզումս, իսկ երբ աշխատանքից հետո պատահում էր, որ առանձին մնայի, արցունքներս հոսում էին այլևս անարգել:

## Հ Ա Ր Ց Ա Ք Ն Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Իմ հիշողությունները Աճառյանի բանտարկության շրջանի մասին հիմնականում հիմնված են նրա պատմածների վրա: Ձանազան առիթներով նա պատմել է այդ մասին՝ բոլոր մանրամասնություններով: Բացի այդ՝ ես առիթ եմ ունեցել հանդիպելու և լսելու Աճառյանի բախտակից ընկերներից մի քանիսին, որոնց պատմածներից ևս ես օգտվել եմ:

Աճառյանի դեմ հարուցված մեղադրանքը, ինչպես կտեսնենք հետագայում, ոչնչով չհիմնավորված զրպարտություններ և անհիմն կասկածանքներ էին: Ահա Աճառյանին հասցեագրված հանցանքները.

1. Ազգայնամոլություն (նացիոնալիզմ)।
2. Անգլիամոլություն.
3. Լրտեսություն մի շարք արևմտյան եվրոպական պետությունների օգտին.
4. Համալսարանում կազմակերպված հայ հեղափոխական դաշնակցության ընդհատակյա խմբակի ղեկավարություն, խմբակի մեջ եղել են պրոֆեսոր Արշակ Տոնյանը, Պապա Բեջանիչ Քալանթարյանը, Տաճատ Խաչվանքյանը և ուրիշներ:

Վերջում էլ նրան դաշնակցական էին հայտարարում, քանի որ ուներ դաշնակցական ընկեր, որն էր Արշակ Չոբանյանը: Իսկ եթե ընկերը դաշնակցական էր, ուստի Աճառյանն էլ է դաշնակցական: Դրան Աճառյանը սրամտորեն պատասխանում էր. «Ես շատ մտերիմ եմ եղել Ալ. Մյասնիկյանի հետ: Մենք միասին երկու ամառ անցկացրել ենք Լենինգրադում

նույն հարկի տակ: Նա իսկական բոլշևիկ էր, ուրեմն ես էլ եմ բոլշևիկ»:

Հրաչյան պատմում էր, որ հարցաքննությունների ժամանակ իր աջ ձեռքը շորերի տակից դնում էր ձախ կրծքին, երկու մատով աննկատելիորեն խաչակնքում էր և մտովի աղաչում աստծուն, որ «խափանի չարը», կուրացնի իրեն զրպարտողներին, որպեսզի իրեն չտեսնեն, և ինքը փրկվի իր կրած տանջանքներից ու անիրավացի մեղադրանքներից:

Աճառյանի պրպտող միտքը հարցաքննությունների ընթացքում անգամ չէր դադարում գիտական ուղղությամբ աշխատելուց: Բացի իրեն տրվող հարցերին պատասխանելուց՝ նա շատ հաճախ իր քննիչներին բացատրում էր այս կամ այն խոսված բառի իմաստն ու ծագումը: Հատկապես իրեն բարդած *շպիոն* բառինը: Նա մի մեծադիր թղթի վրա գրում է *շպիոն* բառի ծագումն ու իմաստը, տակին էլ ավելացնում, որ ինքը *շպիոն* չէ:

Զանազան հարցերի հետ միասին Աճառյանից պահանջում էին բացատրել, թե ինչ միջոցներով է նա Փարիզում ապրել ու սովորել: Նա պատմում էր, որ առաջին տարին ապրել է իր շահած փողով, հետո՝ կոշիկ մաքրելով և, վերջապես, աֆիշներ փակցնելով ու կեկեվետի (ֆիստաշկա) խորովելով դասերից հետո ու երեկոյան վաճառելով փողոցում:

Քննիչը եզրակացնում է և Աճառյանին է տալիս մի նոր մականուն (տիտղոս) «խաղյաչի կուպեց»:

Ի վերջո քննիչը, համբերությունը կորցրած, խիստ զայրանում է, որ չի կարողանում Աճառյանին ընդունել տալ նրա դեմ հարուցված մեղադրանքը և մի անգամ էլ անգուսպ լուտանքներ ու հայիոյանք է տեղում նրա (Աճառյանի) կնոջ հասցեին: Աճառյանի ասելով՝ ինքն իսկույն մտաբերում է Արուսյակին. «Կին ես հասկանում էի միայն ու միայն Արուսյակին (իսկ Մոֆիկը դեռ չգիտեի ինչպիսին կլինի): Ես ազդվեցի, որ իմ պատճառով խեղճ Արուսյակը ինչ վիրավորանք-

ներ է կրում, և մտքում այդ բոլորը ուղղում էի Մոֆիկին, քանի որ նախ՝ նա կենդանի էր, և երկրորդ՝ ես նրանից ներողություն կարող էի խնդրել»:

Վերջիվերջո տանջալից հարցաքննություններից ազատվելու համար ընդունում և ստորագրում է մեղադրական արձանագրությունը և տակն էլ ավելացնում. «Դատավարության ժամանակ կպարզվի»:

Մեղադրական այս արձանագրությունը կազմելուց հետո Մոսկվայից եկավ 3 հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողով՝ դատավոր Նովիկովի գլխավորությամբ՝ Աճառյանին դատելու համար:

### ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Աճառյանը բանտարկվեց 1937 թ. սեպտեմբերի 29-ին, իսկ դատավարությունը տեղի ունեցավ շուրջ երկու տարի հետո, այսինքն՝ 1939 թվի մարտի 7-ին: Բանտից ազատվելուց շատ հետո՝ մի երեկո, երբ մենք երկուսով էինք տանը, Աճառյանը հիշեց իր բանտարկությունը և ամենայն մանրամասնությամբ պատմեց ինձ: Ահա Աճառյանի պատմածը. «Դատավորը, ինչպես սովորություն է, նախ սկսեց ինձ՝ մեղադրյալիս, հարցեր տալ՝ որտեղացի եմ, որտեղ եմ սովորել, ինչ կրթություն ունեմ, ինչով եմ զբաղվում և այլն, և այլն:

Դատավարության մեղմ հարցումները ինձ մեծ հույս էին ներշնչել, որ շուտով հոգս կցնդեն անհիմն մեղադրանքները, և ինձ կարդարացնեն: Երբ դատավորը հարցրեց, թե ինչու եմ գերադասում անգլերեն լեզուն, ինձ մի պահ թվաց, որ գտնվում եմ համալսարանում և դասախոսական ամբիոնից պետք է բացատրություն տամ:

Ես անգլիասեր չեմ, ես լեզուները քննում եմ որպես լեզվաբան- գիտնական և կարծիք եմ հայտնում: Այսպես, անգլե-

րենի քերականությունը, համեմատած ուրիշ լեզուների հետ, պարզ և հեշտ է այն սովորել: 300 բառ իմանալու դեպքում կարելի է անգլերեն ճառ արտասանել, այնինչ ռուսաց լեզվի քերականությունը բավականին բարդ է նույնիսկ ռուսների համար:

Ես իմ տարերքի մեջ էի գտնվում: Երկար ժամանակ էր, ինչ ես կտրվել էի դասախոսական ամբիոնից, իմ սիրելի ուսանողներից: Թվում էր, թե մոռացել էի մի պահ, որ գտնվում եմ դատարանում: Ինձ թվում էր, որ լեզվաբանական գեկուցում եմ կարդում գիտական բարձր լսարանի առջև: Ես զգաստացա միայն այն ժամանակ, երբ դատավոր Նովիկովը ծիծաղեց իմ կատարած լեզվաբանական համեմատությունների վրա և աստենակալների հետ ցածր ձայնով խոսակցություն ունեցավ:

Ես դարձյալ սիրտ առա այդ ծիծաղից և համոզված լինելով, որ այս անգամ կազատեն ինձ, ասացի.

– Եթե ինձ ազատելու լինեք, խնդրում եմ՝ իմ տունը ցույց տաք, որովհետև վատ եմ տեսնում և չեմ կարող տունս գտնել:

Դատավոր Նովիկովը ծիծաղեց, միայն ասաց.

– Լա՛վ, լա՛վ:

– Բայց Դուք ինձ չդատեցիք, - ասացի ես:

Դատավորը հարցրեց.

– Մեղադրյալ Աճառյան, Ձեր դեմ հարուցված մեղադրանքների տակ Դուք ստորագրել եք. այժմ ընդունում եք այդ մեղադրանքները:

– Ո՛չ, - պատասխանում եմ կտրականապես:

– Հասկանալի չէ, - ստորագրել, - հարցնում է դատավորը:

Բը:

– Խնդրում եմ ուշադրություն դարձնել, - ասացի, - ստորագրությունից առաջ ես մակագրել եմ՝ «Դատավարության ժամանակ կպարզվի»: Այժմ ահա պարզում ենք: Ինձ մեղադ-

րում եք իբրև ազգայնամուլ (նացիոնալիստ), թույլ տվեք պարզել: Ես ազգասեր եմ, բայց ոչ ազգայնամուլ (շովինիստ): Ազգայնասերը սիրում է իր ազգը՝ առանց ատելու ուրիշ ազգերի, համակրելով նրանց, բարեկամանալով: Իսկ ազգայնամուլը սիրում է միայն իր ազգը, ատում ուրիշներին: Մենք փոքր ազգ ենք: Եթե հայրը ազգասեր չլիներ, հայությունը չէր կարող գոյություն ունենալ:

– Դուք եղե՞լ եք համալսարանում դաշնակցական խմբի ղեկավարը,– հարցրեց դատավորը:

– Ես դաշնակցական չեմ եղել և ընդհանրապես ոչ մի կուսակցության չեմ պատկանել: Եթե որևէ կուսակցության անդամ լինեի, ապա որևէ ցուցակում կլինեի իմ անունը:

Այնուհետև ներս կանչեցին վկաներին:

Պրոֆեսոր Արշակ Տոնյանին, պրոֆեսոր Պապա Քալանթարյանին և Տաճատ Խաչվանքյանին: Վկաները միաձայն հայտարարեցին, որ բացի լավից՝ ուրիշ բան չի կարելի ասել իրենց սիրելի Աճառյանի մասին: Աճառյանը ազնիվ, ազգասեր, ճշտապահ, բարեսիրտ մի անձնավորություն է և պատկանում է համաշխարհային համբավի տեր լեզվաբանների թվին:

Ես, շատ գոհ վկաների այնքան նպաստավոր հայտարարություններից, ոգևորված ասացի, որ ես իմ ցուցմունքների մեջ երկու էջ բացատրություն եմ գրել «լրտես» բառի շուրջ և շեշտեցի, որ ես երբեք լրտես չեմ եղել:

Վերջացնելով հարցաքննությունը՝ դատական կազմը գնաց խորհրդակցության: Կես ժամ հետո կազմը վերադարձավ՝ հաղորդելու խորհրդակցության արդյունքը և դատավճիռը:

Բոլորի հետ իսկույն ոտքի կանգնեցի նաև ես՝ սրտատրոփ սպասելով դատավճռին, որը իմ համոզումով, հետևելով դատավարության ընթացքից և վկաների նպաստավոր



հայտարարություններին, պետք է արդարացներ ինձ և ազատ արձակեր:

Դատավոր Նովիկովը դատարանական հանդիսավոր իրադրության մեջ կարդաց իր նախագահությամբ և Վերդուխի ու Միլվայի մասնակցությամբ:

### «ՔԱՂՎԱԾՔ ԴԱՏԱՎՃՈՒՑ

#### Սովետական Սոցիալիստական

#### Հանրապետությունների Միության անունին

Անդրկովկասյան զինվորական շրջանի զինվորական դատարանը՝ հետևյալ կազմով՝ նախագահ՝ 2-րդ կարգի զինվորական իրավաբան Նովիկով, անդամներ՝ Վեդուխ և Միլվա, քարտուղար՝ զինվորական իրավաբան Միխայլովսկի, 1939 թ. մարտի 7-ի դռնփակ դատական նիստում Երևան քաղաքում լսեց **Հրայր Հակոբի Աճառյանի**՝ ծնված 1876 թ. Կոստանդնուպոլիս քաղաքում (Թուրքիա), ազգությամբ հայ, անկուսակցական, բարձրագույն կրթությամբ, ՄՍՀՄ քաղաքացի, մինչ այդ չմեղադրված, դատական գործը: Նա մեղադրվում է Հայկական ՄՍՀ հրամանագրի 58ա հոդվածով նախատեսված հանցագործության մեջ:

Նախնական և դատական քննությամբ հաստատվում է, որ Աճառյանը...վերոհիշյալի հիման վրա, զինվորական դատարանը **Աճառյանին** մեղավոր է համարում այն բանում, որ նա....., այսինքն՝ Հայկական ՄՍՀ հրամանագրի 59 հոդվածով նախատեսված հանցագործության մեջ և ոչ թե նախնական վճռով նախատեսված 58ա հոդվածով, և ղեկավարվելով Հայկական ՄՍՀ օրենսգրքի 297 և 298 հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

Հայկական ՄՍՀՄ հրամանագրի 59 հոդվածի հիման վրա ազատագրվել **Հրայր Հակոբի Աճառյանին** վեց տարով և ձայնագրվել 3 տարով՝ բռնագրավելով նրան պատկանող գույքը:

Ազատագրկման ժամկետի սկիզբը նախնական բանտարկության հետ միասին համարել 1937 թ. սեպտեմբերի 29-ը:

Դատավճիռը ենթակա է ՍՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի բեկման՝ դատավճիռը հայտարարելու օրից 5 օրվա ընթացքում»:

Բայց, ավա դ, ուժգին էր հարվածը: Ես հուսահատ բացականչեցի.

– Այդ էր ձեր արդարադատությունը:

Ես թուլացած ընկա աթոռին և դառնորեն հեկեկացի՝ ասելով, որ ես կբողոքեմ նման արդարադատության դեմ:

Դատավոր՝ Նովիկովը, լսելով իմ խոսքերը, ասաց.

– Բողոքեցե՛ք, գուցե մենք սխալվում ենք, այդ բոլորը մենք մեզ հետ կտանենք Մոսկվա:

Ինձ անմիջապես թուղթ ու գրիչ բերեցին, ես ֆրանսերեն լեզվով գրեցի մի դիմում-բողոքագիր Ստալինին:

Ահա այսպես վերջացավ իմ դատավարությունը, Սոֆի՛կ ջան»:

### ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Ես պայմանավորվել էի քրոջս և եղբորս հետ, որ եթե Աճառյանի դատավարությունը տեղի ունենա, ինձ հեռագրեն հետևյալ բովանդակությամբ. «Մայրդ հիվանդ է, շտա՛ պ արի»:

Աշտարակում մարտի 12-ին՝ աշխատանքի ժամին, ես ստացա պայմանավորված հեռագիրը և եզրակացրի, որ երևի դատավարությունը արդեն տեղի է ունեցել: Ես պետք է մեկնեի Երևան: Եվ որովհետև չէի համարձակվում հայտնել իմ բացակայության պատճառը, ամիսը մեկ անգամ ես հարկադրված էի հորինել մի պատրվակ՝ Երևան գնալու համար:

Իմ առաջին մեկնելուն ես պատճառաբանեցի, թե իմ բռնամեքենայի մի մասը փչացել է, տանը ունեմ, գնում եմ

բերելու: Վարիչը համաձայնվեց, բայց ուզեց գրություն տալ, որ դեղատնից ստանամ: Քիչ էր մնում ձախողվելի, մտածեցի, որ գործուղում ձևակերպելը կարող էր ձգձգվել, և ես եթե ամսի 13-ին Երևանում չլինեի, և իմ գնալն ավելորդ կլիներ, ասացի, որ, ոչինչ, դա շատ աննշան բան է, կգնամ իմը կբերեմ, կարող է աշխատանքից մի քիչ ուշանամ:

Երևան հասնելուն պես ուղղակի գնացի քոջս՝ Սիրանուշի տուն: Մանրամասն իմացա, որ Հրաչյային դատապարտել են և տեղափոխել են Չեկայից կենտրոնական բանտ: Ուստի ինձ իրավունք է վերապահվում ամսական մեկ անգամ ԱՃառյանին «պերեդաչա» տանել, իսկ տեսակցություն ունենալու համար հարկավոր է դիմումով դիմել բանտապետին: Այդ բոլոր տեղեկությունները իմանալուց հետո գնացի բանտ: Հրաչյային «պերեդաչա» տալու համար անհրաժեշտ էր առավոտը վաղ հերթ պահել: Ես իմ քույր Սիրանուշի հետ համաձայնվել էի, որ յուրաքանչյուր ամսի 13-ին պետք է հերթ պահել, որ ես Աշտարակից գալի Երևան, վաղ առավոտյան ուտելիք հանձնեի Հրաչյային և անմիջապես վերադառնալի, հասնեի աշխատանքի: Ոչ ոք չգիտեր իմ կապը ամուսնուս հետ: Իսկ եթե իրականությունը իմանային, կարող էր ամեն ինչ փչանալ, ու ես մնայի առանց աշխատանքի, այսինքն՝ առանց ապրուստի միջոցի:

Շուտով Աշտարակի առողջապահության բաժնի վարիչ Վաղո Սարգսյանին փոխարինեց մեր հիվանդանոցի նախկին քույր՝ Նավասարդյան ազգանունով մի կին: Մի օր էլ առբաժնի վարիչը, դիմելով ինձ, հարցրեց. «Բժշկուհի՛, Դուք ինչո՞ւ աշխատանքային օրերին եք գնում Երևան, ավելի լավ չէ շաբաթ օրը մեկնեք, կիրակի օրը մնաք և երկուշաբթի օրը ավտոբուսով վերադառնաք աշխատանքի»:

– Ո՞վ ունեմ Երևանում, որ կիրակի օրը մնամ, - ասացի ես:

Աշխատանքից հետո՝ հաջորդ ամսվա 12-ին, նորից պայմանավորված, քրոջիցս՝ Միրանուշից հեռագիր ստացա. «Մայրդ հիվանդ է, արի »: Երևան գնալու համար ես պարտավոր էի դիմել առբաժնի վարիչին՝ թույլտվություն ստանալու համար:

Մի քանի անգամ գնացի, նրան տանը չգտա: Ճարահատ՝ երեկոյան ժամը 8-ին տանտիրուհուս՝ Խաչատրյանի հետ նորից գնացի: Նա երեխային էր լողացնում: Հեռագիրը ցույց տալով՝ թույլտվություն խնդրեցի՝ Երևան գնալու: Նա բարկացած ասաց, որ շատ եմ գնում Երևան, իսկ եթե մորս այդքան շատ եմ սիրում, կարող եմ նրան բերել իրենց մոտ: Ասացի, թե դժվար կլինե՞ր հիվանդ պահել և աշխատել, որովհետև այստեղ ոչ ոք չունեմ, ուստի թողել եմ քրոջս մոտ: Նա կտրականապես մերժեց: Դարձյալ խնդրեցի, լաց եղա: Տիկին Փուփուլն էլ խնդրեց, բայց իզուր: Ես փորձեցի կոչ անել նրա մայրական զգացմունքներին, բայց դարձյալ անօգուտ:

Ստիպված տանտիրուհուս հետ միասին գնացինք շրջկոմի քարտուղար Լիպարիտ Վարդանյանի մոտ, պատմեցի եղելությունը: Նա թույլատրեց մեկնել, բայց մտահոգվեց, որ ձմեռվա այս բուքին՝ մութ գիշերով, ինչպես պիտի գնամ: Ասացի, թե ինչ գնով էլ լինի մի կերպ պետք է հասնեմ Երևան: Հասանք Աշտարակի կամուրջը՝ բաղնիքի մոտ: Տանտիրուհիս շատ թախանձեց, որ չգնամ, խոսեց գայլերի մասին, բայց անօգուտ, ես անդրդվելի մնացի: Նրան հանգստացնելու համար ասացի, որ կոլտնտեսության ավտոմեքենան ժամը 10-ին մեկնելու է Երևան, կընկերանամ գնացողներին, իսկ իրեն համոզեցի տուն վերադառնալ: Այդ միջոցին չորս աղբբեջանցի թուրքեր, երեք էջ առաջներն առած, գնում էին դեպի Երևան: Նրանք իսկույն ինձ ճանաչեցին. նրանք հայերեն խոսում և հասկանում էին: Հասնելով ինձ՝ հարցրին. «Ո՞ր ես գնում, դոխտո՛ւր»: Ասացի, թե ուզում էի Երևան գնալ, բայց կոլտնտեսության ավտոմեքենան ուշացավ: Մտահոգվեցին,

որ եթե ավտոն չգա, ապա ինչպես կգնամ: Մեկն ասաց, որ իրենց դոխտորն (բժիշկն) է, թող միասին գա, իսկ եթե հոգնի, էշի վրա կնստի, ճանապարհին չեն թողնի: Ուրիշ էլք չկար: Աճառյանի՝ ուտելիք պարունակող ձեռքիս կապոցը դրեցի էշի վրա, և քայլեցինք: Ցուրտ էր, գետինը՝ սառած: Բավական քայլելուց հետո ոտքերս սառեցին, կարծես փայտացան. այլևս չէի կարող քայլել: Նստեցինք, մի քիչ հանգստացանք, ապա նորից շարունակեցինք ճանապարհը: Ուղեկիցներիս լսելով՝ մի քիչ նստեցի էշի վրա, բայց չստացվեց, ոտքերս անշարժանալով սառչում էին, ստիպվեցի իջնել ցած և շարունակել ոտքով: Ճանապարհին հեքիաթ պատմելով, զրուցելով՝ վերջապես առավոտյան ժամը 7-ին հասանք Երևան:

Քույրս՝ Սիրանուշը, ըստ սովորության, զիշերը բանտի դռանը հերթ էր պահել: Տաքանալու համար խարույկ էին վառել և բանտարկյալների հարազատները բոլորվել էին կրակի շուրջը մինչև առավոտ: Քրոջս տեսա, նա ուրախացավ, ասաց, որ գնամ տուն՝ տաքանամ, հանգստանամ, ժամը 10-ին գամ, մեր հերթը հազիվ հասնի:

Ճանապարհին հանդիպեցի միաձի մի կառքի, խնդրեցի ինձ տուն հասցնել, ոտքերս սառել էին: Հասա տուն, տեսա մերոնց, հանգստացա, տաքացա և պարենը դասավորելուց հետո՝ ժամը 10-ին, հասա, հանձնեցի: Հրաչյան, պարենը ստանալով, թղթի կտորի վրա պատասխանել էր. «Ուղարկածդ ստացա, նամա՛կ գրիր»:

Այսպես, տաժանակիր չարչարանքով «պերեդաչան» հասցնելուց և հանձնելուց հետո անմիջապես ես վերադարձա Աշտարակ՝ աշխատանքի:

Դժվար տարիներ էին. ծանր, սարսափելի էր: Բարեբախտաբար երիտասարդ էի և առողջ. վճռել էի չընկճվել, վստահ էի, որ Հրաչյան անմեղ էր, երբ էլ լիներ, նա պիտի վերադառնար իր տուն: Գիտեի, որ նրա մտքի լույսը չպետք է խավարեր բանտի հաստ պատերի հետևում: Զգում էի, որ աշ-

խատել, տառապել, չարչարվել Հրաչյայի համար նշանակում էր ծառայել հայ մշակույթի պատվավոր գործին: Այս գիտակցությունն ինձ անընկճելի ուժ, կամք ու վճռականություն էր ներշնչում:

Հետագայում, պետք է ասեմ, որ իմ մտածումները արդարացան: Բանտից հետո էր, որ Հրաչյան տվեց «Հայոց լեզվի պատմության» երկու հատորները, «Լիակատար քերականության» 562 լեզվի հատորյակը և այլ գործեր, անձնատունների բառարանի 5 հատորները:

Սկզբում հիվանդներն առանց հերթի էին մտնում ատամնաբուժարան և խանգարում կանոնավոր աշխատանքը: Անհրաժեշտ եղավ հերթ սահմանել, համարներ բաժանել: Հենց որ այս կարգադրությունն արեցի, միջանցքից լսեցի դժգոհություններ: Ասում էին, թե հակահեղափոխական կին է բժշկուհին, ուզում է իրեն ցույց տալ, ում ցանկանա՝ ընդունում է առանց հերթի և այլն, և այլն:

Մինչդեռ պետք է ասել, որ Աճառյանի բախտակից ընկերներն էին նրանք, որոնք ազատվում էին բանտից, հաճախ լինում էին ինձ մոտ՝ Աշտարակում (ի հարգանս իրենց սիրելի «վարժապետի»), Աճառյանի խնդրանքով: Տեղեկություններ էին բերում նրա վիճակի մասին՝ միաժամանակ հագուրդ տալու իրենց հետաքրքրասիրությանը, քանի որ Հրաչյան գիշեր-ցերեկ իմ գովքն էր արել նրանց մոտ, մի բան, որ հայ տղամարդկանց համար անսովոր էր:

Աշտարակում մեր գլխավոր բժիշկ Սաժուսյանը երբ իմացավ, որ ես Աճառյանի կինն եմ, իմ հանդեպ մեծ հարգանք ցուցաբերեց: Նա ինձ կոչում էր զուբադոր<sup>2</sup>՝ բառիս բուն իմաստով: Լավ մարդ էր, սքանչելի բժիշկ, բնիկ աշտարակցի, լավ մասնագետ, շատ հոգատար հիվանդների հանդեպ, որոնք հարգում ու սիրում էին նրան: Բոլոր շրջաններից, անգամ Երևանից հիվանդներ էին բերում նրա մոտ: Բժշկի

---

<sup>2</sup> Զուբադոր՝ հայերեն ատամնաբարձ:

կինը արդեն հայացած ռուս կին էր՝ շատ հյուրասեր: Բժշկի խելացի խորհուրդներից շատ էի օգտվում: Նա ասում էր, որ չպետք է հավատալ մարդկանց քաղցր խոսքերին. նրանք ընդհանրապես կեղծում են: Նաև սովորեցրեց, որ պետք է խիստ լինել աշխատանքի մեջ, թուլություն չպետք է ցույց տամ, այլապես՝ մանավանդ իմանալով, որ Աճառյանի կինն էմ, ինձ կխեղճացնեն, կհրամայեն, պետք է զգույշ լինել աշտարակցիներից: Պետք է միշտ այնպես ձևացնեմ, թե աշխատանքս բարդ է ու ծանր:

Սաժոււմյանը գիտեր իմ՝ Երևան գնալու պատճառը: Մի օր էլ նա ինձ ասաց, որ երեկոյան գնամ իրենց տուն. ինձ ասելիք ունի: Գնացի: Ուրախությամբ ինձ հայտնեց, որ երկու օր առաջ Փարիզի ռադիոյից լսել է, որ Աճառյանի բարեկամները, նախկին ուսանողները և համակիրները ասել են, որ այդպիսի գիտնականին անգործության մատնելը շատ սխալ է, նա մեծ գիտնական է, պետք է օգտվել նրա գիտությունից, օգտագործել նրան, ինչքան հնարավոր է: Հազար տարին մեկ Աճառյանի նման մի գլուխ չի ծնվում:

Ես կարծիք հայտնեցի, թե վատ են արել. կարող են Աճառյանին արտասահմանի հետ կապել, բայց ես գիտեմ, որ նա ո՛չ ազգական, ո՛չ բարեկամ չունի արտասահմանում:

Սաժոււմյանն ասաց, որ չպետք է վախենալ, հուզվել: Ընդհակառակը, ավելի լավ է դա. առիթ կհանդիսանա, որ ավելի կհետաքրքրվեն Աճառյանով և ընթացք տան նրա գործին: Բժիշկն ասում էր, որ այն, ինչ արվում է արտասահմանում՝ հօգուտ Աճառյանի, ոչ թե նրա անձի համար է, այլ նրա գիտության, որը պատկանում է ամբողջ մարդկությանը, այնպես որ վստահեմ իրեն:

## ՀԱՐԱԶԱՏՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ԲԱՆՏՈՒՄ

Աշտարակում մի օր, երբ թերթ էի կարդում, աչքս պատահաբար ընկավ եղբորս՝ Գարեգին Վարդանյանի անվան վրա: Նա բանտարկվել էր աշխատանքային նոր կարգը խախտելու հանցանքով:

Կիրակի օրն շտապեցի Երևան: Մեր հարսը՝ Քրիստինեն, եղբորս գործի մասին պատմելուց հետո ավելացրեց, որ եղբայրս բանտային հարցաքննության ժամանակ չի ասում, թե բանտարկված հարազատ ունի, նրան նշանակում են բաղնիքի վարիչ: Նա բաղնիքում առիթ է ունենում հանդիպելու Աճառյանին: Վեց ամիս հետո, երբ բանտի վարչությանը հայտնի է դառնում եղբորս կապը փեսայի՝ Աճառյանի հետ, նրան տեղափոխում են բանտից դուրս այլ աշխատանքի՝ որպես բեռնատար մեքենայի վարորդի:

Երբ ես երկրորդ անգամ Աշտարակից եկա Երևան՝ Հրաչյային պարեն բերելու, այդ հանդիպումների մասին եղբայրս մանրամասն պատմեց ինձ:

Բանտ գնալով՝ եղբորս տեսա՝ ավտոմեքենայի կողքին նստած: Ինձ որ տեսավ, կամացուկ ասաց, որ չմոտենամ իրեն, այլ գնամ մոտակա փողոցը: Եղբայրս հետևեց ինձ: Նեղ փողոցում խորացանք, հանդիպեցինք: Եղբայրս պատմեց, որ Աճառյանին հանդիպել է բանտի բաղնիքում: Աճառյանը տեսողության տկար լինելու պատճառով չի նկատում Գարեգինին: Արտաշեսը, Գարեգինին նկատելով, հայտնում է Աճառյանին, նա էլ երեխայի անհամբերությամբ ձայնում է նրան՝ Գարի կ, Գարի կ: Արտաշեսը զգուշացնում է Աճառյանին որ լռի, ուշադրություն չգրավի, բայց Աճառյանը բարձր ասում է. «Եթե դա իրոք Գարիկն է, ապա ինչո՞ւ չի մոտենում ինձ»: Գարեգինը չնկատվելու համար գնում է վարսավիրների մոտ և խնդրում, որ երբ Աճառյանը գա, նրան զգուշացնեն, որ իր հետ չխոսի՝ հետո հարմար առիթով տեսակցելու համար:



Վարսավիրանոց գնալիս Աճառյանը հանդիպում է Գարեգինին, փաթաթվում է նրան, լաց լինում և ասում, որ ինքը հույս ուներ, թե Գարեգինը կպահեր, կհոգար Սոֆիկին, իսկ այժմ, երբ նա էլ բանտումն է, ով կհոգա հարազատներին: Գարեգինն ասում է Աճառյանին, որ այլևս իր հետ չլուսի, բայց միշտ հանդիպի վարսավիրանոցում: Շուրջ երեք ամիս Գարեգինը լավ կերակրում է Աճառյանին, մինչև որ նրանց կապերի մասին հայտնի է դառնում բանտի վարչությանը, և Գարիկին նշանակում են ավտոյի վարորդ բանտից դուրս:

### ԻՆՉՊԵՍ ԳՈՂԱՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Խորագիրս քեզ անպայման տարօրինակ կթվա, սիրելի՛ ընթերցող, մտքումդ հարց կծագի, թե այդ ինչպես կարող է պատահել, որ կինն իր ամուսնու ձեռագրերը գողանա իրենց բնակարանից, ու մի պահ քեզ կթվա, թե ես էլ, Աճառյանից սովորելով, սկսել եմ անեկդոտներ պատմել:

Բայց լսի՛ր և տե՛ս:

Աճառյանի բանտարկությունից հետո՝ մի օր, երբ սովորականի նման դեսուդեն ընկած ես աշխատում էի մի բան իմանալ ամուսնու ճակատագրի մասին, վերադարձին տեսա, որ մեր բնակարանի սենյակների դռներն ու պատուհանները ամուր փակված են ու կնքված: Միայն խոհանոցն էին թողել՝ որպես ժամանակավոր բնակարան այն տրամադրելով մեր տնային աշխատող Պոլինային: Խեղճ Պոլինան, ինձ փաթաթվելով, լաց էր լինում ու պատմում, թե ինչպես չեկիստները եկել և կնքել էին դռներն ու պատուհանները, պատվիրել, որ տիկին Սոֆիկը այլևս չպետք է տուն մտնի, իսկ իրեն ասել էին, որ շուտով սենյակ կտան:

Պոլինան շատ էր կապված մեզ. կարծես ընտանիքի մի անդամը լիներ: Նրան ես բերել էի Կիլովոդոսկից 1937 թ., երբ այնտեղ էինք գնացել՝ օդափոխության քրոջս ու նրա երեխա-

ների հետ: Ապրում էինք հյուրանոցում: Մի օր, երբ շուկա էինք գնացել, շուկայի սանդուղքների վրա տեսանք նստած մի սիրուն, երիտասարդ աղջկա, որ լաց էր լինում: Հասակակից աղջիկները, նրան շրջապատած, ցավակցում ու մխիթարում էին: Իմացանք, որ նա կոլտնտեսուհի է եղել, եկել է քաղաք՝ աշխատելու, բայց նրան չեն գրանցել: Հարցրի, թե կգա ինձ հետ Երևան: Համաձայնեց: Ես նրան գրանցել տվեցի հյուրանոցում, ապա միասին եկանք Երևան, և անմիջապես նրան տեղավորեցի մեծահասակների դպրոցը, որպեսզի երեկոները սովորի:

Այժմ թե՛ Պոլինան և թե՛ ես մնացել էինք շվար: Ո՞ւր գնալ: Ես ունեի հարազատներ, բայց զգուշանում էի որևէ մեկի մոտ գնալ՝ վախենալով, որ նրանց կարող են խառնել Աճառյանի գործին և անհանգստացնել:

Երկար մտածելուց հետո գնացի Նոր Բուրժանիա՝ քեռուս մոտ, որի կյանքը կապված էր այսպիսի հետաքրքրական մի դեպքի: Նախկին հայկական կառավարության օրոք քեռիս յոթ ամիս մի ռուս զինվորի պահում է իրենց նկուղում, բայց հարևանների մատնությամբ երկուսն էլ ընկնում են բանտ: Երբ Կարմիր բանակը մտնում է Հայաստան, նրանք դուրս են գալիս բանտից, ռուս զինվորը վերադառնում է իր ծննդավայրը: Մատնիչներն այս անգամ ևս քեռուս բանտարկել են տալիս մեկուկես տարվա ազատազրկմամբ. իբր նա է եղել ռուս զինվորին դաշնակցականներին հանձնողը: Քեռորդիս այդ մասին գրում է ռուս զինվորին, որի ուղարկած նրպաստավոր տեղեկանքի շնորհիվ ազատվում է, տեղափոխվում Ախտայից Երևան և մի փոքր տուն կառուցում ու բնակվում Նոր Բուրժանիայում:

Քեռիս ինձ սիրով ընդունեց և ասաց.

– Գառն՝ լկս, ես օտարի համար իսկ նստած մարդ եմ, քեզ տիրություն չպե՞տք է անեմ: Թեկուզ ինձ կախեն, արի՛, ապրի՛ր մեզ մոտ:

Եվ այսպես, մի քանի օր ապրեցի քեռուս տանը:

Այժմ ես սկսեցի մտահոգվել Աճառյանի ձեռագրերով: Շուտով արդարությունը վերականգնված տեսնելու, Աճառյանին ազատելու, մեր բնակարանը վերադառնալու հույսս կտրել էի արդեն: Ձեռագրերի մեջ կային շատ կարևոր աշխատություններ, ինչպիսիք են՝ «Հայոց անձնանունների բառարանը», «Մեսրոպ Մաշտոցը», «Հայարձանը», «Պատմություն հայ գաղթականությունների», «Լիակատար քերականությունը» և այլն: Սրանցից շատերն ավարտված և հրատարակության պատրաստ կամ վերջնական վերանայման կարոտ աշխատություններ էին:

Երկար մտածելուց հետո գնացի մեր Պոլինայի մոտ, ասացի, որ իր օգնության կարիքն ունեմ՝ մեր բնակարանից մի շաբթ գրքեր տանելու համար: Նա վախեցավ և հրաժարվեց ինձ օգնելուց: Ես աշխատեցի ազդել նրա վրա, հուզել նրան, հիշել տվեցի, թե ինչ պայմաններում եմ օգնել իրեն, որ մենակ ու անտեր չմնար փողոցում: Ի վերջո, նա բավական փափկեց, տվեց ինձ խոհանոցի բանալին, ասաց, թե ինքը կթողնի կհեռանա, որ չտեսնի և վկա չլինի, իսկ բռնվելու դեպքում իրեն չպետք է խառնեմ գործին: Ես խնդրեցի, որ պատշգամբի կողմը՝ պատուհանի առաջ, մի սավան փռի, որ լուսամուտից մտնելիս ինձ չնկատեն: Պոլինան գնաց: Մնացի մենակ: Պատշգամբի կողմի պատուհանի փոքր օդանցքից ես մտա ներս, ձեռագրերը նույն անցքից մի առ մի գցեցի պատշգամբ: Ներս մտնելիս հենարան կար, իսկ դուրս գալն ավելի դժվար էր. օդում կախված պետք է մնայի: Բարեբախտաբար, Պոլինան շուտ վերադարձավ, օգնեց դուրս գալու: Ես խոսել էի գրքերի մասին, նա տեսավ ձեռագրերը, ապշեց: Ասացի, թե գրքերից հրաժարվեցի, իսկ սրանք իմ լեկցիաներն են: Նա շատ վախեցավ, ասաց, թե շուն կբերեն, հոտոտել կտան, իրեն կբռնեն: Հավատացրի, որ միայն ես եմ ներս մտել, եթե բռնի, շունն ինձ պետք է բռնի: Ձեռագրերը պահեցի

կրծքիս տակ, փորիս վրա և շտապեցի քեռուս մոտ: Քեռիս բոլորից, նույնիսկ իր կնոջից գաղտնի ձեռագրերը խնամքով փաթաթեց շորի մեջ, ապա դրեց թիթեղյա արկղիկի մեջ, տարավ այգի, փորեց մի ծառի տակ, համբուրեց ձեռագրերը՝ մրմնջալով. «Մասներիդ մեռնեմ, Հրայյա՛, աչքիս լույսի պես կպահեմ քո ձեռագրերը», ապա արկղիկը դրեց փոսի մեջ, ծածկեց հողով: Հիշեցի, որ Հրայյան պատմում էր, թե ինչպես հայերը, օտարերկրյա նվաճողների ու ավարից ձեռագրերը փրկելու համար պահում էին մասշեղի գաղտնաբաններում, քարանձավներում, մասունքները թաղում էին հողի տակ: Բայց լույսը չէր կարող մնալ ծածկված, մի օր դուրս կգար: Ես հավատում էի, որ թեև հիմա վախվորած, գաղտնի թաղում էինք այդ ձեռագրերը, կգար մի օր, երբ ուրախ, հանդիսավորապես դուրս կբերեինք դրանք:

Ձեռագրերը մնացին հողի տակ թաղված մինչև Հրայյայի՝ բանտից դուրս գալը. անշունչ ձեռագրերն իրենք էլ կարծես սգում էին իրենց երկնողի բանտարկությունը, իրենք էլ բանտարկվել էին կամավոր: Եվ ամեն անգամ այգին ջրելիս քեռիս չէր ջրում ձեռագրերի վրայի խեղճ ծառը: Այդպես էլ չորացավ ծառը, տվեց իր կյանքը, որ ապրեն Աճառյանի ձեռագրերը:

Մեր բնակարանի բռնագրավվելուց և կնքվելուց հետո՝ նախքան Աշտարակ աշխատանքի գնալս, ես դիմեցի իրավասու մարմինների, պարզեցի դրությունս և խնդրեցի, որ մի սենյակ տան, պատսպարվեմ: Նախկին Բաֆֆու փողոցում՝ փակուղի N 75 տանը, ապրում էր մի քուրդ՝ Մահմուդով անունով: Նա ուներ մի սենյակ, կողքին՝ փոքրիկ խոհանոց: Մենյակը տվեցին Ելենա Քալանթարին իր երկու երեխաների հետ, իսկ խոհանոցը՝ ինձ: Խոհանոցը այնքան փոքր էր, որ հնարավոր չէր այնտեղ անգամ մահճակալ դնել:

Ես ապրում էի իմ նոր խոհանոց-բնակարանում: Անկողին անգամ չունեի: Մեկը վերմակ տվեց, մյուսը՝ ներքնակ,

և այդպես այդտեղ պատասպարվեցի մինչև Աշտարակ գնալս: Գիշերները այցելում էի քեռուս: Նա ինձ քաջալերում էր, մխիթարում, իր կյանքից օրինակներ բերելով՝ ասում էր, որ նեղ օրերը կանցնեն, ամպերը կփարատվեն երկնքից, ու կշողա արևի պայծառ լույսը: Ես շատ էի սիրում լսել քեռուս. նա փորձված, փորձառու մարդ էր՝ կյանքի լավն ու վատը տեսած: Ամեն անգամ ինձ քաջալերում էր՝ լավ օրերի հասնելու համար:

Մի օր ես ուզեցի իմանալ, թե ինչ էր պատահել իմ նախկին տանը, ինչ է անում կամ ինչ է եղել Պոլինան: Գնացի: Տանն ապրում էին նոր մարդիկ՝ Հայկազ Մարջանյանի ընտանիքը: Հայկազի կինը շատ համակրելի էր թվում: Նա ինձ ասաց, որ մեր գրքերը դասավորել էին լոգարանի մի անկյունում և ըստ հնարավորին լավ էին պահպանում: Ես խընդրեցի հոգ տանեն, լավ պահեն գրքերը. մի օր Հրաչյան դուրս կգա, և շնորհակալությամբ հետ կվերցնենք:

Դրանից հետո ես հաճախ էի գնում Մարջանյանների մոտ և նկատում, որ գրքերը մնում են իրենց տեղում:

## ՄԵՐ ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՏՈՒՄ

Աշտարակում շարունակում էի աշխատանքս: Օրերն անցնում էին տխուր ու մոայլ, ձանձրալի, առանց ոչ մի փոփոխության:

Մի օր էլ հանկարծ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի դատախազ Մաղաթեյանի ստորագրությամբ գրություն ստացա, որ հունիսի 12-ին ներկայանամ իրենց մոտ:

Վախը և մտածումները պլեկոծում էին ուղեղս. արդյոք ազատելո՞ւ էին Հրաչյային, թե՞ օքստրելու:

Որոշված օրը՝ առավոտյան ժամերին, ներկայացա: Մաղաթեյանն ինձ հայտնեց, որ Աճառյանը տեսակցություն է

խնդրել ինձ հետ՝ կարևոր հարցերի շուրջ խոսելու համար: Անկարող ինքս ինձ զսպելու՝ ներսս կրծող կասկածը բուսե առաջ փարատելու համար հարցրի, թե արդյոք աքսորելու են Հրաչյային: Նա պատասխանեց, թե այդպիսի հարց չկա այժմ, բայց դատավարությունը արդեն տեղի է ունեցել, և Հրաչյայի գործով վճիռ է կայացվել 6 տարվա ազատազրկման համար՝ 3 տարվա ձայնազրկումով: Նա ասաց, որ հաջորդ օրը կթույլատրվի ինձ տեսակցել Աճառյանի հետ: Նա ինձ հակիրճ կերպով բացատրեց նաև տեսակցության կանոնները: Հարցեր տալու իրավունք չունեի, Աճառյանը կխոսեր, իսկ ես պետք է մնայի միշտ լսողի դերում:

Անկեղծ ասած, չնայած իմ կարծիքին, Սաղաթեյանը երևում էր հանդարտ բնավորությամբ, շատ բարի, իր մարդկային գծերով ինձ զարմացնելու աստիճան բարի: Ես դուրս եկա նրա մոտից և տարվեցի նորից մտածումն քննելով. նրա այդչափ վերաբերմունքը ինձ լավ հույսեր էր ներշնչում: Աճառյանի բանտարկությունից հետո ամեն տեղ ես հանդիպել էի խիստ կոպիտ վերաբերմունքի, անսիրտ մարդկանց, իսկ երբ առաջին անգամ հանդիպում էի մեղմ մարդու, դա, այսպես ասած, ինձ համար անսովոր, անհավատալի էր թվում:

Հունիսի 13-ի առավոտյան ես պատրաստվեցի գնալ Աճառյանի հետ տեսակցության: Հնարավորին չափ աշխատեցի լավ հագնվել, ճիգ գործադրեցի ինձ վրա՝ ուրախ տրամադրություն կեղծելու համար, որպեսզի Հրաչյան տեսնի, որ ես չեմ ընկճվել, արիությամբ տանում եմ բոլոր դժվարությունները:

Կենտրոնական բանտի մոտ հավաքվել էին բախտակից կանայք, որոնք պաշար էին բերել իրենց հարազատներին: Իմ անսովոր արդուզարդի մեջ նրանք անմիջապես չճանաչեցին ինձ, իսկ երբ իմացան, որ թույլտվություն եմ ստացել՝ այդ օրը տեսակցելու Աճառյանի հետ, բոլորը հավաքվեցին իմ շուրջը, բարի նախանձով երանի տվեցին, հուզվեցին և հու-

զեցին: Այնտեղ էին գտնվում Քաջագնունու կինը, Արամայիս Երզնկյանի մայրը, Աշխարհաբեկ Քալանթարի կինը, Հայկի դուստրը, տիկին Արաքսյա Հակոբյանը և շատ ուրիշներ:

Նրանք գալիս էին մի պատառ ուտելիք հասցնելու և նրանց մասին իմանալու երկու բառ. «Այստեղ է»: Այս բառերը նշանակում էին միայն, թե բանտարկյալը արքունիքում չէ, կենդանի է:

Բախտակիցներս խորհուրդ էին տալիս չզսպել հուզումս, լաց լինել և ազատ ելք տալ հույզերիս և արցունքներիս, որպեսզի կարենայի Աճառյանի մոտ ինձ լավ պահել:

Բանտային այն մտայլ սենյակը, որտեղ կայանալու էր մեր տեսակցությունը, նայում էր փողոցի վրա: Տախտակների միջև եղած գաջը թափվել էր, և բացվածքներից ներսը երևում էր: Ուտելիքների հանձնման և տեսակցությունների հսկողությունը կատարում էր ոմն Մովսես՝ դահճի կերպարանքով մի մարդ: Չգիտեմ՝ արդյոք նա ի ծնե՞ էր ունեցել այդ դաժան կերպարանքը, թե՞ ավելի հավանաբար աշխատանքի բնույթը ազդել էր նրա բնավորության վրա, իսկ բնավորությունն էլ նրա արտաքինը կոշտացրել էր: Չէ՞ որ ժողովրդական առածն ասում է. «Դեմքը հոգու հայելին է»: Այժմ ես, սակայն, ստիպված էի նայել այդ դեմքին, լավ վերաբերմունք, բարություն սպասել նրանից:

Ահա այսպիսի մտորումներով տարվել էի ես, երբ Մովսեսը ճիվադային ձայնով գոռաց՝ Աճառյան: Մոտեցա իսկույն: Հանկարծ զգացի մի դող, և դրա սաստկությունից թևերըս և սրունքներս թուլացան, չգիտեմ ուրախությունից, թե՞ վախից այն աստիճան, որ կարծես իմը չլինեին:

Մովսեսը, հոնքերը կիտած աղեղի նման, գազանաբարո, բամբ ձայնով հրահանգներ էր տալիս ինձ.

– Աճառյան, քեզ թույլ է տրվում հինգ բոպեով տեսակցել քո ամուսնու հետ: Օրենքներն իմացի ր. մոտենալ, ձեռք

տալ իրավունք չունես, հարցերին կպատասխանես միայն «այո՛» կամ «ո՛չ»: Գործերի մասին՝ ոչ մի խոսք:

Ես լուռ ու մունջ գլխով համաձայնության նշան արեցի: Վերջապես Մովսեսը ինձ ներս թողեց: Մտա մի բոլորովին անշուք սենյակ. հատակը՝ հող, պատերը՝ գորշ և ոչ լուսավոր, անհրապույր, տխուր, ինչպես՝ իրեն տերը: Կենտրոնում կար մի երկարավուն սեղան:

Չորս կողմն ուսումնասիրելիս տեսա, որ աջակողմում կանգնած են երեք չեկիստներ: Աճառյանին առաջին հայացքից չնկատեցի. աչքերս դեռ ոչինչ չէին տեսնում, չէին հարմարվել սենյակի պայմաններին, և հետո կարծում էի, որ իմ ներս մտնելուց հետո է, որ նրան բերելու էին:

Հանկարծ լսեցի Աճառյանի լացակոմած ձայնը: Փընտրեցի նրան աչքերովս և ականջներովս և տեսա վերջապես, որ սենյակի մի անկյունում, փուլ եկած մի քարի վրա, հեկեկում է դառնորեն: Եվ ես նոր հագիվ նկատեցի, որ առաջին ակնարկով Հրաչյային չնկատելու նաև մի ուրիշ, շատ կարևոր պատճառ. նրա մոխրագույն հագուստը այնքան էր հնացել ու կեղտոտվել, որ հատակի ու պատերի գույնի հետ ձուլվում էր:

Սպիտակեղեն ես տանում էի Աճառյանին, բայց արտահագուստ չէր թույլատրվում:

Սենյակում ներկա եղողներից մեկն ասաց.

– Աճառյա՛ն, Ձեր կինը եկավ:

Հրաչյայի տեսողությունն այնքան էր տկարացել, որ չէր նկատել իմ ներս մտնելը: Երբ լսեց իմ անունը, նա վեր կացավ, ձեռքերը լայն բաց արեց, տեսողությունից զուրկ մարդու նման դողդոջ քայլերը դանդաղ տեղափոխելով կիսախավարի մեջ՝ նա ինձ էր փնտրում: Առաջացա դեպի Հրաչյան, գտանք իրար, գրկախառնվեցինք: Մեր հորդող անգուսպ կարոտը, չնայած արգելքին, մեզ մղել էր միմյանց գիրկը, և չէինք կարողանում բաժանվել: Ես, Մաղաթելյանի և Մովսեսի



խիստ ազդարարությունների տպավորության տակ, երկյուղած, աչքի տակով միաժամանակ նայում էի հսկիչներին. նրանք կանգնել էին կարծես քարացած, արձանի նման: Ոչ ոք չէր համարձակվում մեզ ասել, թե տեսակցության պայմանները խախտել էինք: Հսկիչների և բանտապահի հոգու խորքում մնացող թեկուզ տարրական մարդկային զգացմունքները զարթնել էին այդ բոպեին և հարկադրում էին նրանց լինել բարի ու մեղմ: Ամեհի Մովսեսի դեմքն անգամ կարծես փափկացել էր:

Զգալով, որ մենք միայն բոպեներ ունենք, Աճառյանը, գերագույն ճիգով տիրապետելով իրեն, թողեց ինձ և ասաց.

– Մոֆի՛կ, սիրելի՛ս, ուշադի՛ր լսիր ինձ, իմ ասածները պահի՛ր մտքումդ, ապա մենք կխոսենք մանր հարցերի մասին: Նախ երդվի՛ր, որ ասելիքներս ճշտությամբ կկատարես: Երդվի՛ր հորդ գերեզմանով, որ երբ այստեղից դուրս գաս, քեզ ազատ կզգաս, կգնաս ու կամուսնանաս:

– Հրաչյա՛, այդ ի՞նչ ես ասում, – հանկարծ սաստեցի ես:

– Մոֆի՛կ, ես դատված, արատավորված մարդ եմ, դատապարտված՝ չգիտեմ ինչ հանցանքի համար: Վեց տարվա բանտարկության եմ դատապարտված՝ երեք տարվա ձայնագրկությանմբ: Ես այդ ապրել չեմ կարող, իմ օրերը հաշվված են այլևս: Ես չեմ ուզում, որ իմ պատճառով դու էլ ծանրորեն տուժես: Բավական է՝ տանջվեցիր ինձ համար: Ուստի պահանջում եմ, որ անպայման ամուսնանաս: Ես կորցրել եմ այստեղից կենդանի դուրս գալու հույսը: Լսի՛ր իմ խորհուրդը և ամուսնացի՛ր: Դու դեռ երիտասարդ ես, մեղք ես: Չեմ ուզում, որ իմ պատճառով հակահեղափոխականի կին կոչվես: Ես քո առաջ շատ մեղավոր եմ զգում ինձ, չգիտեմ ինչու: Իմ գրքերի և ձեռագրերի ժառանգությունը, եթե մնացել է այդպիսի բան, թողնում եմ քեզ:

Քիչ դադարեց, հուզվեց, հետո շարունակեց.

– Մոֆի՛կ, կարծես դու քո նախկին ամուսնուց չէիր դժգոհում. հավանաբար ոչ լուրջ պատճառով, թյուրիմացությամբ էիք բաժանվել: Գնա՛, գտի՛ր նրան և վերամիացե՛ք: Աղաչում եմ, հանգստացրո՛ւ իմ վրդովված հոգին: Իսկ եթե հրաշքով դուրս գամ այս բանտից, եթե ինձ սպասելու լինես, էլի կգաս ինձ մոտ, ես քեզ սիրով կընդունեմ և շատ բախտավոր կզգամ ինձ:

Ապա, հուզումից արտասվեց, նորից շարունակեց.

– Բայց այդ չի կարող լինել. վեց տարին շա՛տ երկար ժամանակ է...

Աճառյանին երկար լսեցի, ես չընդմիջեցի: Երբ վերջացրեց, միայն այն ժամանակ վշտացած տոնով ասացի.

– Հրաչյա՛, ջան, ես երբեք չէի սպասում, որ այս տեսակցության ընթացքին նման խոսակցություններ տեղի ունենան: Երկու տարի է, որ մենք իրար չենք տեսել, իսկ դու այդ ի՞նչ ճանապարհ ես ցույց տալիս ինձ: Ես երբեք այդ ճանապարհով գնացողը չեմ:

Այս խոսքերն ասացի հպարտ, գլուխս բարձր պահած, խրոխտ տոնով, որպեսզի մի անգամ ևս ապացուցեմ, որ ես ընկճվողը չեմ: Հետո վճռական ավելացրի.

– Հրաչյա՛, ես սպասում եմ քեզ, իսկ եթե մեռնես, տերը մի՛ արասցե, ես քո գերեզմանի պահակը կդառնամ: Ես չունեմ այլ ճանապարհ:

Հրաչյան հուզված, լացակուրմած նորից համբուրեց ինձ, գրկախառնվեց և ասաց.

– Որ ասում եմ՝ լավ ընկեր ես, իմ կյանքի լավ ընկերը, բարկանում եմ, չեն հասկանում ինձ:

Մենք մոռացել էինք, որ բանտում ենք գտնվում՝ տեսակցության հատկացված այս անշուք սենյակում: Մթափվելով ես նայեցի շուրջս՝ հիշելով դաժան Մովսեսին, մյուս հսկիչներին, որոնք պետք է խստորեն հետևեին տեսակցության կանոնների խստիվ պահպանմանը, այլապես նրանք

կկարողանային խափանել, կհաստ թողնել մեր տեսակցությունը: Բայց, ո՛վ զարմանք, մեր շուրջը ոչ ոք չկար. միայն Հրաչյան և ես էինք, և եթե սենյակի արտաքինը չլիներ, ես կարող էի մի պահ այն միտքը ունենալ, որ ոչինչ չի պատահել, ես ու Հրաչյան մեր տանն ենք:

Հրաչք էր պատահել, այո՛, իրական, անսովոր հրաչք բանտի պայմաններում: Մեր տեսակցությունը եղել էր այնքան սրտառու իր անմեղությամբ և մտերմիկ, որ օրենքի դատան մարդիկ խախտել էին օրենքն ու կարգը, ավելորդ էին զգացել իրենց ներկայությունն այդտեղ և կարծես ակամա, անձայն ու անշշուկ, հուշիկ քայլերով նահանջել դեպի հետ, դուրս էին եկել սենյակից՝ թողնելով մեզ ազատ:

Հրաչյան չէր էլ կարողանում նկատել նրանց բացակայությունը ու նորից ողջագուրվեց ինձ հետ և ասաց.

–Սոֆի՛ կ, ի՛նչ դժբախտ եմ ես:

Ես սիրտ տվեցի՝ ասելով.

–Մի՛ հուսահատվիր, Հրաչյա՛, արդարությունը ի վերջո կհաղթանակի: Այժմ խոսի՛ր քո առողջության մասին, ասա՛՛ ինչպե՛ս ես, ի՛նչ ես ուզում, որ քեզ բերեմ: Ես շատ լավ եմ, լավ աշխատավարձ եմ ստանում, իմ մասին չմտածես:

Ես աշխատում էի նրա սիրտը շահել, ամեն ինչ ներկայացնում էի լավ, ճոխ ու գունեղ, որ գոնե չնչին չափով բարձրացնել կարողանամ նրա տրամադրությունը:

Ապա Հրաչյան, կարծես որոշ չափով սփոփված և քաջալերված, ինքն էլ հետաքրքրվեց մերոնց մասին, հարցրեց քրոջս ու երեխաների մասին, եղբորս և բոլոր բարեկամների մասին: Ես ասացի, որ բոլորն էլ լավ են, սպասում են իր վերադարձին: Այդ միջոցին, այլևս ես էլ ինձ տիրապետելով, կենտրոնացած ուշադրությամբ նայեցի Հրաչյային, երևակայությամբ համեմատեցի նախկին Հրաչյային և իմ առաջ գտնվող խեղճ Հրաչյայի հետ: Տարբերությունը նույնպես սարսափելի էր: Շուրջ երկու տարի զրկվելով արևից՝ նա կորցրել էր

գույնը, դարձել մոխրագույն: Պատոված հագուստը, ավելի շուտ ցնցոտին, կարծես թափվում էր վրայից, այնքան էր նիհարելով բարակել, որ կարծես ուրիշի հագուստի մեջ էր մտել, մի խոսքով՝ կարծես նախկին Աճառյանի ստվերը լիներ: Երկու տարի անընդմեջ՝ գիշեր ու ցերեկ, Աճառյանը մնացել էր նույն զգեստով:

Վերջապես բարյացակամ չեկիստներն էլ զգալով, որ չարաշահել են իրենց իրավունքները, ներս եկան և հայտնեցին, որ տեսակցությունն արդեն ավարտվել է, բաժանվելու ժամանակն է: Նրանք ստուգեցին իմ բերած ուտելիքները և հանձնեցին Հրաչյային: Ապա մի վերջին անգամ ևս ողջագուրվեցինք և բաժանվեցինք իրարից: Հրաչյան բարձրաձայն կանչում էր հետևիցս.

– Մոֆի՛կ, ինչ որ խնդրեցի քեզանից, կկատարես անպայման:

Դրսում կանայք նորից շրջապատեցին ինձ, շնորհավորեցին: Տախտակների արանքից նրանք հետևել էին մեր տեսակցությանը: Գովեցին արիությունս, ինձ լավ պահելս, ապա նկատել տվեցին, թե ինչու իրենց հարազատների մասին ևս չէի հարցրել Հրաչյային: Իրավունք ունեին խեղճերը, բայց ես այդ պահին կարո՞ղ էի ուրիշ բանի մասին մտածել: Իմ ամբողջ ուշադրությունը Հրաչյան էր:

Հիշեցի արդեն, որ նույնիսկ չեկիստները շատ էին ազդվել մեր տեսակցության ցնցող տեսարանից: Նրանցից մեկը, վերջում պատմելով այդ մասին իր ծանոթներին, ասել էր. «Այդ ի՛նչ հրաշալի մարդ է եղել պրոֆեսոր Աճառյանը, ի՛նչ բարի, նա ի՛նչ առաջարկներ արեց կնոջը, որը երբեք չէր անի ոչ մի մարդ»:

Ես հետո իմացա, որ մեր տեսակցությունից հետո Աճառյանը բանտախցիկ է վերադարձել ավելի բարձր տրամադրությամբ: Նա ասել է. «Իմ իշխանուհուն (նա սիրում էր ինձ այդպես անվանել) ես նորից գտա, ուստի պետք է խնջույք

անենք»: Հենց խցիկում փռում է սփռոցը, շարում նրա վրա այդ օրը իմ տարած ուտելիքները և հրավիրում ընկերներին՝ ասելով. «Այսօր իմ հարսանիքն է, եկե՛ք՝ քե՛ֆ անենք»: Հետո մանրամասնորեն պատմում է մեր տեսակցության մասին և ոգևորված ասում. «Ես իշխանուհուս մի քանի խորհուրդ տվեցի, բայց հուզմունքս պահել չէի կարողանում. իր իշխանուհու վայել, հրամայական շեշտով նա ասաց ինձ. «Հրաջյա՛, մենք երկու տարի է, որ իրար չենք տեսել, դու ինձ ինչպե՛ս ես դիմավորում, միևնույն է, ես քո խորհուրդներին չեմ հետևելու, ես սպասելու եմ քո վերադարձին, իսկ եթե մեռնես, տերն մի՛ արացե, ես կդառնամ քո գերեզմանի արթուն պահակը, մինչև կյանքիս վերջը»: Նա այդ բոլորն այնպիսի վճռական տոնով ասաց, որ ես ամաչեցի, կարմրեցի և ոչինչ չկարողացա ասել»:

Վերջում ես իմացա, որ այդ տեսակցությունից հետո Աճառյանը հիվանդացել է, մրսելուց ցավել է մեջքը, տառապել է լումբագո հիվանդությամբ: Նա խնդրել էր բանտի բժշկուհի Տերտերյանին, որ իր մեջքին յոդ քսեն: Բժշկուհին հրաժարվել է և ասել, որ հետո մի բան կանեն, ուրիշ բան կմտածեն: Աճառյանը, կարծելով, որ բանտարկյալի համար յոդն էլ են ավազում, դժգոհում է: Բայց երկու ժամ հետո Աճառյանն իմանում է, որ ինքը սխալվել է, իսկ բժշկուհու դիտավորությունը լավ է եղել: Նա իրեն փոխադրել է տալիս հիվանդանոց և անձամբ հետևում, որ նրան լավ խնամք տարվի:

Հիվանդանոցում՝ Աճառյանին կից անկողնում, պառկել էր ինժեներ-էլեկտրիկ Պետրոս Աթաբեկյանը:

Մի օր էլ գրասենյակի աշխատակիցներից մեկը գաղտնորեն մի գրություն է բերում Աճառյանին և ասում.

– Վարժապե՛տ, ա՛ռ, կարդա՛, ես հետո կգամ կտանեմ, – և ավելի ցածր ավելացնում է, – դու շուտով տուն կգնաս:

Աճառյանը վատ տեսողության պատճառով չի կարողանում ընթերցել այդ գրությունը և խնդրում է Աթաբեկյանին կարդալ այն: Գրության միտքն այն էր, որ Աճառյանի գործում էական ոչինչ չկա, բայց պետք է հանգամանորեն վերանայել: «Հանգամանորեն վերանայել» բառերից Աթաբեկյանը հետևելեցնում է, որ Աճառյանը շուտով կազատվի: Աճառյանը զարմացած ասում է.

– Չէ՞ որ գործերս նորից պետք է քննվեն, հանգամանորեն վերանայվեն, ինչպես ասվում է գրության մեջ:

– Այո՛, – ասում է Աթաբեկյանը, – բայց եթե Ձեր գործի մեջ մեղադրանք չեն գտնում, նոր մեղադրանք չեն բարդելու Ձեզ վրա, ուրեմն կվերաքննեն և կազատեն Ձեզ:

– Այդ նշանակում է, որ պետք է նորից կրկնվեն քննության տանջանքները, – ասում է Աճառյանը, – ես սոսկում եմ այդ արարողությունից:

Հետո գրասենյակի աշխատողը գալիս և այդ գրությունը հետ է վերցնում:

### «Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

№ 002417 որոշումից

ՍՍՀՄ գերագույն դատարանի զինվորական կոլեգիան՝ հետևյալ կազմով՝ նախագահ՝ բրիգադային 2-րդ կարգի զինվորական իրավաբան ընկ. Դմիտրիև, 2-րդ կարգի զինվորական իրավաբան Չեպցով, լսելով 1939 թ. սեպտեմբերի 29-ի նիստին Հրաչյա Հակոբի Աճառյանի բեկման բողոքը Անդրկովկասյան զինվորական դատարանի 1939 թ. մայիսի 7-ի դատավճռի դեմ, որը մեղադրվում է Հայկական ՍՍՀ հրամանի 59 հոդվածով նախատեսված հանցագործությամբ վեց տարվա ազատազրկմամբ, 3 տարվա ձայնազրկությամբ և անձնական գույքի բռնագրավմամբ և լսելով ընկ. Դմիտրիևի զեկուցումը և գլխավոր զինվորական դատախազի օգնական ընկ. Գյուլեցյանի եզրակացությունը դատավճռի վերացման և գործը վերանայման ուղարկելու մասին,

## Ո Ր Ո Շ Ե Ց

Քննելով Աճառյանի բեկման բողոքը և հաշվի առնելով, որ ...., այդ իսկ պատճառով փոխել զինվորական դատարանի որոշումը Աճառյանի նկատմամբ և գործը նախնական քննման աստիճանից վերադարձնել վերաքննության:

Իսկականի հետ ճիշտ է:

ՄՍՀՄ գերագույն դատարանի,  
Անդրկովկասյան զինվորական դատարանի  
Քարտուղարի տեղակալ, կրտսեր լեյտենանտ՝ ԵԽԱԼՈՎ

Ճիշտ է:

Անդրկովկասի զինվորական դատարանի քարտուղար,  
3-րդ կարգի զինվորական  
իրավաբան՝ ԼԻԿԱՆՏԵԼԻԱՆԻ»

## ՄԵՐ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր երկրորդ տեսակցությունը տեղի ունեցավ դարձյալ կենտրոնական բանտում հուլիսի 13-ին: Հրաչյան հատկապես խնդրել էր, որ այս տեսակցության ժամանակ թույլ տան ինձ հետ տանելու նաև քրոջս ու նրա երեխաներին, որոնց հետ շատ էր կապված:

Հրաչյան երբ տեսավ երեխաներին, կարծես ամբողջ աշխարհն իրենը եղավ. նա ասաց.

–Է՛, երեխանե՛ր, ձեզ որ տեսա, էլ երբեք չեմ մեռնի:

Նկատեցի, որ Հրաչյան դեռ հիվանդանոցի արտահանգուստով էր: Առաջվա հետ համեմատած՝ նա ավելի մաքուր էր և կազդուրված: Ես հարցրի նրան.

– Հրայա՛, դու հիվա՞նդ ես:

Նա ձեռքերը բարձրացրեց և սկսեց պարել, կատակել.

– Հիվանդ չեմ, իսկ եթե հիվանդ էլ լինեի, ձեզ տեսնելուց հետո իսկույն կառողջանայի:

Աճառյանը, ուրախ այս տեսակցությունից, շարունակ համբուրում էր երեխաներին՝ Լյուիկին և Ամալիկին:

Այս անգամ մեր տեսակցությունն ազատ էր. չկար խոժոռադեմ Մովսեսը, չկային հսկիչները: Հետո Հրայան ասաց.

–Մոֆի՛կ, ես պայմանավորվել եմ Մոսկվայի դատապաշտպան Բրաուզերի հետ, որ իմ դատը պաշտպանի, իսկ դու պայմանավորվեցի՞ր:

– Այո՛,- ասացի ես,- և արդեն 1000 ռուբլի ուղարկել եմ նրան՝ որպես կանխավճար, իսկ պայմանավորվել եմ դատավարությունից հետո ևս վճարել 1000 ռուբլի:

Ես Հրայային հանձնեցի իր համար բերված պաշարը: Մովորաբար ամեն ուտելիք ընդունում էին՝ բացի կոտլետից և դոլմայից, որովհետև կասկածում էին, որ նրանց մեջ կարող է բան թաքցված լինել: Ես աշխատում էի առավելապես տանել այնպիսի ուտելիքներ, որոնք ըստ հնարավորին շատ դիմանային, որպեսզի մինչև հաջորդ այցելությունը Հրայան ուտելու բան ունենար: Այսպես, օրինակ, բերում էի կարագ, մեղր, լավաշ հաց, քամած մածուն, պանիր, շաքար, խաշած միս, ձու և այլն: Աշտարակի քրդերին նախօրոք ես պատվիրել էի և յուրաքանչյուր անգամ պաշար տանելուց հետո պատրաստություն էի տեսնում հաջորդ անգամվա համար:

Այս տեսակցության ժամանակ Հրայայի տրամադրությունը շատ լավ էր: Ավելի լավ էր, բնականաբար, նաև իմ տրամադրությունը: Մեր առաջին տեսակցության դրամատիկ տեսարաններն իհարկե չկրկնվեցին: Բաժանվելուց առաջ Հրայան ինձ ասաց.

–Մոֆի՛կ, այս օրերին բանտից արքորի ուղարկվողներ եղան, բայց ես այս անգամ էլ պրծա:



Հետո Հրաչյան խնդրեց, որ հաջորդ այցելության ժամանակ չմոռանամ բերել նաև իր ակնոցը:

Տեսակցության ժամանակն ավարտվեց: Հրաչյան գուր-գուրանքով համբուրեց քրոջս երեխաներին, ապա ողջագուրվեց ինձ ու քրոջս, և բաժանվեցինք՝ հաջորդ ամիս՝ օգոստոսի 13-ին, նորից տեսակցելու հույսով:

Բանտից մեր երկրորդ տեսակցությունից հետո Հրաչյան ինձ գրել էր իր՝ 22 հուլիս 1939 թվակիր նամակը. «Միրելի՛ Սոֆիկ ջան, քո երկու տեսակցությունները ինձ նոր հոգիներ շնչեցին, դու իմ կյանքի վերջալույսի հավատարիմ ընկեր, դու իմ կյանքի լուսատու արև, Սոֆի՛կ ջան: Ըստ առաջնույն՝ ես լավ եմ և առողջ: Դու իրավունք ունես այժմ ինձ նամակ գրելու, ուստի գրի՛ր քո առողջության մասին: Քաղցր է ինձ և մխիթարական կարդալ քո խոսքերը:

Համբուրում եմ սրտագին քեզ և բոլոր մերոնց, մանավանդ երեխաներին՝ Լոլիկին և Ամալիկին: Քո՛՛ Հրաչ»:

Քիչ անց ստացա նաև Հրաչյայի՝ օգոստոս 4 թվակիր երկրորդ նամակը, որով ինձ խորհուրդ էր տալիս որպես իր կինը տիրանալ իր իրերին, ապա խոսում էր նաև գործի բեկման (կասացիա) համար Մոսկվա դիմելու մասին: Ահա նաև այդ նամակը. «Միրելի՛ դ իմ Սոֆիկ ջան, ես այսօր մի նամակ գրեցի Հայաստանի գերագույն խորհրդին և խնդրեցի քեզ ինձ կին ճանաչելու և իրերս քեզ հանձնելու մասին: Մնում է, որ դու էլ դիմումով ներկայանաս և խնդրես նույնը: Գրի՛ր հետևյալ պատճառները. 1) ՋԱԳՄ դիմելու կարիք չկար, որովհետև այն ժամանակ օրենք էր, որ մեկի հետ ապրելով՝ համարվում էր կինը: 2) Միլիցիայից ունենք մի վկայական ամուսնության, որ գտնվում է իմ անցագրի մեջ: 3) Քո անցագրում գրված ես Վարդանյան-Աճառյան ազգանունով: 4) Մեր տնային գրքույկներում երկուսս նշանակված ենք իբր այր ու կին: 5) Մեր հարևանները, համալսարանը ճանաչում են մեզ ամուսին: 6) Ատամնաբուժական դպրոցից քեզ հանեցին իբր

իմ կնոջ և միայն քո նոր դիմումով ընդունեցին: 7) Քո անցագրում դու նշանակված ես ամուսնացած, եթե ամուսինդ ես չեմ, հապառ ղ վ է: Իմ անցագրում էլ ես եմ նշանակված ամուսնացած, եթե կինս դու չես, հապառ ղ վ է: Այս բոլորը գրի՛ր և պահանջի՛ր, որ իրերս բոլորը քեզ տան: Մանավանդ որ ասա՝ իրերի մի մասն էլ քոնն է (ինչպես շիֆոներկան), և թյուրիմացությամբ միայն վերցված են:

Իմ գործի կասացիայի պատճառով ես դիմեցի Մոսկվա՝ «Пушкинская 9, Коллегия защитников, И.Д.Браузе» դատապաշտպանին և խնդրեցի, որ քննության ժամանակ իմ դատը պաշտպանի: Նույն իմաստով դու էլ գրի՛ր քո կողմից և համաձայնությամբ՝ ն եկ պայմանների մասին:

Համբուրելով քեզ և մերոնց՝ սրտագին՝ քո Հրաչ՝

Որպես հետգրություն ավելացված է՝ «Եթե ակնոցս մոտդ է, տեսկցության օրը բե՛ր»:

## ՄԵՐ ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Օգոստոսի 13-ին այս անգամ մենակ գնացի՝ Հրաչյային տեսնելու: Երևան հասնելիս ուղղակի գնացի եղբորս տուն: Նա ինձ ասաց, որ կոտլետը տանեմ Հրաչյային: Հենց տապակի մեջ դեռ տաք վիճակում վերցրի կոտլետը:

Հասնելով բանտ՝ տեսակցության ժամանակ այս անգամ Հրաչյային գտա շատ ավելի լավ վիճակում: Նա լրիվ կազդուրվել էր հիվանդությունից, վրագլուխը՝ մաքուր, տրամադրությունը՝ բարձր: Նա ծիծաղելով ասաց ինձ.

– Մոֆի՛կ, իմ մասին հոգ մի՛ անի, մենք այստեղ եկել ենք հանգստի տուն. տանը, ինչպես գիտես, ես ինձ հանգիստ չէի տալիս, այստեղ շատ հանգիստ եմ: Մանավանդ այն օրերը երբ լոբի են տալիս, մեզ համար տոն է:

Հրաչյան լոբի շատ էր սիրում:

Հետո նա ինձ հարցրեց.

– Սոֆի՛կ, իսկ այժմ դու ինձ ասա՛՛ ինչպե՞ս ես անցկացնում օրերդ, օրական քանի՞ ժամ ես աշխատում, ի՞նչ ես անում մնացած ժամերին:

– Առավոտյան ժամը 8-ին աշխատանքի եմ գնում,- ասացի ես,- 2-ին վերադառնում եմ և տանն էլ շարունակում եմ հիվանդներ ընդունել:

Այստեղ Հրայան անմիջապես խոսքս ընդմիջեց.

–Սոֆի՛կ, խնդրում եմ, որ այսուհետև տուն եկող հիվանդներին ձրի ընդունես: Մեզ մոտ Պոլսում ընդունված սովորություն էր, ամեն բժիշկ շաբաթը մի օր ձրի էր ընդունում հիվանդներին, բարեգործության համար: Դե՛ռ էլ այդպես արա:

Խոսակցության ժամանակ դեռևս տաք, թարմ կոտլետի հոտն ընկավ Աճառյանի քիթը: Նա հարցրեց, թե ինչ եմ բերել ուտելու: Իսկույն բաց արի կոտլետը: Հրայան ձեռքը երկարեց և մի հատ վերցրեց, որ բերանը տանի: Հսկիչները վրա հասան և կոպտորեն խլեցին ձեռքից՝ ասելով, որ կոտլետ բերելն արգելված է:

– Փշրեցե՛ք, ստուգեցե՛ք և ապա տվե՛ք,- վրդովված ասացի ես,- տեսե՛ք՝ մեջը բան չկա:

Շատ վատ ազդվեցի և մեղկացա՝ մարդ սիրած ճաշին երկար ժամանակ կարոտ մնա, և երբ ձեռքն անցնի, այնքան կոպտորեն պատառը խլել բերանից: Ազդվեց նաև Հրայան. ինչքան էլ ուզում էր իրեն հանգիստ պահել, չհուզվել, այնուամենայնիվ շատ վատ ազդվեց: Բարեբախտաբար, նա կարողացավ իրեն տիրապետել և ասաց.

– Ոչի՛նչ, Սոֆի՛կ, ես արդեն կոտլետ չեմ սիրում:

Իմ խնդրանքներն իզուր անցան, մի պատառ անգամ չտվեցին Հրայային, ու դեռ հսկիչները բարկանում էին ինձ վրա:

Հրայան ինձ հանգստացնելու համար կրկնում էր, թե կոտլետ չի սիրում:

Հսկիչները մյուս մթերքները ստուգելուց հետո հանձնեցին Հրաչյային, իսկ կոտլետը վերադարձրին ինձ:

(Փակագծում ասեմ, որ Հրաչյան բանտից դուրս գալուց հետո՝ մի օր, երբ ես կոտլետ էի տապակել, ախորժակով ուտելիս հիշեցրեց, թե ինչ լավն էր բանտ բերված այն կոտլետի հոտը):

Տեսակցությունը վերջացավ, և մենք բաժանվեցինք:

Մեր այս տեսակցությունը վերջինն էր: Ապա Հրաչյային նորից տեղափոխեցին Երևանի կենտրոնական բանտից Չեկա՝ հետագա քննության համար: Նոր քննություն, նոր դատավարություն:

### **ԿՅԱՆՔԸ ԲԱՆՏՈՒՄ**

Բնավորությամբ բավականին երկչոտ մարդ՝ կյանքում չարիք գործելու անընդունակ՝ Աճառյանը, բանտ ընկնելով, բնականաբար շատ էր հուզվել, վատ ազդվել, կորցրել էր իր անդորրը, հուսահատվել նույնիսկ: Բախտակից մի շարք ընկերների միաժամանակ բանտում լինելը, սակայն, որոշ չափով տանելի էր դարձրել նրա կյանքը:

Կարճ ժամանակամիջոցում Աճառյանը բանտում սկըսում է վայելել բոլորի սերն ու հարգանքը: Նրա խորը հմտությունը, բնագիտությունը, բազմաթիվ լեզուների իմացությունը, պատմության իմացությունը հիացնում են բոլորին: Չկար մի հարց, որի մասին Աճառյանը լայն ծանոթություններ չունենար, չգոհացներ այդ մասին իրեն դիմողներին: Նա մի տեսակ կենդանի, շրջուն հանրագիտարան էր, և, ինչպես էլ լիներ, բավական էր հարցը տալ Աճառյանին և ստանալ նրա սպառիչ պատասխանը՝ անհրաժեշտ բոլոր բացատրություններով ու պարզաբանումներով, ինչպես պատմում էին նրա բախտակից ընկերները:

Զրկված լինելով գիտական աշխատանք կատարելու հնարավորությունից՝ Աճառյանը հաճույք էր զգում՝ բանտակից ընկերներին օգտակար լինելով:

Հասկանալի էր, ուրեմն, թե ինչու բանտում Աճառյանին անվանում էին վարժապետ:

Բայց նա բանտում վարժապետ էր կոչվում՝ բառի բուն իմաստով: Օրվա 24 ժամերից առնվազն 16-18-ը աշխատելու սովոր Աճառյանին անգործության դատապարտելը կլիներ մեծագույն պատիժը նրա համար, որին նա չէր կարող երբեք համակերպվել: Մակայն անհրաժեշտ էր մի բանով զբաղվել: Եվ վարժապետը աշխատում էր, սովորեցնում, ուսուցանում: Բանտարկյալներից շատերը դարձել էին նրա աշակերտները, ուսանողները: Նա բանտում ստեղծել էր մի տեսակ, ասես օտար լեզուների ինստիտուտի յուրահատուկ մասնաճյուղ, որտեղ դասավանդում էր ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, պատմություն և աշխարհագրություն, և ովքեր լուրջ աշխատում էին, բնականաբար օգտվում էին վարժապետի դասերից:

Վարժապետը գիտեր ազատ ժամերն էլ օգտակար ու հաճելի դարձնել բանտարկյալների համար: Նրա հետաքրքրական պատմությունները, ճամփորդական նոթերը հափշտակությամբ էին լսվում, ինչպես Աճառյանն էր ասում, Վիկտոր Հյուգոյի «Թշվառները», որ 7 անգամ պատմել է սկզբից մինչև վերջը իր ընկերների խնդրանքով:

Այսպիսով, Աճառյանը լցնում էր իր աշխատանքային ժամերը: Բանտի սպանիչ ձանձրույթը շատերի համար շնորհիվ վարժապետի տանելի էր դարձրել նրանց կյանքը:

Զրկվելով դասախոսական բարձր ամբիոնից, ուսանողներից և իր այնքան սիրած համալսարանից՝ Աճառյանը բանտում գտել էր դասատուի, միաժամանակ ավելի համեստ վարժապետի բաց ասպարեզ:

Ճիշտ է, Աճառյանը բանտում մանավանդ սկզբնական շրջանում ունենում էր մռայլ օրեր, երբեմն հուսահատվում էր, բայց այդ երկար չէր տևում, մանավանդ այն ժամանակ, երբ հնարավոր դարձան մեր տեսակցությունները, նա ավելի արագ փոխվեց դեպի լավը, փրկության հույսը նրան ավելի ամրապնդեց և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես:

Իմ այստեղ շարադրած տեղեկություններից շատ բան էս հավաքել եմ իր՝ Աճառյանի պատմածների վերհիշումով: Տուն վերադառնալուց հետո նա զանազան առիթներով պատմում էր բանտում անցկացրած իր օրերի մասին: Նրա մասին շատ եմ լսել նաև բանտակից իր ընկերներից:

Ահա հետաքրքրական մի դեպք:

Ես արդեն պատմել եմ, որ 1937 թ., երբ Աճառյանը գնացել էր Դիլիջան՝ ամառային արձակուրդների ժամանակամիջոցում հայոց լեզվի գծով այնտեղ կազմակերպված՝ ուսուցիչների եռամսյա վերապատրաստման դասընթացներում դասախոսելու, իսկ էս քրոջս ընտանիքի հետ՝ Կիսլովոդսկ, ինչպես էր կողոպտվել մեր տունը:

Աճառյանը, տարվելով բանտ, տեղավորվում է 19-րդ բանտախցիկում:

Այնտեղ հանդիպում է իրեն ճանաչողներին:

Մի քանի օրից հետո իրեն է մոտենում մի երիտասարդ, ծանոթանում, հարցնում, թե որտեղ է գտնվում մեր բնակարանը, և երբ իմանում է, որ Տերյան փողոցի № 62-ն է, հուզված մոտենում է Հրաչյային, գրկում նրան և ասում.

– Պրոֆեսո՛ր, Դուք գիտե՞ք, թե էս ինչո՞ւ եմ բանտարկված: Ես ուզում եմ խոստովանել Ձեր հանդեպ իմ կատարած հանցագործությունը: Ձեր տունը կողոպտողը էս եմ եղել իմ ընկերների հետ, դրա համար էլ բանտարկվել եմ: Երեք ընկերներով մենք որոշել էինք կողոպտել Ձեր տունը՝ հուսալով այնտեղ գտնել թանկարժեք շատ բաներ: Իմանալով Ձեր բացակայության մասին՝ գիշերով մտանք Ձեր բնակարանը:

Մեր նպատակը չիրականացավ. թանկարժեք ոչինչ չգտանք, Ձեր տունը կարծես պրոֆեսորի տան նման չէր. ամեն կողմ գրեթե դատարկ էր, կային միայն բազմաթիվ գրքեր, ձեռագրեր, մուշտակներ, ընտիր կտորներ, գրամեքենա: Գրքերին և գրամեքենային մենք ձեռք չտվեցինք, վերցրինք միայն մուշտակները, կտորեղենը, ծածկոցները և մի փոքրիկ պայուսակ, որի պարունակությունը չէինք ստուգել: Մեր հետքերը հայտնի չդարձնելու համար, այդ բոլորը մենք ուզում էինք տանել Ռուսաստան և այնտեղ վաճառել: Մենք գնացինք Երևանի երկաթուղային կայարան և նստեցինք գնացք: Դեռ գնացքը չշարժված՝ հանկարծ հայտնեցին, որ ստուգում է կատարվելու: «Գող՝ սիրտը դող»: Մենք ամեն ինչ թողեցինք վագոնի մեջ, դիմեցինք փախուստի: Ստուգում անցկացնող միլիցիոներները, ինչպես հետո մենք իմացանք, հասնելով մեր զբաղեցրած տեղը, բաց են անում սեղանի վրա մնացած պայուսակը և իրերի հետ գտնվող նկարից (դա իմ եղբոր՝ Գարեգինի նկարն էր) եզրակացնում են, որ դրանք պատկանում են պրոֆեսոր Աճառյանին: Պայուսակի հետ մեր գողացած բոլոր իրերը տանում են միլիցատուն և փոխանակ տիրոջը վերադարձնելու՝ բռնագրավում են: Միայն Ձեր կոստյումը, պրոֆեսոր, մնացել է ահա իմ հագին: Եթե ցանկանում եք, Ձեր կոստյումը, պրոֆեսոր, մնացել է ահա իմ հագին: Ներեցե՛ք ինձ, պրոֆեսոր, եթե ես իմանայի, որ Դուք այնքան լավ մարդ եք, ես ոչ միայն չէի թալանի Ձեր տունը, այլև Ձեր դռանը պահակ կանգնեի և չէի թողնի, որ այնտեղ մարդ մոտենար: Ինձ ուրիշները չար խորհուրդ տվեցին՝ ասելով, որ Աճառյանը շատ հարուստ է:

Երիտասարդը, իր հանցանքը գիտակցելով և խորապես զղջացած, ամոթով գլուխը կախում է:

Աճառյանը կարեկցությամբ սեղմում է երիտասարդի ձեռքը և ասում.

- Շնորհակալ եմ, երիտասարդ:

Բանտակից ընկերները, որ հավաքվել էին և հետաքրքրությամբ լսում էին երիտասարդի պատմածը, զարմանքով հարցնում են Աճառյանին, թե ինչու է շնորհակալություն հայտնում:

- Շնորհակալ եմ հատկապես այն բանի համար, որ իմ գրամեքենային, գրքերին և մանավանդ ձեռագրերին ձեռք չեն տվել. ինձ համար ամենակարևորը դրանք էին:

\*

\* \* \*

Մեր տանը մի օր գրաշարներին տրված խնջույքի ընթացքում վարպետ Արտաշեսը, որ եղել էր Աճառյանի բանտի ընկերներից մեկը, պատմում էր, թե Աճառյանը բանտում շատ լավ, տաք շորեր էր ստանում տնից: Բարի մարդը խղճում, մեղքանում էր բոլորին, նույնիսկ բանտի հայտնի չարագործներին, և որպեսզի նրանք չմրսեն ձմեռվա ցրտին, իր շորերից բաժանում էր նրանց: Պրոֆեսորը գիտեր սակայն, որ այդ «բարի ծաղիկները» այդ ձևով ստացած իրենց շորերը կոնֆետով և այլ ուտելիքներով փոխանակում էին բուֆետի աշխատողների հետ և նորից մնում առանց տաք շորի: Գիշերները Աճառյանը մոտենում էր նրանց և ստուգում, թե արդյոք չեն վաճառել կամ փոխանակել դեռ նոր իր շորերը: Այդպիսի դեպքերում նա շատ էր բարկանում, ջղայնանում. Նա ասում էր.

- Ես այդ շորերը տվեցի, որպեսզի դուք չմրսեք հատակին պառկելուց, իսկ դուք փոխանակում, ուտում եք. ուտել որ լինի, ես ձեզանից ավելի լավ ուտող եմ. բերնիս համը գիտեմ:

Երբ ես հարց տվեցի Հրաչյային, թե ինչու էր խղճում նման չարագործների և հետո իզուր ջղայնանում. ավելի լավ չէ՞ր՝ ո՛չ տար և ո՛չ էլ ջղայնանար, նա պատասխանեց.



– Ինչպե՞ս թե չտայի, մեղք էին էլի, կմբսեին, այդ հիմարները իրենց մասին չէին մտածում, զոնե իրենց առողջությունը պետք է պահպանեին:

\*  
\*   \*  
\*

Մի ուրիշ անգամ Հրաչյան ինձ պատմեց բանտի կյանքից ուրիշ շատ հետաքրքրական դեպք. «Բանտում պատահում էր, որ այլևայլ հարցերի մասին խոսելիս բախվում, չէին համաձայնվում, վիճում, և տաքանում էր վեճը այն աստիճան, որ երբեմն փոխվում էր նույնիսկ կռվի: Մի անգամ վեճ է գնում Քրիստոսի մասին. ո՞վ է նա, եղե՞լ է, թե՞ չի եղել: Կոմունիստները հերքում էին Քրիստոսի գոյությունը, առասպելական էին համարում, իսկ հավատացյալները, ամուր կանգնած իրենց հավատքի վրա, պնդում էին, թե Քրիստոսը եղել է, կա և կմնա ու մի օր կգա ահեղ դատաստանի, կդատի ու կպատժի մեղավորներին, անհավատներին: Վեճը բորբոքվեց, քիչ մնաց կռվի հանգեր: Մտածեցի, որ բոլորի մոտ իմ վայելած հեղինակությամբ կարող եմ միջամտել և վեճը հանդարտեցնել: Ես ասացի վիճող կողմերին.

– Բավական է վիճեք Քրիստոսի գոյության, նրա լինել - չլինելու մասին. այդ բոլորը կարելի է բացատրել գիտականորեն, բայց այս միջավայրն այնքան խայտաբղետ միջավայր է, որ ավելի լավ է այդ մասին չխոսել: Քրիստոս եթե լիներ, մենք հիմա այստեղ չէինք լինի:

Կարծես բոլորն իմ խոսքին էին սպասում: Լռեցին: Պատկեցինք քնելու: Խաղաղությունը տիրեց:

Մեկ էլ գիշերվա մի ժամանակ զգացի, որ մեկը ոտիցս քաշում է. նա, մոտենալով ինձ, ասաց.

– Վարժապե՛տ, վարժապե՛տ, տե՛ղ արա՛՝ գամ քեզ մոտ, ուզում եմ մի բան հարցնել:

Ապա անկողնում ինձ մոտ տեղավորվելուց հետո նա ասաց.

– Պրոֆեսո՛ր, վիճաբանությունից հետո իմ միտքը չհանդարտվեց, Դուք ամեն հարցում ունեք մեծ հմտություն, շատ բան գիտեք. խնդրում եմ՝ ինձ համոզիչ ձևով բացատրեցե՛ք Քրիստոսի լինել-չլինելու մասին:

Գլուխներս քաշեցինք վերմակի տակ, որպեսզի մեր ձայնը խեղդվի: Ապա ցածր ձայնով ես սկսեցի բացատրել այդ բամբակի թագավորին (այդպես էր անվանում Աճառյանը գյուղատնտեսության նախարար Վարդանյանին): Ես հարցրի նրան՝ որ ասում են «Քրիստոսի թվարկությունից առաջ, Քրիստոսի թվարկությունից հետո», այդ նա լսել է: «Այո՛, լսել եմ, շատ եմ լսել»:

– Դե որ լսել եք,- շարունակեցի ես,- ուրեմն նշանակում է, որ Քրիստոսը եղել է, այլապես չէին ասի՝ «Քրիստոսից առաջ և հետո»:

– Այո՛, պրոֆեսո՛ր, ես այդ ընդունում եմ,- ասաց մինիստրը:

– Ինչո՞ւ եք կարծում, որ Քրիստոսը պիտի անպայման սուրբ լիներ և ոչ թե մի խելոք մարդ, որ քրիստոնեության կրոնն է քարոզել:

– Չասկացանք, այդ էլ հասկացանք,- ասաց մինիստրը և շարունակեց.- արդյո՞ք Քրիստոսը՝ այդքան խելոք մարդ, ինքը գրել-կարդալ չի՞ իմացել, որ իր ձեռքով գրված ոչ մի բան չի թողել, այլ իր աշակերտներն են միայն գրի առել ու պատմել նրա մասին, արդյո՞ք այն ժամանակ գիր, գրականություն չի եղել:

– Դուք Սուկրատի մասին գիտե՞ք,- հարցրի ես:

– Այո՛, գիտեմ՝ հույն փիլիսոփա է եղել նա:

– Սուկրատից ի՞նչ եք կարդացել,- շարունակեցի ես:

– Նա գրություն չի թողել, նրա աշակերտներն են միայն պատմում նրա մասին, նույնիսկ նրա տարօրինակությունների մասին:

– Ուրեմն դու Սոկրատի աշակերտներին հավատում ես, իսկ ինչո՞ւ չպետք է հավատաս Քրիստոսի աշակերտներին, որ գրում են նրա մասին:

– Այո՛, վարժապե՛տ, ճիշտ եք ասում,- պատասխանեց մինիստրը,- հիմա լավ հասկացա: Երբեք այսպիսի բացատրություն չեմ լսել ես. միշտ ասել ու ժխտել են միայն Քրիստոսի գոյությունը, թե Քրիստոսն ու քրիստոնեությունը տերտերների հնարած ստերն են: Հիմա հասկացա. պարզ եղավ իմ համար, բավարարված եմ և շնորհակալ,- ասաց մինիստրը և մթության մեջ՝ անկողնու տակ, քաշեց ձեռքս, մոտեցրեց շրթներին, համբուրեց ու «բարի գիշեր» ասելով՝ հուշիկ սողաց դեպի իր անկողինը»:

## ԲԱՆՏԻՑ ԴՈՒՐՄ

Իմ միտքը շատ էր զբաղվում Աճառյանին ազատելու հարցով, բայց չգիտեի ինչ անել: Մոսկվայի դատապաշտպան Բրաուզերի տված հույսերը ապարդյուն էին անցնում:

Ես դիմել էի Հայաստանի գերագույն խորհրդին և խնդրել Աճառյանին ներում շնորհել: Ներման վերաբերյալ իմ դիմումները քննող հանձնաժողովից ստացա հետևյալ պատասխանը՝ հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Բ. Պետրոսյանի ստորագրությամբ 1939 թ. հունիսի 19-ին:

«Ի պատասխան Հայկական ԽՍՀ գերագույն խորհրդի նախագահությանը հասցեագրած Ձեր դիմումի՝ Ձեր ամուսին Հրայր Աճառյանին կալանքից ազատելու մասին հայտնում ենք, որ համաձայն օրենքի՝ քաղաքական հանցագործները իրենք անձամբ պետք է դիմեն իրենց ներման համար:

Այդ իսկ պատճառով Ձեր դիմումը մեր կողմից քննության չի առնվելու և թողնվում է անհետևանք»:

Եթե մի կողմից իմ ճիգերը հանդիպում էին խոչընդոտների, մյուս կողմից, սակայն, ազատության ճանապարհը ինքնին հարթվում էր և բացվում:

1939 թ. հունիսին Հայկ Գյուլիքևիչյանի դուստր Ջարիկը մեկնում էր Մոսկվա՝ տանելու համար հեղինակավոր անձնավորություններից՝ Ա. Իսահակյանից, Դ. Դեմիրճյանից և ուրիշներից, վերցված բնութագրեր իր հոր մասին՝ որպես լավ մարդու և գիտնականի:

Ես հաճախ դիմումներ էի ուղարկում Մոսկվա, բայց պատասխան չէի ստանում:

Այժմ օգտվելով առիթից՝ Ջարիկի հետ Մոսկվա ուղարկեցի 7 նոր դիմում՝ ուղղված օրվա քաղաքական ղեկավար անձնավորություններին՝ խնդրելով իրենց ազդու միջնորդությունը Աճառյանին ներում շնորհելու համար:

Մոսկվայում Ջարիկը գնում է մինիստրների սովետ, բայց այնտեղ ոչ ոք չի ուզում նրան լսել: Հուսահատ՝ նա մինիստրների սովետի շենքի առաջ պառկում է գետին և ասում, որ մինչև իրեն չպատասխանեն, այնտեղից չի հեռանա: Վերջապես Ջարիկին առաջնորդում են մի հայ դատախազի՝ Գյուլենցի մոտ, որովհետև խեղճ աղջիկը լավ ռուսերեն չէր իմանում և հայերենից բացի ուրիշ լեզու չգիտեր:

Ջարիկը մանրամասն պատմում է իր հոր գործի մասին: Գյուլենցը այդ միջոցին հարցնում է, թե իրեն ծանոթ է արդյոք Աճառյանը, հարազատներ ունի, ինչու երբեք չեն դիմում՝ նրա գործերը քննելու խնդրանքով: Ջարիկը մեր մասին իմացած բոլոր ծանոթություններն ու տեղեկությունները տալիս է, խոսում իմ և իմ դիմումների մասին և ցույց տալիս այդ նպատակով իրեն հանձնված դիմումները:

Ջարիկը դիմումները հանձնելուց հետո վերադառնում է Երևան: Երեք ամիս հետո Հայկը, բանտից ազատվելով, տուն

է վերադառնում: Քաջալերված դեպքերի հաջողությունից՝ ես էլ որոշեցի գնալ Մոսկվա՝ հուսալով, որ կկարողանամ Հրաչյային ազատել:

Այդ նպատակով 1939 թ. սեպտեմբերին ես արձակուրդ վերցրի: Պատրաստել էի դիմում, որը պետք է ստորագրեր Աճառյանը, և ես այն հետո տանեի Մոսկվա: Դատապաշտպան Տոնոյանը դիմումը տարավ՝ ստորագրել տալու: Հրաչյան ասել էր, որ կարիք չէր տեսնում Մոսկվա գնալու, որովհետև իրեն ասվել էր, որ իր գործերը վերանայվելու են:

Ես երկայթուղային կայարանում էի, գնացքի մեկնելուն միայն մի ժամ էր մնացել, երբ Տոնոյանը շտապ եկավ ինձ մոտ՝ ասելով. «Ազատեցի, ազատեցի Աճառյանին»: Երբ իմացա, որ այլևս իսկապես կարիք չկար Մոսկվա գնալու, տոմսս վաճառեցի, վերադարձա աշխատանքիս՝ սպասելով նորությունների:

1939 թ. դեկտեմբերի 22-ի գրությամբ Չեկայի դատախազ Մակյանն ինձ հրավիրում էր դեկտեմբերի 23-ին՝ ժամը 10-ին, ներկայանալ իրեն: Ահն ու սարսափը պատեցին ինձ, որովհետև մտածում էի, որ ինձ էլ բանտ կտանեն:

Թույլտվություն վերցնելով՝ շտապեցի Երևան: Նշանակված ժամին ներկայացա: Ինձ ընդունեց Աճառյանի վերջին քննիչ Առոյանը և ասաց.

– Տիկի՛ն, գնացե՛ք Աճառյանի համար հագուստ բերեք:

Իմ վախն ավելի սաստկացավ, չկարողացա արտասուքս զսպել և լացակումած հարցրի նրան.

– Արդյո՞ք քաքսորելու եք Աճառյանին:

– Ահագանգ զցելու կարիք չկա,- ասաց նա,- նրա հագուստը շատ է կեղտոտված, պետք է փոխել:

– Բայց Աճառյանը հագուստ չունի,- ասացի ես,- ամեն ինչ բռնագրավված է, բայց ես եղբորիցս կամ փեսայիցս հագուստ կճարեմ և կբերեմ:

– Անհրաժեշտ չէ, առանց դրան էլ կլինի,- ասաց Առոյանը,- հիմա Դուք գնացեք և ժամը 2-ին եկեք նորից:

Ժամը 2-ին վերադարձա՝ ինձ հետ բերելով Աճառյանի համար մի կապոցով հագուստ և հանձնեցի պահակին՝ Աճառյանին հասցնելու խնդրանքով: Պահակատանը ես շատ երկար սպասեցի մինչև երեկոյան ժամը 7-ը, երբ ինձ պահակի ընկերակցությամբ, հատուկ անցաթղթով տարան վերև: Ինձ առաջնորդեցին մի սենյակ, որտեղ մի ռուս մարդ էր աշխատում: Մեկուկես ժամ էլ այստեղ սպասեցի: Փորձեցի խոսել այդ մարդու հետ, բայց կարծես նա միաժամանակ խուլու համր ծնված դժբախտներից լիներ. ո՛չ լսում էր ինձ և ո՛չ էլ պատասխանում:

Եկավ դատախազ Մակյանը, շատ բարեկրթորեն մոտեցավ ինձ, սեղմեց ձեռքս և հարցրեց.

– Հիմա ինչպե՞ս եք, Աճառյա՛ն: Մենք Ձեր ամուսնուն շատ լավ ենք պահել, այսուհետև Դուք պետք է լա՛վ պահեք նրան:

Ուրախությունից ես վեր կացա, վերցրի սեղանի վրա տարածված նրա ձեռքը և տարա շրթներիս, շնորհակալություն հայտնեցի և, չկարենալով զսպել պոռթկացող հուզումս, սկսեցի հեկեկալ: Ես դեռևս դժվարանում էի հավատալ, որ Աճառյանն իսկապես ազատ է արձակվելու:

– Բայց ես Ձեզ ոչինչ չասացի, Աճառյա՛ն,- ասաց Մակյանը,- այս ի՞նչ արեցիք:

Ապա նա ավելացրեց.

– Ես Աճառյանի մոտ էի: Հիմա Ձեզ թույլ կտրվի տեսակցել նրա հետ:

Բայց դեռ բավական երկար պետք եղավ սպասել: Վերջապես գիշերվա ժամը 2.30-ն էր, երբ Մակյանն ինձ առաջարկեց ընկերակցել իրեն՝ գնալու համար ներքնահարկ՝ Աճառյանի մոտ: Ցած իջնելիս աստիճանների մոտ, որտեղ պահակը ստուգում էր անցաթուղթը, Մակյանն ինձ ասաց, որ

գնամ պահակատուն, այնտեղ կտեսնեմ Աճառյանին: Պահակատանը ես տեսա այն կապոցը, որ ուղարկել էի Աճառյանին ժամը 2-ին: Մարաափելի մտքեր անցան գլխովս: Արդյո՞ք Հրաչյան մահացել էր, և կապոցը՝ անտեր մնացել: Հանկարծ հիշեցի, որ ոչ հեռու տեղ բնակվում է Արարատ Ղարիբյանը: Գիշերվա այդ ուշ ժամին, հնիհն վազելով, գնացի և թակեցի Ղարիբյանի դուռն ու պատուհանը և բարձր ձայնով պռռացի.

– Արարա՛տ, Արարա՛տ, դո՛ւրս արի, չգիտեմ՝ ինչ են անելու Աճառյանին, գուցե և ազատեն նրան:

Եվ առանց սպասելու պատասխանի, հնիհն վերադարձա, գնացի դարպասից ներս: Բակում՝ ավտոմեքենայի մեջ, տեսա Աճառյանին և Մակյանին գրուցելիս: Արագորեն ես ուղղվեցի դեպի Հրաչյան: Ուրախության արցունքներով մենք գրկախառնվեցինք՝ հուզման սաստկությունից չկարողանալով անմիջապես խոսել: Քիչ հանդարտվելուց հետո նա ասաց.

– Ների՛ր ինձ, Մոֆի՛կ, ես քեզ շատ տանջեցի:

Ես սփոփիչ խոսքեր էի ասում Հրաչյային, հանգստացնում: Մակյանը կարգադրեց վարորդին ավտոն քշել դեպի Ազիզբեկովի հրապարակը, որտեղ որոշել էին մեզ տեղավորել հյուրանոցում: Իսկ ես խնդրեցի քշել դեպի քրոջս տունը: Այնտեղ գիտեին, որ ես ցերեկը գնացել էի բանտ. լուսանալու մոտ էր, բայց ես դեռ չէի վերադարձել, նրանք ոչ մի լուր չունեին իմ մասին և կարող էին շատ անհանգստանալ:

Ճանապարհին առաջին հարցումը, որ Հրաչյան տվեց ինձ, ձեռագրերի մասին էր: Նա վախենում էր, որ ձեռագրերը փչացած կամ անհետացած կարող էին լինել: Ես նրան ասացի, թե բոլոր ձեռագրերն ու գրքերը պահվում էին խնամքով: Միայն ավելի ուշ ես նրան մանրամասն պատմեցի, թե ինչպես ձեռագրերը ես գողացել էի մեր կողպված ու կնքված տրնից, և թե ինչպես քեռուս հետ թաղել էինք դրանք իրենց այգում:

Հասանք քրոջս տուն: Հուսահատությունից ու մտահոգությունից թմրած աչքերով նրանք սպասում էին ինձ:

\*  
\* \* \*

Եվ ահա այսպես 1937 թ. սեպտեմբերի 29-ից 1939թ. դեկտեմբերի 23-ը՝ շուրջ երկու տարվա ազատագրկումից հետո, Աճառյանը վերադառնում էր իր հարազատների գիրկը: Նա բանտարկվել էր անհիմն մեղադրանքներով, անիրավորեն դատապարտվել 6 տարվա ազատագրկման և 3 տարվա ձայնագրկության, ու մինչև արդարության վերականգնվելը՝ շուրջ 2 տարի 3 ամիս, Աճառյանը մնացել էր բանտում:

Հրաչյան նորից գտավ իր սիրած աշխատասեղանը և համալսարանի ամբիոնը, նորից գրեց ու գրեց, նորից դասախոսեց ու դասախոսեց՝ հարստացնելով հայ մշակույթի գանձարանը նորանոր կոթողական գործերով, ուսուցանելով երիտասարդ գիտական սերնդին:

Եվ այժմ թո՛ւյլ տուր, սիրելի՛ ընթերցող, որ առանց ինքնագովության ասեմ, որ ես ուրախ եմ, որ իմ երիտասարդ կյանքը կապել եմ Աճառյանի նման գիտնականի հետ, եղել եմ նրա «կյանքի վերջալույսի հավատարիմ ընկերը և բախտակիցը», հավասարապես տառապել եմ նրա հետ, պայքարել մինչև արդարության վերականգնումը: Հետագայում ևս, երբ հալածանքը նրա դեմ շարունակվել է այլևայլ ձևերով, ես եղել եմ միշտ նրա կողքին: Պատերազմի դժվարին տարիներին, գերագույն ուժ գործադրելով, ես աշխատել եմ նրա շուրջը ստեղծել այնպիսի պայմաններ, որ ոչինչ չխանգարեր նրա լիակատար ստեղծագործական աշխատանքներին:

Գոհ եմ, ուրախ և հպարտ միաժամանակ, որ այսպիսով, թեկուզ անուղղակի, լինելով նեցուկը մեծ հայագետի և լեզվաբանի, մասնակցել եմ հայ մշակույթի ծաղկման և զարգացման սրբազան գործին:



Եվ ինչպես Աճառյանի հռչակավոր ուսուցիչը՝ ֆրանսիացի մեծ հայագետ Անտուան Մեյեն, Աճառյանի «Արմատական բառարանը» գնահատելիս ասում էր, որ հպարտ էր, որ իր աշակերտների թվում ունեցել էր Աճառյանին, ես էլ, ուրախ եմ և հպարտ արդար հպարտությամբ, որ իբրև ամուսին ունեցել եմ Աճառյանին:

## **ՎԵՐՋԻՆ ՏԱՄԼԱՄՅԱԿԸ ԻՄ ԿԱՆՉՎԵԼԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**

1941 թ. հուլիսի 17-ին զինվորական կոմիսարիատից ծանուցագիր ստացա, որ հետևյալ օրը ներկայանամ զինկոմիսարիատ՝ 3 ձեռք սպիտակեղենով և 3 օրվա պաշարով՝ գնալու համար Նախիջևան՝ զինվորական ծառայության: Այդ ժամանակ մենք ապրում էինք Ստալինյան (այժմ Լենինի) պողոտայի № 52-ում՝ պետական համալսարանի հանրակացարանում:

Անկեղծ ասած՝ ես չէի ուզում գնալ զինվորական ծառայության. մտածում էի, թե ինչ կլինի Աճառյանն առանց ինձ, մենակ: Ժամանակ չկար, որ Աճառյանին հայտնեի, որպեսզի միջոցներ մտածեր ինձ ազատելու համար: Հիշեցի վիրաբույժ պրոֆեսոր Խ.Պետրոսյանին: Վաղուց ես նրան գանգատվում էի ոտքի ցավերից: Պետք էր առիթը օգտագործել: Բժշկին հայտնեցի և խնդրեցի, որ վիրահատի, հեռացնի ճկույթներս, մի բան, որ վաղուց առաջարկել էր պրոֆեսորը: Բժիշկը ասաց, որ այժմ դրա ժամանակը չէ: Ես պնդեցի, որ ցավից չեմ կարողանում նույնիսկ կոշիկ հագնել, խնդրեցի վիրահատել, քանի դեռ չեմ գոջացել և հրաժարվել: Վերջապես պրոֆեսորը համաձայնվեց և ասաց, որ Աճառյանին կանչենք: Ես չհամաձայնվեցի Հրաչյայի գալուն՝ առարկելով, որ նա կարող է հակառակվել: Երբ արդեն մի ոտքիս ճկույթը

հեռացվել էր, ես հայտնեցի, թե գորակոչվելուց խուսափելու համար էր, որ դիմել էի այդ միջոցին: Եկավ նաև Աճառյանը, որին զանգահարել էր բժիշկը: Հրաչյան շատ զարմացավ, թե ես ինչպես համաձայնվել եմ այդ վիրահատությանը, որից սարսափում էի:

Ես Աճառյանից թաքցրի բուն պատճառը, բայց պրոֆեսոր Պետրոսյանը պատմեց գործի էությունը:

Աճառյանը, վախեցած, սարսափած բղավելով, ասաց.

– Ինչո՞ւ արեցիք այդ անխորհուրդ, անօրինական գործը: Սոֆիկը թող գնար, թող այնտեղ վիրահատեին, ես էլ հետը կգնայի:

Չնայած բժշկի բացատրությանը, որ, միևնույն է, նրան այդ վիճակում չէին տանի, հետ կուղարկեին, այնուամենայնիվ երկար ժամանակ մտատանջությամբ Աճառյանը սպասում էր, որ մի օր պիտի պատասխանատվության կանչեն մեզ:

Վիրահատությունից հետո պրոֆեսոր Խ. Պետրոսյանը ինձ տվեց գրություն, որը ներկայացրի զինկոմիսարիատ և մեկ տարով ազատվեցի զինձառայությունից:

## ՄՆՈՒՆԴ

Պատերազմի ժամանակ վատ էր սննդի գործը: Բարեբախտաբար, քարտային դրությունն ապահովում էր գոնե նվազագույնը բոլորի համար, բայց այդ բավական չէր մանավանդ Աճառյանի համար, որին տեսողության տկարության պատճառով բժիշկները հանձնարարել էին լավ սնվել:

Ես հնարավոր ամեն ինչ անում էի, որ Աճառյանը զրբկանք չզգար, սննդից չզրկվեր: Զրկել նրան բավարար սննդից կնշանակեր զրկել նրան աչքի լույսից և աշխատանքից:

Աճառյանը նույնիսկ չգիտեր, թե ընդհանրապես ինչպիսին է սննդամթերքի դրությունը երկրում: Իմ վախը այն էր,

որ եթե նա իմանար, թե ինչ գնով և ինչ դժվարությամբ էի ճարում ամեն ինչ, պատառը կոկորդից ցած չէր իջնի, կհրաժարվեր ուտելուց:

Լինելով միշտ կուշտ՝ նրա տրամադրությունն էլ բարձր էր, ուրախ: Ուսուցչանոցում մի օր պաշտոնակիցները կատակով ասում են, որ Աճառյանը շատ ուրախ է, կարծեք կարագ-մեղր, ձկնկիթ ու ձիթապտուղ կերած լինի:

– Այո՛, կերել էմ,- ասում է Աճառյանը զարմանքով, - դրանում ի՞նչ կա զարմանալի, դուք էլ կերեք:

– Ոչինչ,- ասում են դասախոսները,- բաց կուզենայինք իմանալ, թե որտեղից եք ճարում այդ սննդամթերքները:

– Այդ ես չգիտեմ,- ասում է Աճառյանը,- եկե՛ք մեզ մոտ, հարցրե՛ք Սոֆիկին: Նա ասում է, որ շատ էժան գնով ճարում է ձիթապտուղն ու ձկնկիթը, կարծեմ օդաչուներից: Նա ձեզ կօգնի. երևի այնքան էլ դժվար չէ ճարելը, ձկնկիթն արժի կիլոգրամը 30 ռուբլի:

Մի օր էլ դասերից հետո համալսարանից Աճառյանի հետ միասին եկան դասախոսներից մի քանիսը՝ իմանալու համար, թե որտեղից կարելի է ձեռք բերել էժան ձկնկիթն ու ձիթապտուղը: Աճառյանը դասախոսներին ծանոթացրեց ինձ հետ, հանձնարարեց, որ բավարարեմ նրանց հետաքրքրությունը և օգնեմ՝ ճարելու ցանկալի սննդամթերքները, ապա գնաց իր սենյակը՝ աշխատելու:

Հասկանալով, թե բանն ինչ է, ես դասախոսներից խընդրեցի նախ՝ ոչինչ չասել Աճառյանին, ապա՝ բացատրեցի իմ ամբողջ գաղտնիքը: Ձկնկիթը ես գնում էի պետական խանութից կիլոգրամը 700 ռուբլով, իսկ Աճառյանին հավատացնում էի, որ վերցրել եմ օդաչուներից էժան գնով: Այս անմեղ սուտը անհրաժեշտ էր, որպեսզի Աճառյանի պատառը հեշտ կուլ գնար, այլապես կհրաժարվեր ուտելուց: Նման զոհողություններով և մեծ դժվարություններով էի ճարում նաև մյուս հազվագյուտ սննդամթերքը:

Դասախոսները նախ զարմանքով լսեցին իմ ասածները, ապա սկսեցին ծիծաղել, երևի Աճառյանի միամտության վրա: Հրաչյան դուրս եկավ իր սենյակից, հարցրեց, թե պաշտոնակիցները ստացան իրենց հետաքրքրող բացատրությունները: Նրանք, գոհունակություն և շնորհակալություն հայտնելով, գնացին՝ էժան ձկնկիթ և ձիթապտուղ ճարելու:

## ԻՄ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ ԿԻՍԼՈՎՈՂՄԿ

1943 թ. մենք նամակ ստացանք քրոջս որդի Հարություն Վասիլյանից, թե ծանր վիրավորվել է պատերազմում և իրեն տեղավորել են Կիսլովոդսկի հիվանդանոցում: Աճառյանը շատ էր ցանկանում, որ նրան տեղափոխեին Երևան: Նա դիմեց զանազան իրավասու մարմինների, այդ թվում նաև առողջապահության մինիստրություն, զինկոմիսարիատ՝ խնդրելով բացատրել, թե ինչպես կարելի է վիրավորին տեղափոխել Երևան: Առողջապահության մինիստրությունում պատասխանել էին, որ եթե նա մասնագետ է, հեշտ է տեղափոխելը: Խոստացան պահանջ ներկայացնել Կիսլովոդսկ և մեր վիրավորին՝ որպես մասնագետի (նա անասնաբույժ էր), տեղափոխել Երևան: Առողջապահության ժողովրդական կոմիսարիատը երկու անգամ գրություն ուղարկեց Կիսլովոդսկ և երկու անգամ էլ ստացավ նույն պատասխանը, որ հիվանդը ծանր վիրավորված է կրծքից, և հնարավոր չէ նրան տեղաշարժել: Իմանալով քրոջս որդու ծանր վիճակը՝ ես սկսեցի արտասվել: Աճառյանն այդ ժամանակ առաջարկեց ինձ.

– Սոֆի՛կ, իսկ եթե մարդ ճարենք, միասին գնացեք Կիսլովոդսկ և բերեք Հարությունին:

Հրաչյան նորից գնաց առժողկոմատ, խնդրեց մի գրություն տալ, որ մենք իրավունք ունենանք հիվանդին բերելու Երևան: Մինիստր Ս. Ջշմարիտյանն ասել էր.

– Ի՞նչ կարիք կա գրության, Ձեր կնոջը կգործուղենք որպես բժիշկ, որ գնա հիվանդին բերի, միայն առանց վճարելու գործուղման ծախսերը:

Այդպես էլ գործուղում ձևակերպեցին: Որպես ուղեկից ընտրեցինք հիվանդի կնոջը: Որոշված օրը մեկնեցինք. գնացք չկար: Մեծ դժվարությամբ հասանք Կիսլովոդսկ և անմիջապես գնացինք փնտրելու զինվորական այն հիվանդանոցը, որտեղ պառկած էր մեր վիրավորը: Մեր հիվանդին գտանք սարսափելի վիճակում: Երբ նրան տեսա անկողնում, ինձ թվաց, թե հոգեվարքի մեջ է: Մահճակալն այնքան փոս էր ընկել, ինքն էլ շատ նիհարած, որ ինձ թվաց, թե նա զրկվել էր ոտքերից: Հիվանդը աչքերը բացեց, հազիվ մեզ ճանաչեց, որովհետև հանկարծակիի եկավ և երբեք չէր սպասում իր հարազատներից որևէ մեկին այդտեղ տեսնելու: Առանց ինձ կորցնելու՝ ասացի.

– Հարություն, սիրելի՛ս, մենք եկել ենք՝ քեզ տանելու, ինչ վիճակում էլ լինես:

Կինը մնաց հիվանդի մոտ, իսկ ես գնացի ներկայանալու բժիշկներին ու նրանց հետ խոսելու: Ոչ ոք խորհուրդ չտվեց տեղափոխել հիվանդին: Այդ վիճակում տեղափոխելը հնարավոր չէր, որովհետև շատ էր հյուծվել, ուժասպառ եղել: Սկզբում կարծեցին, թե ես միայն ի պաշտոնե եկել եմ հիվանդին տանելու, բայց ես բացատրեցի, թե ես նրա հարազատն եմ և ուզում եմ անպայման տանել: Մեզ խորհուրդ տվեցին վիրավորին մի քանի օր լավ կերակրել և տեսնել, թե ինչպես կլինի: Հիվանդի վիճակն անհուսալի էր թվում: Մեզ պետք էր նաև գիշերելու տեղ: Դոնապանն ասաց, որ կարող ենք իր տանը գիշերել: Հետո նրա կնոջ՝ Նատաշայի հետ գնացինք շուկա՝ ուտելիք ձարելու: Մանդամթերք գնեցինք և մեր հիվանդին լավ սնունդ տվեցինք, որից հետո զգալի կերպով բարելավվեց հիվանդի վիճակը: Հիվանդը կարողացավ խոսել, ասաց, որ մի քանի օր առաջ Երևանից հատուկ գրությամբ

իրեն պահանջել էին, բայց վիճակի ծանրության պատճառով չէին ուղարկել, ուստի այժմ էլ հավանաբար թույլ չտան: Մենք հուսադրեցինք, որ շուտով կբարելավվի վիճակը, և անպայման կտանենք: Կիսլովոդսկում մնացինք 11 օր: Ամեն օր կերակրում էինք հիվանդին: Լավ սնունդը շատ օգնեց արագ կազդուրմանը: Երբ բավականին առողջացել էր, խնդրեցինք բժիշկների թույլտվությունը՝ մեր հարազատի տեղափոխության համար: Այդ ժամանակամիջոցում ամեն օր մենք հեռագրում էինք Երևան, որ լավ ենք և շուտով կվերադառնանք:

Կիսլովոդսկում լուսավորություն չկար, վառելիք չկար, վառում էին գերմանացիներից մնացած գարեջրի արկղերը: Դրանք սև, մեծ արկղեր էին, որոնցով լցված էր քաղաքը:

11-րդ օրը, երբ բժիշկները գտան, որ հիվանդի վիճակը այլևս հուսալի է, և կարելի է նրան անվտանգ տեղափոխել, ձևակերպեցին մեր գործուղումը: Վիրավորին դրեցինք պատգարակի վրա, երկու զինվոր նրան տեղափոխեցին կայարան: Մեծ դժվարությամբ և բարեհաջող կերպով հասանք Երևան և հիվանդին տեղավորեցինք Երևանի հոսպիտալում: Բոլոր հարազատների ուրախությանը չափ չկար: Ուրախ էր և Հրաչյան: Հրաչյան մեծ գոհունակություն էր զգում, որովհետև իր հետևողական ճիգերի շնորհիվ հասել էր ցանկալի արդյունքի՝ ասելով՝

– Մի հայ զինվոր էլ փրկեցինք:

## ՀԱՄՇԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՔՆՈՒԹՅՈՒՆԸ

1944 թվականն էր:

Աճառյանը մի օր համալսարանից վերադարձավ բժշկական ինստիտուտի ուսանող Արտաշես Օքսուզյանի հետ: Ներս մտնելով նա ասաց.

– Սոֆի՛կ, գիտե՞ս՝ այսօր ինչ պատահեց: Փողոցում քայլելիս ձեռնափայտիս գլուխը կտորվեց: Այս երիտասարդը մոտեցավ ինձ, թևանցուկ արեց և ասաց. «Երևի առանց ձեռնափայտի Դուք կոժվարանաք քայլել, ես ձեզ կուղեկցեմ մինչև տուն»: Ապա նայելով իմ անգլուխ ձեռնափայտին՝ ասաց.

– Եթե մեր տանը լինեք, հայրս այս ձեռնափայտի գլուխը ամուր տոսախից կպատրաստեք, որ երբեք չկտորվեք:

Որ լսեցի, զարմանքով հարցրի նրան, թե որտեղացի են: Նա հայտնեց, թե բնիկ համշենցի են: Բայց Արևմտյան Հայաստանից գաղթելով՝ եկել և հաստատվել են Գագրայում: Ես հետաքրքրվեցի, թե Գագրայում ինչքան համշենցիներ կան, երիտասարդը պատասխանեց, որ թեն բավական թվով տրապիզոնցիներ էլ կան, բայց այնուամենայնիվ, Գագրայում և շրջակայքում ամենամեծ թիվը կազմողները համշենցիներն են:

Այս բոլորը պատմելուց հետո Աճառյանն ուրախ ավելացրեց.

– Գիտե՞ս ինչ, Սոֆի՛կ, Արտաշեսը մեզ որպես հյուր Գագրա է հրավիրում՝ խոստանալով մեզ տալ բոլոր դյուրությունները և օգնել: Դա լավ առիթ կլինեք իրականացնելու իմ մի լավ ցանկությունը՝ գրել Համշենի բարբառի քննությունը:

Մենք Արտաշեսի հետ պայմանավորվեցինք ամռանը գնալ Գագրա:

Օգոստոսի 4-ին, տոմսերը վերցրած, մենք պատրաստ էինք մեկնելու, երբ անսպասելի Գուրգեն Սևակը եկավ մեզ մոտ և սկսեց երկար առաջաբանով խոսել:

Հրաչյան կռահեց նրա միտքն ու ասաց.

– Դու անպայման մի բանի համար ես եկել, այլապես չէիր գա, վերջերս ուշ-ուշ ես հաճախում մեզ մոտ:

Սևակը սկսեց խոսել Ջահուկյանի մասին, ասաց, թե նա շատ պատրաստված, խելոք երիտասարդ է, բայց բախտ չունի: Դիմել է Ղափանցյանին, որ որպես ասպիրանտ դառնա

իր ղեկավարը, բայց չի ընդունվել, Մկրյանը նմանապես մերժել է: Այժմ նա եկել է իր մոտ, որ խնդրեմ Ձեզնից համաձայնվել նրա ղեկավարը դառնալու:

Հրաչյան ասաց, որ այսօր մեկնելու է Գագրա՝ ուսումնասիրելու Համշենի բարբառը. մի ամիս հետո կվերադառնա և մի բան կանի: Ապա հետաքրքրվեց, թե այժմ ուր է Ջահուկյանը, և իմանալով, որ ներքևում է սպասում, ուղարկեց Սևակին՝ անմիջապես նրան վերև բերելու: Սևակը Ջահուկյանին բերեց և ծանոթացրեց Աճառյանի հետ:

– Իսկ ինչո՞ւ մի ամիս սպասենք,– ասաց Աճառյանը,– պետք է գործնական լինել: Հենց հիմա գնանք գրադարան՝ գրքեր ընտրելու, մինչև իմ վերադարձը դրանք կուսումնասիրեք և կպատրաստվեք:

Ապա Հրաչյան ինձ պատվիրեց մինչև իր վերադարձը պատրաստ լինել կայարան մեկնելու: Գրադարանում մի քանի գիրք ընտրելով՝ նա տվել էր Ջահուկյանին, իսկ Սևակին ասել, որ ինչպես ցանկանում է իր ասպիրանտը, այդպես էլ ձևակերպի:

Վերջապես երեկոյան գնացքով մենք մեկնեցինք Գագրա, որտեղ հասանք մեծ դժվարությամբ: Նոր ջրհեղեղը ավեր էր գործել, խորտակել ամեն ինչ իր ճանապարհին, շատ տեղեր վնասել էր երկաթգիծը: Գնացքը հաճախ սպասում էր երկար, մինչև ավերված գիծը կարգի բերեին: Այսպիսով, սովորական միօրյա ճանապարհը մենք անցանք չորս օրում:

Գագրա հասանք ցերեկով և հենց որ տեղավորվեցինք, Աճառյանը ձեռնարկեց Համշենի բարբառի ուսումնասիրությանը: Նա խնդրեց Արտաշեսից, որ մի քանի համշենցիների ուղարկի իր մոտ: Այսպես ամեն օր չորս-հինգ համշենցի հրավիրում էր նա: Աճառյանը նախապես ստուգում էր. ով փոխել էր լեզուն, հարազատ չէր պահել, նրան հետ էր ուղարկում: Նա զբաղվում էր միայն նրանց հետ, ովքեր հարա-



գատ էին պահել իրենց բարբառը, մաքուր էին խոսում իրենց բարբառով և այն չէին աղավաղել:

Աճառյանի հետ մենք միասին էինք գնում շուկա: Շրջակա գյուղերից իրենց բարիքները շուկա բերողներից շատերը համշենցիներ էին լինում: Եվ մինչ ես իմ գնումները կկատարեի, Աճառյանն զբաղվում էր իր գործով՝ շուկան օգտագործելով որպես լեզվի ուսումնասիրության փորձադաշտ: Նա խոսում էր համշենցիների հետ, հարցեր էր տալիս, խոսեցնում, մի բան պատմել տալիս և այդպիսով քաղում իրեն անհրաժեշտ տեղեկությունները, եզրակացնում քերականական կանոնները, ուսումնասիրում և այլն:

Այսպես, օգոստոսի 29-ին մի ամսից էլ ավելի կարճ ժամանակամիջոցում Աճառյանը վերջացրեց Համշենի բարբառի ուսումնասիրությունը, և նույն օրը տոմս վերցնելով՝ երեկոյան գնացքով մեկնեցինք Երևան:

Այդ տարվա հորդ ջրհեղեղը մեծ վնասներ էր պատճառել Գագրա քաղաքին և շրջակայքին: Փուլ էին եկել շատ տներ, վնասվել էին էլեկտրալարերը, փողոցները լցվել էին ցեխով և հեղեղի բերած փայտերով: Այդ փայտերից ես օգտվում էի մեր ճաշը եփելիս: Հրաչյան, իմ չարչարանքը տեսնելով, ինքն էլ էր նեղվում, բայց քաջալերում էր ինձ, թե շուտով կմեկնենք և կհանգստանանք:

Գագրայից վերադառնալուց հետո Ջահուկյանը դարձավ Աճառյանի ասպիրանտը: Աճառյանը շատ էր հավանում նրան՝ որպես շնորհալի, լուրջ, աշխատասեր և ընդունակ, ապագա խոստացող երիտասարդի: Միակ բանը, որ դուր չէր գալիս Աճառյանին, դա Ջահուկյանի շեշտված **ես**-ն էր: Հրաչյան այս մասին հաճախ էր նրան նկատողություն անում և ասում.

– Դու ի՞նչ համարձակությամբ շեշտում ես քո **ես**-ը: Ամենամեծ գիտնականն անգամ **ես** չի ասում, այլ՝ մենք, որովհետև գիտությունը ամենքինն է: Ինչպե՞ս դու քեզ թույլ

ես տալիս ասելու. «Ես այսպես եմ մտածում, ես այսպես եմ ասում»: Գիտությունն արդեն ստեղծված է, մենք չենք այն ստեղծողը, այլ միայն շարունակողներն ենք:

Այսպիսի խրատականների ժամանակ Ջահուկյանը ոչինչ չէր ասում, չէր հակաճառում, այլ գլուխը կախ՝ լռում էր միայն:

Ինչպես Աճառյանի խոստումնալից մի շարք ուսանողներ, Ջահուկյանն էլ արդարացրեց Աճառյանի հույսերը. նա այժմ լեզվաբանական գիտությունների դոկտոր պրոֆեսոր է, ճանաչված հեղինակություն, ունի կարևոր աշխատություններ:

### ԱՃԱՌՅԱՆԻ ՎԵՐՁԻՆ ԱՅՑԸ ԱԲԵՂՅԱՆԻՆ

1944 թ. մի օր Աճառյանը համալսարանից վերադարձին ասաց, որ լսել է, թե Աբեղյանը ծանր հիվանդ է: Յանկություն հայտնեց՝ միասին գնանք հիվանդատեսի, բայց ես ասացի, որ ավելի լավ կլինեք, եթե ինքը գնար, գուցե որպես վաղեմի ընկերոջ՝ ասելիք ունենար:

Հրաչյան գնաց մենակ և մի ժամից վերադարձավ հուզված: Հազիվ ներս մտած՝ ասաց.

– Է՛հ, սիրտս հանգստացավ:

Երբ հարցրի, թե ինչ է պատահել, նա սկսեց պատմել.

– Երբ մտա Աբեղյանի մոտ, տեսա նրա մոտ նստած Մոտնիկյանին և Կարո Մելիք-Օհանջանյանին: Աբեղյանը պառկել էր, խոսում էին: Ինձ որ տեսան, նրանք վեր կացան և ասացին. «Ահա ընկեր Աճառյանը եկավ, դուք խոսելու շատ բան կունենաք, իսկ մենք գնանք»: Ուղղվեցին դեպի դուռը: Ես ասացի, որ կարող էին մնալ, առանձնապես ոչինչ չունենք: Բայց նրանք գնացին:

Աբեղյանը բարի գալուստ մաղթելուց հետո ուղղակի դիմեց ինձ.

– Կարդացի՛ր հոդվածները. ինչ էին գրել և ինչ են ուզում մեզանից: (Այստեղ խոսքը վերաբերում է երիտասարդ լեզվաբանների հրապարակած հոդվածներին, որոնք ուղղված էին Աճառյանի և Աբեղյանի դեմ):

– Է՛, պարո՛ն Աբեղյան, նրանք այդ անում են՝ իրենց ասպարեզ բաց անելու համար, իսկ Դուք, Դուք ինչո՞ւ արեցիք:

– Ես ինչ եմ արել,- վրդովված ասաց Աբեղյանը:

– Դուք,- ասացի ես,- ինչո՞ւ եք գրել, որ հայոց ծագումը... հայտնի չէ: Ձեզ Գերմանիայում այդպե՛ս են սովորեցրել: Փառք ունեք, անուն, երեսի մարդ եք, ի՞նչն էր Ձեզ պակասում, ի՞նչ շահելու համար այդպես գրեցիք, Ձեզ ո՞վ ստիպեց:

Աբեղյանը ասաց. «Այլ կերպ չէր լինի. գիրքս չէին տպի, հասկանո՞ւմ եք»:

– Թող այդ գիրքն էլ չտպեին, որ իմ գրքերը չեն տպում, ես ի՞նչ էի անում:

– Դուք Աճառյան եք:

– Այո՛, ասենք թե Աճառյանն եմ, այդ բոլորը ես չընդունեցի, բայց լռեցի, համակերպվեցի, օրինակ, պարո՛ն Աբեղյան, ի՞նչ էր արել մեր գեղեցիկ և-ը, է-ն, ո-ն, որը միջազգային միակ տառն էր, ջնջեցիր, հանեցիր այբուբենից: Էջ-ին էջ պետք է ասենք, ու՛ր գրելու տեղ՝ օւ՛ր պետք է գրենք: Լավ ուրեմն, պարո՛ն Աբեղյան, ասենք՝ այդ բոլորը ես ընդունեցի, բայց վաղը ինչ պատասխան եք տալու Մուրբ Մեսրոպին, եթե նույնիսկ իմ ձեռքից ազատվես, նա պիտո՞ կբռնի Ձեր օձիքից՝ ասելով. «Իմ տառերն էլ չհավանեցիր», ասա՛՛ ինչ պատասխան ես տալու»:

Աբեղյանն ասաց. «Է՛հ, դեռ շատ բան ունես ասելու»:

– Ո՛չ, եկել եմ՝ սիրտս պարպելու, հանգստանալու: Դուք գրիչի մի հարվածով ջնջեցիք մեսրոպյան սրբատառ մեր այբուբենը: Խեղճ երեխաների մեծամասնությունը անգրագետ մնաց Ձեր պատճառով. ուղիղ գրել չգիտեն, հաճախ հարց-

նում են՝ ինչ ուղղագրությամբ գրեն՝ հի՞ն, թե՞ Աբեղյանի: Հապա ի՞նչ պիտի լինի հին ձեռագրերի, մագաղաթների վիճակը: Ե՛հ, ես չեմ հուսահատվում. կգա մի ժամանակ, որ մի ավելի մեծ ուժ կուղղի այս մեծ սխալը:

«Կեցիք բարով, առողջություն եմ ցանկանում: Այս բոլոր բողոքը միայն Ձեր դեմ չէ, այլ բոլորի, բոլորի դեմ», - ասելով դուրս է գալիս Աբեղյանի տանից:

Նրա գնալուց հետո ներս է մտնում պրոֆեսոր Սարգիս Մանուկյանի դուստրը՝ Ալիսը: Նա տեսնում է Աբեղյանին հուզված, վրդովված հարցնում է. «Ի՞նչ է պատահել Ձեզ, պրոֆեսոր, ի՞նչ ունեք, վա՞տ եք զգում, շտապ օգնություն կանչե՞մ»: «Ո՛չ, ո՛չ, Ալի՛ս, - պատասխանում է Աբեղյանը, - նա էր այստեղ, նա՛՝ Աճառյանը, այնպիսի բաներ ասաց, որ մի՞թե ասելու բան է, է՛լ Սուրբ Մեսրոպ մեջ բերեց, է՛լ ուղղագրություն...»:

Եվ այսպես, Աճառյանը մինչև վերջ էլ չկարողացավ ներել Աբեղյանին: Նա մնաց ինքն իր համոզմունքին, տեսակետին հավատարիմ մինչև իր կյանքի վերջը: Բնակարանի դռան վրա «Աճառեան» ազգանունը մնաց հին ուղղագրությամբ՝ *ե-ով*, որ մնում է մինչև այսօր:

## ՄՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՁԱՆԸ

1945 թ. Մոսկվայում տեղի ունեցան ՄՍՀՄ (նկատի ունի Ռուսաստանը) գիտությունների ակադեմիայի հիմնադրության 220-րդ տարեդարձի հոբելյանական հանդիսավոր տոնակատարությունները: Որպես հյուր՝ Երևանից հրավիրվել էր Աճառյանը, իսկ Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից ի պաշտոնե մասնակցելու էին ակադեմիկոսներ Արգար Հովհաննիսյանը, Վիկտոր Համբարձում-

յանը, Եղիազարյանը և ուրիշներ: Հորեյանական տոնակատարությունների բացումը պետք է կայանար հուլիսի 16-ին:

Նույն օրը Էջմիածնում տեղի էր ունենալու Ամենայն Հայոց նորընտիր կաթողիկոս Գևորգ Զ Չորեքյանի օծումը: Աճառյանը պաշտոնապես հրավիրված էր՝ ներկա լինելու կաթողիկոսական օծման հանդիսություններին:

Պետք է ասել, որ Աճառյանը գտնվում էր դժվարին դրության մեջ: Ճիշտ է, մեծ իրադարձություն էր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 220-ամյա հորեյանը, և բացառիկ պատիվ՝ այնտեղ որպես հյուր հրավիրված լինելը, բայց Աճառյանը ավելի կուզենար ներկա լինելու Էջմիածնի հանդեսին, որովհետև սերտորեն կապված էր Էջմիածնին, և հետո նորընտիր կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքյանը իր մոտիկ ու մտերիմ բարեկամն էր: Նրա հետ, երբ նա դեռ վարդապետ էր, միասին պաշտոնավարել էին Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցում 1913-1918 թվականներին, իսկ 1943 թ. Էջմիածնի կողմից Աճառյանը նշանակվել էր Չորեքյանի քարտուղար:

Սակայն իմանալով, որ Չորեքյանի օծմանը ներկա էին լինելու արտասահմանյան զանազան երկրներից բազմաթիվ պատվիրակներ, Աճառյանը՝ երկչոտ բնավորությամբ, նրանց հետ շփվելուց խուսափելու համար, երբ մտածում էր բացակայել քաղաքից և գնալ մի գյուղ, այդ միջոցին մեզ մոտ եկավ պրոֆեսոր Աբգար Հովհաննիսյանը և ասաց.

– Ընկե՛ր Աճառյան, պատրաստվեցե՛ք, բոլորս միասին գնալու ենք Մոսկվա: Խնդրում ենք, որ անպայման գաք: Միակ ցանկությունս է այս առթիվ Ձեզ ցույց տալ Մոսկվայում գտնվող լավ բժիշկների. նրանք հավանաբար կկարողանան բուժել Ձեր հիվանդությունը: Որպես հյուր՝ Հայաստանից միայն Ձեզ հրավիրելը մեծագույն պատիվ է և ստիպում է ընդունել հրավերը:

Աճառյանը համաձայնվեց՝ եզրակացնելով.

– Քանի որ ուզում եմ Երևանից բացակայել, ավելի լավ է գնալ Մոսկվա, քան թե գյուղ:

Հուլիսի 3-ին Երևանից Մոսկվա մեկնելիս ՄՍՀՄ գիտությունների ակադեմիայի հոբելյանական նստաշրջանին մասնակցողներս հատուկ վագոնով ուղևորվեցինք Թբիլիսի, որտեղից մեզ միացան Վրաստանից հրավիրվածները, որոնց թվում էր գտնվում ակադեմիկոս Շանիձեն, և մեկնեցինք մեծ խմբով: Մոսկվայում մեզ դիմավորեցին հանդիսավորապես և ուղեկցեցին մեզ հատկացված «Գրանդ օթել» հյուրանոցը: Մենք տեղավորվեցինք № 18 սենյակում՝ օժտված բոլոր հարմարություններով և շքեղորեն կահավորված: Մեզ հայտնեցին նաև համարը ավտոմեքենայի, որից մենք կարող էինք օգտվել Մոսկվայում մեր մնալու օրերին: Հուլիսի 16-ին՝ ցերեկվա ժամը 12-ին, տեղի ունցավ նստաշրջանի հանդիսավոր բացումը ակադեմիայի հին շենքում: Պատվիրակի բոլոր արտոնություններից օգտվելու իրավունք էր վերապահված ինձ՝ ամեն տեղ Աճառյանին ընկերակցելու համար: Ամեն ինչ սքանչելիորեն լավ էր կազմակերպված: Առաջին օրը հատկացված էր պատվիրակ հյուրերի փոխադարձ ծանոթացմանը: Դահլիճի դռան մի կողմը կանգնել էր ակադեմիկոս Լևոն Օրբելին, իսկ մյուս կողմը՝ ակադեմիկոս Մեսչանինովը: Այս երկուսը ժամանած հյուրերին ծանոթացնում էին միմյանց: Երբ մենք հասանք, ակադեմիկոս Օրբելին մոտեցավ, ջերմորեն սեղմեց Աճառյանի ձեռքը և ասաց հայերեն.

– Բարի՛ էք եկել, շատ ուրախ եմ Ձեզ տեսնելու, очаровательный Աճառյան: Ես լսեցի, որ Լենինգրադում Ձեզ չեն կոչում ակադեմիկոս Աճառյան, այլ ասում են очаровательный Աճառյան: Իհարկե, այդ տիտղոսը կանայք են սովել Ձեզ:

– Քառասուն տարի հայերեն չեմ խոսել,- շարունակեց Օրբելին,- հիմա Ձեր ահից խոսում եմ, բայց գիտեմ, որ շատ սխալներով եմ խոսում:

– Լա՛վ, հայոց լեզվի քննության չենք եկել, այդքանն էլ բավական է, որ խոսում եք,- ասաց Աճառյանը:

Ակադեմիկոս Մեսչանիսովը այդ բոլորը լսում էր և ծիծաղում. նա *մի քիչ* հայերեն հասկանում էր: Հետո նա ասաց.

– Ну как, Рачья Акопович, удовлетворительно или хорошо?<sup>3</sup>

– Գերազանց կնշանակեի, քառասուն տարի իր մայրենի լեզուն պահել է,- ասաց Աճառյանը՝ ակնարկելով Օրբելուն:

Ակադեմիկոս Օրբելին, երեսը դեպի դահլիճն ուղղած, Աճառյանին ռուսաց լեզվով ծանոթացրեց ողջ ժողովականներին.

– Из Армении приехал очаровательный Ачарян, то есть академик Ачарян<sup>4</sup>.

Հրաչյան ինձ ծանոթացրեց Օրբելու և Մեսչանիսովի հետ:

Դահլիճում մեծ հասարակություն էր հավաքվել: Արտասահմանյան զանազան երկրներից կային բազմաթիվ հյուրեր, բայց կանանց թիվը քիչ էր: Սրահում ներկայացված ցուցահանդեսը մեծ հետաքրքրությամբ էին նայում:

Արտասահմանյան հյուրերից մի քանիսը մոտեցան Աճառյանին և սկսեցին իրենց լեզուներով խոսել զանազան հարցերի շուրջ:

Հրաչյան շատ ուշադիր էր իմ հանդեպ: Խոսակիցներին ծանոթացնում էր ինձ հետ, թարգմանում նրանց ասածները:

Ծանոթացումներից, տեսակցություններից և խոսակցություններից հետո՝ ժամը 3-ին, հրավիրվեցինք ճաշի: Սեղանների վրա նշված էին հրավիրյալների տեղն ու համարը:

Ճաշի ավարտին մեզ հայտնեցին ճաշաժամերը և բացատրեցին նրանից օգտվելու ժամերը. առավոտյան ժամը

---

<sup>3</sup> Ուրեմն ինչպե՞ս, Հրաչյա Հակոբի, բավարա՞ր, թե՞ լավ:

<sup>4</sup> Հայաստանից եկավ պատվական Աճառյանը, այսինքն՝ ակադեմիկոս Աճառյանը:

8-9 տրվում էր թեյը, ժամը 11-1՝ նախաճաշը, երեկոյան ժամը 5-7՝ ճաշը, իսկ 8-11՝ ընթրիք: Ով չէր կարող ճաշարան գալ, կարող էր իր բաժինը ստանալ և տանել:

Ժամը 10-ին սկսվող նիստը վերջանում էր 3-ին, որից հետո սովորաբար մեզ տանում էին զբոսանքի դեպի Մոսկվայի տեսարժան վայրերը, ինչպես, օրինակ, Յասնայա Պոլյանա և այլ վայրեր: Ամեն օր մեզ տալիս էին նաև թատրոնի և կինոյի 2 տոմս, սակայն Հրաչյան վատ տեսողության պատճառով չէր ցանկանում թատրոն կամ կինո դիտել: Ես երբեմն հարմար ընկեր էի գտնում՝ տոմսերն օգտագործելու համար, կամ էլ տալիս էի ուրիշին:

Շատ հաճախ երեկոները մեզ մոտ էին հավաքվում Վ. Համբարձումյանը իր կնոջ հետ, Աբգար Հովհաննիսյանը, Հ. Բունիաթյանը, Հակոբ Խաչատրյանը իր կնոջ՝ Մարիետա Շահինյանի հետ, Ս. Բարխուդարյանը (ռուսաց լեզվի քերականության հեղինակ), բժիշկ ակադեմիկոս Էզրաս Հասրաթյանը և շատ ու շատ ուրիշներ: Թեյի սեղանի շուրջ ծավալվում էին անչափ պարզ ու հետաքրքիր, բովանդակալից զրույցներ: Ներկաները շատ էին սիրում Հրաչյային, նրան միշտ շրջապատում էին հոգատարությամբ, որպիսին կարող էր լինել աշակերտների և ուսուցիչների միջև: Ներկա եղողները հիշատակ թողեցին աղջկաս ալբոմում: Սովորական մի այսպիսի երեկոյի ժամանակ բոլորը միասին, հատկապես Աբգար Հովհաննիսյանը, խնդրեցին, որ Աճառյանը ելույթ ունենա: Հրաչյան ընդառաջեց նրանց միայն այն պայմանով, որ ինքը կգրի ու կկարդա ֆրանսերեն, քանի որ նրան դժվար կլինեք ռուսերեն թարգմանել: Ա. Հովհաննիսյանը սիրով հանձն առավ ֆրանսերենից թարգմանել ռուսերեն, միայն թե Աճառյանը ելույթ ունենա: Այդպես էլ եղավ: Աճառյանը գեկուցում կարդաց նախ ֆրանսերեն, ապա ռուսերեն (խաչերկաթի մասին), որը շատ մեծ ընդունելություն գտավ:



Հաջորդ օրը՝ երեկոյան, մեր հյուրանոց եկավ Հակոբ Խաչատրյանի ուղեկցությամբ Կրեմլի բժիշկ Խաչատուրյանցը: Ծանոթությունից պարզվեց, որ բժիշկը դարաբաղցի է, իսկ Հրաչյան հասուկ վերաբերմունք ուներ դեպի դարաբաղցիները (չէ՞ որ Արուսյակը շուշեցի էր): Այդ օրվանից նրանք դարձան մտերիմներ, և բժիշկը սկսեց հաճախ այցելել Աճառյանին:

Մոսկվայում եղած ժամանակ մեզ այցելում էր նաև մի գորացրված զինվորական, որը խնդրում էր Աճառյանից միջնորդություն Վ. Համբարձումյանին, որից վերցրեց մի հանձնարարագիր՝ հայկական ակադեմիայում աշխատելու համար: Հետագայում իմացանք, որ այդ զինվորականը Բաբկեն Առաքելյանն էր:

Նստաշրջանի հավաքույթները սկսվում էին առավոտյան ժամը 10-ին: Մի շարք ելույթներից հետո զեկուցման համար խոսքը տրվեց Աճառյանին: Աճառյանը համեստորեն խնդրեց իրեն թույլ տալ խոսել նստած տեղից, որովհետև, ինչպես պատճառաբանում էր նա, բեմից խոսելիս շատ էր հուզվում: Նրա խնդրանքը բավարարվեց:

Աճառյանն իր զեկուցումը տալիս էր ֆրանսերեն: Նրա նյութն էր «Ռուսերեն և հայերեն լեզուների կապը»: Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամության հիմքում նա զըտնում էր նաև լեզվաբանական խորը կապեր և փաստացի օրինակներով հիմնավորում էր տեսակետը: Այսպես, նա համեմատության մեջ էր դնում ռուսերեն և հայերեն **խաչերկաթ**, հունարեն **խաչ** բառերը: Նա զեկուցումը սկսելու էր հունարեն **խաչ** (ստավրոս) բառից, բայց այդ բառին դժվարացավ հիշել հունարեն բառը և դիմեց շատ հնարամիտ միջոցի: Նա դիմեց ներկաներին, որոնց կեսը համարյա օտարներ էին, հարցրեց նրանցից **խաչ** բառի հունարենը և դրա վրա հիմնվելով՝ շարունակեց իր զեկուցումը: Նա խոսում էր ռուսերեն, իսկ երբեմն դիմում նաև ֆրանսերեն բացատրություններին:

Աճառյանը վերջացրեց իր զեկուցումը բուռն ծափահարությունների որոտի ներքո: Ապա ամեն կողմից հարցեր էին տալիս, և Աճառյանը պատասխանում էր բոլորին: Բայց որովհետև հարցերի տարափը վերջ չունեք, պրեզիդենտ Կոմարովը ստիպեց սահմանափակել հարցերը և վերջացնել:

Պրեզիդենտ Կոմարովը, որը ոտքերի ցավի պատճառով դժվար էր քայլում, ընդառաջ եկավ Աճառյանին, որն իր հերթին լավ չէր տեսնում: Թևանցուկ արած՝ ես առաջնորդում էի Հրաչյային դեպի Կոմարովը: Վերջինս ամբիոնի աստիճանների վրա ձեռքի ջերմ սեղմումով և նույնքան ջերմ խոսքերով շնորհավորեց Աճառյանին՝ ասելով.

– Ձեր զեկուցումը սքանչելի էր ու փայլուն, շարունակեց նա, ինչպես լսել եմ, Դուք ամեն լեզվով գիրք եք գրել, բայց ինչպես է, որ ռուսերեն լեզվով ոչ մի գիրք չէք հրատարակել, որ ավելի լավ ճանաչեինք Ձեզ:

Հրաչյան պատասխանեց.

– Ես ծեր եմ, ուշ եմ եկել Ռուսաստան, և ժամանակս չէր ներում նոր ձեռնարկումների համար: Առանց այն էլ այնքան նյութեր ունեմ ձեռքիս տակ կուտակված, որ վախենում եմ՝ նույնիսկ դրանք չհասցնեմ իրենց վախճանին: Մակայն իմ բոլոր գրքերը կարող եմ նվիրել Ակադեմիայի նախագահության 220-ամյակի առթիվ:

Կոմարովն առաջարկեց Աճառյանին, որ գոնե մի գիրք թարգմանվի ռուսերեն: Հրաչյան ասաց, որ ինքը ծեր է, տեսողությունը՝ շատ տկար, կարող է միայն գործը կազմակերպել, ուղղություն տալ և վերահսկել: Նա ավելացրեց նաև, որ այդպիսի աշխատանք կարող է կատարել Կուսիկյանը, որը լավ տիրապետում է ռուսաց լեզվին և միաժամանակ լավ հայագետ է:

Ժամը 1-ին հայտարարեցին, որ կից դահլիճում հյուրերի համար նախաճաշ է կազմակերպված:

Ապա մենք անցանք կից դահլիճ՝ նախաճաշի, ուր պատրաստված էին ճոխ սեղաններ:

Դահլիճից հազիվ ներս մտած՝ ազգանունն ինձ անծանոթ մի անձնավորություն, որը, թվում էր, թե ակադեմիայի պատասխանատու աշխատողներից էր, Հրաչյային թևանցուկ արած՝ մտերմիկ ասաց.

– Երևի Դուք մեզանից նեղացել եք, ընկ. Աճառյան, որովհետև նոր ակադեմիկոսների ընտրության ժամանակ Ձեր թեկնածությունը չընտրվեց: Մակայն պատճառը մենք չէինք: Ես շատ էի հեռու կանգնած Ձեր մասնագիտությունից, բայց կային մարդիկ, որոնք Ձեր աշխատությունների ցուցակը ներկայացրին և ասացին, որ միմիայն ձեր «Արմատական բառարանի» համար արժեր Ձեզ ակադեմիկոսի կոչում տալ: Այդ մարդիկ գտնում էին, որ բառերի ստուգաբանության ժամանակ բոլոր վիճելի հարցերը վճռում ու հարթում է Ձեր բառարանը: Այս տեսակետի պաշտպաններից էր ակադեմիկոս Մեսչանինովը: Ձեր ընտրությունը համարյա թե վճռված էր, իսկ երբ քվեարկեցինք, չստացվեց, երևի մեկը խանգարեց:

– Ոչինչ,-ասաց Աճառյանը,- շնորհակալ եմ: Ես արդեն Չեխոսլովակիայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների անդամ եմ:

Անծանոթը ցտեսություն ասաց և հեռացավ մեզանից:

Արգար Հովհաննիսյանը, ժպիտը դեմքին ընդառաջ գալով Հրաչյային, ուրախ ձեռքը սեղմեց՝ ասելով.

– Տեսա՞ք, պրոֆեսո՛ր, ինչ լավ եղավ Ձեր գալը: Ես շատ ուրախ եմ, Ձեր զեկուցումը շատ լավ էր, պարզ և միաժամանակ գիտական:

Հետո մեզ շրջապատեցին արտասահմանից եկած հյուրերը և սկսեցին զանազան հարցեր տալ: Աճառյանը նրանցից մի քանիսի հետ խոսակցելուց հետո դարձավ ինձ և, ըստ իր սովորության, ասաց.

– Մոֆի՛կ, ազատի՛ր ինձ այստեղից: Մի բաժակ թեյ մի-  
այն ուզում եմ խմել և ապա գնալ:

Հասկանալի էր, որ օտարների հետ շփվելու վախը նո-  
րից բռնել էր նրան: Շրջապատողներին հասկացրի, որ Աճառ-  
յանը վատ է զգում, նրանք թողեցին, հեռացան: Մենք մի բա-  
ժակ թեյ խմեցինք և գնացինք տուն:

Մի օր էլ Վիկտոր Համբարձումյանը հայտնեց, որ նրս-  
տաշրջանին մասնակցող պատվիրակները տեսակցություն  
են խնդրել Ստալինից և հարցրեց Հրաչյային, թե չէր ցանկա-  
նա՝ նրա անունն էլ մտցնեն ցանկացողների ցուցակում:

– Ես չեմ կարող գնալ, որովհետև շատ կհուզվեմ՝ այդ-  
քան մեծ մարդու տեսնելով:

Ես իզուր թախանձեցի, որ Հրաչյան համաձայնվեք,  
բայց նա անդրդվելի մնաց:

Մոսկվայի նստաշրջանն ավարտելուց հետո բո-  
լոր մասնակիցներին գնացքի հատուկ երեք վագոններով  
տարան Լենինգրադ և տեղավորեցին «Օկտյաբրսկի» հյուրա-  
նոցում: Նորից կրկնվեցին Մոսկվայում կատարվածի նման  
ընդունելություններ և հյուրասիրություններ: Նիստերն այս-  
տեղ ևս շարունակվեցին՝ սկսվելով ժամը 10-ին և վերջանա-  
լով ժամը 3-ին, որից հետո ճաշում և ապա մեկնում էինք՝  
դիտելու քաղաքի տեսարժան վայրերը: Եղանք Դետսկոյե սե-  
լոյում (մանկական գյուղում), Պետերգոֆում և այլ վայրերում:  
Մեզ ուղեկցում էր մարշալ Գովորովը: Նա մեզ բացատրում և  
ցույց էր տալիս նացիստ գերմանացիների՝ Լենինգրադի պա-  
շարման ժամանակ կառուցած ստորերկրյա ռազմական ամ-  
րություններն ու այլ կառույցները: Պետերգոֆի հանդիպակաց  
ափին դեպի Եվրոպա նայող նեղ դուռ կար. երեք տախտակյա  
աստիճաններից ցած իջնելով՝ տախտակամած հատակով մի  
սրահ էր, որի կողքին ձգվում էին երկար նառեր: Այնտեղ  
կային ընդարձակ, 60-70 մետր երկարությամբ սրահներ,  
կենտրոնում՝ փուռով վառարան, որի ծխատար խողովակն

անցնում էր գետնի տակով և գնում շատ հեռու, որպեսզի չնկատվի: Վառարանի վրա կային խոհանոցի ամեն տեսակ ամաններ: Մարշալ Գովորովն ասաց.

– Տես՛ք, սրանց խրամատները և համեմատեցե՛ք մեր խրամատների հետ: Ինչպիսի՛ հարմարություններ են ստեղծել զինվորների համար, որպեսզի նրանք ոչ մի նեղություն չկրեն, հանգստի ժամանակ կարգին հանգստանան. Նրանք ուր էլ գնային, խոհանոցն իրենց հետ էին ման ածում:

Եվ այսպես, նեղ ու երկար սրահներն իրար էին հաջորդում՝ երկու մետր լայնությամբ, խճով լցված պատերով, նեղ ու փոքր պատուհաններով: Գովորովը, ցույց տալով ու բացատրելով այս բոլորը, ասում էր, թե մեր անձնագոհ զինվորները ի՛նչ սարսափելի պայմաններում էին կովում վտանգավոր, լավ զինված և լավ կազմակերպված թշնամու դեմ: Երբ դուրս եկանք, Գովորովը ցույց տվեց ստորերկրյա ամրությունների արտաքին կողմը: Խճով լցված պատերի վրա դրված էին հաստ գերաններ, ապա՝ կես սանտիմետր հաստությամբ թիթեղյա թերթեր, նորից գերաններ ու հետո՝ մի մետր հաստությամբ խիճ: Այդ բոլորը զարմանալի էր և ապշեցուցիչ:

Երեկոյան ժամը 7-ին վերադարձանք հյուրանոց:

Լենինգրադում ևս ես ստիպված էի թատրոն և կինո գնալ առանց Հրաչյայի ընկերակցության:

Նիստերից վերադարձին Հրաչյան սովորաբար աշխատում էր, իսկ ես մենակ գնում էի ամեն տեղ: Մի օր էլ Հրաչյայի թույլտվությամբ դուրս եկա՝ քաղաքում ման գալու: Հարցուփորձ անելով 12-րդ տրամվայով գնացի քաղաքային նավահանգիստ՝ մակույկով Նևայի վրա զբոսնելու համար: Գետի վրա շատ զով էր, նույնիսկ մի քիչ ցուրտ: Դբսում դեռ ցերեկային լույս էր, բայց երբ ժամը հարցրի, իմացա, որ զիշերվա 2-ն է: Նախ՝ զարմացա, հետո՝ իմացա, որ Լենինգրադի սպիտակ զիշերներն էին: Ես շատ վախեցա՝ մտածելով, որ հիմա Հրաչյան միլիցիային հայտնած կլինի՝ իրեն

որոնելու համար: Վերջապես հասա հյուրանոց: Բարեբախտաբար Հրաչյան քնել էր: Ես նրան արթնացրի, որ հիանա սպիտակ գիշերվա սքանչելի տեսարանով: Նա ասաց, թե այդպիսի գիշերներ շատ է անցկացրել Լենինգրադում Ալեքսանդր Մյասնիկյանի հետ: Երբ իմացավ, որ ժամը 2-ն անց է արդեն, զարմացած ասաց.

– Լավ է, որ քնած եմ եղել, այլապես, քեզ փնտրելով, կարող էի խելագարվել:

Նստաշրջանը Լենինգրադում էլ վերջացավ, և մենք նույն հատուկ գնացքով վերադարձանք Մոսկվա: Ճանապարհին հենց որ գնացքը կանգ էր առնում կայարաններում, մեզ դիմավորում էին ծաղիկներով:

Մոսկվայում կայացած եզրափակիչ նիստից հետո բոլոր պատվիրակները մեկնեցին իրենց տեղերը: Մենք Մոսկվայում մի ամիս ևս մնացինք մեր հաշվին:

Հիշում եմ՝ այս մեկ ամսվա ընթացքում Բալաշով ազգանունով մի մարդ եկավ Հրաչյայի մոտ, հայտնեց, թե ինքը գործուղված է լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կողմից Աճառյանի օգնությամբ արևելյան հին հնդեվրոպական լեզուների բարձրագույն ուսումնական հաստատությունների համար ծրագիր կազմելու առաջադրանքով:

Բալաշովը շատ նման էր նկարներում պատկերված Քրիստոսին: Երբ ես այս միտքը հայտնեցի Աճառյանին, նա անմիջապես ասաց Բալաշովին: Վերջինս մեղմորեն ժպտաց և ասաց, որ ինքը Քրիստոս լինել չի կարող: Մակայն կարծեք նրա բնավորությունն էլ հարմարվել էր իր արտաքինին, այնքան բարի, հեզ էր:

Բալաշովը Աճառյանի հետ համարյա մեկ շաբաթ աշխատեց առաջադրված ծրագրի վրա: Աճառյանը գոհունակությամբ կրկնում էր, թե մեծ պատիվ էր իրեն Մոսկվայում բուհերի համար այս ծրագրի կազմմանը մասնակցելը: Մոսկ-

վայից վերադառնալու ճանապարհին բավականին դժվարություն կրեցինք:

Վագոնները չունեին բուֆետ, որպեսզի հնարավոր լիներ՝ մեկ բաժակ տաք թեյ տայի Հրաչյային: Գանգատվեցի վագոնավարին: Նա ասաց, որ ածուխ, փայտ չունեն թեյի համար: Աճառյանը զայրացած ասաց. «Թող ճարեն, դժվար բան չէ»: Այդ մտքով Խարկովի կայարանում ես իջա՝ մի բան ճարելու հույսով, բայց անօգուտ: Կայարանում ոչինչ չկար, բայց նկատեցի, որ փայտի ու տաշեղի առատ կտորներ կան թափած: Գլխումս մի միտք ծագեց, որ տաշեղները, փայտերը հավաքեմ և թեյ պատրաստեմ: Այդ միտքս հայտնեցի վագոնավարին: Նա հեզնանքով ասաց. «Այդ էր պակաս»: Իմանալով, որ գնացքը կանգնելու է կես ժամ, անցա գործի, սկսեցի վառելիք հավաքել: Ուղևորներից ոմանք, հասկանալով իմ միտքը, վրաս ծիծաղեցին, իսկ մի զինվորական գնդապետ գտավ, որ լավ եմ մտածել, և ինձ հետ սկսեց փայտ հավաքել: Շուտով շատերը միացան մեզ, բավականաչափ փայտի կտորներ ու տաշեղներ հավաքելով՝ հանձնեցինք վագոնավարին: Այսպիսով, մինչև Երևան օրական երեք անգամ թեյ խմեցինք: Աճառյանը շատ գոհ ասաց.

– Աֆերի՛մ, Սոֆի՛կ, որտեղից էլ կմտածես այսպիսի բան:

Ուղևորներն էլ գոհ մնացին, որովհետև ցուրտ վագոնում մի քիչ տաքանալու միակ միջոցն էր տաք թեյը:

Ռուս զինվորականը մոտեցավ Աճառյանին, գովեց և ասաց.

– Այսպիսի կնոջ հետ մինչև աշխարհի վերջը կարելի է գնալ:

## ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

1947 թ. Աճառյանի հետ միասին մեկնեցինք Լենինգրադ: Աճառյանն աշխատում էր իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» գրքի վրա: Այս աշխատության համար անհրաժեշտ էին բազմաթիվ աղբյուրներ: Նա հուսով էր, որ միայն Լենինգրադի գրադարաններն էին, որ հնարավոր չափով կկարողանային իրեն բավարարել:

Մեկնելուց առաջ մենք մոռացանք հեռագրել որևէ հյուրանոցի, որպեսզի մեզ սենյակով ապահովեն: Այս անփութությունը մեզ մատնեց լուրջ դժվարության: Հասնելով Լենինգրադ՝ մենք իզուր ավտոմեքենայով հյուրանոցից հյուրանոց ման եկանք՝ չկարողանալով ազատ տեղ ճարել: Աճառյանը հիշեց, որ ժամանակին՝ Ալեքսանդր Սյասնիկյանի հետ Լենինգրադում եղած ժամանակ, ապրել էին մի տան մեջ: Մեր որոնումները այդ տունը գտնելու համար անցան իզուր, որովհետև Լենինգրադը այնքան էր փոխվել և վերակառուցվել, որ անհնար էր հին վայրերը գտնել:

Ճարահատ՝ Աճառյանը զանգահարեց Էրմիտաժի տնօրեն ակադեմիկոս Հովսեփ Օրբելուն՝ պարզելով մեր անելանելի դրությունը և խնդրելով նրա օգնությունը: Օրբելին անմիջապես ավտոմեքենա ուղարկեց և մեզ տարավ Էրմիտաժ: Նա ինքը ևս մինչև մեր հասնելը իզուր զանգահարել էր բոլոր հյուրանոցները և չէր կարողացել տեղ գտնել: Պարզելով մեզ իր որոնումների ապարդյուն լինելը՝ Օրբելին ասաց, որ կմնանք Էրմիտաժում՝ որպես իր հյուրերը, մինչև որ հնարավոր լիներ մեզ համար տեղ ճարել: Ստիպված ընդունեցինք թանգարանային հյուրասիրությունը. չորս հոգով տեղավորվեցինք Օրբելու ընդունարանի նախասենյակում, որտեղ, բարեբախտաբար, բավականին բազմոցներ կային՝ քնելու համար: Օրբելին կարգադրեց նաև, որ բուֆետից մեզ նախա-



ճաշ բերեն, ասաց, որ ճանապարհից ենք եկել, քաղցած կլինենք: Աճառյանը, հյուրընկալության համար շնորհակալություն հայտնելով, շատ խնդրեց, որ մեզ համար ավելի նեղություն չկրեն, բայց անօգուտ: Օրբելին ինքն էլ նստեց՝ մեզ հետ նախաճաշելու: Մեղանի վրա ավելացրի նաև հայկական լավաշը, պանիրն ու կանաչին, ինչպես նաև թխվածքը: Օրբելին նկատեց, ժպտաց և ասաց. «Հայի սովորություն՝ լավաշ հաց, պանիր և կանաչի»:

Մեղանի առաջ Աճառյանը և Օրբելին երկար խոսեցին նաև իրենց գործերի մասին: Աճառյանը հայտնեց, որ եկել էր՝ իր քերականության համար օգտվելու Լենինգրադի գրադարաններից, բայց երկյուղ ուներ, որ ուզածը չկարենար ճարել: Օրբելին վստահեցրեց, որ ինքը և ակադեմիկոս Ստրուվեն հնարավոր բոլոր միջոցները կտրամադրեն՝ բավարարելու համար Աճառյանի պահանջները:

Օրը շաբաթ էր: Օրբելին հայտնեց, որ գնալու էր ամառանոց. շատ էր կարոտել իր որդուն: Ասաց, որ անհոգ լինենք, ինքը կգա երկուշաբթի: Նա մեզ ծանոթացրեց մի ռուս կնոջ հետ, որին հանձնարարեց ուշադիր լինել մեր հանդեպ և կատարել մեր խնդրանքները:

Երկուշաբթի օրը եկավ Օրբելին: Նա հայտնեց, որ ամառանոցից ինքը զանգահարել է և «Աստորիա» հյուրանոցում կարողացել է մեզ համար ճարել մի սենյակ, որը թեն այնքան հարմար չէ ակադեմիկոսի համար, բայց խոստացել են փոխանակել շուտով ուրիշ՝ ավելի հարմարավետ սենյակի հետ: Օրբելին իր ավտոմեքենայով մեզ ճանապարհեց հյուրանոց: Աճառյանը սրտազին շնորհակալություն հայտնեց՝ նրա բերեկամական և մարդասիրական վերաբերմունքի համար:

Աճառյանը սկսեց աշխատել. մտավ իր տարերքի մեջ: Ես նրան կարողանում էի օգնել գրքերը գրադարանից տանել-բերելու հարցում միայն: Նա այս գործը ինձնից բացի ոչ ոքի չէր վստահում: Աճառյանի՝ Մոսկվայում աշխատած ժա-

մանակ ևս այդ գործը ես էի կատարում. փորձ ունեի: Այսպես, ամեն առավոտ Աճառյանի կազմած ցուցակով ես գնում էի «Վոստոկովեդենիե»-ի գրադարանը, հանձնում ցուցակը, ստանում գրքերը և բերում Աճառյանին՝ հաջորդ առավոտ դրանք վերադարձնելու և նորերը ստանալու համար:

\*  
\* \* \*

Մենք արդեն Լենինգրադի «Աստորյա» հյուրանոցից տեղափոխվել էինք «Անգլետեր» հյուրանոցի N 5 սենյակ: Զարմանալի էր, որ տուրիստները ամեն օր անհանգստացնում էին մեզ՝ ցանականալով ներս գալ և տեսնել մեր սենյակը: Գաղտնիքը պարզվեց, երբ իմացանք, որ ռուս նշանավոր բանաստեղծ, գրող Մերգեյ Եսենինը ապրել է այս նույն սենյակում և անձնասպան եղել այստեղ:

Ես էլ սկսեցի հետաքրքրվել:

Հյուրանոցի տարեց դռնապանուհին, որ գտնվել էր այնտեղ Եսենինի մահվան ժամանակ, պատմեց այդ վախճանի մանրամասնությունները:

– Եսենինը շատ սքանչելի մարդ էր, – ափսոսանքով պատմում էր դռնապանուհին: – Նա ապրում էր հյուրանոցի այս նույն սենյակում, որը կրում է 5 համարը: Իր կյանքի վերջին շրջանում ինչ-ինչ պատճառներով Եսենինը սկսեց խմել և հետզհետե դարձավ մոլի արբեցող: Նա հաճախ իր մոտ էր կանչում իմ ամուսնուն, գինի բերել տալիս, և միասին նստած սենյակում՝ ժամերով խմում էին ու հարբում: Վերջին անգամ նա իր կոստյումը տվել էր ամուսնուն՝ պատվիրելով այն վաճառել և գինի գնել: Այդ օրը ես երկար սպասեցի ամուսնուս, բայց նա չկար ու չկար: Անօգուտ էր նրան ուրիշ տեղ փնտրել. գնացի № 5 սենյակը: Դուռը երկար բախեցի, մինչև որ ամուսինս դժվարությամբ բացեց այն: Երկուսն էլ սարսափելի հարբած վիճակում էին և դեռ շարունակում էին խմել: Բար-

կությունից արյունս գլուխս խփեց, ձեռքիս ավելով հարվածեցի ամուսնուս՝ հանդիմանելով նրան, որ գիշեր-ցերեկ տուն չի գալիս: Եսենինը ուզում էր պաշտպանել ամուսնուս, երբ մի հարված էլ նրան հասավ: Ամուսնուս ձեռքից քարշ տալով՝ ես նրան հասցրի տուն: Առավոտյան երբ վեր կացանք, իմացանք, որ Եսենինը, սենյակի դուռը հետևից փակելով, իր կաշվե գոտով կախվել էր գազի խողովակից:

Ամբողջ այս պատմության ընթացքում Հրաչյան կողմնակի լսում էր: Երբ դոնապանուհին վերջացրեց իր պատմությունը, Աճառյանն ասաց.

– Շատ թուլամորթ մեկն է եղել Եսենինը. չի կարողացել տանել կյանքի պայքարը և ընտրել է կյանքին վերջ տալու ամենահեշտ միջոցը:

Ես հիշեցի մտքումս, որ Աճառյանը ևս ձերբակալության գիշերը մի պահ թուլություն էր ունեցել՝ փորձելով դիմել կյանքին վերջ տալու այդ ամենահեշտ միջոցին, բայց չուզեցի նրան հուզել, ոչինչ չասացի, և հետո մտածեցի՝ Աճառյանին հուսահատվելու պատճառներ կային:

## ՆՈՎԻ ԱՅՈՆԻՑ ԴԵՊԻ ՍՈՒԽՈՒՄԻ

Աճառյանը սիրում էր ծովը, կարծես մի տեսակ հիացմունք ուներ ծովի հանդեպ: Եվ դա բնական էր. չէ՞ որ նա ծնվել էր Պոլսում: Իր մանկությունը մինչև 16 տարեկան նա անցկացրել է գեղածիծաղ Մարմարայի ու Բոսֆորի ափերին: Ծովը կարծես նրան քաշում էր մագնիսի նման: Նա ասում էր, որ ծովի այս կարոտը անհասկանալի է և անըմբռնելի նրանց համար, ովքեր չեն զգացել նրա գեղեցկությունը ու գուրգուրանքը:

Ծովի կարոտը բացատրելու համար Աճառյանը հիշում էր մի գեղեցիկ պատմություն: Նա նկարագրում էր հունական

բանակի պարտությունը և նահանջը: Հույները, պարտված պարսիկներից, մոլորված նահանջում էին՝ չիմանալով նույնիսկ, թե որտեղ էին գտնվում: Հույն զինվորները, վաղուց կտրված իրենց հարազատ ավերից և ծովից, զգում էին ծովի բուռն կարոտը: Եվ երբ երկար թափառումներից հետո նրանք հեռվում նշմարում են ծովը, «Թալասսա, Թալասսա» (ծո՛վ, ծո՛վ) ասելով՝ նրանք վազում են դեպի ծովը:

Եվ Աճառյանը միշտ հիշում էր իր «թալասսա»-ն՝ Միջերկրական ծովը: Նա ծովի և Պոլսի կարոտը առնելու համար Արուսյակի հետ եղել էր Պոլսում:

Իսկ այժմ իմ ընկերակցությամբ ամեն անգամ, երբ առիթը ներկայանում էր (ավելի շուտ մենք էին ստեղծում այդ առիթը), Միջերկրականի կարոտը առնում էր Սև ծովից, որի ավերն էլ ունեին գեղածիծաղ, գողտրիկ անկյուններ:

Այսպես ահա 1948 թ. ամառն էլ մենք նորից գնացինք ծովափ՝ Նովի Աֆոն: Մեզ հետ էր քրոջս ամբողջ ընտանիքը՝ քույրս՝ Միրուշը, իր դուստրերի՝ Լյոլյայի և Ամալյայի ու թոռնիկի՝ Անահիտի և եղբորորդուս՝ Վիլերի հետ: Նովի Աֆոնում մենք ապրեցինք հյուրանոցի 2 սենյակում մեկ ամիս տևողությամբ: Հեշտ չէր իմ գործը. այսքան բազմությանը պետք էր կերակրել: Գրեթե միշտ ես մնում էի տանը, նրանք շուկայից գնումներ էին կատարում, իսկ ես պատրաստում էի ճաշերը: Բոլորը գնում էին ման գալու, վերադառնում էին միայն այն ժամանակ, երբ գայլի նման սոված էին:

Աճառյանն անչափ կատակասեր էր. գիտեր ոչնչից կատակի նյութ ստեղծել, զվարճախոսել: Մի անգամ՝ շուկայից վերադարձին, նոճիների պուրակում տեսա Աճառյանին տաք-տաք վիճելիս մի ռուս կնոջ հետ՝ քրոջս ներկայությամբ: Ինձ որ նկատեցին, Հրաչյան ասաց.

–Ահա, հիմա այս տիկինը կհաստատի, որ Միրանուշը իմ մայրն է,- ու դառնալով դեպի ինձ՝ հարցրեց.- ճիշտ չէ՞, որ սա իմ մայրն է:

Սիրանուշը, լռիկ կանգնած, լսում էր նրանց վեճը: Պարզվեց, որ Աճառյանն այդ կնոջն ասել էր, որ Սիրանուշն իր մայրն է, իսկ կինը չհավատալով պնդում էր, թե այդ անկարելի է, միգուցե քույրն է կամ աղջիկը: Աճառյանը կրկնում էր, թե արդյոք ինքն այնքան ծեր էր, որ ունենար այդքան մեծ աղջիկ: Վերջում կինն ասաց.

– Ես չեմ հասկանում: Հավանական է՝ Դուք կատակում եք:

Հասավ վերջապես ծովին հրաժեշտ տալու, Երևան վերադառնալու ժամանակը: Դուրս եկանք ճանապարհ՝ տեսնելու համար, թե ինչ փոխադրամիջոցով կարող ենք գնալ մինչև Սուխումի՝ գնացքի տուն ապահովելու համար: Շատ ավտոմեքենաներ անցան առանց կանգ առնելու: Վերջապես մի «Մոսկվիչ», որ նորությունից պսպղում էր, կանգնեց: Ավտոմեքենայի միջից մի մարդ ասաց, որ միայն երկու անձ կարող է վերցնել մինչև Սուխումի՝ առանց իրերի: Քույրս առաջարկեց, որ Աճառյանն ու ես գնանք և մինչև իրենց գալը հյուրանոցում տեղ ապահովենք: Ճանապարհին խոսակցության ընթացքում պարզվեց, որ ավտոմեքենայի տերը Սուխումիի հայկական դպրոցի հայոց լեզվի ուսուցիչն է: Նա գնացել էր Մոսկվա, իր տարիների իննալուծությամբ գնել «Մոսկվիչ»-ը՝ 1000 ռուբլով, վարձել էր վարորդ՝ ավտոմեքենան տեղ հասցնելու համար, իսկ մենք եղել էինք առաջին ուղևորները: Երբ Աճառյանը հարցրեց նրան Ջիդարյանի մասին, վարորդն ասաց, որ նույն դպրոցում նա ավագ ուսուցիչ է, ավարտել է Երևանի պետական համալսարանը և շատ մոտիկ ու սիրված ուսանողներից է եղել պրոֆեսոր Աճառյանի: Աճառյանի անունը հիշելիս նա հայտնեց, որ մեծ ցանկություն ունի պրոֆեսորին տեսնելու. Ջիդարյանի պատմածները առաջացրել էին իր հետաքրքրությունը, բայց այդ հանդիպումն իրեն չի հաջողվում, որովհետև ամառը պրոֆեսորը գնում է օդափոխության, ձմեռը՝ դասախոսում, իսկ ինքը կապված է

դպրոցին, չի կարող բացակայել: Վերջում նա ասաց, որ որոշել է մի անգամ հատկապես գնալ Երևան՝ Աճառյանին տեսնելու: Աճառյանն իմ թևը սեղմում էր՝ հասկացնելու համար, որ չմատնեն իրեն: Նա ասաց.

– Ի՞նչ պետք է անեք տեսնելով. նա էլ մարդ է էլի, գուցե ձեր լսածը նրա մասին ավելի լավ լինի, քան անձամբ տեսնելը:

Վերջում Աճառյանը հետաքրքրվեց, թե արդյոք Սուխումիի հյուրանոցում հնարավոր կլինի տեղ ճարել: Ուսուցիչն ասաց, որ կփորձեն, իսկ եթե չհաջողվի, մի օրով ինքը կարող է մեզ հյուրասիրել իր տանը:

Հետո նա իր հերթին հետաքրքրվեց Աճառյանով: Հրաչյան առանց անունն ու ազգանունը հայտնելու ասաց, թե լավ կոշկակար է, իսկ տեսողության տկարության պատճառով ներկայումս թողել է արհեստը և ապրում է զավակների խնամքի ներքո: Ուսուցիչը չկարողացավ զսպել իր զարմանքը և ասաց, որ նա երբեք կոշկակարի նման չէ և ավելի շուտ գիտնական մարդու տպավորություն է թողնում իր վրա, քան թե արհեստավորի: Երբ հասանք Սուխումի, նա խնդրեց Աճառյանի անձնագիրը, որպեսզի փորձեր հյուրանոցում մեզ տեղավորել:

Երբ անձնագիրը ձեռքին՝ նա մոտենում է հյուրերին գրանցող աղջկան, վերջինս, բաց անելով անձնագիրը, ասում է, թե ակադեմիկոսը բախտավոր և երջանիկ մարդ է թվում, որովհետև հյուրանոցի շքեղ համարը հենց նոր ազատեց միտրոպոլիտ Ալեքսեյը: Ուսուցիչն Աճառյանի անունը լսելիս ապշած նայում է անձնագրին և համոզվում, որ իսկապես սա տարիներից ի վեր իր տեսնել ցանկացած Աճառյանն է, այն մարդը, որի ինքնությունն առանց իմանալու Աֆոնից մինչև Սուխումի բերել է իր ավտոյով: Նա շտապ վերադարձավ մեզ մոտ և ձեռքերը բարձրացնելով՝ զոչեց.

– Ո՛վ հրաշք.սա ի՛նչ հրաշք է. ես Աֆոնից մինչև Սու-  
խումի եկել եմ Աճառյանի հետ և չեմ իմացել...

Ապա հարցրեց. «Պրոֆեսո՛ր, ինչո՞ւ ինձ չասեցիք: Ես  
որքան բախտավոր մարդ եմ, որ իմ նոր գնած մեքենայի  
շնորհիվ ծանոթացա ձեզ հետ»: Ապա նա հրաժեշտ տվեց մեզ՝  
ասելով, որ վաղը Ջիդարյանի հետ կգան մեզ մոտ:

Մի ժամից մերոնք բեռնատար ավտոմեքենայով հասան  
մեզ:

Հաջորդ առավոտ ուսուցիչը եկավ Ջիդարյանի հետ՝ Ա-  
ճառյանին այցելության, նրանք շատ սիրալիք երկար գրու-  
ցեցին:

## ՄՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1943 թ. հայտարարվեց, թե ՄՍՀՄ գիտությունների ա-  
կադեմիայում 6 տեղ է տրված արևելագետների համար, և  
այդ տեղերի համար բացված՝ հայտարարվեց թեկնածուների  
առաջադրումը:

Աճառյանին հարգողները՝ պետական համալսարանի  
գլխավորությամբ, Մատենադարանի, Հանրային գրադարանի  
և հայոց լեզվի և գրականության ամբիոնները առաջարկեցին  
Աճառյանի թեկնածությունը:

Թեկնածության առաջադրանքի համար տեղի ունեցած  
հավաքում առաջ քաշվեց նաև Մ. Աբեղյանի թեկնածությունը:  
Աճառյանն իզուր էր աշխատում բացատրել, թե 6 տեղի հա-  
մար Հայաստանն իրավունք ուներ ներկայացնել մեկից ավե-  
լի թեկնածություններ. կընտրվեր նա, ով ավելի հարմար  
կհամարվեր: Աճառյանի համակիրները շատ են պաշտ-  
պանում նրա թեկնածությունը, բայց համալսարանի ռեկտոր

Բունիայանը հակառակվում է՝ առանց նկատի առնելու Աճառյանի բողոքը այս մասին:

Աճառյանը դառնացած բողոքի դիմում է գրում ընկեր Սահակ Կարապետյանին: Դիմումի մեջ Աճառյանը հանգամանորեն խոսում էր իր թեկնածության առաջադրման, ապա նաև հակառակորդների մասին, տալիս է իր երկարամյա գիտական գործունեության համառոտ բացատրությունը, ջանք է անում՝ ցրելու իր մասին հարուցված բացասական, անհիմն կարծիքները և խնդրում միջնորդել, որ չարգելվի իր թեկնածությունն առաջադրել:

Իր ներկայացրած բողոքը հարմար ենք գտնում բերել այստեղ ամբողջությամբ:

«Մեծարգո ընկ. Սահակ Կարապետյանին,

Երբ հայտարարվեց, թե մեր ակադեմիայում 6 տեղ է բացված արևելագետների համար, իմ հարգողներից մի մեծ խումբ որոշեց դնել իմ թեկնածությունը: Նրանք են իմ նախկին ուսնողները, որոնք այժմ դարձել են պրոֆեսորներ, դոկտորներ, լեկտորներ, դոցենտներ, ուսուցիչներ և զանազան պետական պաշտոնյաներ, և որոնց թիվը 100-ից ավելի է: Մատենադարանը, հանրային գրադարանը, հայոց լեզվի և գրականության ամբիոնները՝ այս բոլորը՝ իրենց գլուխ ունենալով պետհամալսարանի վարչությունը: Ռեկտորատը սկըսեց քննել համապատասխան դիմումները, որոնց միացավ նաև Արմֆանը: Երկու օր անց ինձ հասավ տեղեկություն, թե Արմֆանի նախագահ ակադեմիկոս պրոֆեսոր Օրբելին դեմ է եղել իմ թեկնածությանը և առաջարկում է դնել միայն պրոֆեսոր Աբեղյանին՝ պատճառաբանելով, թե ես 1) քաղաքականորեն անվստահելի եմ, 2) թե ընտրությունը արդեն կանխորոշված է, և առաջարկված է ռուս գիտնական Բարտոլոյը: Իր այս կարծիքը հայտնել է նաև Ջեզ, և Դուք ևս համակարծիք եք եղել նրան: Այսպիսով, հանվել է իմ թեկնածությունը և արգել-



վել է ռեկտորին դնել իմ անունը համալսարանի խորհրդի նիստում:

51 տարվա ուսուցչական գործունեություն ունեւ, որից 20 տարին համալսարանի դասախոս եւ և ծառայում եւ սովետական երկրին ու գիտության ասպարեզում՝ տալով հազարավոր աշակերտներ: Ճիշտ 50 գիտական աշխատություն եւ հրատարակած և 105 գիտական հոդվածներ հայ և օտար գիտական ժուռնալներում: Ուսումնասիրել եւ հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն, ռուսերեն, թուրքերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, քրդերեն, հնդկերեն (սանսկրիտ), իսպրդերեն, զենդերեն, արաբերեն, լազերեն, հունարեն, լատիններեն, պահլավերեն, վրացերեն: Կազմել եւ 129 լեզուների համեմատական քերականությունը՝ դեռ անտիպ, բոլորը պիտի լինի 600 լեզու, որի նման աշխատություն դեռ գիտությունը չի տեսած: Գլուխգործոցս է «Արմատական բառարանը»՝ 6 հատոր, 8000 էջ, որի համար եվրոպական քննադատությունը գրել է. «Ոչ մի երկիր, ոչ մի ժամանակ, ոչ մի լեզու այսպիսի կատարյալ գործ չի արտադրած»: Իսկ սովետական Միության մեծագույն հայագետը (Մառ) գրել է. «Труд Р. Ачаряна составит крупное явление в лингвистической литературе, подобного которому нет ничего не только в арм., но и в европейской научной литературе» (1907, մայիսի 20):

Ուսումնասիրել եւ 30 հայերեն բարբառ և հիմնել երկու նոր գիտություն՝ հայ բարբառագիտություն և հայոց լեզվի պատմություն:

Անտիպ գործերիս թիվն է 20:

Արժանացել եւ գիտական 5 մրցանակի. 1) Մոսկվայի Լազարյան ճեմարանից 1904 թ.՝ առաջին մրցանակ (600 ռ.), 2) 1902 թ.՝ առաջին մրցանակ (2000 ռ.), 3) 1913 թ. առաջին մրցանակ (1000 ռ.), 4) Պոլսի ազգային պատրիարքարանից 1914-1915 թ. (5000 ֆրանկ), 5) Երուսաղեմի պատրիարքարանից 1934 թ.՝ առաջին մրցանակ (1200 դոլար):

Ընտրվել է 1897 թ. անդամ Փարիզի լեզվաբանական միջազգային ընկերության, 1898 թ.՝ անդամ Արևելագետների միջազգային կոնգրեսի (Փարիզ), 1937 թ.՝ թղթակից անդամ Չեխոսլովակիայի ակադեմիայի:

Բոլորովին սխալ է վերագրել ինձ քաղաքական անվաստահություն. 20 տարի ամբողջ ծառայել եմ ամենամաքուր կերպով Խորհրդային երկրին: Ո՞վ կարող է մի կեղտ գցել ինձ վրա: Այս մասին կվկայեն պետական համապատասխան օրգանները: Հենց իմ անունը և գիտությունը մատուցած ծառայությունները պրոպագանդա են արտասահմանյան հայ և օտար հասարակության մեջ Սովետական երկրին և գիտության փառքի և պատվի համար: Պատերազմից առաջ որչա՛փ գիտնականներ՝ հայ, եվրոպացի ու ամերիկացի, զանազան ազգերից (ինչպես և մեր եղբայրակից վրացիներից և ադրբեջանցիներից), դիմել են միշտ իրենց նամակներով՝ խորհուրդ ու բացատրություն խնդրելով գիտական զանազան հարցերի մասին: Բավական է հիշել, որ 1930 թվին հրավիրվել էմ Փարիզի համալսարանի (Սորբոն) կողմից իբրև ռեկտորի օգնական: Ես մերժեցի գնալ՝ չուզելով թողնել մեր երկիրը: Պատերազմի այս երկու դաժան տարիներում, չնայած ծերության և հաշմանդամ վիճակին, բեմ եմ բարձրացել ուր որ պետք է՝ համալսարանում կամ Արմֆանում և ուրիշ տեղեր՝ խոսելու, ճառելու և ոգևորելու ժողովրդին, գրել եմ բազմաթիվ հոդվածներ «Սովետական Հայաստան» և «Коммунист» թերթերում, թղթակցել եմ հեռվից Ամերիկայի «Բանվոր» խորհրդային թերթին, Սովինֆորմ բյուրոյին և ՏԱՄՍ-ին: Մի ամիս առաջ Սովինֆորմ բյուրոն խնդրեց ինձ գրել մի հոդված իմ աշխատությունների մասին՝ հրատարակելու համար արտասահմանյան հայ մամուլում: Նույնը այժմ առաջարկում է մեր ռադիոն: Եթե այս բոլորը քիչ է, պատրաստ եմ դիմելու, ուր որ կկոչի Խորհրդային պետությունը:

Գալով այն հարցին, թե արդեն Բարտոլոյը ընտրված է, և այլևս տեղ չկա, դա ճիշտ չէ: Նախ ընտրությունը դեռ չէ վերջացած: Բարտոլոյը մի տեղ է բռնում միայն, և դեռ բաց է մնում 5 տեղ: Ես չեմ խանգարում բնավ Աբեղյանի թեկնածությունը. Հայաստանը կարող է ոչ թե մեկ, այլ մի քանի թեկնածուներ առաջարկել: Եվ ակադեմիայի գործն է ընտրել նրանցից մինչև 5-6 անձ, նույնիսկ իրավունք ունի որոշյալ թվից ավելի անձինք ընտրելու:

Մի վերջին խոսք էլ այն մասին, թե ես Մառին հակառակորդ եմ: Իմ վերջին 20 տարվա գործունեության մեջ չեք գտնի գրված մի բառ կամ արտասանված մի խոսք՝ Մառի դեմ: Մառը զբաղվում է լեզվի նախնական ծագման քննությամբ, որ լեզվաբանության փիլիսոփայությունն է, ինչ որ իմ մասնագիտությունից շատ ավելի բարձր է: Ես զբաղվում եմ մեր հայ բարբառների և արդիական լեզուների պատմությամբ ու քննությամբ և չեմ ձգտում այդքան բարձր, ուստի չեմ էլ կարող խոսել կամ վիճել այդ մասին:

Դիմումիս միակ նպատակն է խոնարհաբար խնդրել Ձեզ, որ չարգելվի որևէ առանձին խմբակի կամ հիմնարկի (և հատկապես մեր պետական համալսարանի վարչության)՝ դնելու իմ թեկնածությունը Մեծ ակադեմիային, ինչպես իրենց ցանկությունն է:

Խորին հարգանք՝

Պրոֆեսոր դոկտոր

Հ.ԱՃառյան

դասախոս պետական

համալսարանի

22 ապրիլի 1943 թ.

Երևան

Հ.Գ. Այս բոլորից դուրս կա և մի ուրիշ հարց, որի մասին ես չեի կարող գրել այստեղ, բայց դա ունի շատ ծանրակշիռ

հետևանք: Ուստի խնդրում եմ թույլատրել ինձ և ընդունել 1-2 րոպե ունկնդրության»:

Կենտկոմը Աճառյանին պատասխանում է, թե այդ հարցը իրեն չի վերաբերում, և ինքը իրավունք չունի գիտական գործերին խառնվելու:

Իր մասին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նպաստավոր հանձնարարական գրելու խնդրանքով Աճառյանը դիմում է նաև ակադեմիկոս Շանիձեին՝ իր՝ 30 ապրիլ և 16 հուլիս 1943 թ. հետևյալ նամակներով.

«Հիմնվելով այն համակրական զգացմունքների վրա, որ Դուք քանիցս արտահայտել եք Ձեր գրվածներում իմ մասին, համարձակվեցի գրել այս գրությունը:

Երբ բացվեց Միության ակադեմիայում մի տեղ իսկական անդամի և 4 տեղ թղթակից անդամի՝ արևելյան լեզուների համար, մեր համալսարանը դրեց իմ թեկնածությունը: Ընկ. Օրբելին ամեն կերպ աշխատում է խանգարել և անցկացնել պրոֆեսոր Աբեղյանին, որ ոչ մի արևելյան լեզու չգիտե: Հազիվ կարելի եղավ ինձ դնել իբրև երկրորդ թեկնածու: Ընկ. Օրբելին ծանոթություններ շատ ունի Մոսկվայում և անշուշտ պիտի աշխատի վարկաբեկելու ինձ ամեն կողմից:

Խնդրում եմ Ձեզ՝ բարեհաճեիք Ձեր կարծիքը հայտնել կենտրոնի առաջ, ուր դիմում է և մեր համալսարանը՝ ներկայացնելով իմ կենսագրությունը և գործերի ցուցակը (50 գիրք տպված, 104 հոդված տպված և 21 գիրք անտիպ): Ես ընտրված եմ նաև թղթակից անդամ Չեխուսլովակիայի ակադեմիայի (1 մարտ, 1937 թ.):

Ներողություն եմ խնդրում իմ տված անհանգստության համար և կանխավ շնորհակալությունս եմ հայտնում»:

«Ձեր նամակը ստացա ժամանակին մեծ շնորհակալությամբ: Եթե իմ փաստաթղթերը, կենսագրությունը, Չեխուսլովակիայի ակադեմիայի թղթակից անդամությանս վկայականը, գործերիս ցուցակը և այլն չուղարկեցի Ձեզ, պատճառն

այն էր, որ հանկարծ պատահեց մեզ շատ մոտիկ մի անձ, որ սավառնակով գնաց Մոսկվա՝ հենց ակադեմիա: Բոլորը հանձնեցի նրան, և նա տարավ հանձնեց պայմանաժամից շատ առաջ:

Այժմ ես խնդրում եմ Ձեզ միայն այն մասին, որ Դուք մի նամակ (հանձնարարական) գրեիք ակադեմիայի նախագահության և հայտնեիք Ձեր բարեհաճ կարծիքը իմ մասին: Ես կարծում եմ, որ Ձեր կարծիքը շատ ծանրակշիռ արժեք կունենա ընտրության ընթացքի վրա, որովհետև ով է Կովկասում, որ Ձեզ չափ հմուտ լինի թե՛ վրացերենին, թե՛ հայերենին, թե՛ ռուսերենին և թե՛ եվրոպական ու ասիական հին ու նոր լեզուներին:

Հայտնում եմ կանխավ իմ շնորհակալիքը»:

Մի օր էլ Աճառյանը տուն վերադառնալիս հանդիպում է մեծ գիտնական Արտյոմ Ալիխանյանին, որը, տեսնելով Աճառյանի հուզված վիճակը, հարցնում է պատճառը: Աճառյանն ըստ էության պարզում է հարցը: Ալիխանյանը քաջալերում է Աճառյանին և ասում, որ նա նույնիսկ անձամբ իրավունք ունի առաջադրելու իր իսկ թեկնածությունը:

Աճառյանը հայտնում է, թե արդեն ուշ է դրա համար. հույսը կտրել է և նույնիսկ հնարավորություն չունի այդպիսի դիմում տեղ հասցնելու:

Ալիխանյանն ասում է, թե հաջորդ օրը ինքը մեկնելու է Մոսկվա, և հայտնում է, որ ինքը սիրահոժար հանձն կառնի դիմումը անձամբ տեղ հասցնել: Պայմանավորվում են, որ հաջորդ օրը Ալիխանյանը գա փոստի մոտ և դիմումը վերցնի՝ խնդրելով, որ այս մասին ոչ ոք չիմանա:

Տուն վերադարձին Աճառյանը որպես գաղտնիք ինձ պատմեց այս անսպասելի հանդիպման մասին: Ապա կանչեցինք մեր ծանոթ մեքենագրուհուն, և ամբողջ գիշեր միասին աշխատեցին՝ թարգմանելով և մեքենագրելով Աճառյանի աշխատությունների ցանկը: Առավոտյան ժամը 8-ին որոշ-

ված ժամադրավայրում Աճառյանը գտավ Ալիխանյանին, ծրարը հանձեց նրան և շատ ուրախ տրամադրությամբ տուն վերադարձավ, հիացմունք հայտնեց նրա ազնվության մասին և օրհնություններ ուղղեց նրա հասցեին:

Ապա Աճառյանն անհամբեր սպասում էր, որ կենտրոնական թերթերը տպեն իր անունը թեկնածուների շարքում: Այդ ցանկալի օրն էլ եկավ վերջապես: Հրաշյան ասում էր.

– Վերջապես, այդ էլ տեսանք: Եթե ինձ չընտրեն էլ, ամոթը հակառակորդներին կլինի: Սոֆի՛կ, սիրելի՛ս, փառքի համար չէ, որ ես ուզում եմ ակադեմիկոս դառնալ. դու ճանաչում ես ինձ, ոչ էլ փողի համար: Բայց եթե հաջողվի ինձ ընտրվել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անդամ, դրանով ես կփրկվեմ միանգամայն ընդմիջտ բոլոր չարիքներից, կդառնամ անձեռնմխելի, կլինեմ Մոսկվայի վստահելին:

Խե՛ղճ Հրաշյա, ձանձրացած և հոգնած հալածանքներից, անտեղի կասկածներից, ցանկանում էր ձեռք բերել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի բարձր կոչումը՝ հուսալով այդ տիտղոսի տակ գտնել իր հանգիստն ու անդորրը՝ անխռով կերպով իր կյանքի վերջին տարիները լիակատար կերպով գիտությանը նվիրվելու համար:

### **«ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

1935 թ. ուրախությամբ ավարտելով «Արմատական բառարանի» տպագրությունը հին ուղղագրությամբ՝ Աճառյանը ցանկացավ, որ «Հայոց լեզվի պատմությունն» էլ տպվի հին ուղղագրությամբ: Մրա համար նա փորձեց ընդունել տալ, որ այս աշխատությունը շարունակությունն ու ամփոփումն է «Արմատական բառարանի»:

Նա ցանկացավ այս մասին հայտնել վերադաս իրավասու մարմիններին ու մի օր էլ ձեռագիրը վերցնելով՝ գնաց ՀԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար Լևոն Արիսյանի մոտ:

Արիսյանն ասում է Աճառյանին, թե լեզվաբանությունը չոր ու ցամաք գիտություն է, այն պետք է կապել առօրյա կյանքի հետ, հետևաբար աշխատության առաջաբանում պետք է խոսվի աշխարհի քաղաքական դրության մասին (այդ այն ժամանակ էր, երբ ծագել էր Իսպանիայի պատերազմը):

– Ոչինչ,- ասել էր Աճառյանը,- այդ էլ կանեմ, միայն թե գիրքս տպվի:

Այնուհետև Աճառյանը մի շաբաթ աշխատեց և քաղաքական իրադրության վրա, փորձեց գրել 10-15 էջ՝ կցելով գրքին որպես առաջաբան:

Իր հերթին Հայկ Գյուլիքնիսյանն էլ խորհուրդ էր տվել Աճառյանին վերցնել Էնգելսի լեզվաբանական աշխատությունները, կարդալ և անհրաժեշտը վերցնելով՝ օգտագործել գրքի մեջ: Աճառյանը հետևեց այս խորհրդին և շուրջ մեկ մամուլ գրեց Էնգելսի լեզվաբանական տեսության մասին ու զետեղեց գրքի սկզբում: Ապա նա իր աշխատությունը ներկայացրեց լուսժողկոմատի նախագահ Արտո Եղիազարյանին: Սա էլ գտավ, որ ավելորդ է խոսել երկրի քաղաքական դրության մասին: Ինչ վերաբերում է աշխատության ուղղագրությանը, նա խոստացավ ապահովել նրա տպագրությունը հին ուղղագրությամբ, նույնիսկ 4 մամուլ շարվեց հին ուղղագրությամբ, բայց չշարունակվեց: Հետո գործն այնքան ձգձրգվեց, որ վրա հասավ 1937 չարաբաստիկ թվականը, և աշխատությունը մնաց ձեռագիր վիճակում:

1940 թ. նորից հարց հարուցվեց «Հայոց լեզվի պատմության» տպագրության մասին: Այժմ պարզ էր, որ Աճառյանի համար առաջնահերթ կարևորություն ունեցողը աշխատության տպագրությունն էր՝ զիջելով ուղղագրության

հարցում: Վերջապես գրքի առաջին հատորը լույս տեսավ 1940 թ.: Աշխատության երկրորդ հատորն էլ պատրաստ էր, և նույնիսկ հայտարարություն տրվեց, որ այն շուտով կհանձնվի տպագրության:

Ապա գիրքը շարվեց, սրբագրվեց և տպագրվեց, սակայն չհրատարակված՝ որոշում կայացվեց և խարույկի դատապարտվեց այն պատճառաբանությամբ, որ հայ գրականության 5-րդ դարը Աճառյանը կոչել է Ոսկեդար, իսկ մի նախադասության մեջ օգտագործված է եղել անմահ հայ գորավար Անդրանիկի անունը՝ համարելով այն արգելված անուն: Մի երրորդ պատճառ էլ առաջ էր քաշվում. Այդ այն էր, որ աշխատության մի գլուխը խորագրվել էր «Օտար ազդեցություններ հայերենի վրա»: Այս վերջին մեղքը տարածվում էր նաև Գուրգեն Մևակի գրած առաջաբանի վրա, որում հայոց լեզուն ցույց էր տրված որպես ոչ ինքնուրույն, ուժեղ կերպով ենթակա օտար ազդեցությունների:

Գրքի ոչնչացման լուրը ուժեղ կերպով ցնցեց Աճառյանին, ծանր ազդեց նրա զգացումների, հետևաբար և ֆիզիկական առողջության վրա, հուզեց, ընկճեց: Հուզման ազդեցության տակ նա նույնիսկ ձեռագիրը դրեց սենյակի մեջտեղը և կրակի տվեց՝ բարկությունից չկարողանալով նույնիսկ մտածել, որ կարող էր հրդեհ առաջանալ և ամբողջ շենքը այրվել:

Ես աշխատեցի առաջն առնել և փորձել ձեռագիրը վերցնել նրա ձեռքից, բայց նա այնքան էր գազազել, որ այդ անհնար եղավ: Մեր բարի Զոյա Իվանովնան, վախենալով հրդեհից, վազելով խոհանոցից բերեց մի մեծ թաս և այրվող թերթերը լցրեցինք մեջը՝ փրկելով հատակը բռնկումից:

Հուզիչ էր և ցնցող Աճառյանի տեսքը այդ պահին: Նա աղիոդորմ լաց էր լինում և բարձր ձայնով հեծեծում ու ափսոսում.



– 40 տարվա իմ քրտնաթոր աշխատանքի արդյունքը կորավ: Ինչքան չարչարանքով այս ձեռագրերն ուսիս ման եմ եկել երկրից երկիր, և ահա վախճանը:


Ես փորձում էի հանդարտացնել Հրաչյային՝ ասելով.

– Ոչինչ, թող մի գիրք էլ պակաս լինի:

Նա, շարունակելով արտասովել, ձեռքերս բռնած և ուղղակի աչքերիս մեջ նայելով, ասաց.

– Սոֆի՛կ, դու ի՛նչ կզգայիր, եթե քո Քնարիկին քո աչքերի առաջ մորթեն. ահա այս պահին ես նույնպիսի սարսափելի զգացման մեջ եմ:

Ճարահատ և վախենալով այսքան ուժեղ հուզման հետևանքներից՝ մենք խնդրեցինք մեր հարևան Աբգար Հովհաննիսյանին, որ գա Աճառյանի մոտ և փորձի նրան հանդարտեցնել: Եկավ նա, սփոփանքի խոսքեր ասաց, հաստատ հույս հայտնեց, որ այս բոլորը ժամանակավոր երևույթներ են, և կգա մի օր, որ այս արժեքավոր աշխատությունը նորից կտպվի: Ընկեր Հովհաննիսյանը խոստացավ նաև իմանալ գրքի այրման պատճառները և տեղեկացնել Աճառյանին:



Հովհաննիսյանի սփոփիչ խոսքերը ունեցան իրենց բարերար ազդեցությունը. Հրաչյան բավականին հանդարտվեց: Ապա Հովհաննիսյանի գնալուց հետո Աճառյանը, կար-

ծես նոր հույսերով լցված, նոր գյուտ անողի նման բացական-  
չեց ուրախությամբ.

– Սոֆի՛կ, գրքի սրբագրության փորձերը (օտիսկները)  
լրիվ կան, իմ գիրքը չի կորչի, ես դրանք կդասավորեմ,  
կմիացնեմ և կստացվի ամբողջական գիրքը:

Եվ, իրոք, մի քանի օր շարունակ Հրայյան տքնում էր,  
գրքի էջերը դասավորում, կանոնավորում: Այսպես նա վերա-  
կանգնեց ամբողջ հատորը և ապա այն իր ձեռքով կազմեց:  
Աճառյանի ձեռագրերի հետ սրբագրական փորձերից կազմ-  
ված այս գիրքը ևս խնամքով պահում եմ՝ որպես թանկագին  
հիշատակ:

Ձեռագիրն այրելուց մի քանի օր հետո տպարանի բան-  
վորները, որոնք անչափ սիրում ու հարգում էին Աճառյանին,  
մեկը մյուսից գաղտնի, մեկը մյուսից անտեղյակ, խարույկի  
զոհ գնալուց առաջ իրենց թաքցրած գրքերից մի-մի օրինակ  
բերեցին ինձ՝ խնդրելով, որ նույնիսկ Աճառյանին չհայտնեմ,  
թե ով է այն բերել: Այսպիսով, այրված ձեռագրի փոխարեն  
մենք ունեցանք խարույկից փրկված մի քանի տպագիր  
օրինակ:

Աճառյանը, սրտառուչ այս երևույթից խորապես զգաց-  
ված, տխուր ժպիտով ասում էր.

– Ինչքա՛ն մարդասիրություն, ինչքա՛ն ազնվություն և  
զնահատություն հասարակ, պարզ բանվորների կողմից:

Այս սրտաճմլիկ դեպքից երեք ամիս հետո լեզվի տեսու-  
թյան հիմնական հեղաշրջումով նորից տպվեց Աճառյանի  
այրված հատորը:

Բայց այդ ցնցող դեպքը խորունկ, անջնջելի դրոշմ դրեց  
Աճառյանի վրա, նրա առողջության, նրա կյանքի վրա:

Գրքի այրվելուց հետո մի օր ՀԿԿ Կենտկոմից երկու  
ներկայացուցիչ եկան մեզ մոտ և սկսեցին հետաքրքրվել, թե  
Աճառյանը ի՛նչ է անում, ներկայումս ի՛նչ գործի վրա է աշ-  
խատում: Նրանք սկսեցին ստուգել ձեռագրերը: Սեղանի վրա,

ձեռքի տակ Աճառյանն ուներ «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» աշխատության ամբողջ ձեռագրերը, համարյա պատրաստ վիճակում: Հրաչյան ցույց տվեց ձեռագրերը՝ բացատրեց բովանդակությունը (արդյոք բան հասկացա՞ն), ասաց, թե 40 տարի աշխատել է դրանց վրա և ցանկություն ունի իր կենդանության ժամանակ դրանք տպագրված տեսնել: Նրանց արտահայտությունից հայտնի էր, որ գիտության հետ կապ ունեցող մարդիկ չէին, զարմանքով լսում էին Աճառյանի բացատրությունները: Անկոչ այցելուները հանձնարարեցին նաև Աճառյանին, որ հայտարարություն տա՝ ասելով. «Ընկ. Աճառյան, լավ չեք անում՝ համառելով Մառի տեսությանը դեմ և չընդունելով լեզվի նոր ուսմունքը: Որպեսզի վիճակը գնալով չվատթարանա, ավելի լավ կանեք հայտարարություն տալով ընդունել, որ հետևել եք հնդեվրոպաբանության սխալ ուղղության, և խոստանաք, որ կուսումնասիրեք լեզվաբանական նոր ուղղությունը և կհետևեք դրան: Դուք դրանով ոչինչ չեք կորցնի: Բայց ձեր պատիվը կպահեք»:

Այդ միջոցին Աճառյանը արդեն հեռացվել էր համալսարանից՝ լեզվի նոր ուսմունքի պահանջները չգլխավորելու համար: Այցելուները մի քանի հարցեր ևս տալուց հետո թողին ու հեռացան:

Շատ հաճախ այս ժամանակամիջոցում որոշ մարդիկ կանչում էին ինձ, խորհուրդ էին տալիս, որ աշխատեմ Հրաչյային համոզել, որ նա «դեկլարացիա»՝ հայտարարություն տա: Ասում էին, որ նա ինձ կլսի, իմ խորհուրդը: Բայց նման փորձ ո՛չ ես ինքս ուզում էի անել, ո՛չ էլ (այդ ես հաստատ գիտեի) Հրաչյան ինձ կլսեր:

Առանձին մնալուց հետո երկուսս էլ միմյանց խոստովանեցինք, թե շատ էինք վախեցել, Հրաչյան ասաց.

– Համոզված եմ, որ դրանք գիտության մարդիկ չեն, վախենում եմ, որ նոր փորձանք չբերեն գլխիս, բայց թե ինչ հանցանքի համար, այդ ես էլ չգիտեմ:

Իմ հուշերում ես որոշել եմ լինել ճշմարտաախոս, ճշմարտությունը ներկայացնել ճիշտ այնպես, ինչպես որ նա կա:

Հրաշյան հավատում էր գերագույն մի ուժի՝ մի աստծու, որին սիրում էր ապավինել իր տկարության ժամին՝ չնոռանալով նաև նրան իր հաջողության և ուրախության մեջ: Այս պահին Աճառյանը ձեռքերը բարձրացրեց դեպի վեր և աղոթողի կերպարանք ընդունելով՝ ասաց.

– Ո՛վ ամենակալ տեր, ինձ փրկի՛ր փորձանքից և չարիքից: Ես ոչ մի հանցանք չեմ գործել: Դու ամենակալ ես և ամենակարող, ինձ հեռո՛ւ պահիր այդ մարդկանց տեսադաշտից, ես կփառաբանեմ քո անունը իմ աղոթքների մեջ:

Վաղուց էր, որ մի միտք էր ծագել իմ գլխում: Փորձում էի համոզել Աճառյանին, որ «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատությունը ձոնի մեծ առաջնորդին՝ նրա ծննդյան 70-ամյակի կապակցությամբ: Մի պահ հայացքը սևեռեց վրաս, կարծես չհասկացավ ինձ, ապա բարկությամբ ասաց.

Չգիտեմ՝ դու ին՞չո՞ւ ես, թե՞ նոր իննթացար, ապուշ-ապուշ բաներ ես ասում: Դու ուզում ես, որ ես խայտառակվեմ ամբողջ աշխարհի առաջ, դու ուզում ես, որ ես իմ խղճի դեմ գործեմ, սուտ խոսեմ, կեղծեմ, քծնեմ: Այդպիսի բան ես չեմ կարող անել. դա ինձ վայել չէ: Այդպիսի հիմար առաջարկ ես չէի սպասի քեզանից: Կանայք միշտ փառասեր են լինում, դու ինչո՞վ պիտի տարբերվեիր քո սեռակիցներից: Գուցե դափնեկիր ես ուզում լինել: Եթե դու փողի մասին ես մտածում, կարծում եմ՝ քիչ չեն տպում իմ գրքերից:

Ես ցանկացա բացատրել Աճառյանին, որ չէի ուզում, որ քերականությունն էլ «Հայոց լեզվի պատմության» բախտին

արժանանա, դրա համար լավ կլիներ այն ձոնել քաղաքական առաջնորդին՝ ապահովելով այդպիսով նաև իր կյանքը:

Հրաչյան անդրդվելի մնաց:

Այդ միջոցին մեզ մոտ հյուր եկավ բժիշկ Լևոն Հովհաննիսյանը: Աճառյանն սկսեց գանգատվել նրան:

– Դուք ի՞նչ խորհուրդ կտայիք ինձ, ասացե՛ք խնդրեմ, թող ձեր պատասխանը լինի այո՛ կամ ո՛չ:

Լևոն Անդրենիչը լուրջ դեմք ընդունեց և ասաց.

– Եթե Սոֆիկը այդպիսի առաջարկություն է արել, նշանակում է նա մտածել է այդ մասին, խորհրդակցել է ձեզ հետ: Ամբողջ աշխարհը մեծ առաջնորդին նվերներ է ուղարկում, իսկ ինչո՞ւ Սոֆիկը հետ մնա...:

Վերջին նախադասությունը նա ասաց հեզնական տոնով, ապա սկսեց ծիծաղել:

Հետո Հրաչյան պատմեց իր հանդիպումը Ջավեն Գրիգորյանի հետ, նրա պահանջը՝ հայտարարություն տալու համար, կենտկոմից հարցաքննության եկող քննիչների մասին և այլն:

Ես նորից բացատրեցի իմ միտքը, թե իմ նպատակը գիրքը փրկել և նրա տպագրությունն ապահովելն էր:

– Հիմա հարցրե՛ք Սոֆիկին,- ասաց Աճառյանը,- թե ինչո՞ւ ինձ չի հորդորում, որ հայտարարություն տամ: Նա ցանկանում է գյուղ գնալ, կով պահել, հաշտ ու համերաշխ ապրել, ջան ասել, ջան լսել: Ապա այդ բոլորը նա ինչպե՞ս կբացատրի:

– Այդ արդեն չեղավ,- ասաց Լևոն Անդրենիչը,- ես գիտեմ, որ Սոֆիկը լավ ընկեր է, քեզ լավ է հոգ տանում, լավ խորհուրդներ է տալիս, բայց այդ խոսակցությունը տղամարդու և կնոջ խոսակցություն է, կարիք չկա տարածելու:

Համալսարանից հեռացված ժամանակաշրջանում՝ մի օր էլ Աճառյանը ինձ կանչեց մոտը, նստեցրեց բազկաթոռին, ձեռքս բռնեց մտերմորեն ու ասաց. «Սոֆի՛կ ջան, գուցե դու էլ

ինձ մեղադրես այդ հարցում, որ հայտարարություն չեմ տալիս, բայց ինչպես տամ. չե՞ որ այս համառության հետևանք չէ, այլ գիտություն է: Սոֆի կ, ինչս կավելանա, եթե տամ, և ինչս կպակասի, եթե չտամ, դու երևի ինձնից խելոք ես, մի բան հասկացրու ինձ:

Ջարմանքից ապշել էի ես. չէի կարողանում հավատալ, որ սկզբունքային, համառ գիտնականը կարող էր փոխվել և տատանվել: Ես կատակեցի՝ ասելով. «Այդքան մի՛ մտածիր, Հրաչյա՛, բավական է որքան դու աշխատել ես, հիմա էլ ես կաշխատեմ: Կգնանք գյուղ, կաշխատեմ, եթե ոչ մասնագիտությամբ՝ որպես ստամոքսաբույժ, ապա որպես բուժքույր, մի հատ էլ կով կպահենք և հիանալի կապրենք»: Հրաչյան ծիծաղելով ասաց.

– Իսկ ես էլ մեր կովին կարածեցնեմ:

– Ո՛չ,- ասացի ես,- կովին խնամող կլինի: Դու կգրես քո գրքերը: Տեսնենք՝ Մառի լեզվաբանական նոր ուսմունքը մինչև ուր կտանի:

– Ապրե՛ս Սոֆի՛կ,- ասաց Հրաչյան, - դու իսկական տղամարդու քաջ բնավորություն ունես:

## ՀԵՌԱՅՈՒՄԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ

Ինչե՛ր ասես չկատարվեցին անհատի պաշտամունքի այդ մտայլ տարիներին: Ի՛նչ չարեցին խավարի ուժերը՝ թաքնված սովետական հայրենիքի և ժողովրդի շահերի պաշտպանի քողի տակ:

Ու մի օր էլ համալսարանի ռեկտոր Գ. Պետրոսյանի ստորագրությամբ Աճառյանն ստացավ հեռացման հրամանը:

**«ՀՐԱՄԱՆ № 170**  
**Վ.Մ.ՄՈՂՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ**  
**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

31 օգոստոսի 1949 թ.

Պար. 17

Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի արևելյան լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Հրաչյա Հակոբի Աճառյանին ազատել ամբիոնի վարիչի և դասախոսի պարտականություններից սեպտեմբերի 1-ից ս/թ.՝ լեզվի նոր ուսմունքի դասավանդումը չապահովելու համար:

Իսկականը ստորագրված է  
Իսկականի հետ ճիշտ է

ռեկտոր՝ Գ.Պետրոսյան  
գործերի կառավարիչ՝  
Մ.Վիրաբյան

(Կնիք համալսարանի)»:

Համալսարանից անարդարորեն հեռացվելը Աճառյանին հասցված հարվածներից ամենամեծը եղավ: Ջգայուն ու մտածող մարդ՝ նա խորապես ազդվեց այդ հարվածից, խախտվեց նրա ջղային համակարգը, վատթարացավ ամբողջ առողջությունը: Կարելի է ասել անկասկած, որ այդ հարվածը եղավ մահաբեր, որից հետո երբեք չվերականգնվեց նրա առողջությունը: Ճիշտ է, Աճառյանը փորձում էր պահել իր ուրախ տրամադրությունը, շարունակում էր կատակել, բայց նրա մոտիկ հարազատները լավապես զգում ու գիտակցում էին, որ Հրաչյան այլևս նախկինը չէր:

Աճառյանի անձնական կյանքը՝ ապրումներն ու հուզումները, բոլոր հետաքրքրությունները միահյուսվել էին համալսարանի առօրյա կյանքին: Նա իր գիտական գործունեությունը անկատար էր համարում առանց դասախոսական աշխատանքի:

Ամենօրյա իր երեկոյան զբոսանքների ժամանակ նա շատ հաճախ իր քայլերն ինքնաբերաբար ուղղում էր դեպի

համալսարան: Նա քայլում էր երբեմնի սովորական ճանապարհով, բայց այդ ճանապարհը այժմ իրեն մխիթարություն չէր տալիս, որովհետև չէր տանում համալսարան: Փողոցի եռուզեռն ու աշխույժը բոլորովին չէին գրավում նրան, նա ուներ ընկճված, հուսահատ մարդու: Նա թախծում էր առանց ուսանողների և զգում էր նրանց կենսուրախ և աշխուժության կարոտը: Ուսանողները նրա չմարող ուժի և եռանդի աղբյուրն էին: Արտասովաթոր աչքերով Աճառյանին տեսել էին համալսարանի տուֆակերտ շենքի պատերը համբուրելիս:

Միայն չոր, ինքնուրույն գիտական աշխատանքը նրան չէր բավարարում: Նա իր գիտելիքները, իր մտքերն ու անելիքները երիտասարդությանը հաղորդելու անզուսպ կարիքն էր զգում:

Համալսարանից և իր սիրելի ուսանողներից հեռացված՝ ծանր ապրումներով էին անցում Աճառյանի օրերը:

Այդ միջոցին մեր տանն էր գտնում քրոջս թոռնիկ Անահիտը, որին վերցրել էինք մեր խնամքի տակ: Եվ Աճառյանը, որ դասախոսելու կարիք էր զգում, սկսեց պարապել Անահիտի հետ: Ուշիմ, ընդունակ աղջիկ էր Անահիտը՝ կայտառ, վառվռուն, չարաճճի: Իսկ Աճառյանը, որ սովոր էր խելահաս ուսանողների հետ գործ ունենալ, երբեմն մոռանալով երեխայի տարիքային յուրահատկությունները, կարծես շատ պահանջկոտ էր դառնում:

Բայց ավելի լավ է, որ այս մասին պատմի ինքը՝ Անահիտը, որ հետագայում մեծացել, ավարտել է Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտը և դարձել է շնորհալի ինժեներ:

«Պատահեց այնպես, որ պետական համալսարանի ռեկտորատը հրաժարվեց Աճառյանի ծառայությունից որպես դասախոսի՝ գտնելով, որ իբր նա իրեն չի արդարացնում, չի հետևում Մառի ուսմունքին:



Ահա այսպիսի պայմանների մեջ էր, որ Աճառյանը նկատեց ինձ՝ 5-6 տարեկան մի աղջնակի, որ ամիսներով հյուրընկալվում էր իրենց տանը, սիրում օգտվել պատկառելի գիտնականի գրասեղանի վրայի բազմաթիվ գայթակղեցուցիչ առարկաներից և մանավանդ դարակլի միջի քաղցրավենիքից: Նա միշտ զարմանքով էր նշում այդ փոքր անհայտացումները՝ դրանք վերագրելով մկներին, մինչև որ մի գեղեցիկ օր հայտնաբերեց իսկական չարագործին:

Այսպես նա նկատեց ինձ, և ահա ես դարձա նրա աշակերտը, ուսանողն ու ասպիրանտը: Նա իր ամբողջ դասախոսական հմտությունը, եռանդը, սերն ու ավյունը կենտրոնացրեց իմ ուսման վրա: Ուսումնասիրության առարկայի ընտրությունը, հասկանալի է, միայն ու միայն պրոֆեսորին է պատկանում:

Ես հեշտությամբ յուրացրի ջանասիրաբար և բանիմաց ձևով ինձ մատուցվող նյութը: Բայց իմ ուսուցիչն այնքան էլ համբերատար չէր իր փոքրիկ աշակերտուհու նկատմամբ: Մի փոքր սխալ կարող էր նրան անմիջապես գայրացնել: Ուսուցչի բռնկումն ու աշակերտի հուսահատությունը, երբեմն վախի զգացումը, առաջացնում էին երկկողմանի սառնություն: Այդպիսի դեպքերում հայտնվում էր փրկարար հրեշտակը՝ տիկին Մոֆիկը, որ մեղմացնում էր շիկացած մթնոլորտը: Նա ասում էր.

– Հրաչյա՛, սիրելի՛ս, հանգստացի՛ր մի քիչ, դու չպետք է այդքան բարկանաս, փոքր երեխա է, չի հասկանում, չի կարողանում ըմբռնել:

Իսկ աշակերտուհու բաժինն էր քաղցրավենիքը:

Ահա մի պահ մեր դասաժամից.

– Անահի՛տ, դու քաղցրավենիք շատ ես սիրում: Ապա մի խոնարհի՛ր *ուտել* բայը հարակատար ժամանակում:

– Ես ու...

– Մխալ է: Այդ ի՞նչ է, նոր հարակատար ժամանա՞կ ես հորինում: Սոֆի՛կ, Սոֆի՛կ, մի այստե՛ղ արի:

– Հրաչյա՛, այդքան մի՛ հուզվիր, դու հանդարտ պետք է լինես: Դեռ նա փոքր երեխա է, չի հասկանում:

– Դե լավ, մի՛ լա, Անահի՛տ: Մտածի՛ր ու պատասխա-  
նի՛ր: Ինչ եղած է, եղած է:

– Ես կերած եմ, դու...

– Ա՛յ ապրե՛ս: Շատ ճիշտ է: Սոֆի՛կ, ես միշտ ասել եմ, որ սա շատ խելոք երեխա է, ինչպիսի մեծ ապագա ունի: Հա-  
պա ինչպե՞ս է պատասխանում հարցին: Նախ ուշադիր այն լսում է, հետո խոհուն հայացքը ուղղած հեռուն՝ մի փոքր մտածում ու ճիշտ պատասխանում:

Բայց ահա ձեռք բերած հաջողությունները նա առան-  
ձին հպարտությամբ էր ցուցադրում ծանոթների և մանա-  
վանդ այցելության եկած ուսանողների մոտ:

Ինձ թվում է, թե բայերի խոնարհումից հետո անխոնջ գիտնականը հերթի էր դրել ինձ հետ ուսումնասիրել հայերե-  
նի քերականության մի այլ հետաքրքրական բաժին: Այդ հար-  
ցը մնաց չպարզված. գործը այնտեղ չհասավ:

Հեշտ է եզրակացնել, որ իրերի այսպիսի վիճակը ամե-  
ննին չէր գրավում աշակերտուհուն: Ես գրկվում էի մանկա-  
կան ազատությունից և սիրելի խաղերից: Ամենալարված  
խաղի միջոցին ինձ կարող էին կանչել և հարցնել ինձ համար  
բոլորովին էլ ոչ հետաքրքրական բայերի խոնարհումը: Այ-  
նուամենայնիվ, ես պետք է արագ և ճիշտ պատասխանեի ինձ  
տրված հարցերին, հակառակ դեպքում կարող էր մեծ փոթո-  
րիկ առաջանալ:

Բայց ահա փրկությունը և՛ ուսուցչի, և՛ աշակերտուհու  
համար վրա հասավ բարեբախտաբար. համալսարանի ռեկ-  
տորը վերականգնեց Աճառյանին որպես համալսարանի դա-  
սախոսի»:

Իսկապես, դա եղավ միակ և իրական փրկությունը: Հեռացումից շուրջ ութ ամիս հետո ռեկտորատի նոր հրամանը վերականգնում էր Աճառյանի իրավունքները:

**«ՀՐԱՄԱՆ N° 65**

**Վ.Մ.ՍՈՒՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

13 ապրիլի 1950 թ.

Պար. 2

Ի փոփոխումն N° 170 պար. 17/31/8 1949 թ. հրամանի՝ Հրաչյա Հակոբի Աճառյանի իրավունքները վերականգնել ապրիլի 13-ից ս/թ.՝ որպես ֆիլոլոգիական ֆակուլտետի արևելյան լեզուների ու գրականության ամբիոնի վարիչի և դասախոսի:

Իսկականը ստորագրված է ռեկտոր՝ Գ. Պետրոսյան  
Իսկականի հետ ճիշտ է գործերի կառավարիչ՝  
Մ. Վիրաբյան

(Կնիք համալսարանի)»:

Աճառյանի վերականգնումը՝ որպես դասախոս պետական համալսարանի, մեծ ուրախություն պատճառեց բնականաբար ամենից առաջ իրեն և ինձ: Ուրախ էին նրա ուսանողները, բոլոր համակիրները: Ամեն կողմից շնորհավորում էին, խնդակցում:

«ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՎ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԹԻ

Մեր սիրելի գիտնական

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ

պատվարժան ակադեմիկոս

ԳԵՐԱԳՈՒԹՅՆ ՀՈԳԵՎՈՐ

ԽՈՐՀՈՒՐԴ  
Հրաչյա Աճառյանին  
№-----

18 մարտի 1952 ամի  
Ս. ԷՋՄԻԱՕԻՆ

Իր ժամանակին խորին վշտով լսեցինք իբրև գիտնականի Ձեր իրավագուրկ լինելը, վշտացանք և որոշեցինք ցավակցություն հայտնել: Սույնպես նաև մեծ հաճույքով լսեցինք Ձեր իրավանց վերականգնումը, ուրախացանք և որոշեցինք Մեր խնդակցությունը հայտնել Ձեզ: Սակայն Մեր այդ երկու՝ ցարդ անգործադիր մնացած որոշումների մասին այսօր հայտնում ենք Ձեզ՝ խնդրելով ներողամիտ լինել մարդկային ակամա անփութության նկատմամբ:

Չափազանց ուրախ ենք, որ ոչ միայն Ձեր նվերը ընդունվել է հաճությամբ, այլև նվիրատուն մեկենաս է հանդիսացել Ձեր երկասիրությունների հրատարակության, որ Ձեզ համար ոչ միայն հաճելի և Ձեր «ԵՍ»-ը սիրաշոյող, այլև Ձեր՝ գիտնականի արժանիքները անփոխարինելի գնահատող և արժեքավորող փաստ է:

Այս առթիվ մենք կամենում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալ փաստի վրա. իր ժամանակին Գերագույն Հոգևոր Խորհուրդը խնդրել է Ձեզ, որ Հայրապետական Աթոռի 500-ամյակի տոնակատարության առթիվ հրատարակելիք ժողովածուին մասնակցեիք հողվածով: Ի պատասխան հայտարարել էիք, որ այժմ կոթվարանաք հողված տալ, սակայն այդ առթիվ նվիրում եք Դուք Ձեր մի ուսումնասիրությունը՝ «Սահակ-Մեսրոպ» վերնագիրը կրող: Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ ընդունեց Ձեր արժեքավոր նվերը և շնորհակալություն հայտնելով արձանագրեց այն ու որոշեց Ս. Էջմիածնի բացվելիք տպարանում առաջինը տպագրել Ձեր նվիրաբերած երկը:

Հաղորդելով Ձեզ վերոգրյալը՝ պիտի խնդրեի ուղարկել մեզ Ձեր երկասիրությունը, որ դնենք այն Ս. Էջմիածնի ձեռագրատանը՝ իբրև 101-րդ ձեռագիր և ըստ հնարավորության տպագրենք Ս. Էջմիածնի տպարանում:

Ողջունիվ և սիրով՝  
Մնամք աղոթարար  
ԳԵՎՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ»

### ՄԵՐ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Երբ մեկին անիծում ես,  
Ասա՝ տո՛ւն կառուցիր:

Աճառյանը միշտ մտածում էր իմ մասին, իմ ապագայի մասին և շատ էր մտահոգվում: Բանտարկությունից հետո հետագա՝ նոր հավանական բանտարկության վախը նրա համար միշտ մտածմունքի տեղիք էր տալիս: Նա հիշում էր, որ իր բանտարկությունից հետո մեր բնակարանի բռնագրավումով ես մնացել էի բոլորովին անտուն և միայն շնորհիվ լավ բարեկամների պաշտպանության և իմ մասնագիտության Աշտարակում ատամնաբուժություն անելով՝ կարողացել էի իմ գոյությունը պահպանել: Նա ցանկանում էր, որ ունենանք սեփական բնակարան:

Բացի այդ՝ մեր վերջին բնակարանը (Լենինի պողոտա № 99, 3-րդ հարկ, 7-րդ բնակարան) շատ բարձր էր իրեն համար և շատ հոգնեցուցիչ: Մեր բազմաթիվ դիմումները՝ բնակարանը փոխելու համար, մնացին անհետևանք:

Մի օր Աճառյանն ինձ ասաց.

– Սոֆի՛կ, շատերը սեփական բնակարան են կառուցում: Արի մենք էլ մեկ հարկանի մի բնակարան կառուցենք: Դա կարող է իմ կյանքը 10 տարով երկարացնել: Մենք էլ ունենք միջոցներ, կկարողանանք գլուխ հանել:

Ես ընդհանրապես ընդառաջում էի Աճառյանի հնարավոր բոլոր ցանկությունների կատարմանը: Բայց փորձ չունենալով և չիմանալով շինարարության ընթացքում ծագելիք դժվարությունները՝ անմիջապես հայտնեցի իմ համաձայնությունը:

Ձեռնարկեցինք գործը: Դիմեցինք Երևանի քաղաքային խորհրդի անհատական բնակարանների կառուցման բաժնին և խնդրեցինք, որ հարմար վայրում մեզ հողամաս տրամադրվի: Հողամասի հարցը շատ երկար ձգձգվեց: Ի վերջո մենք կարողացանք ձեռք բերել երգիչ Շարա Տալյանի հողամասը: Այդ հողամասը նա վաղուց էր ստացել՝ բնակարանի կառուցման համար, պարսպով և փշալարերով ցանկապատել էր ու թողել այդպես: Քաղաքային խորհուրդը թեև հողամասը մեզ հատկացրեց, բայց նկատի առավ, որ Տալյանը որոշ գումար ծախսել էր նրա վրա, հատուկ պայմանագրով այն վաճառեց մեզ (15000 ռուբլով):

Կառուցման դժվարություններից խուսափելու համար մենք մտածեցինք շինարարությունը հանձնել մի կազմակերպության, կազմել տալ հատակագիծ ու նախահաշիվ, վճարել փոխարժեքը և որոշյալ ժամկետին բնակարանը պատրաստ գտնել: Այս նպատակով ինչքան դիմեցինք զանազան շինարարական կազմակերպությունների, չկարողացանք արդյունքի հասնել: Աճառյանը, կյանքի գործնական դժվարություններին ընդհանրապես ծանոթ չլինելով, ինձ քաջալերելով, ասաց, թե մի՞թե ինքը չի կարող կառուցել տալ մեկհարկանի փոքր բնակարան: Ի վերջո մենք ծանոթացանք շինարար-ինժեներ Գուրգեն Պատյանին և հատուկ պայմանագրով կառուցումը վստահեցինք նրան:

Հատուկ դիմումով՝ պետությունը մեզ վարկավորեց 10 000 ռուբլով: Այդ, իհարկե, աննշան գումար էր և երբեք չէր բավարարի թեկուզ փոքր տան կառուցման համար, սակայն մենք կարծում էինք, թե մեր ստանալիք գումարները ժամա-

նակին կհասնեն և կավարտենք շինարարությունը հաջողությամբ: Աճառյանը «Անձնանունների բառարանի» 4 հատորը տպագրության էր հանձնել և դեռ ոչինչ չէր ստացել: Սպասում էինք՝ բոլորը միանգամից ստանալու համար:

Ահա այս պայմաններում մենք սկսեցինք տան կառուցումը: Շուտով, սակայն, պարզվեց, որ առածի ասածը ճիշտ էր. «Երբ մեկին անիծում ես, ասա՝ տո՛ւն կառուցիր: Պետությունից ստացած տասը հազար ռուբլի վարկից բացի՝ այդ շենքը կլանեց մեր բոլոր հնարավորությունները, Աճառյանի հոնորարները, կառուցման ժամանակամիջոցում նրա ստացած աշխատավարձը, մի խոսքով Դանայան տակառի նման, ինչքան լցնում էինք մեջը, կուլ էր տալիս, նորը պահանջում: Այդ տարի այդպես էլ չկարողացանք գնալ հանգստանալու:

Բանվորները շարունակ շինանյութ էին պահանջում. շատ դժվար էր, գրեթե անհնար պետք եղած նյութերը ճարելը: Աճառյանը հեռախոսով զանգահարում էր ամեն կողմ, բայց լավագույն դեպքում խոստումներ էր միայն ստանում, իսկ այդ խոստումները մնում էին անիրագործելի:

Հեռախոսային զանգերից բացի՝ նա այս ու այն կողմ գրում էր նաև գրավոր դիմումներ: Ահա այդ դիմումներից 2-ը՝ մնացած Աճառյանի արխիվում.

«Գլավլետոսփիտ

ընկ. Վարդան Մամիկոնյանին

**Դ Ի Մ ՈՒ Մ**

Ակադեմիկոս Հ.Աճառյանից

Իմ անհատական շինարարության համար, որ գտնվում է Բաղրամյան փողոցի №29 հողամասում, խնդրում եմ բաց թողնել 10 (տասը) խորանարդ մետր տախտակ:

Դիմող՝ ակադ. Հ.ԱՃԱՌՅԱՆ

Երևան,

7 սեպտեմբերի 1950 թ.:

Հասցես՝ Ստալինյան № 99,  
Բնակ. 7, 2-10-92»

«Հայմատառի կառավարիչ  
ընկ. Գնունուն

Դ Ի Մ ՈՒ Մ

Ակադեմիկոս Հ. Աճառյանից

Խնդրում եմ իմ անհատական շենքի համար բաց թողնել  
հինգ խորանարդ մետր տախտակ՝ 4-5 սանտիմետր հաստու-  
թյամբ, և ազրոցեմենտի խողովակ՝ 6 դյույմանոց՝ 100 մետր:

Խնդրում եմ ընդառաջել:

Հ. ԱՃԱՌՅԱՆ

Երևան,

14 հունվարի 1953 թ.»:

Տան կապակցությամբ Աճառյանը առիթ էր գտնում եր-  
բեմն դիմումի ձևով, կատակով և հումորով հագեցած գրու-  
թյուններ ուղղելու նաև ինձ:

### ԱՃԱՌՅԱՆԸ «ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆԻ» ՄԱՍԻՆ

1942 թ. տպվեց «Հայոց անձնանունների բառարանի»  
Ա հատորը, 1944 թ.՝ Բ հատորը, 1946 թ.՝ Գ հատորը, 1948 թ.՝  
Դ հատորը:

Դ հատորը տպվելուց հետո համալսարանի ռեկտորը  
մեռավ: Նրա փոխարեն ռեկտորի պաշտոնակատար եղավ  
Բաշինջաղյանը, և մի քանի ամիս հետո ռեկտոր նշանակվեց  
Գարեգին Պետրոսյանը: Ես ներկայացրի իմ բառարանի Դ  
հատորը և ասացի, որ պահանջս է 70 000 ռուբլի, և խնդրեցի  
այն վճարել: Ա, Բ, Գ հատորների հոնորարը արդեն լիովին  
ստացել էի: Դ հատորն էլ հանգուցյալ ռեկտորը ուզում էր



մաս-մաս վճարել, բայց ես չէի վերցնում, որպեսզի գումարը միանվագ ստանայի և հատկացնեի տանս շինությանը:

Պետրոսյանը խոստացավ վճարել, բայց ասաց, որ առայժմ փող չկա, կաշխատի Մոսկվայից ստանալ և վճարել: Երկու տարի ձգձգվեց: Ես տեսա, որ նա ուզում է երրորդ տարին էլ ձգձգել և վախենալով, որ ժամկետը կվերջանա, և ես այլևս իրավունք չեմ ունենա գանձելու, ուզեցի ռեկտորին դատի տալ: Նախապես գնացի նրա մոտ և հայտնեցի, որ դատի պիտի տամ: Նա խնդրեց, որ դատի չտամ, ու նորից խոստացավ, որ Մոսկվա կգնա, փող կստանա ու կվճարի: Բայց ես այլևս նրան չլսեցի և դատի տվի:

Երկար տևեց դատը: Գերագույն դատարանը երկու օր լսեց ու քննեց գործը և վերջապես երկար խորհրդակցությունից հետո վճռեց իմ օգտին: Ռեկտոր Պետրոսյանը բողոքեց Մոսկվա՝ Ա. Բիլինին: Ես էլ իմ պաշտոնական գրությունը ուղարկեցի: 5-6 ամիս է անցել արդեն, և դեռ ոչ մի պատասխան չկա:

### **Ռեկտորի պատճառաբանությունները և իմ պատասխանները**

1) *Ռեկտորն ասում է.* «Անձնանունների բառարանի» Դ հատորի համար պայմանագիր չունենք. դա նշանակում է, որ Դուք ձրի պիտի տայիք գիրքը՝ առանց հոնորարի»:

*Պատասխան.* «Պայմանագիր կնքել ենք Ա հատորի համար. այն ժամանակ հոնորարը մամուլին 600 ռուբլի էր: Բ հատորի ժամանակ նոր օրենքով հոնորարը բարձրացավ 2000 ռուբլու, ուստի Բ հատորի համար նորից պայմանագիր կնքեցինք (հասկանալի է, որ այս պայմանագիրը հաջորդ բոլոր հատորների համար էր, քանի որ չգիտեինք, թե քանի հատորով կվերջանար): Բ հատորի հոնորարը ստացա: Գ հատորի համար պայմանագիր չկնքեցինք, բայց հոնորարը ստացա ամբողջ: Դ հատորի համար էլ պայմանագիր կնքեցինք, բայց հանգուցյալ ռեկտորը մաս-մաս ուզում էր վճարել,

ես չվերցրի: Նոր ռեկտորը սխալ է դատում, եթե պայմանագիր չլինելու համար հոնորար չպիտի ստանամ, ուրեմն Գ հատորի համար էլ չպիտի ստանայի»:

2) *Ռեկտորն ասում է.* «Դուք այդ գիրքը մեր պատվերով եք կազմել, ուստի ձրի պիտի լինի»:

*Պատասխան.* «Ա հատորի առաջաբանում՝ էջ XIV, տպված է, թե այս աշխատությունն սկսել եմ կազմել 1910 թ.: Իսկ «Արմատական բառարան»-իս Զ հատորի վերջին էջում տպված է, թե ) «Անձնանունների բառարանը» պատրաստ է եղել 1932 թվին (ուրեմն գիրքը գրել եմ 22 տարվա ընթացքում): Այսպիսի գիրքը մեկ-երկու տարում չի կարելի գրել: Ուստի սուտ է խոսում ռեկտորը (որ այն ժամանակ համալսարանում չկար էլ), թե ինքը կամ իրենք են պատվիրել գրել:

Նախ՝ համալսարանի ուսմասվար Աբգար Հովհաննիսյանը, դատարան ներկայանալով, հայտնեց, թե ինքն է եկել ինձ մոտ, քննել է իմ բոլոր պատրաստի գործերը և հավանելով «Անձնանունների բառարանը», մեքենագրած ձեռագիրս վերցրել տարել է համալսարան: Քննել են և տպագրության արժանի գտել»:

3) *Ռեկտորն ասում է.* «Մինչև Գ հատորի վերջը գրել եք, բայց Դ հատորը մեր պատվերով եք գրել»:

*Պատասխան.* «Բառարանը պատմության ձեռնարկ չէ, որ մի մասը գրես, մի մասը թողնես, հետո շարունակես: Անձնանունների բառարան առաջին անգամ ես եմ կազմել: Մինչև որ Ա տառից մինչև վերջին տառը պատրաստ չլինի, չի կարելի տպարան հանձնել: Մանավանդ որ համալսարանը ամբողջ ձեռագիրը մինչև վերջ տարել և քննել է, ինչպես վկայում է Աբգար Հովհաննիսյանը: Համալսարանը չի կարող կիսատ գիրք տպարան տալ: Այս բոպեիս էլ գրքիս Ե (վերջին) հատորը ինձ մոտ է և սպասում է տպագրության»:

4) *Ռեկտորն ասում է.* «Փող չունենք, որ վճարենք»:

*Պատասխան.* «Իմ գրքերը անվաճառ չեն մնում: Ա, Բ, Գ, հատորները ծախված վերջացած են, Դ հատորից էլ քիչ է մնում»:

5) *Ռեկտորն ասում է.* «Մինչև այժմ 200 000 ռուբլի փող եք ստացել, բավական չէ՞, էլի՞ եք ուզում»:

*Պատասխան.* «Մուտ է ասում. Ա հատորից ստացել եմ 15 000 ռուբլի, Բ հատորից՝ 50 000, Գ հատորից՝ 50 000, բոլորը՝ 115 000, եթե պահանջում եմ, նվեր չեմ պահանջում, այլ ըստ պայմանի նշանակված հոնորարը»:

6) *Ռեկտորն ասում է.* «Համալսարանի դասախոսները օրենքով պարտավոր են տարեկան 5 մամուլ ձրի աշխատություն տալ համալսարանին»:

*Պատասխան.* «Այս օրենքը տրված է 1949 թ. դեկտեմբերին, ուրեմն իմ գրքի հրատարակությունից հետո»:

2) Ձրի տրված գիրքը դասախոսի դասախոսած առարկայից պիտի լինի, ես պարսկերենի դասախոս եմ, իսկ իմ բառարանը հայոց պատմություն է:

3) Ձրի տրված գիրքը ուսանողական ձեռնարկի նման մի բան պիտի լինի, իսկ իմ գիրքը մեծերի համար շատ մասնագիտական աշխատություն է:

4) Ես համալսարանին տվել եմ առանց հոնորարի «Արմատական բառարանս»՝ 6 հատոր, բոլորը՝ 8442 էջ, որ 5 մամուլի հաշվով եթե հաշվենք, մինչև 100 տարեկանս բավ է: Բացի այս ահռելի գործից՝ 19-ից ավելի ուրիշ հատորներ էլ ձրիաբար նվիրել եմ համալսարանին:

5) Ուրիշ հատորներ էլ պատրաստել եմ նվիրելու, բայց այդ գրքերը, Մառին հակառակ լինելով, մերժվելու էին:

6) Ձրի տպելու գիրքը ոչ թե համալսարանը պիտի ընտրի իմ գրքերի միջից, այլ ես ինքս պիտի նվիրեմ:

7) Ձրի գիրք նվիրելու օրենքը ոչ ոք չի գործադրել, ոչ մի դասախոս ձրի գիրք չի նվիրել:

Արմատական բառարան, 6 հատոր, 1926-1932 թթ. 8 442 էջ

Քննություն պոլսահայ բարբառի, 1941 թ.	234 էջ
Պարսկական հատրնտիր, 1925 թ. (Անտիպ)	40 էջ
Քննություն Մարադայի բարբառի, 1926 թ.	454 էջ
Իբնի Բատուտա հայոց մասին, 1931 թ. (Անտիպ)	40 էջ
Վավերագրեր, 1923 թ.	93 էջ
Ձեռագրական սրբագրություններ, 1926 թ.	83 էջ
Քննություն Նոր Նախիջևանի բարբառի, 1925 թ.	464 էջ
Գրաբարի ծաղկաքար, 1931 թ. (Անտիպ)	152 էջ
Գրաբարի ուսուցիչ, 1935 թ.	154 էջ

-----  
 Ընդամենը՝ 10 156 էջ

Սիրելի՛ Ամալիկ ջան.

Նախորդ գիշեր քաղցր ձայնդ լսեցի,  
 Երեկ գիշեր այս նամակը գրեցի,  
 Այսօր փոստին հանձնեցի,  
 ցի, ցի, ցի:

Հինգ օր հետո դու նամակս ստացար,  
 Աշխատանքդ դու մի բռպե մոռացար,  
 Երբ կարդացիր, դու բավական զարմացար,  
 ցար, ցար, ցար:

Այնուհետև դու Վոլինին գնացիր,  
 Ամեն ճարտար լեզուդ նրան թափեցիր,  
 Ինձ թվում է, որ նրան համոզեցիր,  
 ցիր, ցիր, ցիր:

## ԾԱՆՈԹԱՑՈՒՄ

Հրայա Հակոբի Աճառյանը 75 տարեկան է, մի ամսից ակադեմիան կտոնի նրա հոբելյանը: Նա ուսուցիչ է եղել 58 տարի, որից 28 տարի՝ Երևանի համալսարանում դասախոս: Ունի դոկտորական աստիճան. 1926 թ., անդամ է Փարիզի միջազգային լեզվաբանական ընկերության, թղթակից անդամ Չեխոսլովակիայի ակադեմիայի, իսկական անդամ հայոց ակադեմիայի: 60 հատորից ավելի գիրք ունի հրատարակած, 20 գիրք էլ՝ անտիպ: Այժմ «Լիակատար քերականություն հայոց լեզվի» (562 լեզուների համեմատությամբ) բազմահատոր գիրքը սկսել է տպվել Երևանում: Անցյալ տարի վնդվեց համալսարանից՝ ռեկտոր Գարեգին Պետրոսյանի ձեռքով՝ իբրև հակամառական, 7 ամիս հետո ընկ. Ստալինը միջամտեց, կես ժամ հեռախոսով խոսեց, և նրա հրամանով իր պաշտոնում վերահաստատվեց:

Մոսկվայի Գերագույն դատարանի նախագահի անունն է Ա.Վոլին: Այս նամակս կպահես, գուցե ես հետ պահանջեմ:  
Երևան, 1950 թ. Հ.Աճառյան:

Այդ աշխատանքները դեռ չեին վերջացել, երբ 1953 թ. ապրիլի 15-ի գիշերը վերջացավ վաստակավոր գիտնականի կյանքը: Բախտ չվիճակվեց նրան ապրել առաջին հարկում՝ իր բնակարանում՝ ազատվելով սանդուղքներով բարձրանալու տանջանքից, որին նա երագում էր 10 տարով երկարացնել իր կյանքը, ինչպես ասում էր ինքը՝ Աճառյանը:

Աճառյանի մահից հետո ես մարեցի շինության համար մեր բարեկամներից փոխարինաբար վերցրած գումարները, ինչպես նաև պետական վարկը: Ապա իմ մեջ մեծ ցանկութ-

---

<sup>5</sup> Տե՛ս «Հրաման Ս -170 Վ.Մ.Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի», 31 օգոստոսի 1949 թ.:

յուն ծագեց բնակարանը վերածել Աճառյանի անվան տուն-թանգարանի:

Այդ մտքով էլ ես դիմեցի պետական համապատասխան մարմինների, սակայն իմ փափագը չիրականացավ, որովհետև հանդիպեցի այն առարկությանը, թե շենքը հատկացնել բավական չէ, թանգարանը մեծ ծախսերի հետ է կապված: Ես ասացի, թե քանի կենդանի եմ, բոլոր գործերը հանձն կառնեմ հաճույքով, առանց որևէ վարձատրության, բայց դարձյալ չընդառաջեցին: Միայն ինձ ասվեց, որ եթե շենքը նվիրեմ պետությանը, այնտեղ կբացեն Աճառյանի անվան մանկապարտեզ:

Շենքը սպասում է իր վերջնական ճակատագրին: Ես հույսս չեմ ուզում կտրել և ուզում եմ, որ մի օր ցանկությունս իրականանա, և այն տեսնեմ վերածված Աճառյանի անվան տուն-թանգարանի՝ այնտեղ հավաքելով Աճառյանի անձնական իրերը, նրա գրադարանը, տպագրված գործերի ցուցանմուշները, տպագրված գործերի և անտիպ երկերի ձեռագրերը և այլն:

## **ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ**

1953 թ. մարտի 19-ին՝ վերջին անգամ իր մահվանից առաջ, Աճառյանը այցելեց Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիա:

Բայց այս անգամ, ո՛վ զարմանք, սովորականից տարբեր էր եղել իր այցելությունը:

Ակադեմիայում իսկույն հավաքվել էին Աճառյանի շուրջը, հետաքրքրվել նրա առողջական վիճակով, հարցրել, թե ներկայումս ինչ գործի վրա է աշխատում, տեղացել էին բազմաթիվ այլ հարցեր: Պատասխանել էր բոլորին, ասել, որ այնքան էլ լավ չէր զգում իրեն, զանգատվել էր, որ համալ-

սարանի ռեկտոր Գ. Պետրոսյանի նախ ձգձգումների և ապա վճարելուց հրաժարվելու պատճառով չէր կարողացել ստանալ «Հայոց անձնանունների բառարանի» չորրորդ հատորի հոնորարը, որի պատճառով էր չէր կարողացել ավարտել բնակարանի կառուցումը և կորցրել էր այլևս տունը կառուցված տեսնելու հույսը: Ապա նա հետաքրքրվել էր այն մասին, թե ինչ են լինում կամ ում են մնում մահացող ակադեմիկոսների ձեռագրերը, նրա ընտանիքին արդյո՞ք հասնում է հոնորար, արդյո՞ք նրա ընտանիքի անդամներին տրվում է մահացողի թոշակը: Նրան ասել են, թե մահացողի ձեռագրերը մնում են ընտանիքին, թոշակ է ստանում մահացող ակադեմիկոսի կինը, տպագրվող գործերի հոնորարները նմանապես մնում են ժառանգներին և այլն: Նա շատ է հուզվել, այս բաների մասին խոսելիս իրեն վատ է զգացել, ասել է, թե վախենում է մահանալուց, հայտնել է, թե շատ է խղճում Սոֆիկին, որովհետև չէր կարողացել ապահովել նրա հետագա կյանքի նյութական ապահովությունը, որովհետև բնակարանը կլանել էր իր նյութական բոլոր միջոցները:

Ակադեմիա այցելելու հաջորդ օրը այս բոլորի մասին Հրաչյան ինքը մանրամասնորեն պատմեց ինձ և գոհունակություն հայտնեց, որ իր մահվանից հետո ես անապահով չեմ մնա: Ես շատ հուզվեցի և ասացի, որ կարիք չկար այդպիսի բաների մասին մտածելու և հետաքրքրվելու, թե ինքն ավելի լավ կաներ՝ բժշկի գնալով իր ցավերը պարզեր և բուժման համար դեղ ու դարման խնդրեր: Հրաչյան հանդարտորեն պատասխանեց.

– Ամուսնու պարտականությունն է մինչև իսկ մահվան օրը մտածել իր ընտանիքի համար, ապահովել նրա գոյությունը:

Տեսնելով, որ Հրաչյայի մտահոգությունները լուրջ են, ես էլ շատ մտահոգվեցի և խորապես հուզվեցի: Ուրեմն նա գիտակցում էր իր առողջական վիճակի անհուսալիությունը,

հաշտվել էր մահվան գաղափարի հետ, գիտեր, որ մահը մոտալուտ էր այլևս, սակայն կյանքին հրաժեշտ տալուց առաջ ուզում էր իմանալ, թե իր «կյանքի ընկեր Սոֆիկի» կյանքն էլ մինչև իր վերջալույսը նյութապես ապահովված կլինի:

Մարդկային վսեմ և ազնի՛վ մտածում:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՄԱՆԸ

Աճառյանի մասին իմ հուշերում ես պատմեցի նրա վերջին տարիների հուզումնալից կյանքի մասին: Հալածանքները, անտեղի քննադատությունները, անհիմն կասկածները կարող էին վնասել Աճառյանի առողջությանը:

1952 թ. մայիսյան շուրջ միամսյա հիվանդությունից հետո թեև նա դուրս եկավ անկողնուց, վերսկսեց իր սիրած դասախոսություններն ու աշխատանքը, բայց այլևս նա նախկին Աճառյանը չէր: Բժիշկները հուսադրում էին նրան, ինքն էլ, ինչպես ընդհանրապես ամեն մի հիվանդ, ուզում էր հավատալ, բայց Աճառյանի առողջությունը այլևս ոչ միայն չբարելավվեց, այլև գնալով ավելի վատթարացավ:

Ես պատմեցի, թե մահվանից հազիվ մեկ ամիս առաջ նա եղել էր ակադեմիայում, և իր բոլոր խոսակցությունները եղել էին մահվան պատրաստվող մարդու հոգեբանություն:

Աճառյանի մահը թեև համարվում էր հանկարծակի, բայց իրականում անսպասելի չէր: Այսպես, իր մտերիմ բարեկամ, բժիշկ ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանն ինձ զգուշացրել էր և տվել էր մի շարք խորհուրդներ, որ Հրաչյայի սիրտն այնքան էր տկարացել, որ կարող էին հանկարծակի գլխապտույտներ առաջանալ: Եվ եթե այդպիսի բույներին կողքին մարդ չլիներ, այն կարող էր ծանր հետևանքներ ունենալ: Հետևելով ակադեմիկոսի խորհուրդներին՝ երբեք



առանձին չէինք թողնում Հրաչյային: Նույնիսկ բաղնիքում լողանալիս կամ զուգարան մտնելիս ես աշխատում էի որևէ պատրվակով չհեռանալ նրանից, թեև երբեմն տեղի էի տալիս նրա զայրալից բողոքին:

Մահվանից ընդամենը մի քանի օր առաջ Աճառյանն ասաց ինձ.

– Մոֆի՛կ, ես ինձ շատ վատ եմ զգում: Գնամ մի անգամ լեչկոմիսիա, տեսնեմ Մոռավյանին: Նա ինձ խոստացել էր լավ բժիշկ նշանակել՝ իմ բուժմանը հետևելու համար, թեև լեչկոմիսիայի անդամ չեմ: Թող ինձ մի անգամ լավ, ընդհանուր քննության ենթարկեն, տեսնենք՝ ինչն է հիմնական պատճառը այսքան վատ զգալու: «Մեր պոլիկլինիկայի բժիշկները,– ավելացրեց նա դժգոհությամբ,– դեռ նման են անփորձ երեխաների, դեռևս փորձված բժիշկներ չեն, ես հավատ ու վստահություն չունեմ նրանց վրա»:

Բայց այնպես էլ Աճառյանը չկարողացավ լինել լեչկոմիսիայում, պատմել ցավերը մի լուրջ, բանիմաց բժշկի: Եթե հասցներ էլ, իհարկե, այդ իրեն մահվանից չէր փրկի, լավագույն դեպքում կստանար կազդուրիչ և մեղմացուցիչ զանազան դեղեր, որոնք թերևս բուժման ժամանակավոր պատրանքներ ևս կարողանային ներշնչել, և կամ, ընդհակառակը, բժշկական անտեղի միջամտությունները ավելի տանջեին նրան:

Աճառյանը եղել էր Օդեսայում նշանավոր ակնաբույժ պրոֆեսոր Ֆիլատովի մոտ, որը նրա մեկ հատիկ աչքը մանրակրկիտ քննության ենթարկելուց հետո անհրաժեշտ էր համարել վիրաբուժական միջամտությունը և մեծ հույս էր սովել, որ տեսողությունը կվերականգներ: Պրոֆեսոր Ֆիլատովի հանձնարարությամբ հայ ակնավոր ակնաբույժ պրոֆեսոր Մելիք-Մուսայանը ինքն էր ստանձնել Աճառյանի խնամքը և հետևում էր նրա աչքի հիվանդության զարգաց-

ման փուլերին ու նախապատրաստում որոշված վիրահատության:

Մահվան օրը՝ 1953 թ. ապրիլի 15-ին, միշտ կենսուրախ գիտնականը կարծես ավելի էր ուրախ: Այդ օրը՝ դասախոսության գնալուց առաջ, Աճառյանը հումորով լի մի նամակ գրեց Գալաջյանին՝ ուղղված Մոսկվայում սովորող եղբորորդուս՝ Վիլիկին: Ահա այդ նամակը:

«Բոլորս լավ ենք, հատկապես հայրդ, մայրդ և Լիլիկը, բոլորն էլ բարևում են քեզ:

Հասցեն նույնն է, ինչպես նաև անունս և ազգանունս:

Հ. ԱՃԱՌՅԱՆ

15 ապրիլի (1953 թ.)

Երևան»

Գարեգին եղբորս և Ա. Գալաջյանի ընկերակցությամբ գնաց դասախոսության ու վերադարձավ սափրված, ավելի ուրախ տրամադրությամբ, ներս մտնելով ասաց.

– Մի՞ թե չեք նկատում ինձ:

Աճառյանը սովորություն ուներ վարսավիրանոցից վերադարձին այդպես կատակել և գրկախառնվել հարազատների հետ:

Այդ օրը «Ալմաստ» օպերայի համար նա երկու տոմս էր բերել ինձ ու Քնարիկի համար: Նա ասաց, որ օպերայի նոր բեմադրության մեջ փոփոխություններ են մտցրել, համոզեց, որ երկուսով գնանք անպայման, տեսնենք, վերադարձին պատմենք իրեն էլ, իսկ այժմի վիրահատությունից հետո նորից կգնանք՝ միասին դիտելու և լսելու օպերան: Նա պատմեց, թե դժվար էր ճարել տոմսերը, բայց կարողացել էր դրանք ձեռք բերել Ա. Գալաջյանի միջոցով:

Վաղուց էր, որ ես մոռացել էի օպերայի մուտքը, փորձեցի հրաժարվել գնալուց, Հրայան շատ ստիպեց, և ի վերջո համաձայնվեցի: Օպերա գնալիս նա այնպիսի ջերմությամբ ողջագուրվեց մեզ հետ, որ կարծես անսովոր էր: Արդյոք նա

կանխագգո՞ւմ էր մի տեսակ անբացատրելի բնագրով մոտա-  
լուտ վախճանը: Տանը Աճառյանի մոտ մնացին Ջոյան (այն  
ռուս բարի կինը, որ 24 տարի մնաց մեզ մոտ) և ուսուցչուհի  
Մարուսյա Պետրոսյանը:

Իմ տրամադրությունն այնքան էր վատ, որ ես համարյա  
չկարողացա ուշադրությամբ հետևել օպերային: Երբ վերջա-  
ցավ ներկայացումը, վերադարձանք տուն: Ինձ ասացին, որ  
Ժամը 1-ին Հրաչյան վատ է զգացել, ընդունել է վալիդոլ, որ ես  
դրել էի սեղանի վրա, պատվիրել, որ ինձ ոչինչ չասեն իր ան-  
հանգստության մասին և մտել է ննջասենյակ՝ մի քիչ քնելով  
հանգստանալու համար, ասելով, որ մեր վերադառնալուց  
հետո թեյ կխմեն:

Ես շտապ մտա ննջարան՝ Հրաչյային տեսնելու: Ինձ  
թվաց, թե նա խորը քնել էր: Մեղմ ձայնեցի, որ վեր կենա, բայց  
նա մնաց անշարժ: Հետո ավելի մոտեցա, որ արթնացնեմ,  
բայց սոսկումով նկատեցի, որ նա քնել է հավիտենական  
քնով:

Այսպես 1953 թ. ապրիլի 16-ին մահացավ պոլսեցի կոշ-  
կակար Հակոբի որդի Հրաչյա Հակոբի Աճառյանը: Իր բացա-  
ռիկ տաղանդով ու արժեքներով կարողացավ բարձրանալ  
վեր, շատ վեր՝ հասնելով ականավոր լեզվաբանի բարձր կոշ-  
մանը:

Աճառյանի թաղումը տեղի ունեցավ ապրիլի 19-ին՝  
կազմակերպված Հայկական ՄՍՀ գիտությունների ակադե-  
միայի կողմից: Հայրենիքից, Միութենական հանրապետու-  
թյուններից, արտասահմանից, Հայկական սփյուռքից, ամեն  
կողմից ստացվել էին ցավակցական հեռագրեր-նամակներ:  
Իրենց ցավակցությունն էին հայտնում ակադեմիաները, հա-  
մալսարանները, միությունները և ընկերությունները, թերթե-  
րի խմբագրությունները, մշակության այլ հիմնարկներ, գիտ-  
նականներ, ընկերներ, դասախոսներ, ուսանողներ, անհատ  
բազմաթիվ մարդիկ:

Թաղման թափորը Աճառյանի բնակարանից՝ Լենինի պողոտայի վերնից, ձգվում էր մինչև վերջ: Ծովածավալ այդ բազմությունը պերճախոս վկա էր Աճառյանի վայելած հարգանքի և ժողովրդականության: Էջմիածնից ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքչյանը, նկատի ունենալով այն, որ Աճառյանը եղել է գերագույն ճեմարանում դասախոս, իր ցանկությունն էր հայտնել, որ թաղումը կատարեն Էջմիածնում: Բայց ընդհանուր հանգամանքները նկատի առնելով՝ հարմար գտան Աճառյանի աճյունը ամփոփել Երևանի կենտրոնական գերեզմանատանը՝ պանթեոնում:

Աճառյանի դագաղի առաջ խոսեցին դամբանականներ: Հայրենի հողը մոր պես գրկեց աճյունը իր անմահ գավակի:

Իմ ջանքերով, արդար վաստակի արդյունքով նրա հողակույտի վրա կանգնեցրի արժանավայել հուշարձան, որի բացումը կատարվեց 1957 թ. մայիսի 12-ին՝ հանգուցյալի հարազատների, բարեկամների, համալսարանի պաշտոնակից դասախոսների և նախկին ուսանողների ներկայությամբ:

Աճառյանն իր կենդանության օրոք կանգնեցրել էր իր անմահության իսկական կոթողները, ինչպիսին են՝ «Արմատական բառարանը», «Լիակատար քերականությունն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» աշխատությունը, «Հայոց լեզվի պատմությունը», «Անձնանունների բառարանը», «Բարբառագիտությունը» և այլ կոթողներ, որոնք եղանակից ու ժամանակից խունանալ չգիտեն:

Թող նրա հիշատակը հավերժ մնա հայ մշակույթի գանձարանում:

«ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՎ

Գիտությանց ճեմարանի և Երևանի հայ

Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս

համալսարանի պատվարժան վարչությանց

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. -----

“ ” ապրիլի 1953 թ.

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

Հայագիտական երկնակամարի լուսատու աստղերից մեկն էլ մարեց. ի Տեր հանգյալ մեր և արտաքին աշխարհի մեծանուն հայագետներից հռչակված՝ ականավոր լեզվագետ Հրաչյա Աճառյանը:

Նա չէ մահացել, այլ իր գիտությամբ և «Արմատական բառարանի» նման իր բազմաթիվ արժեքավոր երկերով անմահացել է: Նորա հռչակը ևս առավել կբարձրանա, երբ նորա երկասիրությունները թարգմանվեն օտար լեզուներով և լույս տեսնեն նորա բազմաթիվ արժեքավոր ձեռագիր աշխատությունները և գիտական աշխարհին մատչելի դառնան:

Գիտության մշակը եղել է նաև ազգի մշակ: Եթե մեր գրասեր և ջանասեր նախնիքներն անցյալում մշակել ու զարգացրել են հայ կուլտուրան, որով յուրայնոց սերն են շահել և որով հայը օտարների հարգանքն է վայելում, նոցա ներկա ժառանգներն են գիտությանց ճեմարանը և Հայ համալսարանը Աճառյանի նման հայագետներով: Եթե անցյալում մեր մեղվաջան գիտնականները զարթեցրել ու զարգացրել են հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, որի շնորհիվ և պահպանել հայ ժողովրդի ազգային ինքնուրույն և անկախ գոյությունը, այսօր նոցա ժառանգներն են Գիտությանց ճեմարանը և Հայ համալսարանը Աճառյանի նման հայագետներով, որով գիտության մշակները դարձել են նաև ազգի մշակներ: Փառք և պատիվ նոցա:

Հայ գիտության և հայ ազգի մեծ մշակ և Մեր անձնական սիրելի բարեկամ Հրաչյան կատարել է իր պարտքը հանդեպ հայագիտության և ազգի, որով և անմահացել է նա: Նա ոչ միայն ապրում և ապրելու է իր գիտությամբ և անշունչ երկերով, այլ հավետ պիտի ապրի ազգի կենդանի հոգու մեջ, և միշտ լսե նորա «Ողորմիս»-ը:

Հայտնում ենք Մեր խոր վիշտը Հայ գիտությանց ճեմարանի և Հայ համալսարանի պատվարժան վարչությանց՝ նոցա դժվար փոխարինելի կորստյան առթիվ՝ ի դեմս հանգուցյալ Հրաչյա Աճառյանի, և Մեր մխիթարանքը նորա վշտահար ընտանիքին:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ- ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԳԷՈՐԳ Զ

(Կնիք)»

**Դ Ր Վ Ա Գ Ն Ե Ր Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն Ի**  
**Կ Յ Ա Ն Ք Ի Ց**  
**ՀՈՒՇԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ**

Թեհրանում Աճառյանը իր կնոջ՝ Արուսյակի հետ բնակվում էր մի բժշկի տանը՝ որպես վարձակալ: Տան գնումները Հրաչյան ինքն էր կատարում: Աճառյանների վերին աստիճանի մաքրասիրությունը հայտնի էր բոլորին: Ինչպես պատմում էր Հրաչյան, ինքը շուկա գնալու համար ուներ հատուկ վերնազգեստ: Շուկայում գնումներ կատարելով՝ վերադարձին հանում էր վերնազգեստը նախասենյակում, ապա նոր ներս մտնում՝ զգուշանալով, որ շուկայից բացիլ կամ վարակ չբերի տուն: Նաև պատմում էր, որ հացի գնալիս վերցնում էր մաքուր անձեռոցիկը, փոխից դուրս եկած տաքուկ հացը դնել էր տալիս մեջը, փաթաթում, բերում տուն:

Մի օր էլ հացի գնալիս Աճառյանը ծանոթանում է փոփ տիրոջ հետ և ասում է, որ նրա դուստր Հասմիկը իր աշակերտուհին է, շատ է հավանում նրան, իր աղջիկն է համարում ու շատ սիրում: Հասմիկի հորը այս խոսքերը շատ են ուրախացնում, և այդ օրվանից նրանք դառնում են լավ բարեկամներ: Աճառյանի ծանոթներից Հայկ Աճեմյանը, իմանալով Հրաչյայի մտերմությունը Հասմիկի հոր հետ, մտերմորեն հայտնում է Աճառյանին, որ ինքը սիրահարվել է Հասմիկին, ու խնդրում է Աճառյանին խնամախոսության գնալ և խնդրել օրիորդի ձեռքը: Աճառյանը՝ բնավորությամբ անմիջական և չափազանց անկեղծ, պատասխանում է. «Ափսոս այդ աղջկան, որ Ձեր ձեռքն է ընկնելու, Դուք շատ կոպիտ մարդ եք»:

– Ո՛չ, պարո՛ն Աճառյան,- ասում է Աճեմյանը,- բայց սիրոս շատ բարի ու մեղմ է. ես Հասմիկին այնպես կպահեմ, որ բոլորը կնախանձեն:

Աճեմյանը թախանձագին խնդրում է Հրաչյային, և նա վերջապես խոստանում է գնալ՝ Հասմիկի ձեռքը խնդրելու՝ հայտնելով, սակայն, որ դժվար թե հաջողվի:

Հրաչյան գնում է Հասմիկենց տուն, նրա ծնողները անչափ ուրախանում են, որ արժանացել են բոլորից սիրված ու հարգված ուսուցչի այցելությանը: Երկար խոսակցությունից հետո Աճառյանը հայտնում է իր այդ օրվա այցելության բուն նպատակը՝ մի քիչ գովելով Աճեմյանին:

Հասմիկի հայրը, որ երևի բավականին ծանոթ էր Աճեմյանին և այնքան ջերմ վերաբերմունք չէր ցույց տալիս այդ առաջարկությանը, իսկույն հարց է տալիս Աճառյանին.

– Պարո՛ն Աճառյան, եթե Հասմիկը Ձեր աղջիկը լիներ, կտայի՞ ք Աճեմյանին:

Աճառյանը, ինչպես չէր կարողացել կեղծել Աճեմյանին, բնական էր՝ չպետք է կեղծեր նաև իր բարեկամին:

– Ո՛չ, երբեք: Եթե ես Հասմիկի հայրը լինեի, Աճեմյանի խնդրանքը կմերժեի,- ասում է կտրուկ Աճառյանը՝ ավելացնելով,- բայց նա վանեցի է:

Հասմիկի հայրը հայտնում է, որ դա լինելու բան չէ, բայց իրեն անհարմար է զգում, որ խնամախոսը Աճառյանն է, ապա նա հույս է հայտնում, որ դրանով իրենց հարաբերությունները չեն փոխվի, և կմնան լավ բարեկամներ:

Աճառյանը հագիվ էր տուն հասել, երբ սրտատրոփ գալիս է Աճեմյանը՝ պատասխանի:

Դարձյալ նա իր սովորական անկեղծությամբ, ամենայն ճշտությամբ պատմում է իր ձախորդ խնամախոսության մասին:

– Ուրեմն, պարո՛ն Աճառյան,- ասում է Աճեմյանը ապշած,- Դուք գնացիք ոչ թե իմ գործը հաջողացնելու, այլ ձախորդելու:

Սակայն վանեցու վճռականությամբ Աճեմյանն ավելացնում է. «Միևնույն է, ես Հասմիկին կառնեմ»:

– Այդ արդեն ձեր գործն է,- քմծիծաղով ասում է Հրաչյան,- փորձեցե՛ք, միգուցե հաջողվեք:

\*  
\*   \*  
\*

Տարիներ անց Երևանում մի օր մեր դուռը բախեցին: Բացեցի, տեսա կարճահասակ մի մարդ՝ ծաղկեփունջը ձեռքին, հարցրեց.

– Ներեցե՛ք, տիկի՛ն, պարոն Աճառյանն այստե՞ղ է բնակվում:

Ես դեռ չհասցրած պատասխանել, Հրաչյան, աշխատանքը թողած, եկավ ընդատաջ, ողջագուրվեցին ջերմորեն: Աճառյանն անմիջապես եկողի ձայնից ճանաչել էր լսողա-



կան հիշողությամբ: Եկողն իր նախկին աշակերտներից Հայկ Միրզոյանն էր:

Աշակերտը հարգանքով և երկյուղածությամբ համբուրեց իր նախկին ուսուցչի ձեռքը: Հրաչյան, դառնալով ինձ, ասաց.

– Մոֆի՛կ, հիշո՞ւմ ես, սա այն Միրզոյանն է, որի մասին պատմել եմ քեզ, թե միշտ սուտ ու մուտ բառեր էր բերում ինձ, որպեսզի իմ գովեստներին արժանանար:

Դասարանի ամենաժիր և ամենափոքրիկ աշակերտն էր Հայկը: Մի օր էլ ընկերները հայտնեցին Հայկի բառերի շինծու լինելու մասին, և նա բռնվեց:

Հետո Աճառյանը ծիծաղելով դարձավ դեպի Միրզոյանը և ասաց.

– Լավ, այդ բոլորը ոչինչ: Ապա նստի՛ր, պատմիր տեսնեմ, թե ինչ կա Թեհրանում, ինչ չկա:

Երկար զրույցից հետո ուսուցիչն ու աշակերտը հիշեցին նաև հացի փռի տիրոջը և նրա դստերը՝ Հասմիկին: Միրզոյանն ասաց.

– Գիտե՞ք, պարո՛ն Աճառյան, Ձեր աշակերտուհի Հասմիկը անուսնացավ Աճեմյանի հետ, հիմա երեք հատ էլ աղջիկ ունեն:

– Լսեցի՞ր, Մոֆի՛կ,- ասաց Հրաչյան,- ես չասացի՞, որ նա վանեցի է, անպատճառ իր ասածը կանի:

– Պարո՛ն Աճառյան,- վերջում ասաց Միրզոյանը,- 25 տարի անցնելուց հետո ի՞նչպես ճանաչեցիք ինձ իմ ձայնից, առանց ինձ տեսնելու:

– Կպատահի,- պատասխանեց Աճառյանը,- ես ձայներն ավելի լավ եմ ճանաչում ու հիշում, քան անուններն ու դեմքերը:

## ԲԱՔՎԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՊԱՏԳԱՍԱՎՈՐ

Հրայան պատմում էր. «1926 թ. մի օր ինձ կանչեցին լուսժողկոմատ: Լուսժողկոմ Ա. Մռավյանն ինձ հայտնեց, որ պետք է գնամ Բաքու՝ այնտեղ կայանալիք համագումարում որպես Հայաստանը ներկայացնող պատգամավոր:

Ձևակերպեցին գործուղում և որպես ծախս ինձ տվեցին 50 ռուբլի: Ես մեկնեցի Բաքու. իջևանեցի կնոջս հորանց տանը և մինչև վերադարձս մնացի այնտեղ:

Համագումարի բացման օրը շտապեցի դահլիճ՝ մոռանալով, սակայն, ինձ հետ վերցնել հրավիրատոմս: Մոտեցա դռանը, ինձ ուզեցին ստիպել, որ հետևի մուտքից մտնեմ, իսկ այնտեղից էլ հարկադրեցին, որ մուտքը փակելու համար դրված տախտակի ներքևից՝ կռանալով մտնեմ: Ես զայրացա:

– Քանդեցե՛ք այդ տախտակը, – ասացի, – մա՞րդը պետք է ենթարկվի տախտակին, թե՞ տախտակը մարդուն:

Ապա մի գրություն գրեցի համագումարի նախագահությանը և հայտնեցի, թե այսպիսի վերաբերմունքը չեմ կարծում, որ Հայաստանին վերաբերի, այլ ինձ, ուստի ես չեմ կարող ներկա լինել համագումարին: Գրության վերջում նշեցի նաև իմ հասցեն և գնացի տուն:

Ճանապարհին հանդիպելով մի ծանոթի՝ պատմեցի պատահածը: Նա ասաց.

– Դուք քաղաքական լուրջ սխալ եք գործել:

Ես շատ վախեցա, եկա տուն և սպասեցի իմ վճռին: Չանցած մի ժամ՝ երկու մարդ եկան, ինձ կառքով տարան համագումարի դահլիճ: Մուտքի առաջ ինձնից ներողություն խնդրեցին, որ չեմ ճանաչել, տարան ներս և առաջարկեցին նստել նախագահության սեղանի շուրջ: Ես խնդրեցի նստել դահլիճում: Երբ հերթը հասավ ինձ, վեր կացա և Պոլսի ընտիր թուրքերենով կարդացի զեկուցումս: Բոլորը հիացան և

զարմացան, ուզեցին իմանալ, թե ով է Հայաստանի պատվիրակը, որ այդքան լավ տիրապետում է թուրքերենին:

Ձեկուցումից հետո նախագահության նախագահ Շեյխ-զադեն ասաց ինձ.

– Մենք (այսինքն՝ թուրքերը և հայերը) կենցաղով, բնավորությամբ, հագուստով, ճաշակով, ուտելիքով մոտ ենք իրար: Մնացե՛ք մեզ մոտ, աշխատեցե՛ք: Մենք ձեզ նման մարդիկ քիչ ունենք, համարյա թե չունենք: Ինչպիսի պայմաններ ցանկանաք, կստեղծենք Ձեզ համար, միայն համաձայնվեցեք:

– Ես դասախոսում եմ Հայաստանի համալսարանում, չեմ կարող,- պատասխանեցի:

– Այստեղ էլ համալսարան կա,- ասաց նա,- այստեղ էլ կդասախոսեք:

– Իսկ այնտեղ Հայաստան է,- եղավ իմ պատասխանը:

– Այստեղ էլ Հայաստանի նման մի բան է, հայերը մեզանից շատ են: Մենք հարազատ չունենք, օտար մշակույթին կուլ ենք գնում: Գոնե մի քանի անգամ եկե՛ք, դասախոսություններ ր կարդացեք մեզ համար:

Ես կտրականապես հրաժարվեցի՝ ասելով.

– Նախկին ուսանողներիցս կուղարկեմ: Ժամանակ չունեմ: Ես պետք է հայոց լեզվի «Արմատական բառարան» կազմեմ, 562 լեզուների համեմատական քերականություն կազմեմ:

Սեսիան վերջացավ, վերադարձա Երևան և ներկայացա Մոավյանին, զեկուցեցի իմ առաջադրանքի կատարման մասին և վերադարձրի 50 ռուբլին:

– Այդ ի՞նչ գումար է,- ասաց Մոավյանը:

– Մոռացա ք,- ասացի ես,- գործուղման ժամանակ տվեցիք:

– Դա Ձեր ծախսերի համար էր, վերցրե՛ք,- ասաց նա:

– Ի՞նչ պիտի ծախսեի,- հարցրի ես,- թուրքերն ինձ լավ էին հյուրասիրում, իսկ գիշերում էի կնոջս հորանց տանը, ծախսելու կարիք չկար:

– Բայց ես ինչպե՞ս հետ վերցնեմ Ձեր անվամբ դուրս գրված գումարը,- շվարած ասաց Մռավյանը:

– Փողը տալը գիտեք, իսկ հետ վերցնել չգիտե՞ք,- բարկացած ավելացրի ես,- ինչ ձևով ուզում եք, վերցրեք, միայն թե ինձ ազատեցեք այդ գումարից, սա իմը չէ, ինձ փող պետք չէ:

Մռավյանը ճարահատ կանչեց գրադարանապետին և կարգադրեց այդ գումարով գիրք գնել: Ապա նա ինձնից վերցրեց մի գրություն, թե ինձ պարտք չի մնացել, իսկ ինքն էլ սովեց մի անդորրագիր՝ ստացած 50 ռուբլու համար:

– Վերջապես այդ բեռից ազատվեցի,- ասացի ես և հանգիստ սրտով գնացի տուն:

## **ՀԱՆՌԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՍԱԿԱԿԻՑ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ**

Աճառյանը և Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանը (ապա Կաթողիկոս Ամենայն Հայոց 1945-1953) վաղեմի մտերիմ ընկերներ էին: Նրանք միաժամանակ պաշտոնավարել էին Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցում: Չորեքյանը կաթողիկոսական տեղապահության շրջանին հաճախ գալիս էր մեզ մոտ: Երբ նրանք երկուսով նստում էին, խոսում էին անցյալից, վերհիշում Նոր Նախիջևանի դպրոցում իրենց ուսուցչության տարիները, հիշում էին Երվանդ Շահազիզին, որ այդ ժամանակ դպրոցի տեսուչն էր եղել, գովեստով խոսում էին նրա մասին՝ որպես ազնիվ մարդու և լավ մանկավարժի:

Չորեքյանի և Աճառյանի հետ երբեմն ներկա էր լինում նաև հայտնի իրավաբան Գևորգ Չուբարը: Նրանք երեքով ավելի ուրախ էին լինում, ավելի լայնորեն էին բացում հուշերի իրենց տոպրակը և փոխադրվում անցյալի գիրկը: Լսելով հաճախ նրանց խոսակցությունը՝ ես զգում էի, որ այդ մարդիկ ապրում էին հուշ ու հիշատակ դարձած իրենց անցյալը, կարծես մոռանում էին նույնիսկ ներկայի իրականությունը: Այդ հանդիպումների ժամանակ նրանք խոսում էին Չաթալբաշյանի մասին (չգիտեմ, թե ով էր նա), հիշում էին Ա. Մյասնիկյանին, Սահակ Մյասնիկյանին: Վերջինիս հետ Աճառյանն ինձ ծանոթացրել էր Մոսկվայում, որտեղ նա աշխատում էր դատապաշտպանների կոլեգիայում:

Աճառյանը պատմում էր, որ Սահակ Մյասնիկյանը գրել էր մի ոտանավոր Նոր Նախիջևանի խառնակ բարբառով: Այն անգիր էին արել և երեքով միասին հաճախ արտասանում էին և հետո լիաթոք, քահ-քահ ծիծաղում: Ոտանավորը այնքան էին սիրում ու կրկնում, որ այն ինձ էլ սովորեցրին:

Մի անգամ Չորեքյանը և Մալխասյանը եկել էին մեզ մոտ: Մեր բնակարանը սարսափելի կերպով ցուրտ էր, և չգիտեինք, թե նրանց որտեղ հյուրասիրեինք: Ջեռուցում չկար, ապրում էինք խոհանոցում, որտեղ ունեինք մի էլեկտրասալիկ, որի վրա ճաշ էի պատրաստում, և նրա ջերմությունից տաքանում էր խոհանոցի օդը՝ թեև կերակուրների հոտով լցված: Աճառյանը հյուրերին ընդունեց խոհանոցում՝ որպես բնակարանի ամենահարմարավետ, ամենատաք և պատվավոր անկյունը: Աճառյանն ասաց.

– Մեր միակ տաք տեղն այս է, այն էլ թեև նեղվածք, բայց սրտներս թող լայն լինի:

Ապա դառնալով ինձ՝ ասաց, որ հյուրերին հյուրասիրեմ: Ես ամոթից չգիտեի ինչ անել: Փոքր խոհանոցում կար մի փոքրիկ սեղան, որի առաջ հազիվ երկուսով կարողանում էինք ճաշել: Սեղանը մոտեցրինք լուսամուտին, ուտելիքները

տեղավորեցինք լուսամուտի եզրին: Երեքով նստեցին սեղանի առաջ, բայց ինձ տեղ չմնաց, ոտքի վրա սպասարկեցի նրանց: Թվում էր, թե այդպես էլ նրանք շատ գոհ մնացին և ուրախ ժամանակ անցկացրին: Աճառյանն ասաց ուրախ.

– Մոֆի՛կ, տեսա՞ր, որ տեղավորվեցինք: Երկու այսպիսի հոշակավոր և հարգելի գիտնականների հետ միասին ճաշեցինք, իսկ ի՞նչ նշանակություն ունի, թե խոհանոցը փոքր է եղել, թող սեղանի պարունակությունը լավ և առատ լինի:

Եվ այսպես մի քանի ձմեռ մենք հյուրերին խոհանոցում էինք ընդունում:

Մի օր էլ դիմեցի տնային կառավարչին և թույլտվություն խնդրեցի վառարան տեղադրելու՝ խողովակը լուսամուտից դուրս հանելով: Խնդրանքս մերժվեց, և մենք շարունակեցինք տանջվել ցրտի ճիրաններում: Ճարահատ, առանց ոչ ոքի բան ասելու՝ գետեղեցի վառարանը: Ուշադրություն չգրավեց, ոչ ոք ոչինչ չասաց: Դա պատերազմի վերջին տարին էր, և մենք կարողացանք այդ ձմեռ մի քիչ մարդավարի տաքանալ, հանգիստ ապրել:

Մի օր էլ Աճառյանի բարեկամները եկան ավելի սովոր խմբով: Ներկա էին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքյանը, Ավետիք Բսահակյանը, Ստեփան Մալխասյանը և Գևորգ Չուբարը: Այժմ բոլորովին անհնար էր տեղավորվել խոհանոցում: Նրանք կատակելով, ծիծաղելով ասացին, որ ամենաուշ եկողը մնալու է դրսում: Ուշ եկողը Վարպետն էր: Նա ասաց, թե ոչ ոքի չի խանգարի, կնստի տիկին Մոֆիկի կողքին:

Ամեն անգամ, որ Մալխասյանը ներկա էր լինում հավաքությին, խոսակցության նյութ էր դառնում Մովսես Խորենացին: Երկար խոսում էին ու վիճում, Խորենացուն, մեկ, ըստ ոմանց կարծիքի, տեղավորում էին 5-րդ դարում, մեկ էլ, ըստ ուրիշների, հասցնում մինչև 8-րդ դար, բայց ընդհանուր ընդունելություն գտնող տեսակետը լինում էր այն, թե Խորենացին անկասկած 5-րդ դարի հեղինակ է:

Հաճելի էր տեսնել, թե պատկառելի այս գիտնականներն ու մտավորականները ինչպես մտնում էին իրենց տարերքի մեջ, տաքանում այն աստիճան, որ մոռանում էին անգամ դրսի ցուրտը, հիշում իրենց դպրոցական, երիտասարդական կյանքի շրջանը, պատմում հուշեր, հիշատակում բացակա կամ հանգուցյալ ընկերների անուններ, մերթ անդրադառնում հայ ժողովրդի ներկա վիճակին և միշտ իրենց խոսքերն ու մտածումները վերջացնում էին ապագայի վառ հույսերով, վառ երազներով:

## **ԱՃԱՌՅԱՆԻ ԿԱՊԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ**

Աճառյանը առաջներում բավական սերտ կապեր ուներ արտասահմանի հայկական գիտական կենտրոնների և անհատ գիտնականների հետ: Ցավալի է, սակայն, նշել, որ վերջին տարիներին նա շատ էր զուշանում, նույնիսկ խուսափում էր այդ կապերը պահպանելուց: Իր փոխանակած նամակներում, ինչպես այդ մասին այլ էջերում ևս ես գրել եմ, որ նույն պատճառով, ինչպես հայտնի է, մի ժամանակ փչացրեց իր արխիվում կուտակած շատ նամակներ:

Ես ձեռնարկել եմ հավաքել Աճառյանի նամակները: Չնայած ոչ քիչ թվով նամակներ եմ հավաքել մինչև հիմա, սակայն ինձ թվում է, որ Աճառյանի նամակների կարևոր մասը կմնա կորած կամ անհայտ: Ես հույս ունեմ, որ մի օր հնարավոր կլինի հրատարակել Աճառյանի հավաքված նամակները, որոնք կպարզեն նրա կյանքի և գործունեության հետ կապված շատ կարևոր հարցեր:

Արտասահմանի հայ թղթակիցները դիմում էին Աճառյանին գիտական կամ այլ զանազան հարցերով, խորհուրդ հարցնում: Երբեմն, օրինակ, հարցնում էին նրան, թե արև-

մտահայ ծանոթ մի գրողի հայտնաբերված անձնական ար-  
խիվը ուր կարելի է ուղարկել, կամ ինչ պետք է անել ձեռքբեր-  
ված մի շարք կարևոր հայերեն ձեռագրեր: Նման դեպքերում  
Աճառյանը միջոտ խորհուրդ էր տալիս, որ հայ մշակութային  
արժեքները իրենց վերջնական հանգրվանը պետք է գտնեն  
միայն մայր հայրենիքում:

Մի անգամ, հիշում եմ, արտասահմանից Աճառյանին  
հայտնում էին, որ զանազան բարբառների վերաբերող 17 ձե-  
ռագիր կա, ինչ անեն: Աճառյանն իսկույն պատասխանում է,  
որ պետք է զգույշ լինել, ձեռագրերը անմիջապես չուղարկել,  
կորչելու վտանգ կա, լավ կլինի, որ հայկական բարեգործա-  
կան միության միջոցով լուսանկարել տան բոլորը և հետո  
լուսանկարները ուղարկեն Երևան:

1935 թ. հունվարին Աճառյանի հասցեով ստացվեցին 2  
արկղ ձեռագրեր, լուսանկարչական պատճենահանումներ:  
Աճառյանի ուրախությունը չափ ու սահման չունեի, երբ ար-  
կղները բաց անելով՝ տեսավ, որ պարունակում են բարբառ-  
ների վերաբերող հիշված 17 ձեռագրերի պատճենահանում-  
ները:

Այս մասին Աճառյանն անմիջապես հայտնեց Մատե-  
նադարանի այն ժամանակվա դիրեկտոր Գևորգ Աբովին՝ ա-  
սելով, որ այդ ձեռագրերից կարելի է կազմել բարբառների մի  
ընդհանուր բառարան: Աբովը նրան առաջարկում է հանձն  
առնել այդ աշխատանքը: Համաձայնվում են: Տեսնելու էր, թե  
Աճառյանն ինչ եռանդով էր աշխատում՝ 17 ձեռագրերը միա-  
ժամանակ շարած սեղանի վրա, դիմելով մի ձեռագրից մյու-  
սին, ինչպես մեղուն ոստոստում է ծաղկից ծաղիկ: Նա հաշ-  
վել էր, որ օրական 7 ժամ աշխատելով՝ կարող էր ամիսը 2  
մամուլ տալ: Փորձի համար նա գրեց 100 էջ և ներկայացրեց  
Աբովին: Վերջնական կերպով համաձայնվեցին, որ Աճառյա-  
նը տա ամսական 2 մամուլ և ստանա 200 ռուբլի: Մի քանի  
օրից, սակայն, Աբովը հայտնում է, որ ամսական 2 մամուլը



քիչ է, պետք է տալ գոնե 3-ը: Աճառյանը, որ նախապես Արովին բացատրել էր գործի դժվարությունները, շատ է բարկանում և ասում, որ մինչդեռ ինքն աշխատում էր աշխատանքի ժամերը 7-ից էլ ցած իջեցնել, այժմ իրենից պահանջվում է ավելացնել: Ուստի հրաժարվում է այդ աշխատանքից և ասում, որ ավելի լավ կանեն աշխատանքը հանձնարարել այնպիսի պարապ մարդկանց, որոնք կարող են 2-ի փոխարեն տալ 10 մամուլ: Ապա Աճառյանը ձեռագրերի հետ Մատենադարան է հանձնում 17 ձեռագրերից կազմած նոր բառարանի 100 էջ՝ իբրև նմուշ ապագա աշխատողների համար: Եվ ասում՝ ցավելով, որ դժվար թե բացի Աճառյանից ուրիշ մեկը կարողանար այդ աշխատանքը կատարել:

Կյանքի վերջում միշտ ցավելով հիշում էր, թե ով պիտի այդ դժվարին գործը անի: Այլապես հայ բարբառագիտությունը այսօր կունենար իր գանձարանում ևս մի կարևոր աշխատություն: Ափսոսում էր, որ հնարավորություն չունեցավ այդ աշխատանքը կատարելու:

Գրված էր, թե Եգիպտոսում գտնվել է 3000 հունարեն, 250 հայ, վրացերեն և ղպտիերեն ձեռագիր: Տեղը և յուրաքանչյուրի քանակը չէր հիշված: Նամակագիրը խնդրում էր ինձնից մեր կառավարության միջոցով դիմել ուր պետք է և այդ ձեռագրերը մանրալուսանկարել տալ և բերել Հայաստան:

ԱՕԿՄ-ի նախագահը այս պարտականությունը իր վրա վերցրեց:

10 օր հետո պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը հեռախոսով հայտնեց ինձ, թե ձեռագրերը գտնվել են Եգիպտոսի մի հունական վանքում, ուր եղել են հունադավան հայ, վրացի և ղտի կրոնավորներ, այս բոլոր ձեռագրերը նրանց գրած կամ հավաքածներն են:

Ավելին իմանալու համար խնդրեց դիմել Երևան՝ պետական Մատենադարան, պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանին:

## ՀԱՆՑԱՆՔ ԵՎ ԶՂՋՈՒՄ

Աճառյանը պատմում էր. «Էջմիածնում եղած ժամանակ ձեռագրատան տնօրենն էր Գարեգին վարդապետ Հովսեփյանը (հետագայում կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո):

Մի անգամ հայտնեցի Գարեգին Հովսեփյանին, որ ես աշխատում եմ ձեռագրերի վրա մինչև աշխատանքի վերջը, ապա ձեռագրատունը փակվում է, և ես մնում եմ անգործ, արդյոք կարելի չէ՞ր, որ մի ձեռագիր տանեի սենյակս և գիշերները երկար աշխատեի՝ խոստանալով այն աչքի լույսի պես պահել և վերադարձնել:

– Ո՛չ, Հրայյա՛, - ասաց նա, - Մատենադարանից օգտվելու օրենքի համաձայն՝ չի թույլատրվում ձեռագրերը դուրս տանել, որովհետև ուրիշներն էլ կտեսնեն, և իրենք էլ կուզենան օգտվել նման հնարավորությունից: Քեզ օգնելու համար ես ուրիշ ձև կառաջարկեի. ես վստահում եմ քեզ, ուստի հանձնում եմ քեզ ձեռագրատան բանալին, դու կարող ես ձեռագրատանը մնալ և աշխատել, ինչքան ցանկանում ես:

Ես շնորհակալություն հայտնեցի նրան շատ սիրալիկ վերաբերմունքի համար և սկսեցի ամեն օր աշխատել մինչև ուշ գիշեր: Երբեմն էլ ձեռագրատան դուռը փակում էի, բանալին վերցնում հետս և գնում՝ մի պատառ բան ուտելու կամ մի քիչ հանգստանալու և ապա նորից վերադառնալու համար:

Մի օր էլ, երբ ես ձեռագրատան դուռը փակել և դուրս էի եկել, արտասահմանից հյուրեր են գալիս և ցանկանում են տեսնել Մատենադարանը: Ամենուրեք ինձ են փնտրում իզուր, և բավական ժամանակ անց ես եկա և բաց արի դուռը: Հայր Գարեգինն ինձ ասաց, որ այդպես չի կարելի, դա օրենքի խախտում է:

Ես առանց մտածելու, կարծես չարացած, պատասխանեցի.

– Իսկ Դուք օրենքը չե՞ք խախտել՝ բանալին ինձ վստահելով:

Հայր Գարեգինը խեղճացած արտահայտությամբ, բարի դեմքով նայեց ինձ և ոչինչ չասաց: Ես շարունակեցի օգտվել այդ բացառիկ պայմաններից: Անցան տասնյակ տարիներ, բայց ես չկարողացա մոռանալ իմ արած կոպտությունը, և հետզհետե իմ մեջ խորացավ գղջման զգացումը: Ես ինձ չկարողացա ներել, թե ինչու և ինչպես այդ բարի և առաքինի մարդուն պատասխանեցի այնքան կոպիտ կերպով և ներում չիսնդրեցի նրանից:

Աճառյանը ամեն անգամ որ հիշում էր իր սիրտը մղկտացնող անցյալի այս դեպքը, հառաչում էր ցավելով: Բայց ներում խնդրելու առիթը ներկայացավ:

1935 թվականն էր: Մեր դուռը ծեծեցին, բացեցի դուռը և տեսա մի հոգևորականի՝ շատ բարի դեմքով, նիհար, միջահասակ: Նա հարցրեց Աճառյանին, որը, ըստ իր սովորության, աշխատում էր: Հրաչյան իսկույն վեր կացավ, մոտիկից նայեց, ճանաչեց նրան. դա Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանն էր, որ նոր էր վերադարձել արտասահմանից: Վաղեմի մտերիմ բարեկամները ջերմորեն ողջագուրվեցին: Առաջին բառը, որ Աճառյանն արտասանեց, «ներողություն» բառն էր:

– Ներեցե՛ք ինձ,- կրկնեց նա,- ներեցե՛ք իմ անպատկառ հանդգնության համար: Այն օրվանից իմ հոգին տանջվում է, ես հանգիստ չունեմ: Ես վերջում միայն հասկացա իմ արածի ծանրությունը:

Աչքերը լցված արցունքով՝ Աճառյանը մեկ համբուրում էր սրբազանի աջը, մե՛կ սեղմում նրան կրծքին: Սրբազանը հանկարծակիի եկած չէր հասկանում, թե Աճառյանը ինչ հանցանքի համար էր այդքան խորապես գղջում և ներողություն խնդրում: Հրաչյան անդադար հեկեկում էր և չէր կարողանում հանգստանալ: Հետո նա նորից ուզեց համբուրել սրբազանի աջը, բայց նա չթողեց և հարցրեց, թե ինչ հանցան-

քի համար է ներողություն խնդրում: Աճառյանը հիշեցրեց ձեռագրատան բանալու պատմությունը: Սրբազանը ձևացնում էր, թե այդպիսի բան չէր էլ հիշում:

– Ոչինչ, Հրաչյա՛, – ասաց նա, – այդպիսի բաներ կարող են պատահել: Դու այնքան բարեկիրթ, ժրաջան աշխատող էիր և արդյունք տվող, որ ես չէի կարող քեզ մերժել: Մոռացի՛ր բոլորը, քո գործերով արդարացրել ես քեզ:

Տեսարանը հուզիչ էր: Ես էլ շատ ազդվեցի և չկարողացա զսպել արցունքներս: Ապա անցա հյուրասիրության պատրաստության: Լսում էի, թե նրանք ինչպիսի աշխուժությամբ շարունակում էին իրենց խոսակցությունը, պատմում հին հուշեր: Սրբազանը գանգատվում էր առողջությունից, հիանում Աճառյանի նոր գործերով: Երկար տևեց զրույցը սեղանի շուրջը:

### **ԱՃԱՌՅԱՆԻ «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ», ՉԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՆԱՆՑԱՆԸ**

Աճառյանի «Արմատական բառարանի» տպագիր 7-րդ հատորի ընդարձակ առաջաբանից հայտնի է, որ Աճառյանը բազմաթիվ նամակներ էր փոխանակել լեզվաբանների, բառարանագետների հետ՝ ճշտելու համար այս կամ այն բառի ստուգաբանությունը: Աճառյանի այդ նամակների մեծ մասը, սակայն, կորել է անհետ: Փրկված ու պահված նամակների կարևոր մասն էլ նորից «Արմատական բառարանն» է դարձյալ և նրա տպագրության հարցը:

Իր ուսուցչապետ Մեյեի, Գալուստ Տեր-Մկրտչյանի, Գրիգոր Խալաթյանի, Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանի, Մատթևոս արքեպիսկոպոս Տեր-Մաթևոսյանի, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանի և ուրիշների հետ փոխանակած

իր բազմաթիվ նամակները շատ բան են պատմում այս մասին:

Սակայն բառարանի տպագրությունը կապված էր մի շարք տնտեսական, պոլիգրաֆիական (գանազան տառատեսակներ, բազմաթիվ լեզուներ, շարողի հարց, թուղթ, ժամանակ և այլն), սրբագրական և այլ դժվարությունների հետ: «Արմատական բառարանի» լույս ընծայումը տասնյակ տարիներով զբաղեցրել է Աճառյանին:

Միայն Սովետական Հայաստան վերադառնալուց հետո է, որ Աճառյանը կարողանում է ձեռնամուխ լինել «Արմատական բառարանի» լույս ընծայմանը, և այս՝ դարձյալ ի հաշիվ իր անձնական ուժերի, ամբողջ առաջին վեց հատորները (շուրջ 8000 էջ) խնամքով արտագրելով խորատիպ տպագրության համար:

«Արմատական բառարանը», ինչպես պատմում էր Աճառյանը, հնարավոր էլ չէր հրատարակել նոր ուղղագրությամբ, որովհետև բառարանի ստուգաբանությունները հիմնված էին հին, դարավոր ուղղագրության վրա:

Բայց տպագրության ձեռնարկելուց առաջ այժմ ծագել էր մի նոր հարց՝ բառարանի ուղղագրության հարցը՝ ընդունված ուղղագրական նոր «ռեֆորմ»-ից հետո: Աճառյանը սկզբունքով դեմ էր նոր ուղղագրությանը:

Աճառյանի արխիվում կա Աբեղյանին ուղղված փոքր մի երկտող, որտեղ դրսևորվում է նրա անհաշտ դիրքը Աբեղյանի նոր ուղղագրությանը.

«Հարգելի բարեկամ,

Շատ դժվարությամբ եմ կարդում Ձեր նամակները: Կարդացի և ոչինչ չհասկացա: Չհասկացա, թե ինչ էիք պահանջում, գուցե սկսել էք գրել, հետո տեղ չլինելու պատճառով բուն նյութը չեք գրել կամ մոռացել էք գրել: Եթե Փանոսը չի պատասխանում Ձեզ, ես ինչ կարող եմ անել: Եթե ուրիշ անգամ էլ Ձեր յուրահնար «ուղղագրությամբ» գրեք,

զգուշացնում են Ձեզ, Ձեր նամակը ի վիճակի չպիտի լինեմ կադալու և անպատասխան պիտի թողնեմ՝ հակառակ քաղաքավարության:

Հարգանքներով՝ Հ.ԱՃԱՌՅԱՆ

3 ապրիլ 19...»:

«Արմատական բառարանը» հին ուղղագրությամբ տպագրելու թույլտվություն ստանալու նպատակով ԱՃառյանը բազմաթիվ դիմումներ ուղղեց վերադաս մարմիններին, բացատրեց հարցի էությունը և ի վերջո ստացավ ցանկացածը: Այսպես, Հայաստանի Կենտգործկոմի փոքր նախագահության 1925 թ. նոյեմբերի 17-ի նիստի № 25 արձանագրության քաղվածքը հաստատում է, որ նիստում *լսեցին* քաղաքացի Հ. ԱՃառյանի միջնորդությունը՝ հայկական արմատական բառարանի համար հին ուղղագրությամբ բառարան հրատարակելու թույլտվություն տալու մասին և «որոշեցին քաղաքացի Հ. ԱՃառյանին թույլատրել հրատարակելու հայ լեզվի արմատական բառարան հին ուղղագրությամբ»: Որոշման տակ ստորագրել են Հայկենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանը և քարտուղար Հ. ԱՃառյանը 1925 թվականի նոյեմբերի 19-ին:

ԱՃառյանի «Արմատական բառարանի» 1-6 հատորները ապակետիպ լույս տեսան 1927-1934 թվականների ժամանակամիջոցում, իսկ 7-րդ հատորը՝ 1935 թ.:

Մի անգամ գործկոմի նախագահ Անանյանը, լսելով ԱՃառյանի բառարանի մասին, ցանկություն է հայտնում տեսնել անուն հանած այդ աշխատությունը: Անանյանը կենտկոմի խորհրդատու Գրիգոր Չուբարի հետ խոսելու ժամանակ քարտուղարուհին, բառարանները մի մշակի շալակը տված, մտնում է Անանյանի ընդունարանը: Անանյանը, տեսնելով բազմաթիվ հատորները, ասում է. «Ես միայն ԱՃառյանի «Արմատական բառարանը» խնդրեցի, իսկ Դուք սեղանը լրցրեցիք գրքերով»: Չուբարը բացատրում է, թե այդ բոլորը նույն

բառարանի 7 հատորներն են: Անանյանը հետաքրքրվում է, թե Աճառյանը ինչպիսի մարդ է, որ կարողացել է այդքան գործ արտադրել, ով է Աճառյանի օգնականը: Այստեղ Չուբարը գովում է Աճառյանին որպես բազմաթիվ լեզուներ իմացող, հմուտ, բազմակողմանի զարգացած, լեզվագետ, աշխատելու անսպառ ուժի և եռանդի տեր մարդու:

Անանյանը ցանկություն է հայտնում՝ տեսնելու Աճառյանին: Չուբարն ասում է, որ թեև Աճառյանն ընդհանրապես խուսափում է պետական մարդկանց հետ հանդիպելուց, բայց խոստանում է նրան համոզել և բերել:

Չուբարը գալիս է Աճառյանի մոտ, խոսում Անանյանի մասին և ի վերջո հայտնում նրա ցանկությունը՝ խնդրելով չմերժել: Իր սովորական առարկություններից հետո Աճառյանը դժվարությամբ տալիս է իր համաձայնությունը, բայց կտրականապես մերժում հատուկ մեքենայով գնալ՝ բավական համարելով տրամվայր:

Որոշյալ ժամին Աճառյանը գնում է գործկոմ, բայց պահակը, նրան չճանաչելով, չի ուզում թողնել ներս առանց անցատոմսի: Աճառյանը բարկացած բարձրացնում է ձեռնափայտը, բղավելով ասում.

– Ես՝ Աճառյանս, մեր սեփական պետության մեջ իրավունք չունեմ մեր պետական ղեկավարի մոտ գնալու:

Չուբարը, լսելով աղմուկը, հասկանում է, թե բանն ինչ է, շտապ իջնում է ցած և բարձրանում Աճառյանի հետ:

Դիմելով Անանյանին՝ Աճառյանն ասում է.

– Կարծեմ Դուք եք ցանկություն հայտնել ինձ տեսնելու, սակայն դուռը փակել էք տալիս իմ առաջ:

Անանյանը ներողություն է խնդրում, որ պահակը, նրան չճանաչելով, չի ուզեցել ներս թողնել: Ապա նա հետաքրքրվում է «Արմատական բառարանով»:

Թեյի հյուրասիրության ժամանակ Անանյանը, ցանկանալով մի բանով օգտակար լինել Աճառյանին, հետաքրքր-

վում է նրա բնակարանային պայմաններով: Աճառյանն ասում է.

– Մեր բնակարանից ես դժգոհ չեմ, մեր սենյակը այս սենյակից էլ լավ է, լուսավոր, միայն մի քիչ կեղտոտ է թիթեղյա վառարանի պատճառով: Առատ վառելափայտ էլ ունենք, ամբողջ ձմեռ կրավարարի:

Անանյանը առաջարկում է հեռախոս տեղադրել բնակարանում:

– Շնորհակալ եմ, անհրաժեշտ չէ,- ասում է Աճառյանը,- այնքան դատարկ հարցեր կտան, որ ժամանակ չեմ ունենա աշխատելու:

Անանյանն առաջարկում է ավտոմեքենա:

– Մեքենան տվեք միլիցիային,- ասում է Աճառյանը,- թող գիշերը քաղաքը լավ պաշտպանեն, որ հանգիստ քնենք. քնից լավ բան կա՝ աշխարհում:

Անանյանը հետաքրքրվում է, թե արդյոք Աճառյանը մի որևիցե պատասխանատու խանութի կապված է պարենավորման համար:

– Կարիք չունեմ,- ասում է Աճառյանը,- մեր օրական 800 գրամ հացը բերում է իմ ուսանող Կարո Ղաֆաղարյանը. դա մեզ բավարարում է: Մեր շաքարն էլ նա է հայթայթում, չգիտեմ որտեղից:

Անանյանը զարմացած Աճառյանի անշահախնդիր և անկեղծ վերաբերմունքից և ցանկանալով գեթ մի որևէ բանով օգտակար լինել նրան՝ ասում է.

– Իսկ դուք, պրոֆեսոր, չէիք ցանկանա հանգստյան տուն գնալ, զոնե մեկ ամսով հանգստանալու համար:

– Ի՞նչ կարիք կա հանգստյան տան,- ասում է Աճառյանը,- երբ հոգնեմ, կպառկեմ իմ կարծր թախտի վրա, և հոգնությունս կանցնի:

Անանյանն ափսոսանք է հայտնում, որ ոչ մի բանով չի կարողանում օգտակար լինել Աճառյանին, ապա մի գրու-



թյուն է տալիս, որով հանձնարարում է նրան կցել մի խանութի: Վերջում նորից հարց է տալիս Աճառյանին, թե արդյոք որևէ ցանկություն, պահանջ չունի:

– Ասացի, որ մեր կարիքները հոգում է Կարո Ղաֆադարյանը: Միայն խնդրում եմ,- ասում է նա,- որ իմ «Արմատական բառարանից» հետո հրամայեք տպել իմ «Հայոց լեզվի պատմությունը»:

Աճառյանի մեկնելուց հետո Անանյանը ասում է Չուբարին.

– Ահա մի մարդ, որ գոհ է ն՛ իրենից, ն՛ մեզնից:

(Աճառյանի այս հանդիպումը ծնունդ է տալիս Ա. Ղարիբյանի անունով Աճառյանի անեկդոտների տետրակում գրանցված № 49 անեկդոտին):

### ՀԱՅ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԱՌՅԱՆԻՆ

1935 թվականն էր: Մի օր քրոջս ընտանիքը մեզ մոտ էր գտնվում՝ ճաշի: Այդ պահին այցելության եկան չորս երիտասարդ հայ զբոսաշրջիկներ: Աճառյանը սիրալիր ընդունեց նրանց, հրավիրեց սեղանակից լինելու: Նրանք ուրախությամբ ընդունեցին հրավերը: Զրույցի ժամանակ պարզվեց, որ նրանք Ամերիկայից եկած հայ բանվորներ են, եկել են՝ մասնակցելու Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակի տոնակատարություններին: Նրանք շատ էին հիացել Երևանով և ավստում էին, որ իրենք Հայաստանում չեն ապրում:

– Եթե ուզենաք, կարող եք գալ և ապրել Հայաստանում,- ասաց Աճառյանը,- ձեզ հետ միասին կաշխատենք ու կապրենք հայրենիքի կառուցման համար, հայ ժողովրդի ապագայի համար:

Սակայն նրանց խոսակցությունից հայտնի էր, որ մեր կյանքի պայմանները, բնակարանային պայմանները իրենց համար այնքան էլ հաճելի չեն թվացել:

– Պրոֆեսոր,- ասաց նրանցից մեկը,- Դուք մեծ գիտնական եք և կապրիք այս պայմաններուն մեջ, իսկ եթե մենք՝ հասարակ բանվորներս, գանք, ո՞ւր և ինչպե՞ս կրնանք ապրիլ:

– Դուք երիտասարդ եք,- ասաց Աճառյանը,- կգաք, կաշխատեք և ձեր սեփական հայրենիքում ձեզ համար սեփական տուն կկառուցեք: Պետությունն ինձ կարող է լավ բնակարան տրամադրել, բայց սա մեզ համար բավական է, ի՞նչ եմ անելու ավելի ընդարձակ բնակարանը:

– Մենք կուզենք գալ,- ասացին նրանք,- բայց մեր տիկինները և փոքրիկները չեն համաձայնիր ապրելու այս պայմաններուն մեջ: Մենք կկարծինք, որ Ձեր անվան ու հոչակին համապատասխան՝ Դուք կունենաք այնպիսի բնակարան, որտեղ մտնել մեզ չեն թույլատրեր ձեր պահակները: Բնականաբար մենք շատ ուրախ ենք, որ Դուք համեստ եք, և մենք դյուրությամբ կրցանք արժանանալ Ձեր տեսակցության, մեզ համար անմոռանալի առիթ մը եղավ Ձեզ հետ սեղանակից ըլլալը:

Հետո հյուրերը Աճառյանին նվիրեցին անգլերեն լեզվով իրեն ձևաված ռոտանավորներ ու գոհ մեկնեցին:

## ԱԲԳԱՐ ՊԱՅԱԶՍԻ «ԽԱԼԴԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԲԱՆԱԼԻՆ»

Մի օր Հրաչյան մի գորացրված զինվորականի հետ եկավ, ծանոթացրեց ինձ և ասաց. «Սոֆի՛կ, գիտես՝ այս ընկերը ուղիացի է, խալդերեն գիտե, գիրք է գրում և այդ ձեռագիրը ինձ է հանձնարարել, որ նայեմ»:

Այնուհետև Աբգար Պայազատը համարյա ամեն շաբաթ գալիս էր Աճառյանի մոտ, միասին երկար զբաղվում էին, Աճառյանը խորհուրդներ, ուղղություն էր տալիս նրան:

Մի օր էլ, երբ ես պարապում էի իմ դասերով, Աճառյանը Պայազատին ճամփելուց հետո սկսեց բարձրաձայն ծիծաղել այն աստիճան, որ ես հարցրի պատճառը: Հրաշյան բացատրեց.

– Սոֆի՛կ, գիտե՞ս՝ ես այս մարդուն անգթորեն ինչքան եմ տանջում, չարչարում: Ամեն անգամ, ի միջի այլոց, ես նրան գրում եմ ու տալիս սուտ ու մուտ բառեր՝ հանձնարարելով դրանց իմաստը ստուգել և բացատրել: Ես այսպիսով ուզում եմ ստուգել, թե արդյոք նա ճիշտ է հասկանում, թե՞ կփորձի ինձ խաբել: Բայց նա շատ ուղղամիտ է վարվում: Բառերից որը ճիշտ է, բացատրում է, իսկ որը շինծու է, գալիս և ասում է, թե չի կարողանում հասկանալ կամ իրեն չի հաջողվում գտնել բացատրությունը: Այս վերջին անգամ ես նրան առաջարկել եմ մի շարք իբր թե խալիքերեն բառեր, բոլորն էլ կեղծ ու շինծու, տեսնենք՝ ինչ պիտի անի: Քննության յուրահատուկ այս ձևով ինձ հաջողվում է ստուգել թե՛ նրա ազնվությունը, թե՛ բանիմացությունը:

Երկար ժամանակ Աբգար Պայազատը չէր երևում: Աճառյանն սկսում էր անհանգստանալ՝ արդյոք նա ուր էր: Մի օր էլ նա հայտնվեց և ասաց.

– Ընկե՛ր Աճառյան, այս անգամ ես իսկապես հուսահատվել եմ: Քանի շաբաթ է գիշեր-ցերեկ պրապտում եմ, չարչարվում, ոչինչ չի ստացվում, ոչ մի բառի բացատրությունը չեմ կարողանում գտնել: Բանիմաց շատ մարդկանց օգնության դիմեցի, նրանք էլ չկարողացան ոչ մի բառ բացատրել:

Աճառյանը, տեսնելով Պայազատի անկեղծությունը, հուզված նրա ձեռքը սեղմեց և ասաց.

– Ճիշտ ես վարվել՝ չբացատրելով անբացատրելի այս բառերը, որովհետև սրանք կեղծ են ու շինծու, ես դրանք դիտ-

մամբ եմ հորինել՝ փորձելու համար Ձեր անկեղծությունը և բանիմացությունը, դու հնարավոր պրպտումներ կատարեցիր, բայց երբեք անազնվությունը չունեցար նույնքան կեղծ ու շինծու բացատրություններով ինձ խաբելու:

Ես նայում էի Պայազատին ու խղճում: Նա, կարծես մի քիչ թեթևանալու համար, Աճառյանի այս բացատրություններից հետո դիմեց ինձ ու սսաց.

– Տիկի՛ն Սոֆիկ, Ձեր ամուսինն ինձ որքան տանջեց: Քիչ էր մնում հուսահատվելի. այս վերջին փորձից հետո որոշել էի թողնել ու հեռանալ, բայց լավ վերջացավ բարեբախտաբար: Եթե ուրիշն այս ձևով ինձ քններ, ես պիտի վիրավորվելի և վաղուց կթողնեի ու կհեռանայի, բայց որ Դուք էիք պրոֆեսոր Աճառյան, շատ շնորհակալ եմ և անչափ գոհ, որ ամոթով չմնացի Ձեր առաջ:

Այդ օրը թե՛ Աճառյանը և թե՛ Աբգար Պայազատը ուրախ էին: Աճառյանը խոստացավ անձամբ գնալ լուսժողովուրդ, բացատրել բոլորը և հաջողացնել Պայազատի գրքի լույս ընծայումը: Եվ տպվեց:

## ԱՃԱՌՅԱՆԻ «ՀԱՅԱՐՉԱՆԸ»

1937 թ. ամռանը, երբ ես Կիսլովոդսկում էի գտնվում, Աճառյանն ինձ գրում էր, որ ինքը շատ ուրախ էր և երջանիկ, որովհետև ինքը և մի խումբ ուրիշ գիտնականներ պայման են կապել գրականության ինստիտուտի տնօրեն Հենրիկ Գարրիելյանի հետ՝ կազմելու համար հայերեն արձանագրությունների մի ժողովածու: Հրայյան ուրախությամբ հայտնում էր, որ իր բաժինն արդեն պատրաստ էր:

Հավաքածուն կազմելու էին ինքը՝ Աճառյանը, Գարեգին Լևոնյանը և Աշխարհբեկ Քալանթարը: Այնինչ իր հեղինակակիցները դեռ պատրաստվում էին աշխատանքի, Աճա-

ոյանի հավաքածուն արդեն պատրաստ էր: Նախատեսված աշխատությունն ունենալու էր 50 մամուլ ծավալ:

Դժբախտաբար, սակայն, ծրագրված այդ աշխատությունը ձախողվեց ինձ անհայտ պատճառներով:

Աճառյանի մահից հետո՝ 1955 թվականին, Աճառյանի առանձին հավաքած արձանագրությունների ժողովածուն, որն անվանել էր «Հայարձան», նորից մտցվեց տպագրական ծրագրի մեջ: Ես այն մեքենագրել տալով ներկայացրել էի հրատարակության: Դա կլիներ մի բավականին սովոր հատոր: Աճառյանը մեծ աշխատանք էր ծավալել՝ հավաքելու հայերեն բոլոր արձանագրությունները՝ սկզբից մինչև 1500 թվականը: Վիթխարի աշխատանքով էր Աճառյանը հավաքել այդ բոլորը՝ դիմելով հնարավոր բոլոր աղբյուրներին: Արձանագրությունների հավաքման գործում նրան օգնել էին նաև գրագետ, մտավորական շատ մարդիկ:

«Հայարձանը» տպագրության հանձնելու այս երկրորդ փորձը ևս, տարաբախտաբար, արդյունք տվեց: Հեղինակի ձեռագրով և մեքենագրված օրինակներով, Աճառյանի այլ ձեռագիր անտիպ ժառանգությունների հետ պահում եմ գուրգուրանքով: Աշխատության մեքենագիր մի օրինակը մինչև հիմա էլ գտնվում է Պետհրատում՝ սպասելով մի օր տպագրության արժանանալու բախտին:

### **«ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»**

1943 թ. Աճառյանը պայմանագիր էր կնքել Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրենության հետ, ըստ որի՝ հանձն էր առնում ամեն ամիս ինստիտուտին ներկայացնել իր «Հայ գաղթակա-

նությունների պատմություն» աշխատությունից երկու մամուլ՝ ընդամենը 30 մամուլ ծավալով:

Աճառյանը թերակատարել էր իր խոստումը:

Հաջորդ տարի՝ փետրվարի 2-ին, պատմության ինստիտուտի տնօրենի տեղակալ, Աճառյանի ավագ ուսանողներից Կարո Ղաֆադարյանի ստորագրությամբ ստացվեց հետևյալ գրությունը. «1943 թ. հունվար ամսի 17-ին պատմության ինստիտուտի հետ կնքած պայմանագրով Դուք հանձն եք առել նույն թվականի հունվար ամսից սկսած ամեն ամիս 2 մամուլ ինստիտուտիս ներկայացնել «Հայ գաղութների պատմությունը» Ձեր ինքնուրույն աշխատությունը՝ 30 մամուլ ծավալով:

Սակայն Դուք տարվա ընթացքում խախտել եք պայմանագրի երկրորդ կետը (ամսական 2 մամուլ ներկայացնելու մասին) և ամբողջ տարվա ընթացքում 24 մամուլի փոխարեն ներկայացրել եք ընդամենը 8 ու 2/3 մամուլ: Նույն ժամանակամիջոցում Դուք մեզանից ստացել եք 12000 ռուբլի, այսինքն՝ 16 մամուլի արժեք, հետևապես առ 1-ը հունվարի 1944 թվի Դուք պարտք եք մնում մեզ արդեն վճարված հոնորարի դիմաց 7 ու 3/5 մամուլ:

Հայտնելով վերոհիշյալի մասին՝ խնդրում եմ Ձեր պարտքը մարել՝ ներկայացնելով 7. 3/5 մամուլ աշխատություն, որպեսզի հնարավորություն ունենանք շարունակելու հոնորարի վճարումը:

Խնդրում եմ՝ այս հարցի վերաբերյալ Ձեր որոշումը գրավոր կերպով հայտնեք ինձ»:

Աճառյանը շատ էր ցավում, որ թերակատարել էր իր հանձնարարությունը, բայց ավելի շատ էր ցավում, որ Ղաֆադարյանն իրեն թույլ էր տվել նման վիրավորական գրություն ուղղել իր նախկին դասախոսին, որի աշխատելու եռանդը ամենից ավելի լավ ծանոթ էր իրեն:

– Վեպի նման հաճույքով և հեշտ կարդացվող գիրք է,-  
ասում էր Աճառյանն այս աշխատության համար և  
ափսոսում, որ այդ անմիտ գրությունը պատճառ եղավ գրքի  
չտպվելուն, և ինքն իրեն մեղադրում, թե ինչու է նեղացել  
ինքը, որ նման վիրավորանքներ այնքա՛ն շատ էր տարել:

– Կարոն շատ լավ գիտեր,- շարունակում էր Աճա-  
ռյանը,- որ իմ գրքերի մեծ մասը տպված է առանց հոնորարի,  
նույնիսկ իմ նյութական ու ֆիզիկական մեծագույն զոհողու-  
թյուններով, և նա առանց ամաչելու շեշտում էր, որ ավելի  
գումար եմ ստացել:

Վիրավորանքի ցավն իր սրտում մնաց, զոնե այն մեղ-  
մացած լինելը գրքի տպագրությամբ:

### **«ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՅԹՈՒՆԻ ԲԱՐԲԱՌԻ»**

Աճառյանը գրել է «Քննություն Ձեյթունի բարբառի»  
աշխատությունը և այն նվիրել Երևանում զեյթունցիների  
կառուցած Նոր Ձեյթուն արվարձանին՝ հետևյալ ձևով. «Ե-  
րևանի հոյակապ բարձունքի գլխին՝ Մասիսի դեմ հանդի-  
ման, Նոր Ձեյթունի կառուցման առթիվ՝ հայրենադարձ հայ-  
րենակիցներին ձոն»:

Այդ աշխատությունը ևս ուրիշ շատերի նման մնաց ան-  
տիպ:

1962 թ. զեյթունցիները մեծ շուքով տոնեցին Ձեյթունի  
ապստամբության 100-ամյակը: Հիշարժան այդ տարեթիվը  
հանդիսավոր հատուկ նիստով նշեց նաև Հայկական ՄՍՀ գի-  
տությունների ակադեմիան:

Այդ առթիվ Աճառյանի այս աշխատությունը ես հանձ-  
նեցի շնորհալի երիտասարդ արձակագիր, «Մովետական  
գրականություն» ամսագրի խմբագրակազմի անդամ զեյ-  
թունցի Ստեփան Ալաջաջյանի ուշադրությանը: Նա եղավ

մեզ մոտ, ծանոթացավ ձեռագրին և խոստացավ այն հանձնել «Զեյթուն» հայրենակցական միության՝ ԱՄՆ-ում գտնվող կենտրոնական հանձնաժողովի ուշադրությանը՝ տպագրության առաջարկով:

Ցավոք սրտի, սակայն, պետք է ասեմ, որ տարիներ անց մինչև հիմա պատասխան չեմ ստացել: Ինձ թվում է, որ «Զեյթուն» հայրենակցական միության կենտրոնական հանձնաժողովը և Հայաստանում ապրող զեյթունցիները մեծ պատիվ պետք է համարեին իրենց հայ լեզվաբան Աճառյանի կողմից քննության արժանացած իրենց բարբառի ուսումնասիրությունը հրատարակված տեսնելու գործում:

### **ԶՐՈՒՅԹ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՀԵՏ**

1944 թ. մի օր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը, որը մեծ հարգանք էր տածում Աճառյանի հանդեպ, եկավ մեզ մոտ՝ Աճառյանին այցելելու:

Աճառյանը շատ սիրալիք ընդունեց նախագահին:

Այս երկու տիտանների հիմնական նյութն էր կարծիքների փոխանակումը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնադրության առթիվ:

Զրույցը ջերմ ու սիրալիք և մտերմիկ էր: Մտքեր էին փոխանակում ակադեմիայի հետ կապված զանազան հարցերի շուրջ:

Աճառյանը շատ մեծ կարևորություն էր տալիս հրատարակչական գործին: Աճառյանը հետաքրքրվեց, թե որքան գումար է հատկացված ակադեմիային հիմնադրման համար, ապա իմանալով, որ այդ գումարը 16000000 ռուբլի էր, ասաց.



– Ես ճիշտ գաղափար չունեմ փողի այժմյան արժեքի մասին, բայց թվում է, թե մեծ գումար է: Իսկ ի՞նչ եք անելու այդ գումարը, ի՞նչ նպատակների համար եք ծախսելու այն:

– Այդ գումարից տրվում է ակադեմիայի աշխատակիցների աշխատավարձը,– ասում է Համբարձումյանը,– ինչպես նաև ակադեմիկոսների կոչման համար վճարված գումարները: Բացի այդ՝ գումարներ են հատկացվում դասախոսությունների, պրոպագանդայի համար, գիտական փորձարկումների և լաբորատորիաների համար, ինչպես նաև զանազան կարգի այլ աշխատանքների համար:

Աճառյանը զվարթ ու կատակով ասաց.

– Այդ բոլորը քամուն տված փող է: Գի՛րք տպեք, գի՛րք տպեք, լավ կամ վատ գիրք, միայն գիրքն է, որ կմնա, պրոպագանդան ու ճառերը անցողիկ բաներ են, գիրքն է կարևորը և մնայունը, որ կմնա մարդկային կյանքի համար որպես գիտության արժեքներ:

Համբարձումյանը լռեց, հիմնականում հավանություն տվեց Աճառյանի կարծիքին, բայց միաժամանակ բացատրեց իր տեսակետը.

– Հարգելի՛ պրոֆեսոր, Ձեր մասնագիտությունը այնպիսին է, որ երբ ուզենաք, ինչքան ուզենաք, կարող եք գրել, իսկ կան այնպիսի մասնագիտություններ, որոնք տարիների աշխատանք, տքնաջան ուսումնասիրություններ են պահանջում, մինչև մի քանի տող կամ էջ գրելու նյութ ունենալը, այդպիսիք են, օրինակ, աստղագիտությունը, քիմիան և այլն, և այլն:

## **ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՈՄՍԱՐԿՂՈՒՄ**

Աճառյանի ցանկությունն էր, որ պետական հիմնարկներում, վարչություններում և բոլոր պաշտոնական վայրերում խոսվի հանրապետության պետական լեզուն՝ հայերե-

նր: «Եթե Հայաստանում հայերեն չխոսենք,- ասում էր նա,- ապա որտե՞ղ պիտի խոսենք»: Այս մասին Աճառյանի բնավորությունը ծանոթ էր բոլորին, հորինվել էին նույնիսկ անեկդոտներ:

1934 թ. ամառը Աճառյանը մեկնելու էր Լենինգրադ, որտեղ նախօրոք պայմանավորվել էր հանդիպել Սահակ Մյասնիկյանի հետ:

Աճառյանը ներկայանում է Երևանի քաղաքային տոմսարկղ, տալիս 6 ռուբլի և ասում.

– Խնդրում եմ, տվե՞ք մեկ տոմս՝ Լենինգրադ մեկնելու համար:

– Скажи по русский (Ասե՛ք ռուսերեն),- պատասխանում է տոմսավաճառը:

Աճառյանն ամենայն հանդարտությամբ կրկնում է.

– Վերցրե՛ք այս դրամը և ինձ մի տո՛մս տվե՛ք՝ Լենինգրադ մեկնելու համար:

– Не понимаю (Չեմ հասկանում),- ասում է տոմսավաճառը, անուշադրության մատնում Աճառյանին և զբաղվում հաջորդ հաճախորդով:

Աճառյանը, երրորդ անգամ լինելով, այս անգամ բարկացած ձայնով կրկնում է նույն բառերը, գանձապահը բարկացած բղավում է.

– Ну пошел (Դե կորի՛ր):

Աճառյանը, զայրույթը դժվարությամբ զսպելով, գնում է կայարանապետի մոտ, պատմում է եղելությունը և հարցնում, թե ինչու տոմսավաճառը չի բարեհաճում հայերեն խոսել: Կայարանապետն ասում է, որ վրացի է և հայերեն չգիտի: Հետո հայտնում է, որ եթե Աճառյանին տոմս է հարկավոր, ինքը կկարգադրի բերել:

Աճառյանը շնորհակալություն հայտնելով դուրս է գալիս և գնում ուղղակի գործկոմ՝ առաջին քարտուղար Հայկ Ազատյանի մոտ: Նա միաժամանակ դասախոսում էր համալ-

սարանում, և Աճառյանի հետ բավական մտերիմ բարեկամներ էին: Աճառյանը տոմսավաճառի հետ պատահաձր նույնությամբ պատմելուց հետո հարց է տալիս.

– Հա՛յկ, մի՞ թե Երևանում չկա մեկը, որ միաժամանակ իմանար հայերեն, ռուսերեն և նույնիսկ օտար կարևոր լեզուներ որոշ չափով, որ հաճախորդներին չկոպտեր և այդպես չվճնդեր: Եթե Հայաստանում հայերեն չխոսենք, ապա որտե՞ղ պիտի խոսենք:

Ազատյանը հենց Աճառյանի ներկայությամբ հեռախոսով կապվում է պատասխանատու ընկերների հետ, պատմում եղելությունը և կարգադրություններ անում: Ապա շնորհակալություն է հայտնում Աճառյանից, որ անմիջապես տեղյակ պահեց այդ մասին և դրանով իսկ օգնեց հարցի կարգադրմանը: «Եթե յուրաքանչյուր քաղաքացի իր պարտքը համարեր սրտացավ և հոգատար վերաբերմունք ցույց տալ նրման դեպքերի հանդեպ, - ավելացնում է նա, - ապա մեր գործը շատ կհեշտանար»:

Հաջորդ օրը Աճառյանը նորից գնում է տոմսակ վերցնելու: Նա նկատում է, որ հին տոմսավաճառը արդեն գործերն է հանձնում: Քիչ չանցած՝ նա, խոսքն ուղղելով տոմսավաճառին, ռուսերեն ասում է.

– Ну как теперь, я пошел или ты? (Ուրեմն ինչպե՞ս է այժմ, ես կորչեմ, թե՞ դու):

Ապա վերցնում է մի տոմս, Լենինգրադ մեկնում:

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Աճառյանը նամակագրական կապերի մեջ էր գտնվում հայ թե օտար արտասահմանյան գիտնականների, հայագետների հետ: Սակայն որոշ տարիներ նա խուսափում էր նա-

մակագրությունից, նա նույնիսկ չուզեցավ պահել մինչև այդ իր արխիվում հավաքված նամակներն ու գրագրությունները:

Աճառյանի նամակագրությունը ամերիկահայ ծանոթ մտավորական պարսկագետ դոկտոր Միհրդատ Թիրաքյանի հետ, շոշափելով գիտական լուրջ հարցեր, վերածվել է նաև բարեկամական, մտերմական հարաբերության: Աճառյանը նամակագրական կապեր է ունեցել նաև ժամանակին Միհրդատ Թիրաքյանի հոր՝ բժիշկ Հարություն Թիրաքյանի հետ:

Միհրդատ Թիրաքյանը որոշ օգնություն էր ցույց տվել նաև Աճառյանի «Արմատական բառարանը» ԱՄՆ-ի գրախա-նութներում վաճառելու գործում: Բացի այդ՝ նա շատ էր աշ-խատել, որ ՀՕԿ-ի միջոցով Աճառյանը ստանար մի գրամե-քենա, որովհետև կարծում էր, որ գրամեքենան կարող էր թե-թևացնել նրա գործը:

«... Կուգամ խնդրել Ձեզմե, թե արդյոք չպիտի բարեհաճիք այս առթիվ բանակցության մտնել Գ. Թահմա-զյանի հետ, և անոր ցուցումներով ու Ձեր ազդու միջամտու-թյամբ գործը հաջողացնեիք, ուղղակի Դուք անձամբ, դրամը Փարիզեն ստանալով, ինձի դրկեիք կամ դրկել տայիք գրամե-քենան: Շատ կարևոր է, որպեսզի ցավոտ աչքիս (ի ծնե միա-կանի եմ) չարչարանքը որոշ չափով ձեռքիս փոխանցեմ: Այս առթիվ տված նեղությանս համար հատուկ ներողություն կխնդրեմ և կանխավ սրտանց շնորհակալ եմ (1932 թ. սեպ-տեմբեր 3-ի նամակից)»:

Թիրաքյանը սիրով է ընդառաջել նաև Աճառյանի այլ խնդրանքներին: Այսպես, իր «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» աշխատու-թյունը ձեռնարկած լինելով՝ Աճառյանը կարիքն է զգում այ-լևայլ լեզուների քերականությունների: Իր՝ 3 մարտ 1936 թը-վակիր նամակում Աճառյանը գրում է Թիրաքյանին իր ծրագ-

րի մասին և հարցնում նրան, թե ամերիկյան վայրենիների լեզուների քերականություն կարելի կլինի արդյոք ճարել:

Թիրաքյանը հնարավորին չափ ընդառաջում է Աճառյանի խնդրանքին և իր՝ 25 հունիս 1953 թվակիր նամակում Աճառյանը հայտնում է այս մասին իր սրտագին շնորհակալությունները:

«Չափազանց մեծ ուրախություն զգացի, երբ ստացա Ձեր ուղարկած գիրքը՝ 10 լեզվի քերականության միասին: Ես մինչև հիմա կազմած եմ 87 լեզվի քերականություն (հայերենը, ֆրանսերենը, հունարենն ու լատիներենը չհաշված, ավելցնելով 10՝ պիտի ըլլա 97, որ հարյուրեն հեռու չէ: Մեծապես շնորհակալ եմ Ձեր այդ թանկագին նվերի համար, ի փոխարեն՝ ես ալ կխոստանամ նվիրելու Ձեզ իմ բոլոր տպած գրքերս այսուհետև: Այնուամենայնիվ, ստույգ է, որ ամերիկյան ընկերություն մը կա վայրենիներու լեզվի քննության, որու հասցեն երբ ձեռքս անցնի կուղարկեմ: Գիրքը ճիշտ ուզածիս պես է, նկարագրական քերականություն և ոչ ավելին: Յուրաքանչյուր երևույթ, որ տարօրինակ է մեր լեզվի և ընդհանրապես լեզվի համար, առանձին-առանձին պիտի առնեմ և տեղավորեմ իր պատշաճ տեղը...»:

Մի անգամ Միհրդատ Թիրաքյանը Աճառյանին ուղղված նամակներից մեկում ցանկություն էր հայտնել՝ Հայաստան այցելելու: Նա կարծում էր, որ Թիրաքյանին պակասում են նյութական միջոցները իր ցանկությունն իրականացնելու համար և որոշեց օժանդակել նրան: Այդ մասին Թիրաքյանին գրած՝ 1934 մայիս 15 թվակիր նամակում գրում էր. «Ձեր վերջին խոսքերը, որով փափագ կհայտնեք մեզ մոտ ըլլալ և մեր ընկերությունը վայելել, խորապես հուզեցին ինձ: Կհավատամ, որ ադիկա մեր բոլոր բանիմաց հայրենակիցներու ալ փափազն է: Երևանը հիմա մյուզե մըն է, ամեն տեսակ հայեր՝ սկսյալ սպահանցիներե մինչև Պոլիս, Ռոտտսթոն, Փարիզ, Լոնդոն և Ամերիկա, ունինք հոս: Աշխատողի

համար նյութ կա՝ լեզվական, հնագիտական, պատմական, ազգագրական և այլն և այլն: Այս տարի կլիման ալ սքանչելի կերթա. ձմեռը շատ ցուրտ չէր, գարունը երկար եղավ, և դեռ ամռան կիզիչ տաքերը հեռու են. Աշունն արդեն սքանչելի է: Եթե ո՛չ իմ հրավերը, գոնե բնության ձայնը չպիտի՞ ուզեիք լսել Դուք ալ և ուրիշ շատերու նման ճամփորդության մը ելլելիք դեպի այս կողմ: Իմ կողմես պատրաստ պիտի գտնեք ամեն հյուրընկալություն, մեծ ու լուսավոր սենյակ մը ունիմ մեծ փողոցի վրա, անիկա Ձեր տրամադրության տակ կդնեմ ամբողջապես: Բարեկամ մը ունիմ, որ կրնա իր այգին ամբողջապես Ձեզի տրամադրել, գեղեցիկ վրանի մը տակ կըրնաք գիշերել ամառային աստղազարդ երկնքի տակ, պտուղները իրենց բոլոր տեսակներով վայելել ճոխաբար: Երևանյան կարմիր կամ սպիտակ գինի, փափուկ գառան խորոված, բուրումնավետ կանաչիներ, Հրազդանի դրդոցը, սառնորակ ջուր, անամպ կապույտ երկնքի տակ... այս բոլորը հաճե՞լի չեն: Եթե ճամփորդության համար նյութականի պակաս զգաք, Columbia library-են ստանալիք 65 դոլարս, ինչպես նաև Թահմազյանի քով ունեցած 1000 ֆրանկս կրնամ Ձեզի փոխանցել՝ հետո մաս-մաս վճարելու պայմանով: Կհուսամ, որ որևէ ուրիշ դժվարություն չկա՝ Ձեր փափագը գոհացնելու և ի կատար ածելու: Երևանի մեջ ապրելու ամենալավ ժամանակը սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներն են»:

Թիրաքյանի ցանկության և իր պատասխան նամակի մասին Աճառյանը պատմում է Մելքոնյան ֆոնդի ներկայացուցիչներին և Հ. Հակոբյանին: Նրանք ծիծաղում են Աճառյանի պարզամտության վրա, ասում, որ Թիրաքյանը մեծահարուստ մարդ է և նրա դրամին կարիքը չունի՝ Հայաստան այցելելու համար: «Մի՞ թե Դուք այդ նամակը ուղարկեցիք, պրոֆեսո՞ր, խայտառակվեցիք»: Աճառյանը զայրացած ասում է, որ ինքը հարուստ մարդ չի ճանաչում այդ նամակից. նրա գրած նամակից երևում է, որ Հայաստան գալու հնարավոր

րություն չունի, երևում է, որ դրամի պակասություն է գգում, և ինքն էլ օգնում է, որ գա: Լսողները դարձյալ ծիծաղում են՝ ասելով, որ Աճառյանի 65 դոլարը և 1000 ֆրանկը ինչ է, որ նա դրանով ճանապարհ ելնի: Աճառյանը զայրացած բղավում է, որ ինքը նրան դրամ է ուղարկում, նրանից դրամ չի ինդրում, որ խայտառակվի, իսկ եթե նա հարուստ է, դրամի կարիք չունի, ավելի լավ, թող գա, իսկ իր դրամը իրեն կմնա: Նրանք նորից են ուզում մի բան ասել, բայց... «Կեցե՛ք, պատասխանը բարով կգա, կտեսնենք», - Աճառյանը ասում է ու հեռանում:

Թիրաքյանը պատասխանում է շատ համեստորեն և հայտնում, որ արգելք հանդիսացողը իր տարիքը և առողջական վիճակն են:

Այնուհետև Աճառյանի և Թիրաքյանի նամակները ավելի մտերմական բնույթ ստացան, փոխանակվեցին ընտանեկան լուսանկարներ:

Այժմ ևս շարունակվում է մեր նամակագրությունը: Թիրաքյանն ինձ է ուղարկել Աճառյանից իր ստացած բոլոր նամակների պատճենահանումները. դրանք լույս կտեսնեն Աճառյանի նամակների առանձին հատորում:

## ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԶՍՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ

Աճառյանի հայրը մահացել էր Ռոստովում 1912 թ.: Այնուհետև մայրը վերադառնում է Պոլիս և բնակվում իր քրոջ մոտ:

Այդ տարիներին Աճառյանը, ինչպես ինքն էր պատմում (գրած էլ կա հուշերում), երկու անգամ գնում է Պոլիս Արուսյակի հետ:

Աճառյանը միշտ ցանկացել է նյութապես օգնել մորն ու մորաքրոջը, բայց զանազան հանգամանքներ արգելք են հանդիսացել: Մի անգամ որպես փորձ մի փոքր գումար ուղարկել է Լևոն Շանթի հետ, բայց տեղ չի հասել: Եվ այսպես իմանալով հանդերձ, որ խեղճ մայրն ու մորաքույրը կարիքի մեջ են գտնվում, Աճառյանը չի կարողացել օգնության հասնել:

Հետագայում՝ 1936 թ., Աճառյանը Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանից մի նամակ ստացավ, որն ավելի շուտ մի հանդիմանական գրություն էր, որ պախարակում էր Աճառյանին, որ թեև հռչակված գիտնական էր և հավանաբար նաև ունևոր, սակայն ծեր տարիքում անխղճորեն թողել էր մորն ու մորաքրոջը թշվառ վիճակում՝ Աստծու խնամքին հանձնված: Աճառյանը իզուր փորձեց գումար հասցնել կարիքի մեջ գտնվող հարազատներին, բայց հնարավոր միջոցներ չգտավ:

Իսկ Աճառյանի կնոջ՝ Արուսյակի հայրը գտնվում էր Բաքվում: Աճառյանը թե՛ Արուսյակի կենդանության ժամանակ, թե՛ նրա մահից հետո կանոնավոր կերպով օգնում էր աներոջը՝ ամեն ամիս որոշ գումար ուղարկելով: Այսպես շարունակվեց մինչև չարաբաստիկ տարին՝ 1937 թ., երբ Աճառյանը բանտարկվեց: Խեղճ ծերունին որպես փեսայի անչափ սիրում էր Աճառյանին: Բանտարկության պատճառով երկար ժամանակ ոչ մի նամակ և ոչ էլ նյութական օժանդակություն չստանալով Հրաչյայից՝ ծերունին իր դողդոջուն ձեռքով մի սրտառուչ երկտող է ուղարկել Հրաչյային՝ նրա մեջ դնելով իր ամբողջ սիրտն ու հոգին: Մասունքի պես ես պահել եմ այդ երկտողը և ցանկանում եմ այն մեջ բերել, որպեսզի ընթերցողը տեսնի, թե ինչ անկեղծ սրտից են բխած այդ խոսքերը:

«Ամենասիրելի՛ և անմոռանալի՛ որդի Հրաչյա ջան.

Հայրիկի կարոտալի, սրտանց բարևը ընդունի՛ր և հիշի՛ր թանկագին ամուսնուդ, որ եկած է իմ որդի Արուսյակի



տեղը: Աստված այն կատարելությունը շնորհե, որ քո սիրելին ու կատարյալը լինի, կյանք ունենաք երկար աշխարհումս, ամեն:

Որդի՛, ի՞նչ է պատահել, որ այսքան ժամանակ քեզանից մի տեղեկություն չենք ստացել, մնացել ենք նիգյարան մեջ ընկած. Աստված չանե, որ դու մի որևէ փորձանքի պատահած լինես. չէ՞ որ ես քեզնով եմ ապրում, իմ հուսադեղս դու ես, առանց քեզ խավարած կլինեմ, թեև այս բոսնիս էլ սրտանց ցանկանում եմ մահը, բայց մահը հեռու է կանգնում ինձնից, ի՞նչ անեմ ես:

Որդի՛, Հրայս՝ ջան, ինձ քեզնից նիգյարան մի թողնի, ես քեզ մատաղ լինեմ, հուսադեղս դու ես, Աստված ողորմի ծնողներիդ հոգիներին, ամեն:

Արշամը և մայրը շատ ու շատ բարև ունեն քեզ: Ների՛ր ինձ, որդի՛, ձեռներս սաստիկ դողում են, չեմ կարողանում լավ գրել, մեծահոգի՛ եղիր անարժանիս, ես մատաղ լինեմ քեզ:

Մնամ աղոթարար իբր հայր քո, գիշեր և ցերեկ կյանքի համար բալասան:

Հ. ՀԱԿՈՒԲՅԱՆՑ

Բաբու,

20 հունիսի 1937թ.»:

Աճառյանը սիրում էր օգնել նաև իր ծանոթներին ու բարեկամներին, բայց նրա ազնվությունն ու բարությունը այնքան չարաչար շահագործողներ էին եղել, որ նա ստիպված դարձել էր շատ զգույշ: Սկզբում նրան շատերը խաբել են, որպես փոխառություն նրանից գումարներ են վերցրել ու չեն վերադարձրել: Ի վերջո, նա որոշել էր ոչ ոքի փող փոխ չտալ, բայց և այնպես եթե վստահ լինեիր խնդրողի ազնվության վրա և համոզված նրա կարիքի անհրաժեշտության, այդ դեպքում չէր կարող մերժել: Նա իր գրասեղանի աջ կողմի պահարանի կողքին՝ երևացող տեղում, կախել էր մի

գրություն. «Հայտնում եմ բոլորին՝ երդվում եմ Արուսյակի գերեզմանով, որ այլևս դրամ չունեմ պարտք տալու կամ փոխարինաբար, ուստի ինձ նույն հարցով չդիմեք:

Հ.ԱՃԱՌՅԱՆ

Բայց...»:

Գրության աջ կողմի ամենացածր անկյունում գրված էր մի «բայց», իսկ հակառակ կողմին՝ «նայած ով է խնդրողը»:

1932 թ. որոշ գիտաշխատողներ որոշել էին սեփական բնակարան կառուցել՝ իրենց բնակարանային պայմանները բավարարելու համար: Նույն նպատակով Տոնյանն էլ գալիս է Աճառյանի մոտ՝ խորհրդակցելու՝ մտադրված լինելով փոխ դրամ խնդրել: Աճառյանը աշխատելիս է լինում, նրան չխանգարելու համար մի քիչ սպասելիս՝ Տոնյանի ուշադրությունն է գրավում պահարանի կողքին գրված գրությունը, որը կարդում է: Աճառյանը վերջակետը դնում, գլուխը վեր բարձրացնելով՝ բարի գալուստ է մաղթում և հետաքրքրվում, թե ինչ կա, ինչ չկա:

– Ոչինչ,- ասում է Տոնյանը,- հենց այնպես եկա:

– Առանց գործ ունենալու դու չես գա, ասա՛՝ տեսնեմ՝ ես ինչով կարող եմ օգտակար լինել քեզ,- ասում է Աճառյանը:

– Ոչինչ,- կրկնում է դարձյալ Տոնյանը,- ես իմ պատասխանը ստացել եմ:

Աճառյանը, արդեն կռահելով, որ Տոնյանն այդ գրությունը կարդացել է, հարցնում է նրան, թե արդյոք աջ անկյունի «բայց»-ն էլ կարդացե՞լ է: Տոնյանն ասում է, թե նշված կետում ինքը ոչինչ չի նկատում: Աճառյանը հանձնարարում է մոտենալ և լավ նայել նորից: Տոնյանն աչքերը չռած նայում և նկատում է «բայց»-ը, որ գրված էր այնքան մանր տառերով, որ հազիվ թե հնարավոր լիներ կարդալ, և հարցնում է, թե ինչ է դրա նշանակությունը: Աճառյանն իսկույն վերցնում է գրությունը, շուտ է տալիս հակառակ կողմը և ասում.

– Այս կողմն էլ կարդա՛. սա իմ բարեկամների ցուցակն է, որոնց կարող եմ գումար փոխ տալ:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՃԱՇԱԿԻ ՄԱՍԻՆ

Մի անգամ՝ 1935 թ., Էջմիածնի Գևորգյան ճեմարանի նախկին դասախոս և Աճառյանի վաղեմի բարեկամ Սիրական Տիգրանյանը եկավ մեզ այցելության: Մենք նրան պահեցինք ճաշի: Հին բարեկամները երկար, սիրալիք զրուցեցին:

Տիգրանյանն ասաց Աճառյանին.

– Ես անչափ ուրախ եմ, որ ամուսնացել ես: Այժմ դու կարող ես կյանքդ լավ դասավորել, ուրախ, մարդավայել կյանք վարել: Միայն խորհուրդ եմ տալիս, որ այդ թափօրջվածությունը թողնես, վրադ-գլուխդ շտկես, ճաշակով հագնվես:

Ապա նա սկսեց ֆրանսերեն խոսել Աճառյանի հետ: Հրաշյան, ըստ իր սովորության, սկսեց նրա միտքն ինձ թարգմանել ու մեկնաբանել:

– Սոֆի՛կ, բարեկամս ասում է, որ քեզ լավ պահեմ, չձանձրանամ, միշտ օպերա, թատրոն, ման գալու տանեմ: Երևի կասի նաև, որ այլևս բնավ չաշխատեմ, միայն քեզանով զբաղվեմ: Իսկ դու ի՞նչ կասեիր, Սոֆի՛կ,- խոսքն ինձ ուղղեց Աճառյանը:

– Ես կուզենայի, ինչպես ասաց բարեկամդ՝ Տիգրանյանը, որ դու լավ հագնվես, ճաշակավոր լինես: Տեսնում եմ, որ ասում են, թե բնավ ճաշակ չունես:

Տիգրանյանն անմիջապես.

– Օ՛, ո՛չ, ներեցե՛ք, տիկի՛ն, Աճառյանը շատ լավ ճաշակ ունի, Դուք սխալվում եք, Դուք Ձեր ճաշակի մասին խոսեք, ես շատ եմ հավանում Հրաշյայի ճաշակը:

Աճառյանը ամբողջ սրտով ծիծաղեց, բայց ես այն ժամանակ ոչինչ չէի հասկացել Տիգրանյանի ակնարկությունից, հետո Հրաչյան ինձ բացատրեց:

### ԲՈՒԶԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1935 թվականն էր: Մի օր՝ աշխատանքի ժամանակ, Աճառյանն ինձնից մի բաժակ թան խնդրեց: Թանը պատրաստեցի և համտեսելով գտա, որ բավականին թթու է: Թըրփությունը մեղմելու համար մի քիչ շաքարավազ ավելացրի և սվեցի Հրաչյային: Նա խմեց հաճույքով և ասաց.

– Սոֆի՛կ, այս թանն ինչպե՛ս պատրաստեցիր: Շատ հաճելի համ ունե՛ր, կարծես իսկական բուզա՝ լինե՛ր:

Բացատրեցի, թե թթու ստացվեց, ես էլ մի քիչ շաքարավազ ավելացրի:

Հրաչյան տեսավ, որ դեռ կա այդ մածունից: Ասաց, որ կզնա, մեր հարևան պրոֆեսոր Քեչեկին իր կնոջ՝ Յուլյա Գրիգորևնայի հետ կկանչի:

Պատրաստ թանը ես բերեցի շշով՝ բուզա անվան տակ, լցրի բաժակները և հրամցրի հյուրերին: Նրանք այնքան հավանեցին, որ սկսեցին հարցնել, թե այդ որտեղից է: Ես լցրի երկրորդ բաժակը, և նրանք դարձյալ ախորժակով խմեցին ու նորից հարցրին, թե ինչպես կարելի է ձեռք բերել այդ բուզայից մի քանի շիշ:

– Տեղն ի՞նչ պիտի անեք, սրանից հետո երբ ցանկանաք, կարող եք մեզ մոտ գալ և բուզա անուշ անել:

Քեչեկը, քիչ նեղացած, ասաց.

– Լավ, Հրաչյա՛, հասկացանք էլի, բայց մենք էլ ենք ուզում տեղն իմանալ և վերցնել մի քանի շիշ:

---

\* Բուզան ուզբեկական զովացուցիչ ըմպելիք է՝ թթու և քաղցր համով, թանի նման սպիտակ:

Ի վերջո Հրաչյան ինձ ցույց տվեց: Ես բացատրեցի բու-  
զայի «հայտնաբերման» նոր գաղտնիքը: Նրանք զարմացան և  
գոհ մնացին: Ասացին, որ անպայման իրենք էլ կփորձեն:

## ՄԱՁԵՐ ՆԵՐԿԵԼԸ

Աճառյանը մի օր մազերիս մեջ սպիտակ մազ էր նկա-  
տել: Նա չէր ուզեցել այդ մասին ուղղակի ասել ինձ՝ մտածե-  
լով, որ սիրտս կվշտանա, սկսեց կողմնակի, հեռվից, հեռու  
պատմություններով իմ միտքը նախապատրաստել:

– Գիտես, Մոֆի՛կ, մի օր Աստղիկ Մանանդյանը Արուս-  
յակին ասել էր, որ մազերը շատ էին սպիտակել, և խորհուրդ  
էր տվել ներկել, որպեսզի ես չնկատեի: Նա նրան ասել էր, որ  
Հրաչյան սպիտակ մազեր չի սիրում: Այդ պատճառով  
Արուսյակը շատ աղիողորմ լաց եղավ: Այդ բանից հետո նա  
շատ տխրեց, հիվանդացավ և մահացավ: Ինձ այնպես էր  
թվում, որ մազերի սպիտակելու հոգսը եղավ նրա մահանա-  
լու պատճառներից մեկը:

Հրաչյան ասում էր, որ սպիտակ մազերը ոմանց շատ են  
սազում և նույնիսկ առանձին գեղեցկություն են տալիս դեմ-  
քին: Իսկ այն կանայք, ասում էր նա, որոնք չեն սիրում սպի-  
տակ մազերը, կարող են ներկել դրանք ավելի լավ գույնով:

Եվ այսպես Հրաչյան ինձ հասկացրեց, որ սպիտակ թե-  
լեր կան իմ մազերի մեջ, և, իհարկե, երբեք չէի ցանկանում, որ  
ես էլ Արուսյակի նման ցավեի դրա համար ու մեռնեի: Հետո  
արդեն ինքն անձամբ ինձ համար մազերի հատուկ ներկ էր  
բերում և միշտ խնդրում, որ ներկեմ մազերս: 1952 թ. մայիս-  
յան հիվանդությունից հետո հենց որ ոտքի կանգնեց և առա-  
ջին անգամ տնից դուրս եկավ, միանգամից 10 սրվակ մազի  
ներկ էր գնել դեղատնից: Մի ուսանող սիրով օգնել էր՝ սըր-

վակները տուն բերելու: Տուն հասնելով՝ կատակով նա ինձ ասաց.

– Սոֆի՛կ, ահա քեզ *վաստանավիժել* (восстановитель)՝ առատ մազի ներկ եմ բերել: Միշտ ներկի՛ր մազերդ, որպեսզի շուտով, երբ աչքս վիրահատեն, և տեսողությունս վերականգնվի, քեզ սպիտակած մազերով չտեսնեմ:

Խե՛ղճ Հրաչյա, դու, որ ցանկանում էիր Սոֆիկի մազերը միայն սև տեսնել, ինքդ փակեցիր աչքերդ հավետ, որ էլ չտեսնես Սոֆիկին:

## ՍԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի անգամ, երբ խոհանոցում սանդով բան էի ծեծում, Հրաչյան հուզմունքով ներս մտավ խոհանոց և ասաց. «Սոֆի՛կ, այդ սանդի ձայնն ինձ շատ բան է հիշեցնում: Ես պատկերում եմ Պոլիսը, մեր երկհարկանի տունը, մորս, նույնիսկ այն տեղը, որտեղ մայրս միշտ սանդով կաղին, ընկույզ էր ծեծում, և ես հետաքրքրությունից ինձ նետում էի դեպի ձայնը՝ գիտենալով, որ լավ բան պիտի ուտեմ. մայրս էլ ամեն իմ ներս մտնելուն հարցնում էր. «Հադե՛, տղա՛ս, մադեթ պտըտցուր-պտտցուր տեսնեմ՝ ինչ պիտի ուզես»: Ես էլ վերցնում էի սանդը՝ օգնելու նպատակով, ինքս էի ծեծում, իհարկե, ծեծածիս կեսն էլ՝ ուտում:

Ինձ համար մութ մնացած բնավորության այս գիծն էլ պարզելուց հետո ես հաճախ աշխատում էի նրան հաճույք պատճառել՝ սանդ ծեծել, թեն երբեմն իսկի հարկ էլ չէր լինում: Այդ հիմնականում անում էի այն ժամանակները, երբ նա ինչ-որ բանից վրդովված էր կամ էլ շատ հոգնած, և չէր լինում նրան կտրել սիրած գործից: Սկսում էի սանդ ծեծել: Նա անմիջապես հայտնվում էր խոհանոցում, մի փոքր դադար առնում, օգտվում ծեծվող բարիքից (կաղին, ընկույզ),

նույն բույսերին պատմում մի քանի անեկդոտ կամ իր կյանքից հետաքրքիր էպիզոդ ու լիովին բավարարված, հանգստացած ու թարմացած նորից անցնում աշխատելու:

## ԱՇՈՏ ՄԱԽՍԵՆԻՉԻ ՊԱՐՏՔԸ

Աշոտ Մախսենիչը բաժանորդագրվել էր «Արմատական բառարանին», որը լույս էր տեսնում պրակներով, յուրաքանչյուր պրակը 1 ռուբլի արժեքով: Աշոտ Մախսենիչը ստացել էր 3 պրակ, բայց դեռ պարտքը չէր վճարել:

Աճառյանը դիմում է Աշոտ Մախսենիչին և խնդրում, որ իր պարտքը վճարի, որպեսզի ինքն իր հաշիվը պահի: Ամեն անգամ Աշոտ Մախսենիչը պատրվակ էր բռնում, թե հիմա չունի, հետո կվճարի և այլն:

Մի օր էլ՝ Աճառյանը, Գյուլիքնիսյանը և մի քանի այլ դասախոսներ դասերից հետո Աբովյանով իջնելիս, նրանց դեմ է դուրս գալիս Աշոտ Մախսենիչը մի քանի ընկերներով: Աճառյանը կանգնեցնում է նրան և ասում.

– Ե՞րբ պետք է վճարես իմ 3 ռուբլին, որ հաշիվներս փակեմ: Եթե փող չունես, ահա քեզ 3 ռուբլի, վերցրո՛ւ, վճարի՛ր պարտքիդ դիմաց, որ հաշիվս փակեմ:

Աշոտը վերցնում է երեք ռուբլին և ծիծաղելով հեռանում՝ չվճարելով իր պարտքը և այն կրկնապատկելով: Աճառյանը, տեսնելով, որ նրանից չի կարող բաժանորդագրինն ստանալ, դիմում է ռեկտորին, որն այդ ժամանակ Գյուլիքնիսյանն էր: Ռեկտորը հատուկ հրամանով կարգադրում է, որ Աշոտ Մախսենիչի ռոճիկից 6 ռուբլի պահեն՝ Աճառյանին վճարելու համար: Բայց Աճառյանը հրաժարվում է 3 ռուբլուց՝ ասելով, որ այն ինքը նվիրել է Աշոտ Մախսենիչին, և վերցնում է միայն 3 ռուբլի:

## ՊԱՐԳԵՎՆԵՐ ԳՐԱՇԱՐՆԵՐԻՆ

Հրատարակության հանձնված իր գրքերի տպագրության ընթացքում, որպեսզի շարվածքը լինի արագ և խնամքով, Աճառյանն անձամբ գրաշարներին տալիս էր դրամական նվերներ և նրանցից վերցնում ստացական:

Մի անգամ հարցրի նրան.

– Հրայա՛, եթե դու բանվորներին նվեր ես տալիս, ապա ինչո՞ւ ստացական ես վերցնում, և հետո՝ նրանք ինչպե՞ս համաձայնվում են ստացական տալ:

Հրայան բացատրեց, որ հարկադրված էր ստացական վերցնելը. իր հիշողության համար է, այլապես բանվորների դեմքերը կարող էր մոռանալ և մի բանվորին նվիրել մի քանի անգամ, իսկ մյուսին՝ ոչ մի անգամ: Եվ որովհետև վստահ էին իր ազնվության վրա, գիտեին, որ նա այդ ստացականները երբեք չի օգտագործի իրենց վնասելու համար, անվախ տալիս էին:

Ցեխի ղեկավարները, երբ իմանում են Աճառյանի մտերմությունը բանվորների հետ, ծիծաղում են նրա միամտության վրա և մի խաղ են կազմակերպում: Ընթացքի մեջ գտվող շարվածքը նրանք ձգձգել են տալիս: Հրայան լինում է տպարանում, տեսնում, որ ոչինչ չի շարված, գրաշարները հայտնում են, թե պատճառը վարպետներից պետք է իմանալ:

Նույն տպարանում աշխատում էր գրաշարապետ Արտաշեսը՝ Աճառյանի՝ բանտի մտերիմ ընկերներից մեկը: Աճառյանը գնում է նրա մոտ և հարցնում պատճառը: Գրաշարապետն ասում է. «Տպարանի աշխատողները շատ են լսել Ձեր մասին և ուզում են Ձեզ հետ ծանոթանալ: Ուստի Դուք էլ, պրոֆեսո՛ր, աշխատողների ցանկությունը կատարած լինելու համար հրավիրեցե՛ք մեզ բոլորիս Ձեր տուն, կգանք, մի լավ քեֆ կանենք, կվերհիշենք մեր անցյալը, անեկդոտներ կպատմենք, և ամեն ինչ լավ կլինի»:



Տուն գալով՝ Աճառյանը ասաց.

– Սոֆի՛կ, ուզում եմ հրավիրել տպարանի աշխատակիցներին, հյուրասիրենք. նրանք շատ են ուզում ինձ հետ ծանոթանալ:

Վարպետ Արտաշեսի գլխավորությամբ բանվորները եղան մեզ մոտ և շատ ուրախ էին, որ Աճառյանի սեղանակիցը եղան:

Աճառյանը երբ նկատեց, որ կրտսեր բանվորները չկան, հարցրեց, թե նրանք ինչու չեն եկել:

Վարպետը ժպտալով ասաց, թե նրանք վաղուց են կերել, խմել, և հետո՝ չէր կարելի նրանց երես տալ, շփացնել՝ մեծերի հետ սեղանակից դարձնելով:

Վարպետներից մեկը Աճառյանի կենացին սրտալի ճառ արտասանեց.

– Հարգելի՛ պրոֆեսոր, մենք Ձեր մասին շատ հիացական բաներ ենք լսել, բայց այսօր անչափ ուրախ ենք, որ Ձեզ հետ գտնվում ենք նույն սեղանի առաջ: Ինչ որ լսել էինք, ավելին տեսանք: Դուք բանվորի հետ բանվոր եք, պրոֆեսորի հետ՝ պրոֆեսոր: Մեր ցրիչները Ձեզ շատ են սիրում. Ձեզ մոտ գալու, մամուլ բերելու համար ձեռքից ձեռք են խլում: Ցանկանում ենք Ձեզ երկար կյանք և բեղմնավոր գործեր:

Պարզ երևում էր, որ Հրաչյան էլ շատ էր գոհ այս հանդիպումից: Նա մեծամիտ մարդ չէր երբեք: Եղել էր նույնիսկ, որ երբեմն գրաշարներին օգնել էր շարելիս, իսկ հաճախ ցրիչների գործը ինքն էր կատարում, մանավանդ երբ հարցը վերաբերում էր ձեռագիրը տպարան հանձնելուն. մամուլ առ մամուլ ինքն էր տանում, նորը հանձնում, արդեն շարվածը՝ վերցնում: Այսպես էր վարվում մանավանդ, երբ ձեռագիրը չէր մեքենագրված, միայն մեկ օրինակ էր և կորչելու դեպքում կարող էր վատ լինել: Հաջորդ սրբագրությունների մամուլները կարող էին տանել ու բերել տպարանի ցրիչները:

Հրայյան ինձ պատվիրել էր, որ երբ ցրիչները մամուլ բերեն, իր տրամադրած դրամական նվերը տամ, իսկ հյուրասիրությունն էլ թողնում էր ինձ՝ հասկացնելով, որ ես այն շատ լավ կանեմ:

Ընթրիքի վերջում մի ուրիշ վարպետ ասաց.

– Պրոֆեսոր, Դուք հաճախ գալիս եք տպարան, իսկ մեզ բանի տեղ չեք դնում: Եթե մենք թույլ չտանք Ձեր գործերը շարել, ապա Դուք հաճախ նման հավաքույթներ կկազմակերպեք:

Բոլորն էլ ուրախ ծիծաղեցին լիաթոք: Խնջույքը շատ լավ անցավ: Գոհ էր նաև Հրայյան, որովհետև մի մտերմական հավաքույթով ավելի մոտիկից ծանոթացավ և սիրաշահեց, իսկ նրանք խոստացան լավ աշխատել:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՄՏՄՏՈՒՔՆԵՐԸ

Մի օր Հրայյան ինձ ասաց.

– Սոֆի՛կ, գիտե՞ս՝ ես հաճախ մտածում եմ, թե ինչու մեզ այնքան շատ աշխատավարձ են տալիս:

Մի օր էլ՝ ուշ գիշերին, երբ պատրաստվում էինք քնելու, նա ասաց.

– Մենք աշխատում և գրքեր ենք գրում մեր հաճույքի համար, իսկ մեզ բարձր աշխատավարձ և հոնորար են տալիս: Այդ ես ճիշտ չեմ գտնում: Առաջ մենք մեր ցանկությամբ գրքեր էինք գրում, միջոցներ չունենալու պատճառով ձեռագրերը ուսներիս գցած՝ հազար մարդու կամ հազար կազմակերպության դուռ էինք բախում և բարերարներ – բարեխոսներ փնտրում, որ կարողանանք մի գիրք տպել, այն էլ՝ ձրի կամ լավագույն դեպքում մի քանի տասնյակ օրինակ հեղինակին տալու պայմանով: Հետո էլ դժվարությամբ էինք կարողանում վաճառել կամ ավելի շուտ նվիրում սրան-նրան,

միայն թե տպվեր: Իսկ հիմա բավական չէ, որ ապահովում են գրքի տպագրությունը, բացի այդ՝ մեծ գումար էլ են տալիս: Ես այդ ճիշտ չեմ գտնում: Այսօր առավոտյան այդ մտքով խոսում էի ուսուցչանոցում: Բոլորը հարձակվեցին վրաս, ասացին, որ երևի ես շատ հարուստ եմ և իրենց մասին չեմ մտածում:

Վերջապես քնեցինք:

Առավոտ վաղ Հրաչյան ինձ արթնացրեց և ասաց.

– Մոֆի՛կ, իմ հարցի պատասխանը ես գտա, և հիմա միտքս հանգիստ է: Ասեմ, թե ինչու: Քառասուն տարվա խնայողություններս Արուսյակի անունով դրել էի Ռոստոփի բանկը՝ այդ գումարի տոկոսներով ապահովելու համար մեր հետագա կյանքը: Հետո ես որոշեցի գնալ Վան, այնտեղ հիմնել հայկական համալսարան և հրավիրել մասնագետ դասախոսների: Գրեցի այդ մասին ուսուցչապետիս՝ Անտուան Մեյեին: Նա պատասխանեց. «Այդ մտքի համար ծափահարում եմ քեզ: Շատ ուրախ եմ, բայց սպասի՛ր մի տարի էլ, քեզ հետ միասին կմեկնենք Վան՝ դասախոսելու»: Դա 1913 թվականին էր: Ըստ երևույթին նա կռահում էր, որ շուտով պայթելու է պատերազմի փոթորիկը, և ցանկանում էր ինձ հեռու պահել շտապ մեկնելու մտքից: Ծագեց 1914 թ. համաշխարհային պատերազմը, ապա 1917 թ. սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Այսպիսով, կորցրի իմ ամբողջ խնայողությունները և չհասա համալսարան հիմնելու համար իմ փայփայած նպատակներին: Ուրեմն, մտածում եմ՝ իմ բոլոր խնայողությունները գնացին պետական գանձարան: Հետևաբար, պետությունը ինչքան էլ տա, շատ չէ:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՁԵՌԱԳՐԻ ԱՐՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԸ

Աճառյանը աշխատում էր «Անձնանունների բառարանի» հինգ հատորի արտագրության վրա: Ծանրաբեռնված, չարքաշ աշխատանքը շատ էր տկարացրել նրա տեսողությունը:

Մի օր, հանդիպելով իր մոտիկ ընկերոջ դասերը՝ Ալիսա Մանուկյանին, Աճառյանը գանգատվում է տեսողությունից, մանավանդ որ վերջին հատորը շատ մանր գրված լինելով՝ դժվարանում էր արտագրությունը:

Ալիսան իմանալով սիրահոժար առաջարկում է իր օժանդակությունը արտագրելու գործում առանց որևէ վարձատրության՝ հայտնելով, որ դա մեծ պատիվ է իր համար, և խնդրում է այն ոչ ոքի չտալ:

Արտագրությունը վերջացնելուց հետո, սակայն, մի օր Ալիսայից նամակ ստացվեց, որով պահանջում էր իր կատարած աշխատանքի՝ 77 էջ արտագրության աշխատավարձը: Աճառյանը շատ զարմացավ, բայց անմիջապես պատասխանեց. «Ալիսա՛, Ձեր գինն ի՞նչ է, ասացե՛ք՝ ուղարկեմ»: Ալիսան հեռախոսով ինձ գանգատվեց Աճառյանի նամակի վիրավորական ոճի մասին: Ես հայտնեցի, որ նկատի առնի այն, որ ինքը վարձատրություն չէր ուզել, ուստի մենք իր համար պատրաստել էինք լավ նվեր: Նա արհամարհեց նվերները և իր կատարած «բարդ» աշխատանքի համար պահանջեց 1680 ռուբլի:

Աճառյանը նման դեպքերում սկզբունքային բժախընդրություն ուներ: Քանի հարցը այդ ձևն առավ, նա դիմեց ակադեմիայի իրավական խորհրդատու Կորիսմազյանին: Եկավ հատուկ հանձնաժողով, որ հետաքննությամբ գտավ, որ ըստ պետական սակագնի՝ Ալիսայի կատարած աշխատանքն արժեր իր պահանջածի կեսից էլ պակաս: Չնայած դրան՝ Աճա-

ոյանն ասաց, որ թող Ալիսան գրություն գրի և ստացական տա, ինքը նրա ուզած չափով կվարձատրի: Ապա Հրայան ցույց տվեց նրա համար գնված նվերները: Հանձնաժողովը գտավ, որ մենք շատ ճիշտ և լավ ենք գնահատել նվերի ձևը:

Աճառյանն ասաց, որ Ալիսան ինքը շեշտել էր, որ առանց վարձատրության է ուզում անել այդ աշխատանքը, դա իրեն պատիվ կբերեր, ուստի հարմար էինք նկատել գնահատել աշխատանքը պատշաճ նվերներով:

Կորիսմազյանը զարմանք հայտնեց, թե քանի Աճառյանը հանձն էր առնում վճարել, ապա ինչո՞ւ համար էր այս բոլորը:

Աճառյանն ասաց, որ քանի որ նա առաջարկել էր իր ձրի ծառայությունը, և սակարկություն տեղի չի ունեցել, ապա այժմ պետք է վճարել նրա ցանկացած չափով:

Ալիսա Մանուկյանն ուղարկեց մի ստացական և ստացավ 1680 ռուբլի:

Աճառյանը պատմում էր իր հուշերում, որ ինքն էլ, Փարիզում ուսանող եղած ժամանակ, երբ իշխան Գվիդիոն Լուսինյանը պատրաստում էր ֆրանսերեն-հայերեն բառարանը, իբրև նրա քարտուղարը ամսական 100 ֆրանկ համեստ վարձատրությամբ մաքրագրում է Լուսինյանի ձեռագրերը:

Աճառյանը ուրիշ շատերի կատարել է տվել արտագրական կամ մեքենագրական աշխատանքներ: Այդ աշխատանքները կատարողների մեջ եղել են տիտղոսավոր կամ անտիտղոս մարդիկ, ոմանք՝ նույնիսկ շատ համեստ, ազնիվ: Փաստաթղթերը գտնվում են Աճառյանի արխիվում:

## ԲԱՅԻԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Էջմիածնում եղած ժամանակ Աճառյանի քույրը մի բացիկ է գրում նրան: Բացիկի վրա՝ հասցեի մասում, քույրը երկու բառ է գրած լինում:

Փոստի պետը կանչում է Աճառյանին, հանձնում բացիկը և ասում, որ այդ խախտման համար պետք է 5 կոպեկ վճարի, բայց քանի ծանոթներ են, ընթերցելուց հետո ուզում է բացիկը հետ վերցնել առանց տուգանքի: Աճառյանը պահանջը անիրավացի է գտնում և պահանջում է բացիկը: Ապա գալիս է իր ընկերոջ՝ Սիրական Տիգրանյանի մոտ և խնդրում ռուսերեն բողոքագիր գրել այդ մասին: Սիրականը զարմացած ծիծաղելի է գտնում 5 կոպեկ տուգանք չտալու համար բողոքագիր գրելը և հրաժարվում է գրելուց: Ապա գալիս է Մանանդյանի մոտ, ցույց տալիս հայերեն գրված բողոքագիրը և խնդրում այն թարգմանել ռուսերեն: Մանանդյանը ևս ծիծաղելի է գտնում նման փոքր հարցի համար բողոքագիր գրելը, սակայն ընդառաջում է Հրայրյայի խնդրանքին: Աճառյանը պնդում է, որ ուշադրություն դարձվի կատարված ապօրինությանը, և նամակը հանձնվի տիրոջն առանց տուգանքի: Եվ այդպես, նա այդ դիմումը տեղ հասցնելու համար 5 կոպեկ տուգանքի փոխարեն ծախսեց 1 ռուբլի 80 կոպեկ, բայց համառորեն հասավ իր նպատակին: Ծանոթները ծաղրում ու ծիծաղում էին վրան: Այնուամենայնիվ, Աճառյանը ձեռք բերեց կորած իրավունքը՝ 1 ռուբլի միայն վճարելով տուգանք: Հետագայում ընկերները գովում են Աճառյանին՝ նրա հետևողական և համար լինելու համար:

## ՊԱՐԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի օր Աճառյանը համալսարանից վերադարձավ շատ հուզված և ասաց.

– Այսօր ինձ կանչեցին վերև և ասացին, որ իմ ավանդած առարկան այնքան էմ պարզ ներկայացնում, որ ուսանողներն իսկույն հասկանում են և ասում. «Ա՛յս էր բարդ առարկան, մենք արդեն հասկացանք», և հանձնարարեցին,

որ մի քիչ բարդ ձևով ներկայացնում նյութը, որպեսզի ուսանողները չարչարվեն, դժվարությամբ սովորեն, իբր թե այն ժամանակ ավելի կգնահատեն ինձ: Պատասխանեցի, թե դասախոսների պարտականությունն է աշխատել անգամ ամենադժվարին առարկան պարզեցնել և մատչելի դարձնել, որպեսզի ուսանողներին հեշտ, հասկանալի լինի, մինչ հակառակն է պահանջվում: Ասացի, թե կան պահանջված ձևի դասախոսներ, որոնց դասախոսությունները լսելուց հետո ուսանողները գալիս են ինձ մոտ և խնդրում, որ բացատրեմ իրենց համար անհասկանալի մնացած այս ու այն կետերը:

Իսկապես էլ, ինչպես ինքն էր բացատրում, Աճառյանն ուներ ուսուցանելու իր ուրույն մեթոդը, որով ամենաբարդ նյութն անգամ ներկայացնում էր մատչելի, հասկանալի ձևով: Բացի այդ՝ նա գիտեր նաև չձանձրացնել: Շատերը կարծում էին, թե Աճառյանի կատակասեր, ուրախ բնավորությունն էր այդտեղ դեր ունեցողը (դա կարող է ճիշտ լինել միայն որոշ չափով), բայց հաճախ նա այդ անում էր գիտակցաբար՝ լսարանի ուշադրությունը թարմացնելու, աշխուժացնելու համար: Եթե որևէ մեկը փորձեր, առիթից օգուտ քաղելով, զվարճաբանել, Աճառյանն այդ բանը երբեք չէր թույլ տա:

Վերևի գրույցն ավարտելուց հետո Աճառյանը շարունակեց.

– Անցյալ օրն էլ ճանապարհին դեմս ելավ Կենտկոմի քարտուղար և միաժամանակ համալսարանի դասախոս Աշոտ Հովհաննիսյանը: Նա ձեռքով ցույց տվեց գլուխս, չհավանեց հագածս, և թե մանավանդ առանց փողկապի վայել չէ դասախոսին: Նա այնքան առաջ գնաց կատակի մեջ, որ ասաց, եթե մյուս անգամ այդպես ներկայանամ, ինձ կարգելի համալսարան մտնել: Այն ժամանակ մի անգամ էլ ես իրեն լավ չափեցի վերևից ներքև, նկատեցի, որ կոշիկը ծակվել էր, և մատը դուրս էր եկել անցքից, և մատնացույց անելով ասացի, որ այդ իսկապես լավ չէ թե՛ տեսքով, թե՛ առողջության

համար. խորհուրդ տվեցի, որ կոշիկները տա վերանորոգման, այլապես ոտները կմրսեն, և կհիվանդանա, իսկ փողկապ չկապելը ումն է խանգարում՝ ասացի, և բաժանվեցինք:

## ԻՆՉՊԵՄ ՊԵՏՔ Է ՀԱԳՆՎԵՆ ԿԱՆԱՅՔ

Մի օր՝ նախաճաշի ժամանակ, խոսք է լինում, թե կանայք ինչպես պետք է հագնվեն տանը, ինչպես՝ դրսում:

Աճառյանն ասաց, թե, իհարկե, լավ է, որ կանայք ընդհանրապես լավ հագնվեն: Հիշելով Փարիզի կյանքը՝ նա ասաց, որ ֆրանսուհիները գիտեն ճաշակով հագնվել, բայց նրանք ոչ միայն անփույթ չեն իրենց տնային հագածի մեջ, այլև ուշադրություն են դարձնում տանը ավելի լավ հագնվելուն, քան դրսում, որովհետև նրանք փողոց գնալուն այնքան մեծ նշանակություն չեն տալիս, սակայն տանը ցանկանում են իրենց ամուսնուն հաճելի երևալ:

Զրույցի ժամանակ քրոջս հինգ տարեկան թոռնիկը՝ Անահիտը, մանկական պարզամտությամբ ասաց.

– Հրաչյա՛ դյադյա, իսկ ինչո՞ւ այդպիսի մի լավ տյոտյա չբերեցիք այնտեղից:

Ես միջամտեցի կատակով, որ եթե նա այնտեղից մի տյոտյա բերեր, ապա ո՞վ ինձ դյադյա կլիներ, ես մենակ կմնայի:

Հրաչյան առանց չարամտության ասված այս խոսքից հանկարծ բորբոքվեց և հետևություն արեց.

– Ուրեմն դու ուրա՞խ ես, որ Արուսյակը մահացավ:

Ու բարկացած անցավ մյուս սենյակը: Քիչ հետո, սակայն, հանդարտված վերադարձավ և ասաց.

– Սոֆի՛կ, նեղացա՞ր ինձնից: Ակամայից դյուրաբորբոք եմ դարձել, բանի տեղ մի՛ դիր, դու իմ Սոֆիկն ես:



## ԹՈՒՄՅԱՆԻ ԿՐԱԿՈՏ ՃԱՌԸ

Աճառյանը պատմում էր, որ Փարիզում ուսումն ավարտելուց հետո բազմազգ շրջանավարտ ուսանողությունը հրաժեշտի երեկույթ է կազմակերպում: Որոշում են, որ յուրաքանչյուր ուսանող իր մայրենի լեզվով ճառ ասի: Բոլորը խոսում են լավ կամ նվազ հաջողությամբ: Հերթը հասնում է հայ ազգի ներկայացուցիչ Թումյանին: Եվ որովհետև նա ոչինչ չէր պատրաստել՝ վստահ լինելով, որ ընկերներից բացի՝ ուրիշ ոչ ոք ոչինչ չէր հասկանա, հռետորի կերպարանք առնելով և արտահայտիչ շեշտով սկսում է արտասանել.

– Այբ, բեն, գիմ, դա, եչ, գա, է, ըթ, թո...

Եվ այսպես իրար ետևից նա երեք անգամ կրկնում է մեարոպյան այբուբենը, որը վաղուց սովորել էր նախակրթարանում: Բոլորը զարմանում են և հիանում Թումյանի ճառով: Իտալացի մի ուսանող արտահայտվում է այսպես.

– Միայն հայը կարող էր այդպիսի կրակոտ ճառ ասել. դա դարավոր ստրկության արտահայտության պոթյակումն է:

Ու բոլորը խմում են Թումյանի և հայ ժողովրդի կենացը:

Անցել էին տասնյակ տարիներ: Մի օր Թումյանը եկել էր մեզ այցելության: Աճառյանը հիշեց ուսանողական շրջանի այդ դեպքը և ասաց ինձ.

– Մոֆի՛կ, սա ընկեր Թումյանն է, նա, որ Փարիզում այնքան փայլուն ճառ էր արտասանել:

Ապա Աճառյանը խնդրեց Թումյանից, որ կրկնի անմոռանալի այդ ճառը, ինչպես այն անմոռանալի երեկույթում: Բայց Թումյանն ասաց, թե ոչ ոքի համար հետաքրքրական չէ այբուբենը լսել, և զարմանք հայտնեց, որ Աճառյանը չի մոռացել այդ վաղեմի դեպքը:

## ՈՒՍԱՆՈՂՆ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՍՈՎՈՐԵԼ

Աճառյանը պատմում էր, որ համալսարանում մի ուսանող ամեն օր մի քանի անգամ մոտենում էր իրեն և ֆրանսերեն բառեր հարցնում:

– Չնայած սկզբում ես չէի համակրում այդ ուսանողին, բայց միշտ պատասխանում էի նրա հարցերին, որովհետև որպես ուսուցիչ պարտավոր էի: Նա արտաքննապես անբարեկիրթ երիտասարդի տպավորություն էր թողնում՝ գլխարկը թեք դրած, մազերը թափված ճակատին, գլանակն անպակաս շրթունքներից:

Բառաքնության այս ձևը երկար տևեց: Մի օր էլ վերջապես, ձեռքին մի տետր, երիտասարդը մոտեցավ իրեն և խնդրեց, որ ստուգեմ գրածը:

Աճառյանը վերցնում է տետրակը, նայում և ապա հարցնում է, թե այն ով է գրել: Ուսանողը անհամարձակ հայտնում է, թե այն ինքն է գրել: Աճառյանը հարցնում է.

– Այսքան բան ե՞րբ, ումի՞ց և ինչպե՞ս սովորեցիք ու գրեցիք:

– Ձեզանից, պրոֆեսոր: Հիշո՞ւմ եք, ես Ձեզանից միշտ բառեր էի հարցնում ու գրում: Այդպես ահա սովորեցի ու գրեցի այս բոլորը:

Աճառյանը շատ է հուզվում, արցունքն աչքերին՝ ձեռքը տալիս է ուսանողին, շնորհավորում նրան և ասում.

– Արտաքին անվայել կերպարանքից ես Ձեզ խուլիզան էի կարծում, ներեցե՛ք ինձ:

Այդ ուսանողը Էդուարդ Ադայանն էր:



## ՔՈՒՐԴ ԱՍՊԻՐԱՆՏԸ

Աճառյանը 1943 թ. ուներ մի քուրդ ասպիրանտ՝ Վազիր Նազիրով անվամբ: Նա շատ էր գեղեցիկ, առողջ, բարձրահասակ, լավ հագնվող:

Քրդերի սովորությամբ, երբ մեկին դժբախտություն է պատահում, նրա բարեկամները նյութական նվերներ են բերում: Իմ քրոջ որդին՝ Վահագնը, պատահարից մեռավ, և Նազիրովը մի քանի փութեր բերեց: Այդ նվերն ինձ տարօրինակ թվաց և ես Հրաչյային բողոքեցի, որ անհարմար էր, որ նա մեզ այդպիսի նվեր է բերել: Աճառյանը Նազիրովին ասաց.

– Ինչո՞ւ եք Մոֆիկին նեղացնում. նա այդպիսի բաներ չի սիրում:

Նազիրովը բացատրեց իրենց աղաթը (սովորությունը) և ասաց.

– Ես քյուրդը հետ տանողը չեմ, ինձ մի՛ վիրավորեք: Աճառյանն ասաց.

– Լա՛վ, այս մեկը թող մնա, ես աքլորի ձայն շատ եմ սիրում. կկանչի, ես էլ կլսեմ, բայց նման բան չկրկնվի:

Մի օր էլ Նադիրովը մի մեծ ձմերուկ բերեց: Ես այս անգամ բարկացա և ասացի Աճառյանին.

– Նադիրովը ի՞նչ է անում, ինձ երբեք դուր չի գալիս նրանց ադաթը:

Աճառյանը բարկացավ Նադիրովի վրա և ասաց.

– Մենք պայմանավորվեցինք, որ նման բանը չկրկնվի, իսկ Դուք նորից նվեր եք բերել:

Նադիրովը նորից արդարացավ.

– Ուսուցիչը մեր հոգևոր հայրն է համարվում, իսկ մենք չե՞նք կարող մի բանով հյուրասիրել մեր սիրելի ուսուցչին:

Աճառյանը դիմեց ինձ.

– Մոֆի՛կ, սա քուրդ է, ես ի՞նչ լեզվով, ինչպե՞ս խոսք հասկացնեմ քուրդին:

Աճառյանը և Նադիրովը քահ-քահ ծիծաղեցին: Ապա ձմերուկը կտրեցին և սկսեցին ուտել:

Նադիրովը, որ քրդերի շրջանում գիտական աշխատող էր, շատ առաջադեմ և ընդունակ մարդ էր: Նա ավարտել էր ռուսական մանկավարժական բանասիրական ֆակուլտետը. պատրաստ էր պաշտպանելու դիսերտացիա: Այդ միջոցին նա գնաց Թբիլիսի և այնտեղ գոհ գնաց դժբախտ պատահարի՝ տրամվայի վթարի: Այդ դեպքը շատ ծանր ազդեց Աճառյանի վրա, որովհետև նա շատ էր սիրում Նադիրովին, գնահատում նրա արժեքները, ուրախանում նրա առաջադիմությունով:

Նադիրովի թաղման օրը Աճառյանը շատ տխուր էր: Նա ասում էր, որ իրեն համար անասելի էր տեսնել Նադիրովի պարթև հասակը անշնչացած:

Երկար ժամանակ Հրայան չէր կարողանում մոռանալ Նադիրովին, նրա կնոջը՝ Նուրեին, որին մի շատ սրտառու զավակցական նամակ գրեց:

## ԱՃԱՌՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ

Հրաչյայի մահից հետո պրոֆեսոր քանդակագործ Արա Սարգսյանը այցելեց ինձ և ի հարգանք Աճառյանի հիշատակի՝ նվիրեց ինձ Աճառյանի (իր քանդակած) խորաքանդակը: Այդ վերաբերմունքը ինձ շատ հուզեց: Ես երախտապարտ եմ մեծ արվեստագետին: Ի դեպ, հիշեցրի նաև պրոֆեսորին իր քանդակած՝ Աճառյանի մեկ ուրիշ քանդակի՝ կիսանդրու մասին, որի համար նա դառնություն ասաց. «Այն ծանր օրերին այդ քանդակը ես պահել էի, սակայն անազնիվ մարդիկ հայտնել էին նրա գոյության մասին, և ես ստիպված էի այն տալ իմ սաներին՝ ոչնչացնելու: Դե գիտեք՝ ես արվեստի մարդ եմ, ինձ համար ինչպիսի դժվարություն կներկայացնե՞ր իմ աշխատանքը իմ ձեռքով ոչնչացնելը...»: Եվ նա խոստացավ հաջորդ այցելությանը բերել այդ կիսանդրու լուսանկարը: Լինելով պոլսեցի՝ նա իր խոստումը չդրժեց:

Այդ կիսանդրու մասին ինձ նախօրոք պատմել էր Հրաչյան, որի շուրջ տարածվել էր հետևյալ անեկդոտը:

Մի օր Աճառյանը գնում է թանգարան, տեսնում է, որ մի կին Աճառյանի կիսանդրու շուրջ սակարկում է: Աճառյանը մոտենալով հարցնում է.

– Տիկի՛ն, ինչո՞ւ եք այդ արձանի համար սակարկում, ի՞նչ եք անելու:

Կինը պատասխանում է.

– Հենց այնպես, այդ արձանը ինձ շատ է դուր գալիս, ուզում եմ գնել:

– Եթե գնի համար չեք համաձայնվում առանց սակարկելու, արձանի փոխարեն ի՛նձ վերցրեք:

Այս անեկդոտը պատմել է պրոֆեսոր Սարգիս Մանուկյանը 1936 թ.:

## ՎԱՐՊԵՏԸ ԼԵԶՎԱԲԱՆԻ ՄՈՏ

Աճառյանն ու Իսահակյանը հին ու մտերիմ բարեկամներ էին եղել, երբ Իսահակյանը օտարությունից վերադարձել էր հայրենիք:

Մի օր իմանալով, որ Իսահակյանը այցի է եկել մեր հարևան Տոնյաններին, անմիջապես այդ մասին տեղեկացրի Աճառյանին և ցանկություն հայտնեցի միասին գնալ՝ վարպետին տեսնելու:

– Ի՞նչ կարիք կա, - ասաց Աճառյանը:

Ես շատ զարմացա, որ Աճառյանը չի ցանկանում իր վաղեմի ընկեր, երկարամյա բարեկամ, մեծ բանաստեղծ Իսահակյանի հետ տեսակցություն ունենալ:

Շուտով, սակայն, Տոնյանների բնակարանից ուղղակի մեզ մոտ եկավ անձամբ ինքը՝ Ավետիք Իսահակյանը: Հուզիչ էր տեսնել, թե հին ընկերներն ինչպես փաթաթվեցին իրար, գրկախառնվեցին, ողջագուրվեցին ու ջերմորեն, կարոտով համբուրվեցին:

Եվ սկսվեց հաճելի գրույցը երկու բարեկամների միջև, հետո Աճառյանը վարպետին ներկայացրեց բանաստեղծությունների իր տետրը՝ ցանականալով, իհարկե, իմանալ նրա կարծիքը: Իսահակյանը երկար նայեց տետրին, դեսուդեն շուտ տվեց էջերը, կարդաց լուռ: Աճառյանի դեմքի արտահայտությունից հայտնի էր, որ Իսահակյանի լռությունը դուր չէր գալիս իրեն. եթե վարպետի տպավորությունը դրական լիներ, առանց երկար լռության արդեն կհայտներ իր կարծիքը: Աճառյանը, համբերությունից դուրս գալով, ասաց.

– Ի՞նչ է, Ավետի՛ք, չհավանեցի՞ր:

Իսահակյանը զարմացական արտահայտությամբ պատասխանեց.

– Հրաշխ՛, չէի կարծում, որ համաշխարհային լեզվաբանը, մեծ հռչակավոր գիտնականն այսպիսի դատարկ, հի-

մար բաներով է զբաղվում, ես քեզ խորհուրդ կտայի զբաղվել քո լուրջ գործերով:

Աճառյանը իհարկե նեղացած ասաց.

– Քառասուն տարի է, որ բանաստեղծություններ ես գրում, որոնք լիքն են թուրքերեն բառերով.

«Միրեցի, *յարս* տարան,

*Յարա* տվին ու տարան.

Էս ի՞նչ *գուլում* աշխարհ է,

Պոկեցին սիրտս տարան...»:

Չնայած դրան՝ քեզ համար ասող չեղավ, իսկ դու իմ գրածները հիմար բանի տեղ ես դնում:

Աճառյանը շեշտում, ընդգծում էր յուրաքանչյուր տողի մեջ թուրքերեն բառը:

Այս դրվագը Աճառյանի մահվան երկրորդ տարելիցի օրը մեր բնակարանում կայացած մտերմական հավաքույթում յուրահատուկ հմայքով ասված հիշատակի իր խոսքում ասաց Վարպետը.

– Աճառյանը քեն էր պահել իմ դեմ: Եվ ժամանակ անց, երբ ես արդեն մոռացել էի, մի հանդիպման ժամանակ իմ մի նոր բանաստեղծությունը ցույց տվեցի նրան և խնդրեցի կարդալ ու իր կարծիքը հայտնել: Աճառյանը ընթերցումից հետո թթված դեմքով պատասխանեց. «Սա ի՞նչ բանաստեղծություն է, ոչ մի նոր բառ չկա մեջը»:

Իր կյանքի վերջալույսին վարպետն ավելի հաճախ էր այցելում Հրաչյային: Աճառյանը սիրով էր ընդունում նրան, զբաղվում նրա հետ, գրուցում, իսկ երբ խոսելու կարևոր նյութ չմնար, Հրաչյան կանչում էր ինձ.

– Մոֆի՛կ, հյուրասիրի՛ր վարպետին և զբաղեցրո՛ւ, որ մի քիչ աշխատեմ:

– Հրաչյա՛, բավական է աշխատես,- կրկնում էր միշտ վարպետը,- ե՞րբ պիտի հանգստանաս:

– Ես շատ եմ հանգստացել ժամանակին,- ասում էր Հրաչյան:

Աճառյանը հաճախ կրկնում էր. «Ես իմ աշխատանքով եմ Աճառյան, ապա թե ոչ իմ գեղեցիկ աչքերի համար չէ, որ ինձ քննադատում են: Հետաքրքրական է սակայն՝ եթե ես չլինեի, ո՞ւմ այսքան պիտի քննադատեին, և ո՞վ է, որ այսքան պիտի դիմանար»:

Ես Վարպետին զբաղեցնում էի, Հրաչյան ձայն էր տալիս.

– Մոֆի՛կ, եթե Ավոյին սուրճով հյուրասիրես, ինձ էլ չմոռանաս:

Աճառյանը սովորություն ուներ այսպես անուղղակի հասկացնելու իր ցանկությունը: Սուրճ ուզած ժամանակ նա չէր ասի «Մոֆի՛կ, մի սո՛ւրճ պատրաստիր», այլ կասեր. «Ծանոթներից մեկը գար, և միասին սուրճ խմեինք»:

Իսահակյանի հետ շատ մտերիմ էին և հաճախ ընկերական կատակներ էին անում: Հրաչյան ասում էր Վարպետին.

– Ավո՛, դու բախտավոր աստղի տակ ես ծնվել, ուտում, խմում, քեֆ ես անում և չես էլ աշխատում, քեզ չեն էլ քննադատում: Լա՛վ եղիր, լա՛վ էլ մնա: Մի քիչ էլ աշխատի՛ր, ծույլ մի՛ լինիր: Դու քո աշխատանքով ես Իսահակյան, թե չէ քեզ նման Իսահակյաններ շատ կան աշխարհում:

Իսահակյանը ծիծաղելով պատասխանում էր.

– Էլ ի՞նչ գրեմ, գրելս չի գալիս. ծերացել եմ: Երիտասարդությունն ուրիշ բան էր, հիմա ծերացել եմ, ծերությունը բանի նման չի: Հիմա այլևս ուզում եմ հանգստանալ: Ինչքան շատ գրես, այնքան շատ կքննադատեն:

1944 թ. Աճառյանը թերթում մի հոդված էր գրել Հիտլերի դեմ: Հոդվածը վերջանում էր հետևյալ բառերով. «Հիտլերը մահ է ուզում, մահ կտանք»:



Իսահակյանը թերթում կարդացել էր Աճառյանի հոդվածը և անմիջապես եկել մեր մոտ: Վարպետը առաջինը ինձ հանդիպեց և ասաց.

– Տիկի՛ն Սոֆիկ, Հրաչյան արդեն գնա՞ց: Ես զարմացած հարցրի՛ ուր պիտի գնար:

– Հապա Հիտլերին ո՞վ պիտի մահ տաներ:

Աճառյանը լսեց Վարպետի ձայնը և կանչեց.

– Ավո՛, արի՛: Իմ գնալը ավելորդ է: Մեր սարերը մեզ կպաշտպանեն. նա իր գլուխը պիտի դնի Կովկասյան լեռնաշղթայի վրա:



## ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒՐԱՆ ԼՈՒՐԸ ԵՎ ՄԵՐ ԱՆՏԵՂԻ ՍԱՐՄԱՓԸ

1945 թ. մայիսի 4-ին՝ գիշերվա ժամը 12-ին, Ավետիք Իսահակյանը հեռախոսով ավետեց.

– Հրաչյա՛, աչքդ լո՛ւյս. պատերազմը դադարեց, հաղթանակը մերն է:

Իհարկ, շատ ուրախացանք:

Հեռախոսը նորից գրնգաց: Այս անգամ Ադավնի Մեսրոպյանն էր.

– Տիկի՛ն Սոֆիկ, Հրաչիս ըսե, որ պատերազմը վերջացավ մեր հաղթանակով: Փարիզի մեջ կառնավալ է, ուրախություն ամեն կողմում, կպոռան՝ «Կեցցե՛ Սովետական Միությունը»: Ըսե՛, շո՛ւտ ըսե Հրաչիս, թող ուրախանա, շնորհավորե իմ կողմե:

Լսափողը տվեցի Աճառյանին, շնորհակալություն հայտնեց ուրախ լուրի համար:

Շուտով հեռախոսը նորից գանգեց: Այս անգամ Հրաչյալի մոտ բարեկամ դարաբաղցի ատամանաբույժ պրոֆեսոր Մաշուրն էր: Նա էլ հայտնեց ուրախ լուրը:

Մի քանի տեղից կրկնվող այս ուրախ լուրից հետո բոլորովին վստահ, թե ստույգ է և ճիշտ, ես էլ գանգահարեցի քրոջս, տվի ուրախ լուրը, իսկ նա հայտնել էր հարևաններին:

Մենք կապված էինք միայն տեղական ռադիոցանցին, որ դեռ չէր հաղորդել ուրախ լուրը. ամբողջ գիշեր՝ մինչև լույս, մենք իզուր սպասեցինք ընդունիչի մոտ: Հաջորդ օրերը դարձյալ ոչ մի նորություն:

Բոլոր նրանք, ովքեր մեր միջոցով լսել էին հաղթանակի լուրը, տեղական ռադիոյից էլ չլսելով նրա հաստատությունը, ենթադրել էին մեկնելու, որ Աճառյանը եվրոպական ռադիոկայաններից է լսել այս լուրը, որ երևի հակասովետական միտք ունի: Աճառյանի՝ իբր թե հակասովետական լուրեր տարածելը հետզհետե ավելի էր խոսվում ամբողջ Երևանում: Մարափը պատեց ինձ և իմ քույր Սիրանուշին: Տարածանությունները շատանում էին, բայց գգուշանում էինք Աճառյանին հայտնել այդ մասին:

Վերջապես մայիսի 9-ին՝ հաղթանակի օրը, համամիութենական ռադիոն պաշտոնապես և հանդիսավոր կերպով հաղորդեց հաղթանակի ուրախ լուրը: Մենք փրկվեցինք անհարմար դրությունից, հանգիստ շունչ քաշեցինք:

## ՀԱՅՐԵՆԱՂԱՐՁՆԵՐԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1946 թ. հայրենադարձներից չորս հոգի մի օր այցելեցին Աճառյանին, ծանոթացան, պատմեցին իրենց ցավերը: Նրանցից մեկին Աճառյանը ճանաչեց. նա բժշկի տղա էր: Հյուրերը գանգատվեցին իրենց վիճակից, ասացին, որ տուն-տեղ չունեն, աշխատանք չունեն, մնացել են՝ երեսի վրա լքված, հուսահատ, չգիտեն ինչ անել: Աճառյանը խորհուրդ տվեց, որ ինչ աշխատանք էլ տալու լինեն՝ թեկուզ սևագործ, կատարեն անտրտունջ, ասաց, թե ինքն էլ ուրիշ դասախոսների և աշակերտների հետ մասնակցել է շաբաթօրյակի, տրամվայի ճանապարհ են հարթել: Ասաց, որ հայրենիք եկողը ամեն կերպ պետք է աշխատի օգտակար լինել երկրին:

Հայրենադարձներն ասացին, որ իբր Աճառյանը և ուրիշներ փառավոր կեպով ապրում են և իրենց մասին չեն էլ մտածում: Աճառյանը դարձյալ կրկնեց, որ պետք է աշխատեն և կամաց-կամաց առաջ գնան. նեղ օրերը կանցնեն: Նա պատմեց, թե ինչ պայմաններում է ավարտել համալսարանը, իսկ երբ Երևան է եկել, գրպանում միայն 10 կոպեկ է ունեցել, ապա աշխատանքով հասել է դիրքի: «Աշխատեցե՛ք, որքան կարող եք,- ասաց Աճառյանը,- իսկ եթե մեռնեք, հայրենիքի հողը կպարարտացնեք»:

Հայրենադարձները հայտնեցին, թե իրենք չեն եկել մեռնելու, այլ ապրելու, աշխատելու համար, իսկ պայմաններ չկան:

Վերջում պարզվեց, որ նրանք փոխառության կարգով Աճառյանից խնդրել էին 50 000 ռուբլի՝ տուն կառուցելու համար: Աճառյանը հնարավորություն չունեի՝ բավարարելու նման խնդրանք: Հայրենադարձները հեռացան դժգոհությամբ:

## ԴՅԱԴՅԱ ԺԵՆՅԱ

1947 թվականին էր:

Մի օր հորաքրոջս աղջիկը՝ Վարդուհին, զանգահարեց ինձ և հայտնեց, թե մի լավ դաշնամուր լարող է ուղարկում ինձ, որը շատ լավ մարդ է, «կուրորտ»-ից նոր է վերադարձել, շատ խեղճ է ապրում, և եթե կարողանամ, մի քիչ էլ օգնեմ նրան:

Քիչ անց եկավ Վարպետը, ծանոթացանք: Աճառյալը մտերմացավ նրա հետ, և մենք լավ բարեկամներ դարձանք անմիջապես: Նա գտավ ձևը՝ առանց դյաղյա ժենյային վիրավորելու նրան օգնելու, առաջարկեց նրան ամեն շաբաթ երկու-երեք անգամ գալ մեզ մոտ և նվագել ու երգել:

Այսպիսով, դյաղյա ժենյան դարձավ մեր տան ամենասիրելի բարեկամը: Նա Աճառյանից ստանում էր որոշ գումար՝ ի վարձատրություն համերգային իր ծրագրերի:

Դյաղյա ժենյան նույն ինքը Եվգենի Միմոնովիչ Խոջոյանն էր: Չգիտեմ՝ ինչ պատճառով նրան այդպես էին կոչում: Նա եղել էր արտիստ, երգիչ, նվագող, գտնվել էր Բոտալիայում, և մի անեկդոտի համար նրան պատժել էին և հեռացրել երկրից:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՄԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՀԵՏ

1949 թ. մի օր Աճառյանը տուն եկավ հուզված և պատմեց.

– Պրոֆեսոր Արսեն Տերտերյանը շատ ավելի բարձրացավ իմ աչքին: Ինձ հանձնարարել էին գնալ նրա մոտ և համոզել, որ ընդունի ակադեմիայի լեզվի ինստիտուտի տնօրենությունը: Գնացի: Նախ՝ խոսեցի լեզվի ինստիտուտի անփառունակ վիճակի մասին, ասացի, որ չկար մի կարգին

ղեկավար, որ ինստիտուտը դներ լավ հիմքերի վրա: Հայտնեցի, որ ինձ են առաջարկում, բայց ես ծերացել եմ արդեն և հետո խոստովանեցի, որ ես վարչական գործերի ընդունակություն չունեմ: Ապա սկսեցի հորդորել նրան, որ ընդունի լեզվի ինստիտուտի տնօրենությունը, ասացի, որ դա մեծ պատիվ էր իր համար, և հետո ռոճիկն էլ արհամարհելի գումար չէր՝ 10 000 ռուբլի, իսկ աշխատանքը՝ թեթև. Խնդրեցի, որ զիջող լինի, ընդունի առաջարկը, որպեսզի ազատվենք այդ ամբարիշտից (որ ո՛չ ինքն է մի բան, ո՛չ էլ ուրիշի գրածն է ընդունում):

Տերտերյանը խոժոռ դեմքով նայեց ինձ և ասաց. «Միրելի՛ ուսուցչապետ, վստահ եմ, որ այդ առաջարկը Դուք անում եք ինձ՝ հոգուտ գիտության: Եթե ուրիշը լիներ առաջարկողը, առանց այլևայլի դուռը կբացեի նրա առաջ և դուրս կհրավիրեի: Բայց Ձեզ ամենայն հարգանքով լսելուց հետո պետք է ասեմ, որ ո՛չ պատվի կարիք ունեմ, ո՛չ էլ փողի: Չընդունելու դեպքում եթե նույնիսկ ինձ հեռացնեն ամեն աշխատանքից, դարձյալ ես գոհ կմնամ և հոժարությամբ մի գյուղ կգնամ (մանավանդ մեր գյուղը) և ուսուցիչ կլինեմ: Փողի էլ կարիք չունեմ, որովհետև բանկում խնայած գումար ունեմ: Անցյալ օրը գնացել էի քաղաքային խորհուրդ: Խնդրեցի, որ հարմար տեղում ինձ հողամաս հատկացնեն՝ իմ ծախսով դպրոց կառուցելու համար, որպեսզի այսպիսով օգտակար լինեմ իմ պետությանը և իմ ժողովրդին: Ինձ խորհուրդ տվեցին, որ գումարը հանձնեմ քաղաքային խորհրդին, իրենք կկառուցեն: Եվ մնաց այնպես»:

Հետո պրոֆեսոր Տերտերյանը զանգատվեց, որ իրեն քննադատում են, հանգիստ չեն թողնում, ձանձրացել է այս միջավայրից, փնտրում է հանգիստ, խաղաղ մի վայր: Ես, որ գնացել էի նրան համոզելու՝ ընդունելու համար եղած առաջարկը, սկսեցի նրան մխիթարել: Ասացի, որ այսպես է գիտ-

նականի կյանքը, կքննադատեն, կհալածեն նույնիսկ, բայց պետք է արհաբար դիմանալ, պայքարել, չընկրկել, չընկճվել:

Այսպես վերջ գտավ մեր խոսակցությունը: Նա հարգանքով ինձ ճանապարհեց, նորից ասաց, որ գոհ էր, որ այդ առաջարկը իրեն անողը ես էի եղել, և մենք իրար շատ լավ հասկացանք:

Պատմելով այս բոլորը՝ Աճառյանն ասաց, որ ճանապարհին շատ վատ է զգացել, ամաչել է ինքն իրենից, կարմրել է նույնիսկ, թե ինչու ինքը սխալվել է և այդ մարդուն համեմատել ուրիշների հետ, վիրավորել նույնիսկ նրա ինքնասիրությունը՝ ասելով, որ 10 000 ռուբլի աշխատավարձ կստանար: Տերտերյանը շատ մեծացել ու բարձրացել էր Աճառյանի աչքին:

## **ԱՃԱՌՅԱՆԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ**

Աճառյանը մեծ ուշադրությամբ և հետաքրքրությամբ հետևում էր հայրենիքի ժողովրդական տնտեսության զարգացմանը, և կատարված յուրաքանչյուր նվաճում և առաջադիմություն անասելի հրճվանք էր պատճառում նրան: Բայց նա չէր բավարարվում միայն ուրախանալով և դիտողի դերում մնալով, այլ ցանկանում էր անել լավ առաջարկներ, ուղղություն տալ:

Մի անգամ Աճառյանը գրում է գերագույն տեխնիկական բաժնի վարիչ Ա. Թամանյանին մի նամակ և անում կարևոր մի առաջարկ. «Վանի նահանգում՝ հատկապես Շատախի հայոց մեջ, տարածված մի օգտակար արհեստ էր շալագործությունը: Պատրաստում էին «Վանա շալ» կոչված կտորեղենը, որ կարող էր մրցել եվրոպական կտորների հետ իր դիմացկունությամբ, փայլով, փափկությամբ և գեղեց-

կուռթամբ: Լինում էր զանազան գույնի, բայց սովորաբար մուգ կապույտ, լաջվարդի, վետովետուն:

Ես գտել եմ այս արհեստի վարպետներից մի մարդ՝ Արսեն Գյուլամեայան, որ հիմա շուկայում ոտի վրա առնտուր է անում: Նա գիտե պատրաստել Վանա շալի հատուկ ներկերը, իր ասելով՝ տեղումն կա մինչև 30 հոգի շալագործ, կա նաև մի վարպետ, որ գիտե շինել ոստայնի վերաբերյալ բոլոր գործիքները: Կտորը գործելու համար անհրաժեշտ է ունենալ չուր կոչված այծի մազը, որ Հայաստանում և առհասարակ Կովկասում շատ հազվագյուտ է, առատությամբ գտնվում է Տաճկահայաստանում, բայց կա նաև Նոր Բայազետի շրջանում:

Այս արհեստի վերակենդանացումը մեր կառավարության ձեռքով Երևանում և նախկին շատախցի ու վանեցի վարպետների միջոցով մի բարիք և հարստության նոր աղբյուր պիտի լինի մեր երկրի համար»:

Աճառյանի՝ 22 սեպտեմբերի 1924 թվակիր այս նամակը Ա. Թամանյանն իր հերթին ուղարկում է ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ս. Լուկաշինին՝ նրան կցելով հետևյալ գրությունը. «Ժողկոմխորհի նախագահ ընկ. Լուկաշինին.

Ընդամին ներկայացնելով պրոֆեսոր Աճառյանի հայտարարությունը շալագործության արհեստի մասին, որը հատկապես տարածված էր Վանի և Շատախի նահանգներում, պարտք եմ համարում զեկուցել Ձեզ, որ գտնում եմ ցանկալի վերականգնել Հայաստանում այդ արհեստը, նամանավանդ որ այդ գործի վարպետներ կան Երևանում՝ մինչև 30 հոգի և անգործ են:

Զեկուցելով վերոհիշյալը՝ խնդրում եմ Ձեր համապատասխան կարգադրությունը»:

Գերագույն տեխնիկական բաժնի վարիչ Ա. Թամանյանի գրության վրա ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինը

մակագրել է. «Գյուղկոռայի միջոցով փորձել կազմակերպել արտել և բաց անել վարկ. միակ միջոցն է՝ իրագործելու նախադրված ճանապարհը»:

Աճառյանը չէր հիշում սակայն, թե բացվեց արդյոք առաջարկված արտելը:

## ԼԵԶՎԱԲԱՆ ՊԵՏԵՐՍՈՆԻ ՅՈԹԱՆԱՄՆԱՍՅԱԿԸ

Աճառյանը մի գրություն ստացավ Կոպենհագենից, որով հայտնվում էր, թե նշանավոր հայագետ Նոլգեր Պետերսոնի ծննդյան 70-ամյա հոբելյանի առթիվ հրատարակվելու են նրան ձեռնված «Լեզվաբանական ժողովածուներ», և խընդրում էին, որ Աճառյանն էլ մի հոդվածով մասնակցի: Աճառյանը ֆրանսերեն լեզվով գրեց մի հոդված և անձամբ Պետերսոնին ուղղված հետևյալ շնորհավորական երկտողը.

«Միբելի վարպետ, M.Holger Peterson.

Արարտյան բարձունքեն ու Արաքսի ավիունքեն սրտագին ողջույն կհղեմ յոթանասնամյա հոբելյանիդ առթիվ, կշնորհավորեմ սրտանց և կմաղթեմ, որ այդ ալևոր հասակիդ մեջ գրիչդ ավելի բեղմնավոր, լեզուներու ուսումնասիրության դաշտին մեջ նորանոր ծաղիկներ բուսցնե: Կցանկամ քեզ ավելի երկար տարիներ:

Պրոֆեսոր Հ. ԱՃԱՌՅԱՆ

(Հայաստանի պետական համալսարան)

1936 հոկտեմբերի 9,

Երևան»

Պետերսոնը, ստանալով Աճառյանի շնորհավորականը, հայտնում էր իր սրտագին շնորհակալությունը ֆրանսերեն լեզվով:

«Պարոն Հրայրա Աճառյանին,

Աբովյան, № 85, Երևան, Հայկական ՍՍՀ:



Պարոն և սիրելի պաշտոնակից.

Շատ սրտագին շնորհակալություն եմ հայտնում այն պատվի համար, որ Դուք արել եք ինձ՝ մասնակցելով «Լեզվաբանական ժողովածուներին», որոնք ինձ նվիրեցին: Եվ ես ոչ նվազ սրտագին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ այն բարեհաճ խոսքերի և բարեմաղթությունների համար, որոնք ուղղում եք ինձ ավելի անձնական ձևով Ձեր սեփական լեզվով Արարատի բարձունքներից և Արաքսի ափերից:

Ընդունեցե՛ք, պարո՛ն, իմ ամենաազնիվ զգացմունքների հավաստիքը:

Անձնվիրաբար ձերդ  
Holger Peterson

Գերսոնավեժ 69, Կոպենհագեն-Հելլերուպ,  
20 մայիսի 1937 թ.»:

«Լեզվաբանական ժողովածուներում» տպվել էին այս երկու նամակները: Աճառյանը հատորը ստացավ 1937 թ. ամռանը և անչափ ուրախացավ՝ տեսնելով իր շնորհավորականը՝ տպված հայերեն, Պետերսոնի պատասխանի հետ:

Ես հետաքրքրվեցի, թե Աճառյանի ֆրանսերեն հոդվածը ինչ նյութի շուրջ էր: Նա ասաց, որ «կեղտ» բառի ստուգաբանությունն էր: Հարցրի, թե մի՞ թե կարելի չէր ուրիշ հարմար բառ գտնել: Աճառյանը պատասխանեց, որ գիտության համար կեղտոտ բառ չկա:

«Լեզվաբանական ժողովածուները» ընթերցելու համար Աճառյանից վերցրեց Սեդրակ Բարխուդարյանը, բայց դեռ չվերադարձրած՝ վրա հասան 1937 թ. դեպքերը, և ամեն ինչ մոռացվեց:

## ԼԵԶՎԱԲԱՆ ՎԱՆԴՐԻԵՄԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Աճառյանը հետմահու լույս տեսած «Կյանքիս հուշերից» հատորի 158-րդ էջում հիշում է, որ Մեյեի հետ Փարիզում ունեցած դասերի ժամանակ իր ընկերներն էին էլզասցի Գոթիոն, բրետոնացի Վանդրիեսը, բելգիացի Գրեգուարը և գերման զվիցերիացի Մաքս Նիեդերմանը:

1951 թ., երբ լույս տեսավ «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» աշխատության առաջին հատորը, Աճառյանը գիրքը թերթելիս հուզմունքով ասաց.

– Ափսո՛ս, որ չկան ուսուցիչներս՝ ֆրանսիացի Մեյեն և գերմանացի Հյուբշմանը: Ինչքա՛ն պիտի ուրախանային նրանք՝ տեսնելով իրենց ուսուցման արդյունքը: Մեյեն ժամանակին շատ էր ուրախացել՝ ստանալով «Արմատական բառարանիս» հատորները, և ասել իր գերագանց գնահատականի խոսքերը: Այդ առթիվ հիշում եմ նաև դասընկերոջս՝ Վանդրիեսին, որ երագում էր՝ մեկը կազմեր համեմատական քերականություն՝ թեկուզ միայն 100 լեզու կողք կողքի դնելով: Նա հաճախ կրկնում էր, թե արդյոք կգտնվի այդպիսի մեկը, և եթե կազմվի նման քերականություն, արդյոք ինչպես կստացվի:

Ապա մի պահ լռելուց հետո Աճառյանն ավելացնում է.

– Արդյո՞ք ողջ է Վանդրիեսը, և եթե տեսնի իմ աշխատությունը, արդյոք ի՞նչ կասի:

Հետո կարծես դիմելով Վանդրիեսին՝ Հրաչյան ասում էր.

– Տե՛ս, Վանդրիե՛ս, գտնվեց քո ուզած մարդը, որ կազմել է ոչ միայն 100, այլ 562 լեզուների համեմատական քերականությունը:

Ապա կարծես սթափվելով՝ ասում էր.

– Ափսո՛ս, որ մենք շատ ենք կտրված արտաքին աշխարհից: Երբ պիտի վերանան քաղաքական այս արգելք-

ները, և մենք՝ գիտության աշխատողներս, ազատ օգտվեինք մեկս մյուսից, և գիտությունը կլիներ կատարյալ:

Այո՛, Հրաչյա՛ ջան, քո ցանկացած ազատությունը եկել է, միայն դու չկաս, որ օգտվես:

## **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՑՈՒՂԵՐԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ**

1950 թ.՝ մի օր, Աճառյանին հրավիրել էին Կենտկոմ, հայտնել, որ որոշում կա՝ մի շարք հայկական գյուղերի թուրքական անունները փոխելու և հայերեն անուններով վերանվանելու կամ գտնելու նրանց հին հայկական՝ պատմական անունները, իսկ եթե անհայտ կորել են հները, կամ ուշ շրջանում հիմնված գյուղեր են, տալ նոր, հարմար անուններ:

Այդ հանձնաժողովի կազմում էր նաև պրոֆեսոր Արարատ Ղարիբյանը: Շուրջ երկու ամիս էր անցել այն օրվանից, երբ հանձնաժողովը սկսել էր իր աշխատանքները: Ամեն օր ավտոմեքենայով տանում ու բերում էին Աճառյանին:

Մի օր էլ սովորականի նման պատշգամբում սպասում էի Աճառյանի վերադարձին: Ես նկատեցի՝ Հայաստանի մինիստրների գերագույն սովետի նախագահության նախագահ Մացակ Պապյանի ավտոմեքենայով բերեցին Հրաչյային: Ամեն օրվա նման բարձր էր Աճառյանի տրամադրությունը: Հարցրի, թե ուր է գնում, հանձնաժողովը որտեղ է կատարում իր աշխատանքները:

– Զգիտեմ, – ասաց Հրաչյան, – գալիս, ինձ տանում են, էլ ի՞նչ կարիք կա հարցնելու: Մակայն գիտե՛ս, Սոֆի՛կ, այնտեղ այնքան անեկդոտներ են պատմում, որ լսողները ծիծաղից թուլանում են: Հետաքրքրական է սեղանի առաջ՝ աջ կողմս, նստող ընկերը: Հայտնի է, որ նա գիտության մարդ չէ, բայց շատ բարի, ժողովրդասեր է: Նա շատ է սիրում անեկդոտներ

լսել, հատկապես շատ գոհ է մնում իմ անեկդոտներից: Երբ վերջացնում եմ անեկդոտը, նա անմիջապես թևս է սեղմում՝ մի ուրիշն սկսելու համար, որ թևս ցավում էր: Նա ուներ հարթ սանրած մազեր: Ձեռքերն այնքան էին խոշոր, որ երբ դրանք տարածում էր, սեղանի մի մեծ մասը ծածկվում էր: Նա միշտ լսում էր մեր վիճաբանությունները այս կամ այն անվան մասին, և երբ համաձայնվում էինք, առանց որևէ առարկության ինքն էլ համաձայնվում էր:

Աճառյանի նկարագրությունից ես հասկացա, որ դա Մացակ Պապյանն էր: Երբ այդ մասին ասացի Աճառյանին, նա նախ զարմացավ, ապա չուզեց հավատալ: Մեկնելուց առաջ նա զանգահարեց Ղարիբյանին և հարցրեց.

– Արարա՛տ, մեր խորհրդակցությունների ժամանակ սեղանի առաջ՝ իմ աջ կողմը, նստողն ո՞վ է:

– Հանրապետության գերագույն սովետի նախագահության նախագահ ընկեր Մացակ Պապյանն է,- ասաց Ղարիբյանը՝ քահ-քահ ծիծաղելով.- ես այդպես էլ գիտեի, որ Դուք նրան չեք ճանաչում, երկու ամիս է, ինչ ամեն օր, նույն սեղանի առաջ կողք կողքի նստած, աշխատում եք նրա հետ և չեք ճանաչում:

– Հապա ինչո՞ւ չեիք զգուշացնում ինձ, որ պետական բարձրաստիճան անձնավորության առաջ հիմար անեկդոտներ չպատմեի. ինչ անհարմար բան ստացվեց:

– Ոչինչ, պրոֆեսո՛ր,- լսվում էր խոսափողի միջից Ղարիբյանի ձայնը,- նա շատ ժողովրդասեր, պարզ մարդ է, բարի և անվնաս, ինչպես Դուք, և հատկապես մեծ հարգանք ունի Ձեր հանդեպ:

Աճառյանը կարծես չէր հավատում դեռ իր լսածին և այդ օրը մեկնելիս այն զգացումն ուներ, որ ինքը մեծ հանցանք է գործել քաղաքական գործիչ մեծ մարդու հանդեպ:

## ԱՃԱՌՅԱՆԻ ՕՐԵՆՔԸ

Աճառյանն իր «Քննությունն Վանի բարբառի» աշխատության մեջ հայտնաբերել էր մի օրենք, որ հատուկ էր այդ բարբառին: Նա այդ օրենքը անվանել էր «Աճառյանի օրենք», մեծատառերով էր գրել և ընդգծել, նույնիսկ գիրքը տպագրության հանձնելիս ուշադրություն էր հրավիրել դրա վրա և խնդրել շարել գլխատառով, շղատառ, որ ակնբախ լինի:

1952 թ. տպագրվեց «Քննությունն Վանի բարբառի», բայց, ինչպես միշտ, Աճառյանի ցանկությունը նորից մնաց անկատար: «Աճառյանի օրենքը» շարվել էր սովորական տառերով: Աճառյանը երբ նկատեց այդ, շատ նեղացավ: Նա շարունակ կրկնում էր, թե այդ մարդիկ ինչու իր ցանկությունը նկատի չեն առնում, համառում են և իրենց ասածն ու ուզածը կատարում. կարծես հեղինակից ավելի մեծ իրավունքներ ունեցած լինեն:

Աճառյանն այնքան էր նեղացել, որ այդ մասին հատուկ դիտողություն արեց գրքի «խմբագրին», նա էլ չքմեղանք գտավ՝ ասելով, որ գրաշարն է այդպես շարել, իսկ սրբագրիչները չեն նկատել:

Աճառյանը դեռ չէր հանդարտվել և կրկնում էր.

– Երևի մի «հմուտ» մարդ չի հասկացել այդ օրենքի նշանակությունը և սովորական տառերով է շարել, իսկ նույնքան «հմուտ» սրբագրիչներն ու խմբագիրները իրենք ևս չեն նկատել այդ օրենքի իմաստը:

Աճառյանն ասում էր. «Երանի հնարավոր լինել, որ ես շարեի որոշ գրքերս, ինչպես արել էր, օրինակ, Վենետիկի Մխիթարյան միաբաններից Հ. Արսեն Ղազիկյանը իր մի շարք աշխատությունների տպագրության ժամանակ»:

## «ՏԱՃԿԱՀԱՅ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Վերջին շրջանում Աճառյանը դասախոսությունից վերադարձին գանգատվում էր հոգնածությունից, մանավանդ երեկոյան:

Մի օր էլ՝ երեկոյան զեկուցումից վերադարձին, սովորական գանգատից հետո մի քիչ հանգստացավ և սկսեց պատմել.

– Գիտես, Մոֆի՛կ, հիմա այնքան շուտ եմ հոգնում, իսկ ժամանակին, երբ երիտասարդ էի, կարող էի ժամերով դասախոսել: Այս մասին քեզ մի բան պատմեմ:

1915 թ. ես ուսուցիչ էի Նոր Նախիջևանի հայոց թեմական դպրոցում, որտեղ դասեր ուներ նաև Նոր Նախիջևանի հայոց հոգևոր թեմի փոխանորդության փոխանորդ Գևորգ վարդապետ Չորեքյանը:

Մի օր ինձ առաջարկեցին զեկուցում՝ նյութերի շուրջ դասախոսելու: Դասախոսությունը կազմակերպվեց: Ամբիոն բարձրացա և սկսեցի իմ զեկուցումը՝ պարզ և հասկանալի ձևով: Լեփ-լեցուն դահլիճը, ինչպես ասում են, կարծես քար էր կտրել. ոչ մի շշուկ չէր լսվում: Նյութը խոսում էր իմ սրտից: Այնքան էի տարվել, այնքան էր գերվել դահլիճը, որ մոռացել էինք ժամանակը, մոռացել ամեն ինչ: Հանկարծ սաստիկ քաղց զգալով՝ նոր սթափվեցի, հարցրի ժամանակը, ասացին՝ ժամը 4-ն է: Ես նեղացա, թե ինչու չեն զգուշացրել ինձ: Պարզվեց, որ չորս ժամ անընդհատ խոսել եմ: Իսկույն իջա ամբիոնից, վազեցի՝ մի պատառ բան ուտելու: Ահա այդպիսին էի ժամանակին, իսկ հիմա ծերացել եմ, ամեն բանից շուտ հոգնում եմ, չգիտեմ՝ ինչ պիտի լինի սրա վերջը:

Նույն զեկուցման մասին պատմեց նաև կաթողիկոս Չորեքյանը: Աճառյանի մահից քառասուն օր հետո Վեհափառը ինձ հրավիրեց իրենց տուն (սգահանեք): Այդտեղ էին Ավետիք Իսահակյանը, տիկին Մոֆիկը, Վահան Կոստանյանը

(կաթողիկոսի տեղակալ), որ նոր էր վերադարձել Նոր Ջուղայից, և երկու անձանոթ վարդապետներ: Բոլորը ի սրտե ցավակցեցին ինձ, Վեհափառ Չորեքյանը խիստ հուզվեց և սկսեց պատմել Աճառյանի գերմարդկային աշխատասիրության մասին, նրա գիտելիքների և անսպառ եռանդի մասին, նրա անշահախնդիր լինելու, նրա նուրբ ու սրտառուչ հոգու, նրա զգայուն սրտի մասին: Ահա այս բոլորից հետո մխիթարելով ինձ՝ ասաց. «Աճառյանը իր անմեռ գործերով հավերժ կենդանի է: Ինչպես նրա կենդանության օրոք գերմարդկային գործեր էք արել Աճառյանի համար, այնպես էլ այժմ՝ նրանից հետո, Դուք անելիքներ շատ ունեք և Դուք իրավունք չունեք ընկճվելու. մխիթարվենք նրա թողած գործերով. դա մեզ պատիվ կրերի»: Հետո անցան հիշողություններին, Վեհափառ Չորեքյանը պատմեց Աճառյանի՝ հայոց հարցի դասախոսության մասին Ռոստովում, որը շարադրել եմ վերևում: «Մեր միաբանությունը,- ասաց Վեհափառը,- որոշել էր մի բանով օգնել հայ կամավորներին. դա համաշխարհային առաջին պատերազմն էր: Մեր միաբանությունը որոշեց դիմել Աճառյանին՝ խնդրելով, որ մի զեկուցում կարդա հայոց հարցի մասին. նա մեր թեմական դպրոցում ուսուցիչ էր հայոց լեզվի: Դուք պիտի այնտեղ լինեիք, լսեիք, թե ինչպիսի ոգևորությամբ նա կարդաց իր զեկուցումը: (Այդ նյութը, ինչպես հետո ասաց Աճառյանը, վաղուց էր պատրաստ և սպասում էր հարմար առիթի, ահա և հարմար առիթը): Աճառյանը խոսում էր առանց դադարի, առանց հոգնելու: Մոտ 4-5 ժամ խոսելուց հետո հանկարծ ամբիոնից իջավ, առանց մի բառ ասելու հեռացավ, չլսեց անգամ դահլիճի դոփյուններն ու ծափահարությունները: Հետո իմացանք, որ սարսափելի քաղց էր զգացել, էլ չէր դիմացել: Հետո մենք նորից խնդրեցինք Աճառյանին, որ այդ զեկուցումն ընդարձակի և մի փոքրիկ գրքույկ տպագրի, որի հասույթը հանձնենք հայոց դիվանին՝ հօգուտ կամավորների: Աճառյանը ամենայն սիրով համաձայնվեց,

առանց վարձի կազմեց այդ ցանկացած գրքույկը. մի քանի օրում պատրաստած այդ գրքույկի նյութը տառացիորեն մի քանի օրում էլ շարվեց, շարելուն օգնեց ինքը՝ Աճառյանը, և տպվեց: Թեմի քահանաները իրենց ծուխերում զատկի տըն-օրհնության ժամանակ մի քանի օրում վաճառեցին գրքույկի ողջ տպաքանակը, որի արժեքն էր մեկ ռուբլի, և գումարը հանձնվեց նշված նպատակի համար»: Այնուհետև Վահան եպիսկոպոս Կոստանյանը հիշեց մի դեպք իր կյանքից՝ կապված Աճառյանի հետ, և պատմեց. «Երբ Աճառյանի «Արմատական բառարանը» թույլատրվեց տպագրել խորատիպով, նա դիմեց ինձ և խնդրեց, որ ես արտագրեմ «Արմատական բառարանը» խորատիպի համար՝ նախօրոք գիտենալով և հավանելով իմ պարզ և գեղեցիկ ձեռագիրը. ես համաձայնվեցի, անցանք զնի համար սակարկության: Իմ հարցին, թե որքան կարող է վճարել, նա պատասխանեց, որ ինձ համար՝ երեսը մեկ ռուբլի, իսկ ուրիշին կվճարեր ավելի պակաս»: «Այդ ո՞վ է, որ մեկ ռուբլով կարտագրի այդ թունավոր գործը, - ասացի ես և ավելացրի, - թե էջը՝ 3 ռուբլի»: Նա այն աստիճան ջղայնացավ և բղավեց, որ կարծեցի, թե հիմա բռունցքը կիջեցնի գլխիս. «Այդ գրքի հեղինակն եմ, և ես ոչինչ չեմ ստանալու, իսկ Դուք ուզում եք համալսարանին կողոպտել»:

## ՄՈՒՐՎԱԼՅԱՆԻ ԴԻՄԵՐՏԱՑԻԱՆ

Մի օր Աճառյանն ինձ շտապ կանչեց իր աշխատասենյակը և խնդրեց, որ կարդամ մի ջնջված տող: Այդ տողում բավական հստակ ձևով կարդացվում էր «Աճառյան» անունը: Հրաշյան հարցրեց, թե արդյոք պարզ երևում է «Աճառյան»-ը: Կրկնեցի, թե շատ պարզ է և անվիճելի: Աճառյանն ապա ասաց.



– Սոֆի՛կ, գիտե՛ս՝ Մուրվայյանը երբեք չի մտածել, որ մի օր իր դիսերտացիան իմ ձեռքը կանցնի, նա ազատորեն հայհոյել է իմ հասցեին: Բոլոր այս ջնջված տեղերը (նա մատնացույց էր անում ջնջումները) հայհոյանքներ են իմ դեմ: Երևի ոչ ոք չի համաձայնել դիսերտացիայի ընդդիմախոս լինելու պատասխանատվությանը, և ճարահատ՝ ինձ են ուղարկել: Վերջին պահին միայն Մուրվայյանը ջնջել է բոլոր այն տեղերը, որոնք իմ դեմ են՝ կարծելով, որ տկար տեսողությամբ ոչինչ չեմ նկատի:

– Այժմ ի՞նչ ես անելու, – հարցրի ես հետաքրքրվելով:

– Ոչինչ: Եզրակացությունս քեզ կկարդամ: Խնամքով ջնջելը արդեն նշանակում է, թե նա գոջացել է իր գրածի համար:

Մուրվայյանի դիսերտացիան քննելուց հետո Աճառյանն ինձ կարդաց իր ռեցենզիան (կարծիքը), որի մեջ ասում էր. «Դիսերտանտը այս գործը գրել է՝ Աճառյանի դեմ հայհոյելու համար, առանց իմանալու, որ այդ գործը ինձ է հանձնվելու՝ քննության համար: Նա այդ հայհոյանքները մեծ խնամքով ջնջել է, բայց նույնքան խնամքով էլ կարդացվում են: Այս գործի արժանիքն այն է, որ դիսերտանտը կարողացել է երկար աշխատել և գրել այս գործը: Եթե նա կարողացել է այդքան ջանք ու ճիգ թափել և գիրք գրել, ապա դա նշանակում է, որ անարժեքից հետո նա կարող է գրել նաև արժեքավոր գործեր: Ուստի իր աշխատանքի համար պետք է տալ իրեն իր ցանկացած տիտղոսը: Ուզածը ի՞նչ է որ»:

Մուրվայյանը գրում է. «Այնքան շատ բան գրեցի Աճառյանի դեմ, քննադատեցի՝ առանց կանգ առնելու ոչ մի բանի դեմ»: Եվ այս բոլորն իմանալով հանդերձ՝ Աճառյանը վեհանձնորեն վարվեց նրա հանդեպ, առանց արհամարհելու նրա աշխատանքը:

Արդյոք ի՞նչ է զգացել Մուրվայյանը, երբ կարդացել է այդ ազնիվ, անհիշաչար, ներողամիտ, մարդասեր Աճառյանի

եզրակացությունը: Արդյոք զոջացե՞լ են ուրիշ շատ-շատերը, որոնք, մասնագետ կամ ոչ մասնագետ, պատիվ են համարել չափվել Աճառյանի հետ, քննադատել նրա ոչ թե մեծարժեք գործերը, այլ իրեն՝ Աճառյանին, ու վարկաբեկել վաստակաշատ գիտնականին:

Անկասկած, սակայն, բոլոր նրանք, որոնք անիրավորեն ավելորդ վիշտ և դառնություն են պատճառել այդ սուրբ մարդուն, զոջացել են արդեն կամ կզոջան անպայման, միայն թե ցավալին այն է, որ այդպիսիները քաջություն չեն ունենում իրենց զոջումը հայտնի դարձնելու, մինչդեռ իրենց քննադատությունները և զրպարտությունները (Աճառյանի նման կարճ բառով ասած՝ հայիոյանքները) գիտություն չեն:

## ԱՃԱՌՅԱՆԻ ԳՈՐԾԵՐԻ ՀԵՏՄԱՀՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աճառյանի մահվանից հետո նրա ձեռագիր աշխատությունների տպագրությունը հուսահատեցնող դանդաղությամբ էր ընթանում՝ չասելու համար, որ գրեթե կանգ էր առել: Նախատեսված էր, օրինակ, շուտով ավարտել «Լիակատար քերականությունը», մինչդեռ ասիա 15 տարի էր անցել, և դեռ այն չէր վերջացել: Իրերի նման դրությունը, բնականաբար, ինձ անհանգստացնում էր: Ուստի ես դիմեցի Աճառյանի ավագ ուսանողներին, որոնք ներկայումս ակադեմիկոսներ, դոկտորներ և պրոֆեսորներ են, ինչպիսիք են՝ Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Էդուարդ Աղայանը, Գևորգ Ջահուկյանը և ուրիշներ: Պետք է ասել, որ գրեթե բոլորը տրամադիր էին օգնելու, բայց, ցավ ի սիրտ, հայտնեցին, որ չեն կարող օգտակար լինել, որովհետև Էդուարդ Աղայանը հավակնում էր, որ Աճառյանը մահվան անկողնում այդ իրավունքը վստահել էր իրեն, ուստի իրենք չէին համարձակվում

խառնվել նրա գործերին: Ես շատ էի մտածում և եզրակացնում, որ միայն մի մարդու ուժերից վեր է այդքան գործերի հրատարակությունը գլուխ բերել, ուստի լավ էր մի տեսակ աշխատանքի բաժանում կատարել: Սակայն ի՞նչ կարող էի անել:

Վերջապես 1967 թ. ես դիմեցի Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հարգելի նախագահ Վիկտոր Համբարձումյանին, պարզեցի նրան իրական դրությունը, ասացի, որ 1962 թ. հայ գրերի անմահ ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի հոբելյանի առթիվ Աճառյանի «Ս. Մեսրոպ և հայոց գրերի պատմությունը» հանձնել էի հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Անտոն Ե. Քոչինյանին՝ տպագրության ինդրանքով, որպես նվեր և հիշատակ հեղինակի կողմից: Ընկ. Քոչինյանն ասել էր նույնիսկ, որ եթե ես իրավունք ունեմ հոնորար ստանալու, կստանամ: Բայց, ցավոք, մինչև հիմա զիրքը լույս չի տեսել, թեև միշտ ինձ ասվում է, որ այն արդեն գտնվում է մամուլի տակ: Պատմեցի նաև Աճառյանի մյուս աշխատությունների անհուսալի վիճակի մասին և վերջում ինդրեցի իր թանկագին օժանդակությունը, միջնորդությունն ու կարգադրությունը՝ Աճառյանի ձեռագիր ժառանգության ճակատագիրը որոշելու և վճռելու հարցում: Մի քանի օրից ես նորից դիմեցի հարգելի պրեզիդենտին: Այս անգամ նա կարգադրեց, որ ակադեմիկոս Սուրեն Երեմյանի գլխավորությամբ համախմբվեն մի քանի լեզվաբաններ և կազմեն հանձնաժողով՝ ստուգելու համար Աճառյանի արխիվը և իրեն գեկուցելու: Կազմվեց հանձնաժողովը, անցավ աշխատանքի՝ իմ էլ մասնակցությամբ: Նշանակված բոլոր անդամները ներկա գտնվեցին՝ բացի Աղայանից, որ մերժեց՝ մենատիրական իրավունքի նույն հավակնությամբ և ոչ ոքի ենթարկվելու հարկադրանքը չունենալու մտածումով: Իմ բոլոր ճիգերը նորից անցան ապարդյուն: Այս անգամ ես

անձամբ դիմեցի պրոֆեսոր Էդ. Աղայանին այն հույսով, որ իբրև հանգուցյալի այրի՝ իմ հաղեպ պատշաճ հարգանք կցուցաբերի և իր անմատչելի բարձունքից կբարեհաճի քիչ ցած նայել, բայց նա ինձ էլ կրկնեց նույնը, թե ինքն է ձեռագրերի տերն ու տիրականը և ոչ ոքի հաշիվ տալ չի ցանկանում: Ես հարկադրվեցի նորից դիմել հարգելի նախագահին և զեկուցեցի որդեգրված մոտեցման մասին: Այս անգամ նախագահը կազմված հանձնախմբին որպես նախագահ նշանակեց ակադեմիկոս Արարատ Ղարիբջանին:

Թող ինձ թույլ տրվի ասել, սակայն, որ մինչև հիմա կատարված աշխատանքները նմանվեցին ջուր ծեծելու, որովհետև շոշափելի որևէ արդյունք չի ստացվել, և գործերը մնում են իրենց տեղում:

## ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Առանձին բազմաթիվ հատորներով և հայրենի ու սփյուռքահայ պարբերական մամուլում ցրված իր բազմաթիվ տպագիր աշխատություններից բացի՝ Աճառյանը դեռևս ունի բազմաթիվ ձեռագիր աշխատություններ, որոնք ինձ մոտ պահվում են մեծ խնամքով ու գուրգուրանքով:

Ուրախ եմ հայտնելու, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը պատշաճ հետաքրքրություն է ցույց տալիս այդ գործի նկատմամբ: Ակադեմիայի հարգելի նախագահ Վ. Համբարձումյանի հրամանով նշանակվել է հատուկ հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են ակադեմիկոս Ա. Ղարիբջանը (հանձնաժողովի նախագահ), ակադեմիայի թղթակից անդամ Էդ. Աղայանը, բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Ստեփանյանը և ես: Հանձնաժողովը, 1986 թ. հունվարի 8-ի իր նիստում ծանոթանալով ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի անտիպ աշխատու-

թյունների վիճակին, գտավ միանգամայն ավարտված և հրատարակության համար հեշտությամբ պատրաստելի նրա մի շարք գործերը:

Այդ աշխատությունների մեջ առանձնապես արժեքավոր է հայագիտական բնույթի (բայց ոչ նեղ մասնագիտական լեզվաբանական) «Ժողովածու պոլսահայ անգիր բանահյուսությունը», որտեղ Աճառյանը հավաքել է Պոլսի հայկական բանահյուսությունը՝ առակներ, առածներ, ասացվածքներ, օրհնություններ, անեծքներ, հանելուկներ, հեքիաթներ, գրի է առել պոլսահայերի սովորությունները, նիստուկացը և այլն: Այս գործի հրատարակությունը կարևոր ավանդ կհանդիսանա հայ բանահյուսական, ազգագրական գանձարանում, կփրկի ժամանակի և իրադարձությունների բերումով կորուստի մատնված թանկարժեք գանձերը:

Մեծ արժեք է ներկայացնում «Պատմություն հայոց գաղթականության» աշխատությունը: Աճառյանն այստեղ ներդրել է աղբյուրագիտական իր ողջ հմտությունը, օգտվել է ոչ միայն մեր պատմիչների տված տեղեկություններից, այլև պարբերական մամուլից և բանավոր աղբյուրներից: Յուրաքանչյուր գլխի հետ անհրաժեշտ աղբյուրների ցանկը տալուց բացի՝ հեղինակը աշխատությանը կցել է նաև առանձին մատենագիտական ցանկ: Ինչպես հիշվում է առաջաբանում, օգտագործված աղբյուրների թիվը հասնում է մի քանի հազարի:

Յուրատեսակ և խիստ շահեկան աշխատություն է «Հայոց պատմություն՝ հյուսված ընդհանուր պատմության հետ»-ը: Ինչպես երևում է խորագրից, այստեղ հայոց պատմությունը տրվում է՝ մարդկային ընդհանուր պատմության հետ միահյուսված: Զուգահեռաբար շարադրելով աշխարհի այլնայլ մասերում զարգացող քաղաքակրթական ու քաղաքական իրադարձությունները՝ Աճառյանը հայ ժողովրդի պատմությունը հասցնում է մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Այս գործի համար ևս օգտագործվել

են ոչ միայն հայ, այլև օտար բազմաթիվ միջազգային հեղինակություն ու ճանաչում գտած գիտնականների աշխատություններ, հանրագիտարան և այլն: Աշխատությունն օգտակար է ոչ միայն պատմության մասնագետների, այլև հասարակ ընթերցողների համար:

Քրտնաջան աշխատանքի արդյունք է նաև «Հայարձանը», որն ընդգրկում է «Հայոց բոլոր արձանագրությունները՝ հնագույն շրջանից մինչև 1550 թվականը»՝ վիմագիր թե գրավոր աղբյուրներում հաղորդված: Վիմագիր արձանագրությունների մեջ կան և այնպիսիները, որոնք Աճառյանն անձամբ ինքն է վերծանել տեղում կամ վերծանել տվել ծանոթ մտավորականների: Արձանագրությունների այսքան ճոխ հավաքածուի հրատարակությունը կարող է մեծ օգուտ բերել հայագիտության բոլոր բնագավառներին:

Հրատարակության համար պատրաստ գործերի մեջ են նաև «Քննություն Կիլիկիայի բարբառի» (գուգահեռաբար քննության են առնված Ջեյթունի և Հաճընի քույր բարբառները), «Քննություն Սվեդիայի բարբառի» (հիմք է ընդունվել առավելապես Հաջի-Հաբիբլի գյուղի բարբառը), «Պարսից լեզվի պատմությունը», «Հայոց նոր գրականության պատմությունը», «Հայ հին մատենագրության պատմությունը» (ընդգրկում է Ե-ԺԵ դարերը և պատրաստված է որպես միջնադարյան հայկական բնագրերի ուսումնական ձեռնարկ) ու «Սասնիի «Գյուլիստանը» և Օմար Խայամը» (թարգմանություն պարսկերենից):

«Հայոց լեզվի լիակատար քերականության» 7-րդ վերջին հատորի նյութերը՝ նվիրված բառաքննությանը, իմաստաբանությանն ու շարահյուսությանը, խմբագրի կողմից արդեն պատրաստված են հրատարակության:

Հիշված աշխատություններից բացի՝ հանձնաժողովը գտավ, որ «Բառարանագիտություն» աշխատության մեջ եղած նյութերը արժեքավոր են և կարող են նույնպես հրա-

տարակվել: Այս գործում բառարանագիտության շուրջ ընդհանուր տեսությունից և հայ ձեռագիր բառարանագրական աշխատությունների մասին ընդհանուր ակնարկից հետո Աճառյանը հակիրճ կերպով քննության է առնում իր ձեռքի տակ ունեցած հայկական բառարանները (հայերենից հայերեն, հայերենից օտար լեզուներ և օտար լեզուներից հայերեն)՝ տալով նրանց գնահատականները:

Աճառյանը հայագիտական հարցերի շուրջ «Հայկականք» վերնագրով մի շարք հոդվածներ է հրատարակել պարբերական մամուլում: Հանձնաժողովը գտնում է, որ այդ բոլորը նույն ընդհանուր խորագրով, մի հատորում հրատարակելը «հայագիտության համար կհանդիսանա զարգացման խթան»:

Աճառյանի «Արմատական բառարանը», որը ոչ միայն հայոց լեզվի, այլ նաև ընդհանուր լեզվաբանության համար համարվել է իր տեսակի մեջ եզակի գործ, ժամանակին միջոցների սղության պատճառով հրատարակվել է ապակետիպ և խիստ սահմանափակ տպաքանակով: Այդ աշխատությունը վաղուց արդեն սպառված է, և նրա պահանջը զգալի է: Հանձնաժողովը գտնում է, որ պետք է ձեռնարկել «Արմատական բառարանի» վերահրատարակությանը:

Արխիվում եղող «Հայոց տեղանունների բառարանը» արժեքավոր, բայց անավարտ ու մշակելի գործ է:

Աճառյանի անտիպ աշխատությունների վիճակը քննող հանձնաժողովն իր արձանագրությունը, որի գլխավոր կետերը հիշեցինք քաղվածքաբար, եզրափակում է հետևյալ տողերով. «Արձանագրության մեջ նշված բոլոր աշխատությունները մեծ արժեք ունեն, և նրանց տպագրությունը հասարակական-գիտական անհրաժեշտություն է, քանի որ արտացոլում են մեծ հայագետի բազմաթիվ հայագիտական հետազոտական եզրակացությունները»:

Աճառյանը շատ էր ցանկանում կենդանության օրոք տպագրված տեսնել գեթ իր գլխավոր գործերը: Նրա ցանկությունը, ավաղ, լրիվ չիրականացավ: Այժմ ես, իբրև նրա «կյանքի վերջալույսի հավատարիմ ընկեր և բախտակից», ունեմ նույն այդ ցանկությունը: Հուսով եմ, որ մեր ակադեմիայի հարգելի նախագահի վերահսկողությամբ Աճառյանի անտիպ գործերի հրատարակությամբ զբաղվող հանձնաժողովը արդյունավետ կերպով կկատարի իր առաջադրանքը, և ես կյանքին հրաժեշտ տալուց առաջ բախտ կունենամ նրա կարևոր աշխատությունները հրատարակված տեսնելու:



## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սորաքույրս՝ Սոֆյա Աճառյանը, մորիցս երկու տարով փոքր էր, ծնվել էր 1903 թ. Երևանում: Ընտանիքի հիմնադիրը՝ Կարապետ Վարդանյանը, ավելի շատ հայտնի էր Երևանի առևտրական շրջանակներում «Ախտեցի Կարո» անունով: Քաղաքում նա ուներ մի խանութ, որտեղ վաճառում էին կտորեղեն, տարբեր ապրանքներ՝ բերած Ռուսաստանից ու Լեհաստանից, և նույնիսկ ինքնատեղեր, որոնց վաճառման արտոնությունը տրվում էր առաջին կարգի վաճառականներին: 1900 թ. նա կառուցեց երկհարկանի մի շքեղ տուն Բեբուտովի փողոցում, որը հետագայում վարձով էր տալիս հարուստներին, իսկ դրա կողքին կառուցեց նաև սև տուֆից մեկհարկանի չորսսենյականոց մի այլ տուն՝ իր ընտանիքի համար: Ընտանիքը մեծ էր. վեց զավակը, կինը և մայրը ապրում էին միասին: Երկու աղջիկները շուտով ամուսնացան և հեռացան տնից: Մնացին երկու աղջիկ և երկու որդի:

Շատ ժամանակ չանցած՝ Հայաստանում սկսվեցին հեղափոխական ընդվզումները, որոնք ավարտվեցին նախ՝ ինքնուրույն պետության հաստատումով, որը, սակայն, շատ կարճ տևեց, այնուհետև՝ բոլշևիկյան հեղաշրջումով և, ի վերջո, սովետական կարգերի հաստատումով: Սկսվեցին տնտեսական դժվարություններ, որոնց զուգահեռ՝ նաև քաղաքական հալածանքեր ու զրկանքներ: Այդ բոլորի հետևանքով պապս՝ Ախտեցի Կարոն, կաթված ստացավ և մնաց անկողնուն գամված մի քանի տարի, որից հետո այդպես էլ չապաքինվեց ու մահացավ: Գործը անցավ ավագ որդի Ռուշանին, որը շարունակեց հոր գործը: Երկրում տիրում էր քաոս: Կրոնիկների հետևանքով տնտեսությունը անկման վիճակում էր:

Դժվարությունները հաղթահարելու համար Լենինը հռչակեց ՆԷՊ (Նոր տնտեսական քաղաքականություն) ծրա-

գիրը, որը փաստորեն նշանակում էր վերադարձ ազատ շուկայական կարգերի, որը, սակայն, տևեց մի քանի տարի, բայց ցանկալի արդյունք տվեց: Մի փոքր շունչ քաշելուց հետո սկսվեց հականեպյան շրջանը՝ բռնագրավումներով, ձեռքակալություններով, աքսորներով: Ռուշանի խանութը բռնագրավեցին, տունը խուզարկեցին և ոչ միայն իր տունը, այլև մեր բնակարանը, որը նույն բակում էր, և տարան մոքս սակավաթիվ ոսկեղենը: Ռուշանի կինը փախավ տնից, Ռուշանը ձեռքակալվեց ու աքսորվեց, որտեղից այնս չվերադարձավ, և միակ երեխան՝ Արմենակը, մնաց մենակ, հորեղբոր ինամքին: Հետագայում դպրոցն ավարտելուց հետո նա մեկնեց Բաքու՝ օդաչուական դպրոցում սովորելու, որն ավարտելուց հետո անմիջապես ուղարկվեց ռազմաճակատ. պատերազմն արդեն սկսվել էր: Եվ պատերազմի սկզբից մինչև վերջ մասնակցեց կռիվներին, և հետո ուղարկվեց Կուրիլյան կղզիներ՝ ծառայելու, որից հետո նշանակվեց Հայաստան, ուր վերադարձավ իր կնոջ և երկու որդիների հետ: Միայն իր ոչ պրոլետարական ծագման պատճառով նա չարժանացավ բարձր զինվորական աստիճանի, չնայած պարզևատրվել էր բազմաթիվ շքանշաններով:

Ընտանիքից մնացել էին մայրս՝ Սիրանուշը, Սոֆյան և Գարեգինը: Քույրերը շատ նվիրված էին միմյանց և հանդիպում էին գրեթե ամեն օր: Խոսում էին օրվա նորություններից, հարևաններից, առօրյա կյանքից: Սոֆյան տարբերվում էր մորիցս ոչ միայն արտաքինով, այլև բնավորությամբ. միշտ կենսուրախ, ծիծաղկոտ, կատակասեր: Ինձ և քրոջս անչափ սիրում էր, և մենք համարում էինք նրան մեր տան անդամ և մասնակից էինք նրա կյանքի բոլոր իրադարձություններին: Պետք է նշեմ, որ Սոֆյան արտակարգ գրուցակից-ասմունքող էր. պատմում էր այնպես, որ ոչ ոքի անտարբեր չէր թողնում, ու բարբառային բառերը տեղին օգտագործելը ավելի էր ծաղկեցնում խոսքը: Հետագայում նա սկսեց

նան գրի առնել այն ամենը, ինչ վերաբերում էր Աճառյանի կյանքին: Այդպես ստեղծվեցին հիշողությունները:

Մինչդեռ կյանքը բարդանում էր: 1929-1932-ական թվականներն էին: Սկսվել էին կոլեկտիվացումը, գյուղացիներին բռնի կոլխոզ գրանցելու և հազարավոր չցանկացողների աքսորավայր ուղարկելու գործընթացը, որն ավարտվեց հազարավոր մարդկանց կոբստով և համատարած սովով: Հացը վաճառում էին քարտերով քաղաքի բանվորներին, աշխատավորներին, ուսանողներին: Մյուս շերտերը զրկված էին հացի քարտերից:

Սոֆյան նոր էր բաժանվել իր կարճատև անհաջող ամուսնությունից հետո ամուսնուց՝ Սմիռնովից, որը գործուղված էր Հայաստան ՆԿՎԴ կողմից՝ ապահովելու համապատասխան կարգերը, և որի հետ ինքը ամուսնացել էր՝ իր եղբոր՝ Ռուշանի կյանքը փրկելու համար, բայց, ավաղ, անօգուտ, և հիմա մնում էր մեր տանը: Սակայն հացի գրքույկ ստանալու համար ստիպված էր մի տեղ աշխատել կամ սովորել: Որոշեց ընդունվել Անասնաբուժական ինստիտուտ, սակայն առաջին իսկ քննությունից կտրվեց և կանգնեց ինստիտուտից հեռացվելու վտանգի առջև: Ստիպված Սոֆյան փնտրում է մի բարեխոսի: Այդպես նա հանդիպում է պրոֆեսոր Հրաչյա Աճառյանին, որն էլ առաջարկեց իր սիրտն ու ձեռքը և խորհուրդ տվեց սովորել ատամնաբուժություն: Նրա համար սկսվեց նոր ու անսովոր, բայց անչափ հետաքրքիր մի կյանք՝ իր հաճելի և տանջալից օրերով: Աճառյանի հետ անցկացրած շուրջ քսան տարիների մասին Սոֆյան պատմում է իր հիշողություններում, որոնց մեջ խոսում է իրար հաջորդող շատ երջանիկ ամիսների և տանջալից տարիների մասին:

Սոֆյան իր ամբողջ կյանքում մեծագույն նվիրվածությամբ անցավ իրեն բաժին ընկած բոլոր փորձանքները և եղավ Աճառյանի իսկական թնութիկունքը, քանի որ զգաց և գնա-

հատեց նրա մեծությունը: Այսպես, օրինակ, Աճառյանը ուներ մի ցանկություն՝ ապրել միհարկանի տանը՝ առջևում փոքրիկ պարտեզով, քանի որ իր երրորդ հարկի բնակարանը դժվար էր հաղթահարել առանց վերելակի: Սոֆյան անմիջապես ձեռնարկեց մի փոքր տան կառուցումը՝ քաղաքի կենտրոնից ոչ շատ հեռու (այժմ Մաշտոց և Բաղրամյան պողոտաների խաչմերուկում): Այն ժամանակ այդ մասում այգիներ էին՝ փոքր, խարխուլ տներով: Բաղրամյան փողոցը քարքարոտ մի նեղ փողոց էր, որով, կոշիկները մաշելով, անցնում էին արաբկիրցիները: Գնելով այդ հողամասը հայտնի երգիչ Շարա Տալյանից և վճարելով թուրքի տնակի համար Սոֆյան ձեռնարկեց շենքի կառուցումը, որի նախագծի և շինարարության դեկը ստանձնեց ինժեներ Պասոյանը: Սոֆյայի ակտիվության և Աճառյանի հեղինակության շնորհիվ շենքը շատ արագ կառուցվեց միջև տանիքը: Սակայն Աճառյանը հանկարծամահ եղավ, և ամեն ինչ փոխվեց:

Աճառյանի մահից հետո Սոֆյան մի քանի տարի նվիրեց նրա գերեզմանի բարեկարգման խնդրին, որի համար նա մեկնեց Մոսկվա, ընտրեց արձանի մի նմուշ և կազմակերպեց աննախադեպ մի բան՝ Կարելիայից հղկված լաբրադոր քարերի փոխադրում Մոսկվայով Երևան, և հենց Մոսկվայում պատվիրեց հեղինակավոր մի քանդակագործի Աճառյանի բարելիեֆը (խորաքանդակ) բրոնզից: Իսկ անավարտ տան երկրորդ հարկը նա նվիրեց իր սիրելի քրոջը՝ մեր ընտանիքին հորդորելով, որ մենք մեր բնակարանը վաճառենք և ավարտենք շինարարությունը և տեղափոխվենք այդտեղ ապրելու: Մենք այդպես էլ արեցինք:

Աճառյանի մահից հետո Սոֆյան ակտիվորեն զբաղվեց նրա անտիպ աշխատությունների հրատարակումով: Խմբագիրը՝ պրոֆեսոր Աղայանը, Աճառյանի հետ բանավոր համաձայնությամբ էր նշանակված:

Սոֆյայի առողջական վիճակը վատանում էր: Սրտի նուստները հաճախ էին անհանգստացնում նրան, մանավանդ որ նա հիմնականում զբաղվում էր իր հիշողությունները գրի առնելով: Դուստր Քնարիկը զբաղված էր իր նոր ամուսնության հարցերով և չէր կարողանում մշտապես խնամել մորը: Ես և քույրս օգնում էինք նրան: Սակայն շուտով խնամողների թիվը նվազեց: Չնայած մեր տունը հեռու չէր Սոֆյայի բնակարանից, սակայն ես հաճախ ստիպված էի լինում գիշերները դուրս վազել տնից՝ դիմավորելու շտապ օգնության մեքենաները և գիշերել Սոֆյայի մոտ, ուստի ավելի նպատակահարմար էր ապրել հենց տվյալ բնակարանում: Ես իմ վեց տարեկան Դավիթի հետ տեղափոխվեցի՝ Սոֆյայի մոտ ապրելու: Եվ այսպես անցան մի քանի ամիսներ: Ցերեկները Սոֆյան զբաղվում էր իր հիշողություններով, պատրաստի հատվածները տալիս էր մեքենագրելու, խմբագրում էր ու կարդում: Պատմվածքները շատանում էին, նոր շունչ էին առնում, նոր փաստաթղթեր էին գտնվում, նկարներ, և այսպես մինչև Սոֆյայի կյանքի վերջին օրերը: Վերջում նա հանձնեց ինձ այն՝ ասելով. «Իմ աշխատանքը նվիրում եմ քեզ, քո տնօրինությանը, և ըստ հնարավորին աշխատի՛ր հրատարակել այն՝ որպես Աճառյանի «Կյանքիս հիշողությունների» շարունակություն»:

Սակայն իրականությունը փոխեց կյանքի ընթացքը: Հիշենք գորբաչկյան 80-90-ական թվականները, երբ Խորհրդային Միությունում հռչակվեցին խոսքի ազատություն, պլանային տնտեսական հարաբերությունների շրջադարձ դեպի ազատ շուկայական հարաբերություններ: Հայաստանը առաջինն էր, որ հավատաց խոստումներին և հռչակեց իր անկախությունը: Սկսվեց Լեոնային Ղարաբաղի անկախության շարժումը, այն ավարտվեց հայ-ադրբեջանական հակամարտությամբ և, ի վերջո, Լեոնային Ղարաբաղի փաստացի անկախությամբ: Որպես հետևանք՝ սկսվեցին Հայաստա-

նի շրջափակումը, գրկանքներ, լույսի ու էներգիայի բացակայություն, գործարանների փակում, գործազրկություն: Օրակարգի հարց դարձավ կյանքի և ապրուստի միջոցներ հայթայթելը: Մարդիկ փրկում էին իրենց կյանքը. ով ինչպես կարող էր: Ես, օգտվելով ինձ արտոնված հնարավորությունից, մեկնեցի Շվեդիա՝ դրամաշնորհով գիտական աշխատանք կատարելու նպատակով: Աշխատեցի երկու տարի, այնուհետև մնացի այնտեղ անորոշ ժամանակով, մանավանդ որ տղաս նույնպես այնտեղ էր՝ սովորելով ԿՏՀ-ի (տեխնիկական բարձրագույն համալսարան) դոկտորանտուրայում:

Անցան տարիներ: Ժամանակս զուր չանցկացրի: Հաղթահարելով նոր միջավայրին ու պայմաններին ընտելանալու դժվարությունները՝ սովորեցի շվեդերենը և սկսեցի դասավանդել այն նորեկ փախստականներին, հատկապես տարիքով մարդկանց՝ նկատի առնելով այդ տարիքի դժվարությունները: Եվ միայն այժմ, երբ շունչ քաշեցի աշխատանքային վազքից, անցա թոշակի, հետադարձ հայացք նետելով անցած ուղուս՝ զգացի, որ ժամանակն է՝ մորաքրոջս տված խոստումը կատարել և հրատարակել Մոֆյայի հիշողությունները: Ներողություն եմ խնդրում այսպիսի ուշացման համար:

Ի վերջո կցանկանայի, որ սրընթաց իրադարձություններով լի ժամանակաշրջանում մի պահ շունչ քաշենք և ընկղմվենք այն ժամանակվա կյանքի մեջ և ընկալենք մեր մեծագույն մարդկանց մտատանջումների ու զգացմունքների աշխարհը:

Շնորհակալություն Մոֆյա Աճառյանի թոռանը՝ Հրայրա Աճառյանին՝ ընտանեկան արխիվից նյութեր և լուսանկարներ տրամադրելու համար:

Ամալյա Խաչատրյան  
Երևան-Ստոկհոլմ



Հրաչյա Աճառյան



Ընտանեկան լուսանկար




Մոֆյան փոքրիկ չրաչյալի հետ









Արգնիում



Միհրդատ Թիրաբյան



Ստ. Մալխասյանց, Ն.Մար, Գ.Զահուկյան



Ա. Ղարիբյան, Գ. Սևակ, Էդ. Աղայան,  
Կ. Մելիք-Օհանջանյան



Աճառյանը ուսանողների հետ





Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում  
Ք. Երևան, Մայր-Նովա 24, (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63  
Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)